Հ. Մ. ԱՄԱԼՅԱՆ

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԱՐԱՆԱԳՐԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

4(47.925)
Ա-61

«МАТЕНАДАРАН»
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МАШТОЦА
ПРИ СОВЕТЕ МИНИСТРОВ АРМЯНСКОЙ ССР

Г. М. АМАЛЯН

ЛЕКСИКОГРАФИЧЕСКИЕ ПАМЯТНИКИ СРЕДНЕВЕКОВОЙ АРМЕНИИ (XVI—XVII вв.)

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН
1971

484

«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌՅՆԹԵՐ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ
ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հ. Մ. ԱՄԱԼՅԱՆ

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՌԱՐԱՆԱԳՐԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ (XVI—XVII ԴԴ.)

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
1971

Հայ միջնադարյան բառարանագրության XVI—XVII դարերի ժամանակաշրջանը հարուստ է ձեռագիր հուշարձաններով, որոնք սույն աշխատության մեջ քննության են առնված բանասիրական և լեզվաբանական առումով, ցույց է տրված նրանց դերը մեր մշակույթի պատմության մեջ և արժեքը հայ լեզվաբանության համար։

7—1—5

Ա Ր Ա Ջ Ա Բ Ա Ն

Հայ միջնադարյան բառարանագրության հուշարձաններին նվիրված աշխատության այս գրքում քննվում են XVI—XVII դարերի բառարանները, հատկապես այն աշխատությունները, որոնք հայագետներին հայտնի լինելով՝ առանձին ուսումնասիրության չեն ենթարկվել և ցարդ գտնվում են ձեռագիր վիճակում։

Հետազոտությունները հիմնված են Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրային նյութերի վրա։ Օգտագործված են նաև արտասահմանում գտնվող հայերեն աղբյուրների այն փաստերը, որոնք հայտնի են ձեռքի տակ գտնվող ձեռագրացուցակներից։ Սակայն այդ ցուցակները, որ ընդգրկում են արտասահմանի հայերեն ձեռագրերի մի մասը միայն, նկարագրություններում բառարանների վերաբերյալ ամենաընդհանուր, երբեմն էլ ոչ հստակ ու որոշակի տեղեկություններ են տալիս։ Ուրեմն ուսումնասիրությունից դուրս են մնում որոշ աղբյուրներ, որոնք մի շարք բառարաններ և բառարանագրությանը վերաբերող այլ նյութեր են բովանդակում։ Այս հանգամանքը նախորդ շրջանի (V—XV դարերի) բառարանների ուսումնասիրության գործում, այնուամենայնիվ, չուներ այնպիսի կարևոր նշանակություն, ինչպես այժմ, երբ այն որոշակիորեն խանգարում է բառարաններն առավել խոր ու բազմակողմանի հետազոտելուն։ Այդուհանդերձ այս ուսումնասիրության մեջ ընդգրկված է XVI—XVII դարերի դիտական առավել կամ նվազ նշանակություն ունեցող բառարանների

հիմնական մասը։ Ուստի, առանձին բառարանների ըստ ամենայնի քննությունից բացի, հնարավոր է նաև ընդհանրացումներ անել, ընդհանուր եզրակացությունների հանգել քննվող շրջանի հայ բառարանագրության գրեթե բոլոր հիմնական հարցերի վերաբերյալ։ Այսպիսով ներկա ուսումնասիրությամբ ավարտվում և ամբողջական է դառնում հայ բառարանագրության պատմության միջնադարյան շրջանի (V—XVII դարերի) ուրվագիծը։

Մշակութային ու մասնավորապես բառարանագրական հուշարձաններով XVI և XVII դարերը նման չեն իրար. առաջինը հայ մտավորականին ներկայանում է որպես ամուլ, անպտուղ մի ժամանակաշրջան, մինչդեռ XVII դարն աչքի է ընկնում հայ մատենագրության վերակենդանացումով ու վերելքով։ Այդ դարում են գրված մեր խնդրո առարկա գրեթե բոլոր բառարանները։ Այդ շրջանում հայ բառարանագրությունը հասնում է զարգացման մի նոր, բարձր աստիճանի, որն էական կողմերով կարելի է բնութագրել այսպես.

1. Ընդարձակվում է բառարանագրության տեղն ու նշանակությունը հայ մատենագրության մեջ։

2. Ստեղծվում են նոր բառարաններ, ավելի մեծ աշխատանք է կատարվում արդեն գոյություն ունեցող բառարաններից (գլխավորապես բացատրական բնույթի) նոր համահավաք բառարաններ կազմելու և դրանք տարբեր ձևերով խմբագրելու ուղղությամբ։

3. Նկատելի առաջընթաց կա նաև բառարանագրական տեխնիկայի մեջ. բարելավվում է բառերի դասավորության այբբենական շարքը, բառահոդվածներում երևան են գալիս գլխաբառի քերականական բնութագրումներ, ընդարձակ ու բազմակողմանի մեկնություններ և այլն։

4. Այդուհանդերձ, բառարանները դեռևս միջնադարյան տեսք ունեն և միայն գործնական նպատակներ են հետապնդում, նրանց բառացանկը դարձյալ կազմված է գլխավորապես տերմիններից, հնաբանություններից և նորաբանություններից։

5. Հայ մատենագրությամբ ավանդված բոլոր բառերն ընդգրկող բառարան դեռևս գոյություն չունի։

Համեմատաբար ընդարձակ է Ֆրանչիսկո Ռիվոլայի հայլատիներեն բառարանի բառացանկը[1]։ Եվ առհասարակ մինչև Մխիթար Աբբայի բառարանը[2], հայերենի բառային կազմը լայն արտացոլում է գտել ոչ թե բացատրական, այլ երկլեզվյան, թարգմանական բառարաններում՝ Աստվածատուր Ներսիսովիչի[3], Հակոբ Վիլլոտի[4] և հատկապես Ստեփանոս Ռոշքայի (Ստեփանյան, Լեհացի)[5]։

6. XVII դարում սկսվում է բառարանների տպագրությունը։ Դա մեծագույն նվաճում էր հայ բառարանագրության պատմության մեջ։ Առաջինը տպագրվում է Ռիվոլայի բառարանը, ապա, բնագրերին առընթեր, ինչպես նաև առանձին գրքով, մինչև XVII դարի վերջը լույս են տեսնում ևս հինգ մեծ ու փոքր բառարաններ։

7. XVII դարի վերջերին ավարտվում է հայ միջնադարյան կամ հին բառարանագրությունը, հասնելով զարգացման մի այնպիսի աստիճանի, որից անմիջապես ու օրինաչափորեն սկսվում է հայ նոր բառարանագրությունը՝ գիտական սկզբունքներով կազմված բառարաններով։

Շարադրվող նյութի թելադրումով այս անգամ հրաժարվել ենք բառարաններն ըստ տեսակների դասակարգելուց և նպատակահարմար ենք համարել դրանք քննել հետևյալ չորս

---

1 *Francisco Rivola*, Dictionarium armeno-latinum, Paris, 1633.

2 Մխիթար Սեբաստացի, *Բառգիրք հայկազեան լեզուի, հտ. 1, Վենետիկ, 1749, հտ. 2, 1769։*

3 Աստուածատուր Ներսէսովիչ, Dictionarium latino-armenum, *Հռոմ, 1695։*

4 *Jacobus Villotus*, Dictionarium novum latino-armenium, Romae, 1714.

5 Ստեփանոս Ռոշքայի «*Գանձ Հայոց լեզուի կամ բառարան Ստեփանեան*» (Ա-Բառարան հայ-լատիներէն, Բ-Բառարան լատին-հայերէն) բառարանը տպագրված չէ։ Ձեռագրերի նկարագրությունը տե՛ս Տ. Տաշեան, *Յուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 22—23 (թիվ 6)։*

գլուխների տակ՝ բժշկական բառարաններ, Սուրբ գրոց բառարաններ, բարգմանական բառարաններ, Այլ բնագրերին առընթեր և անկախ բառարաններ: Գլուխների ներսում բառարանները դասավորված են ժամանակագրական կարգով: Յուրաքանչյուր գլուխ սկզբից, բառարանների քննությունից առաջ, ունի ընդհանուր ներածական բաժին: Բառարանները քննվում են երեք հիմնական կողմերով՝ աղբյուրագիտական, բանասիրական ու բառարանագրական: Ընդ որում զուգահեռներ են անցկացվում տարբեր բառարանների միջև և ցույց են տրվում նրանց առնչությունները:

Գրքում ընդգրկված են տարբեր բնույթի տասնութ մեծ ու փոքր բառգրքեր: XVII դարում տպագրված բառարաններից վերցրել ենք միայն մեկը՝ երեմիա Մեղրեցու հրատարակած «Բառգիրք Հայոց» բառարանը, որը հատուկ տեղ ու նշանակություն ունի մեր հին բառարանագրության պատմության մեջ, քանի որ այդ բառարանի տպագրությունները չեն ներկայացնում նրա իսկական բնագիրն իր ամբողջության մեջ, այլ խմբագրություններից մեկի, մի անհաջող գրչագրի, տառացի վերարտագրություն են՝ բազմաթիվ աղճատումներով, գրչագրական ու տպագրական վրիպակներով հանդերձ:

Մնացած տպագիր բառարանների հետազոտությունը դուրս է մեր նպատակներից: Այդ բառարաններից հայ մշակույթի և բառարանագրության մեջ աչքի ընկնող տեղ է գրավում Ռիվոլայի բառարանը: Լեոն գրում է. «Ռիվոլայի բառարանը բազմաթիվ պակասություններ ունի, բայց և այդպես պիտի համարվի երախտագիտության արժանի մի գործ: Կապել հայերեն լեզվի բառարան այն ժամանակներում, երբ չկար այդպիսի փորձ հայերի մեջ—անկասկած մի մեծագործություն է մանավանդ մի օտար մարդու նկատմամբ»:[6] Մինչև հայ նոր բառարանագրությունը, Ռիվոլայի բառարանն ամենահարուստն էր իր բառացանկով. այն պարունակում է հայերեն գրական լեզվի ու Ջուղայի հայ բարբառի շուրջ 11000 բառ և

6 Լեո. Հայկական տպագրություն, հտ. 1, Թիֆլիս, 1904, էջ 212:

դարձվածներ: Իր թերություններով հանդերձ բառարանը մի արժեքավոր գրավոր հուշարձան է հայերենի բառային կազմի և առանձնապես տառադարձական ու բարբառային զանազան երևույթների պատմական ուսումնասիրության համար: Մյուս տպագիր բառարանները մասնակից բառարաններ են՝ կդեմս Գալանոսի քերականությանը, Ոսկանյան Աստվածաշնչին և Պոնսայի «Ձեռածությիւն յերկինս» գրքին առնչվող:

Զանազան անուններ մեկնող ցանկերից բացի քննության չի ենթարկվում նաև Արիստակես Համադանցու «Աստիճանք բառից» կոչվող բառացանկը[7]: Սա առանձին (մեկնություններ չունեցող) բառերի մի սովորական ազբուսակ է, որտեղ բառերը դասավորված են ըստ վանկերի քանակի՝ սկզբում միավանկ, ապա երկվանկ, եռավանկ և այլն: Բառի մեջ առկա վանկերի քանակը հեղինակն անվանում է բառի աստիճան: Այսպես, «Առաջներորդ աստիճան բառից, որք լինին ի միոյ վանգէ. այբ, ազգ, ախտ, ակն, ահ, ազտ, ամպ...»[8], «Երրորդ աստիճան բառից, որք լինին ի երից վանգից. Աբդիա, Աբենէր, Աբիուդ, Աբրահամ, Աբիսակ, ագաբոս, ագարակ, ագաթի...»[9] և այլն: Այդ եղանակով բառարանում բերվում է ընդամենը 1500 բառ:

Օգտվելով առիթից, ցանկանում ենք մի երկու դիտողություն անել մեր նախորդ՝ «Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները (V—XV դարեր)» աշխատության վերաբերյալ: Նախ՝ առաջաբանում, հայ բառարանագրության պատմությունը պարբերակարգելիս, մենք միջնադարյան շրջանը փակում ենք XVII դարի երկրորդ քառորդով, հասցնելով մինչև Ռիվոլայի բառարանը: Հետագա ուսումնասիրությունների ընթացքում համոզվեցինք, որ այդ մոտեցումը ճիշտ չէ, հիմնված է ոչ թե էական, այլ ձևական, ար-

7 Տե՛ս Մատենադարան, ձեռ. № 2301, էջ 167բ—172բ:

8 Նույն տեղում, էջ 167 բ:

9 Նույն տեղում, էջ 170բ:

տաքին հանգամանքների վրա։ Ըստ զարգացման առանձնահատկությունների, բառարանների ծավալի, կազմության սկզբունքների ու նպատակների, առհասարակ բառարանագրական աշխատությունների քանակի ու որակի՝ հայ բառարանագրության պատմության միջնադարյան շրջանը ոչ թե ավարտվում է XVII դարի երկրորդ քառորդում, այլ տևում է մինչև այդ դարի վերջերը՝ մինչև Աստվածատուր Ներսիսովիչի բառարանը, որով և սկսվում է հաջորդ շրջանը՝ նոր բառարանագրությունը։ Ապա՝ մենք նախատեսել էինք (գլ. 3-րդ, էջ 222) այս աշխատության մեջ վերականգնել Երեմիա Մեղրեցու բառարանը։ Այսինքն՝ բերել գրշագրերի օգնությամբ մեր կողմից վերականգնված ու շտկված բոլոր գլխաբառերն ու մեկնությունները։ Սակայն աշխատանքի ընթացքում պարզվեց, որ այդպես վարվելը ճիշտ չէր լինի. այդ դեպքում ընթերցողին կրնձեռվեր բառաքննական բնույթի մի գործ և ոչ թե ամբողջական բնագիր վերականգնված վիճակում։ Ուստի որոշեցինք այս գրքում տալ միայն բառարանի գիտական ուսումնասիրությունը, իսկ վերականգնված և մի քանի գրշագրերի ու երկու տպագրությունների հետ համեմատված բնագիրը լույս ընծայել առանձին գրքով։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

XVI—XVII դարերում կազմվել են մի շարք բժշկական նոր բառարաններ ու բառացանկեր, որոնք, ի տարբերություն նախորդ դարերի բառարանագրական հուշարձանների, պահպանվել են սակավաթիվ գրշագրերով։ Այդ բառարանները մեծ մասամբ վերաբերում են XVII դարին։ Հայտնի են Ասար Սեբաստացու, Գալուստ Ամասիացու, Սերոբ գրչի և այլ բառարանները։ Դժբախտաբար XVI դարի վերաբերյալ հավաստի տեղեկություններ չկան։ Պահպանվել են միայն Ամիրդովլաթի երկերի հետ կապված բառարաններ, որոնց գրության ժամանակներն ու հեղինակներն անհայտ են։

Նախորդ շրջանի (V—XV դդ.) բառարանագրության ուսումնասիրությունից բաց էինք թողել Ամիրդովլաթի բառարանները, որովհետև մեր նպատակը (ինչպես և այս աշխատության մեջ) եղել է միայն չուսումնասիրված և չհրապարակված ձեռագիր բառարանների քննությունը։ Այդ բառարանները գրված են Ամիրդովլաթից առաջ։ Ուստի նրանց քննության ժամանակ առիթներ չեն եղել թեկուզ հարևանցի, այս կամ այն առիթով, անդրադառնալու Ամիրդովլաթի բառարաններին, որոնք բառամթերքով, ձևով, բովանդակությամբ ու նշանակությամբ նոր, զարգացուն կազմող երկեր են հայ բառարանագրության, ընդհանրապես հայ մշակույթի մեջ և իրենց նախորդ սակավաթոռ բժշկական բառարանների հետ էական աղերսներ չունեն։

Մինչդեռ քննվող շրջանի (XVI—XVII դդ.) բառարանները սերտորեն կապված են Ամիրդովլաթի երկերի, հատկապես «Անգիտաց անպէտ»-ի հետ։ Եվ քանի որ այդպես է, ապա, ընդհանուր ծանոթության համար, խիստ կարևոր է Ամիրդովլաթի երկերը էական կողմերով ներկայացնելը՝ քննության ենթակա բժշկական բառարանների հանգամանքների պարզեցման և հարցերի ճիշտ լուծման համար։

Հայ միջնադարի ականավոր բժիշկ, բազմավաստակ գիտնական Ամիրդովլաթ Ամասիացին (մեռ. 1496 թ.)[1] նաև մեծ բառարանագիր է։ Նրա գրչին են պատկանում հետևյալ բառարանները.

1. Բուժիչ նյութերի այբբենական բառարան, որը հայագիտության մեջ հայտնի է Ախրապատին Ա—Ք կամ Աղյուսակակերպ բառարան անունով[2]։ Բառարանի այսպիսի անվանումը կապված է նրա կառուցվածքի հետ. բառերի բաշխումը տրվում է գրքի երկու հարևան (աջ և ձախ) էջերի վրա՝ ձախ էջի վրա բերվում են գլխաբառերը (դեղանուններն իրենց հայերեն, հունարեն, արաբերեն, պարսկերեն և լատիներեն համանիշներով), նշվում է դեղի տեսակը, որակը, հատկությունը, դեղաբանակը, իսկ աջ էջում՝ որևէ նշանավոր բժշկի մի ասույթ՝ այդ դեղի օգտագործման մասին։ Բառահոդվածի այն մասը, որ գրված է ձեռագրի ձախ էջի վրա, վերցված է շրջանակի (քառանկյունի) մեջ և հենց դրա համար էլ այդ բառարանն աղյուսակակերպ է կոչվում։ Լ. Հովհաննիսյանը հավատում է, որ «Օգուտ բժշկութեան» աշխատության համառոտ խմբագրության հավելված համարվող այդ բառարանը, «Ախրապատին»-ի համեմատությամբ, ոչ մի նոր բան չի պարունակում և պարզապես սովորողների ուսուցողական պահանջներին հարմարեցված դեղաբանական մի կոնսպեկտ է[3]։

2. Ամիրդովլաթի մյուս բառարանը նրա «Ախրապատին»-ի մաս (ԻԹ գլուխ) հանդիսացող բժշկական բառարանն է՝ «Բառ ի վերայ ամենայն բժշկական վարդապետացն. պատմութիւն վասն դեղերուն»։[4] Այս բառարանն ունի այբբենական կարգով դասավորված շուրջ 800 բառեր՝ հայերեն, պարսկերեն, հունարեն և լատիներեն լեզուներով։ Այսպես՝

Աշրաս. որ խնդրեն, որ է պրուխն, որ է փայլկատուկ, որ է խունսայ, որ է շրէշն։

Ասաբըլյարազ. որ է յաւիրէժ, որ է տերևատն, որ է մազարիոնն։

Աւրմիուն. որ է թասորևհն, որ է ֆսուտիրէնն։

Անդայսում. որ է նանայ, որ է մնդիտայ էպռէհն, որ է ջրի գաղձն, որ է յարապկերէն ֆսուինէհ ասէ։

Աբխրս. որ է կարմիր ջրի գաղձն։

Ապրիուճդիոն. որ է զայսումն, որ է բացուենեկն, և թուրքն զուանչիշէկի ասեն։

Ասպալապս. որ է յունարէն[5] տարշիշան։

Ապրս. որ է յալարն, որ է յուպուկն...[6] և այլն։

3. Ամիրդովլաթի ամենալընդարձակ ու արժեքավոր բառարանը «Անգիտաց անպէտ»-ն է, որ գրվել է 1478—1482 թվա-

1 Ամիրդովլաթի մասին բազմաթիվ աշխատություններից նրա կյանքի ու գիտական գործունեության վերաբերյալ տե՛ս Л. А. Оганесян, История медицины в Армении, ч. 3. Ереван, 1946, էջ 1—21։ Ավ. Տեր-Պողոսյան, Բիոլոգիական մտքի զարգացումը Հայաստանում, Երևան, 1960, էջ 398—433։ Ղ. Յովնաննան, Հետազոտութիւնք Նախնեաց ամկօրէնի վրայ, մասն Ա, տետր Բ, Վիեննա, 1897, էջ 339—343։ Ամիրդովլաթի Ամասիացւոյ Անգիտաց անպէտ կամ բառարան բժշկական նիւթոց, Վիեննա, 1926, Կ. Յ. Բառամաչյանի առաջաբանը, էջ ԻԱ—ԻԲ։ Ամիրդովլաթ Ամասիացի, Օգուտ բժշկութեան, Երևան, 1940, Ստ. Մալխասյանի առաջաբանը, էջ Ե—ԻԱ։ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հտ. Ա, Երևան, 1942, էջ 125—129։ Ա. Գ. Առաքելյան, Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, հտ. 2, Երևան, 1964, էջ 374—397։

2 Տե՛ս Լ. Ա. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 20—21։ Ղ. Հովնանյան, նշվ. աշխ., էջ 374—375, 386։ Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 127։

3 Տե՛ս Լ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 20։

4 Բնագիրը տե՛ս Մատենադարան, ձեռ. № 413, էջ 178ա—188բ։ Զմմառի № 253, Երուսաղեմի № 384, Վիեննայի № № 442, 135 և այլ հայերեն ձեռագրերում։

5 Բառը ձեռագրում նշվում է յ հապավումով։

6 Մատենադարան, ձեռ. № 413, էջ 178ա։

կաններին, Կոստանդնուպոլսում։ Իր ծավալով ու գիտական արժեքով այս բժշկական հանրագիտական բառարանը խոշորագույն երևույթ է ոչ միայն հայ, այլև ընդհանրապես միջնադարի բժշկական գրականության մեջ։ Լ. Հովհաննիսյանը նշում է. «Այս աշխատության մեջ ներկայացված նյութի նշանակությունը հասկանալու համար բավական է հիշատակել, որ միջին դարերում գրված դեղաբանության ամենախոշոր գրքերում բուժիչ դեղանուններ հաշվվում են ոչ ավելի, քան Ամիրդովլաթի գրքում»[7]։

«Անգիտաց անպէտ»-ի բնագիրն առաջին անգամ լույս ընծայվեց Կ. Բասմաջյանի կողմից, 1926 թվականին։ Ըստ այդ հրատարակության, բառարանը պարունակում է հայերեն, հունարեն, պարսկերեն, արաբերեն, լատիներեն և թուրքերեն 3754 գլխաբառեր՝ ընդարձակ բառահոդվածներով։ Այդքան բառահոդվածներ չեն պարունակում ոչ միայն միջնադարյան արաբական և հունական նմանօրինակ երկերը[8], այլև մինչև մեր ժամանակները հասնող Մ. Ռեստենի, Ն. Տաղավարյանի, Լ. Տիգրանյանի և այլ հայերեն տպագիր բառարանները։ Բառացանկով «Անգիտաց անպէտ»-ն, ընդհուպ մինչև Վ. Արծրունու բառարանը[9], ամենահարուստն էր։

«Անգիտաց անպէտ»-ում բառացանկեր կան հայերեն այբուբենի բոլոր տառերով (Ա—Ֆ), բացառությամբ Ի-ի։ Բառերի այբբենական դասավորությունը, ինչպես մյուս հին բառարաններում, կանոնավոր չէ։ Բառահոդվածը միայն գլխաբառի բացատրություն չէ՝ հայերեն ու օտար համարժեքների առադրությամբ կամ նկարագրությամբ, այլ համապարփակ ամփոփումն է այն ամենի, ինչ այն ժամանակ հայտնի էր բժշկագիտությանը՝ կապված տվյալ գլխաբառի նշանակած դեղամիջոցի հետ։ Ահա թե ինչպիսի տարրերից կամ

7 Լ. Հովհաննիսյան. Նշվ. աշխ., էջ 19։

8 Տե՛ս Մ. Աբեղյան, Լ. Հովհաննիսյան, Ա. Տեր-Պողոսյան. Լատին-ռուս-հայերեն բժշկական բառարան, Երևան, 1951, էջ 6։

9 Վ. Արծրունի. Ռուս-լատին-հայ բժշկագիտական բառարան, Երևան, 1924։

բաժիններից է կազմված «Անգիտաց անպէտ»-ի բառահոդվածը. ա) գլխաբառ (մեծ մասամբ արաբերեն), բ) մեկնություն՝ մանրամասն նկարագրությամբ, ինչպես նաև գլխաբառի հունարեն, լատիներեն, հայերեն (ընդ որում բազմաթիվ բարբառային ձևերի նշումով) և այլ համարժեքների օգնությամբ, գ) այն վայրը, որտեղ գտնվում, աճում է տվյալ դեղաբույսը (երկիր, գավառ, լեռ, անտառ և այլն), դ) ինչ ելանյութերից է պատրաստվում տվյալ դեղը, եթե բույս չէ, ե) դեղի ներգործության աստիճանը (տարաճան), զ) դեղի նյութային վիճակը (հեղուկ, կարծր, տաք, չոր և այլն), է) դեղի համը, հոտը, գույնը և այլ հատկանիշներ, ը) միևնույն նպատակով օգտագործվող դեղերից ամենալավը ինչ նյութերից և որտեղ է պատրաստվում, թ) ի՛նչ հիվանդությունների դեմ է գործում տվյալ դեղը, ժ) ի՛նչ բուժիչ ազդեցություն ունի դեղը մարմնի այս կամ այն օրգանի վրա, ժա) մարմնի ո՛ր գործարանին կարող է վնաս բերել օգտագործվող դեղը, ժբ) ի՛նչ դեղով է փարատվում մեկ ուրիշ դեղի պատճառած վնասը, ժգ) դեղի օգտագործման ժամանակը, տևողությունը, քանակը, ժդ) ո՛ր դեղանյութը կարող է փոխարինել պահանջվող դեղին՝ նրա բացակայության դեպքում և այլն։ Այսպիսի բազմակողմանի տեղեկություններ տվող բառահոդվածը պարզ է, որ ընդարձակ պիտի լինի և նման չէ միայն տերմինների իմաստը մեկնող կամ տերմինը թարգմանող սովորական բժշկական բառարանների բառահոդվածին, որի բովանդակությունը հանրագիտական բնույթ չունի։ «Անգիտաց անպէտ»-ի ալեա, աղիս, գինձ, լապան, ճնդուպէ, ջաուար, մայ ըլ պաճր, մուշմ, սապո և բազմաթիվ այլ գլխաբառերի բառահոդվածներն այնքան ընդարձակ են, որ երբեմն 1—1, 5 և նույնիսկ ավելի տպագիր էջ են զբաղեցնում։ Սակայն այդպես չեն բոլոր բառահոդվածները. միևնույն դեղը նշանակող տարբեր բառերից մեկնվում է միայն մեկը, իսկ մյուսները հղվում են դրան։ Այդպիսով միևնույն բառահոդվածը տարբեր բառացանկերում չի կրկնվում և դա շնորհիվ այն բանի, որ հմուտ բառարանագետ Ամիրդովլաթը դիմում է հղումներին, որոնք ոչ թե պատահա-

կանորեն, այլ հետևողական ու կանոնավոր կիրառվում են ամբողջ բառարանում: Հղումը բառարանագրական տեխնիկայի մի շատ կարևոր միջոց է, որ առաջին անգամ հայ բառարանագրության մեջ մտցրեց Ամիրդովլաթը: Սակայն այդ կարևոր միջոցից հետագայում չօգտվեցին բժշկական, այլև ուրիշ բնույթի բառարանների հեղինակները ընդհուպ մինչև XVII դարի վերջերը: Եվ մինչև օրս էլ մեր միջնադարյան բառարանագրության գլուխգործոցը՝ «Անգիտաց անպէտ»-ը կառուցվածքի սկզբունքներով մնում է որպես մի եզակի օրինակ իր տեսակի բառարանագրական գործերի մեջ: Մի յուրահատուկ արժանիք էլ ունի Ամիրդովլաթի բառարանը: Այն է, որ բառահոդվածներում բառացիորեն կամ համառոտ վերարտադրությամբ վկայություններ են բերվում այն բոլոր բժշկական երկերից, որոնցից օգտվել է Ամիրդովլաթն իր բառարանը կազմելիս: Այդ վկայություններով ավելի է հարստանում բառահոդվածների բովանդակությունը, ավելի ճշգրիտ ու հավաստի են դառնում բացատրություններն ու տեղեկությունները: Նշելի է, որ Ամիրդովլաթը կուրորեն չի հետևում իր հիշատակած հին բժիշկներին, որոնց անունները բառահոդվածներում նշվում են հապավումներով, այլ քննադատաբար է մոտենում իր օգտագործած աղբյուրներին, ցույց տալով նրանց բոլոր թերությունները: Բառարանի առաջաբանում նա գրում է.

«Կարճառատ էին (աղբյուրները—Հ. Ա.) արել. եւ թէ բժբնութիւնն կու գիտէաք նա, զէութիւնն չի գիտէաք. եւ թէ զաբոութիւնն կու գիտնայեաք, զբնութիւնն չէաք գիտնալ. եւ կար որ զանունքն գիտէաք, եւ զինքն չի գիտէաք. եւ կար որ զանունն գիտէաք. եւ ո՛չ զինքն, եւ ո՛չ գիւր փոխանն. եւ ի վերայ այսոր՝ հանապազ մեզ ի պակասութիւն կար վասն դեղերուն. եւ այս պատճառաւ՝ այլ ազգայ կարաւտ էաք»[10]:

Բառարանը կազմելուց առաջ Ամիրդովլաթը ճանապարհորդություններ է կատարել, լեզուներ սովորել, իրար հետ համեմատել է բոլոր աղբյուրները, ճշգրտումներ արել՝ իր սեփական փորձի արդյունքներից ելնելով: Ահա թե ինչպես է նա առաջաբանում համառոտակի ներկայացնում բառարան կազմելու իր նախապատրաստական աշխատանքը.

«Եւ յետոյ գնացաք ի շուրջ եկաք բազում քաղաքանի եւ գծովն անցաք. եւ շուրջ եկի զաշխարհն Մակեդոնացոց. եւ եկայ բնակեցայ ի մայրաքաղաքն Կոստանդինուպաւլիս. եւ հաւաքեցաք շատ գրեանք ի յայլ ազգեաց. եւ աշխատեցաք. եւ ուսաք զբառերն եւ զանուանքն ազգի ազգի, եւ զփոխանն, եւ զառնելուն չաքն հինգ լեզուաւ, կամօքն Աստուծոյ»[11]:

Այս հատվածից հետո Ամիրդովլաթը բերում է բառարանում իր կողմից ընդունված՝ լեզուների և հեղինակների անունների համառոտագրումները.

«Գիտացիր, որ զամէն լեզու մէկ մէկ նշանագիր արարաք, որ է այս նշանօքն. յարապկերէն՝ յ, պարսկերէն՝ պ, թուրքերէն՝ ր, հայերէն հ, հռոմերէն՝ հռ, ասորին՝ աս, լաթինն՝ լ, ֆռանկն՝ ֆ. զայս անոր համար գրափակ արաք՝ վասն խրթնութեան համար, որ չի շատաբանի: Եւ այլ անուանք բժշկապետացն այս են. Բս՝ Բազարատն, Գս՝ Գեղիաճոսն, Սիճ՝ Սիճէայ Որդիճ, Դս՝ Դիոսկրիտոսն, Իպճ՝ Իպճի Պայտարն, Պտ՝ Պատէճիճ. վասն այնորիկ՝ կարճառօտ լինի եւ այս. եւ այս բժշկապետաց անուանքն որ պիտի յիշուի՝ ի դեղերուն զաւրութեանցն ի մէջն է, կամաւքն Աստուծոյ. ամէն»[12]:

Նախաբանից հետո, ներածության մեջ, խոսվում է դեղերի բնության, համի, հոտի, գույնի, ուժի, աստիճանի (տարաճա), ներգործության ու զորության, պատրաստման արհեստի, պահպանման և դեղաբույսեր հավաքելու ժամանակների մասին:

Վերջապես ներածության վերջում, բուն բառարանին նախընթեր մասում, Ամիրդովլաթը բացատրում է իր բառարանի կառուցվածքը, օգտագործման կանոնները և այլն: Ահա ևս մի քաղվածք.

«Յիմացէք եւ հասկացէք, եղբարք, որ այս գրքիս ձեւն այսպէս է, որ զմէկ դեղի մի անունն շատ բառերով է գրած ի

10 Ամիրդովլաթ, Անգիտաց անպէտ, էջ 2:

11 Նույն տեղում, էջ 3:

12 Նույն տեղում:

196-2

կանորեն, այլ հետևողական ու կանոնավոր կիրառվում են ամբողջ բառարանում։ Հղումը բառարանագրական տեխնիկայի մի շատ կարևոր միջոց է, որ առաջին անգամ հայ բառարանագրության մեջ մտցրեց Ամիրդովլաթը։ Սակայն այդ կարևոր միջոցից հետագայում չօգտվեցին բժշկական, այլև ուրիշ բնույթի բառարանների հեղինակներն ընդհուպ մինչև XVII դարի վերջերը։ Եվ մինչև օրս էլ մեր միջնադարյան բառարանագրության գլուխգործոցը՝ «Անգիտաց անպէտ»-ը կառուցվածքի սկզբունքներով մնում է որպես մի եզակի օրինակ իր տեսակի բառարանագրական գործերի մեջ։ Մի յուրահատուկ արժանիք էլ ունի Ամիրդովլաթի բառարանը։ Այն է, որ բառահոդվածներում բառացիորեն կամ համառոտ վերարտադրությամբ վկայություններ են բերվում այն բոլոր բժշկական երկերից, որոնցից օգտվել է Ամիրդովլաթն իր բառարանը կազմելիս։ Այդ վկայություններով ավելի է հարստանում բառահոդվածների բովանդակությունը, ավելի ճշգրիտ ու հավաստի են դառնում բացատրություններն ու տեղեկությունները։ Նշելի է, որ Ամիրդովլաթը կուրորեն չի հետևում իր հիշատակած հին բժիշկներին, որոնց անունները բառահոդվածներում նշվում են հապավումներով, այլ քննադատաբար է մոտենում իր օգտագործած աղբյուրներին, ցույց տալով նրանց բոլոր թերությունները։ Բառարանի առաջաբանում նա գրում է.

«Կարճառօտ էին (աղբյուրները—Հ. Ա.) արել. եւ թէ զբնութիւնն կու գիտէաք նա, զէութիւնն չի գիտէաք. եւ թէ զաւրութիւնն կու գիտնայեաք, զբնութիւնն չէաք գիտնալ. եւ կար որ զանուանքն գիտէաք, եւ զինքն չի գիտէաք. եւ կար որ զանունն գիտէաք. եւ ո՛չ զինքն, եւ ո՛չ զիւր փոխանն. եւ ի վերայ այսոր՝ հանապազ մեզ ի պակասութիւն կար վասն դեղերուն. եւ այս պատճառաւ՝ այլ ազգաց կարաւտ էաք»[10]։

Բառարանը կազմելուց առաջ Ամիրդովլաթը ճանապարհորդություններ է կատարել, լեզուներ սովորել, իրար հետ համեմատել է բոլոր աղբյուրները, ճշգրտումներ արել՝ իր սեփական փորձի արդյունքներից ելնելով։ Ահա թե ինչպես է ն-

10 Ամիրդովլաթ, Անգիտաց անպէտ, էջ 2։

484

առաջաբանում համառոտակի ներկայացնում բառարան կազմելու իր նախապատրաստական աշխատանքը.

«Եւ յետոյ գնացաք ի շուրջ եկաք բազում քաղաքանի եւ գծովն անցաք. եւ շուրջ եկի զաշխարհն Մակեդոնացոց. եւ եկայ բնակեցայ ի մայրաքաղաքն Կոստանդինուպաւլիս. եւ հաւաքեցաք շատ գրեանք ի յայլ ազգեաց. եւ աշխատեցաք. եւ ուսաք զբառերն եւ զանուանքն ազգի ազգի, եւ զփոխանն, եւ զառնելուն չաքն հինգ լեզուաւ, կամօքն Աստուծոյ»[11]։

Այս հատվածից հետո Ամիրդովլաթը բերում է բառարանում իր կողմից ընդունված՝ լեզուների և հեղինակների անունների համառոտագրումները.

«Գիտացիր, որ զամէն լեզու մէկ մէկ նշանագիր արարաք, որ է այս նշանօքն. յարապկերէն՝ յ, պարսկերէն՝ պ, թուրքերէն՝ բ, հայերէն հ, հոռոմերէն՝ հո, ասորին՝ աս, լաթինն՝ լ, ֆռանկն՝ ֆ. զայս անոր համար գրափակ արաք՝ վասն խրթնութեան համար, որ չի շատաբանի։ Եւ այլ անուանք բժշկապետացն այս են. Բտ՝ Բագարատն, Գս՝ Գեղիանոսն, Սին՝ Սինէայ Որդին, Դս՝ Դիոսկրիտոսն, Իպն՝ Իպնի Պայտարն, Պտ՝ Պատէհին. վասն այնորիկ՝ կարճառօտ լինի եւ այս. եւ այս բժշկապետաց անուանքն որ պիտի յիշուի՝ ի դեղերուն զաւրութեանցն ի մէջն է, կամաւքն Աստուծոյ. ամէն»[12]։

Նախաբանից հետո, ներածության մեջ, խոսվում է դեղերի բնության, համի, հոտի, գույնի, ուժի, աստիճանի (տարաճա), ներգործության ու զորության, պատրաստման արհեստի, պահպանման և դեղաբույսեր հավաքելու ժամանակների մասին։

Վերջապես ներածության վերջում, բուն բառարանին նախորդող մասում, Ամիրդովլաթը բացատրում է իր բառարանի կառուցվածքը, օգտագործման կանոնները և այլն։ Ահա ևս մի քաղվածք.

«Յիմացէք եւ հասկացէք, եղբարք, որ այս գրքիս ձեւն այսպէս է, որ զմէկ դեղի մի անունն շատ բառերով է գրած ի

11 Նույն տեղում, էջ 3։
12 Նույն տեղում։

վերայ այբուբենի. եւ ամխօրն՝ յունարէն[13] բառով, ի վերայ այբին է, եւ հայերէն[14] վաղմեռուկ ասեն, յիշած է ի վերայ վեվին. հանց որ ապուսանն յ., եւ հ. վաովառուկ ասեն, յիշած է ի վերայ վեվին. եւ լինի որ ասեն զանունն ի մէկ գրի վերայ, եւ յետեւ ի մէկ գրի վերայ այլ զպատմութիւնն պատմեն, եւ զաւ-դրութիւնն ասեն թէ ինչ է. որպէս յիշած է արջասպն ի վերայ այբին, եւ ի վերայ զային յիշած է՝ զաճ եւ զիր պատմութիւնն։ Եւ կայ դեղ որ հինգ վեց անուն ունի. եւ ամէն անուանքն յիշած է ի վերայ գրին, թէ զինչ գիր որ ի յառաջքն գայ. եւ ի մէկ անուանն ի վերայ յիշած է զբնութիւնն, եւ զաւգտութիւնն, եւ զչարութիւնն, թէ ո՞րպէս է»[15]։

Իր լայն ընդգրկումներով, բովանդակությամբ ու կատարյալ կառուցվածքով «Անգիտաց անպէտ»-ը արդյունք է բեղմնավոր գիտական աշխատանքի։ Այն մի դարագլուխ կազմող երկ է, որ հիրավի պատիվ է բերում հայ միջնադարյան բառարանագրության ու մշակույթին առհասարակ։

4. Ախրապատինի[16] ԻԱ գլուխը՝ «Քասնումէկ դուռն որ յիշէ զդեղերոյն զփոխանակն եւ զպիտեւանն», դեղերի համազորությունների՝ մեկը մյուսով փոխարինելու, բառարան է[17], որի օգնությամբ իմանում են, թե անհրաժեշտ դեղի բացակայության դեպքում ուրիշ ինչ դեղեր կարելի է օգտագործել տվյալ հիվանդության դեմ, որ դեղը կարող է փոխարինել բացակայող դեղին, նրան «փոխան» կամ «փոխանակ» լինել։ Ահավասիկ մի հատված այդ բառարանից.

[13] Բնագրում բառի փոխարեն՝ յ̅ հապավումը։

[14] Բնագրում բառի փոխարեն՝ ե̅ հապավումը։

[15] Ամիրդովլաթ, Անգիտաց անպէտ, էջ 24։

[16] Տե՛ս Դ. Հովճանյան, նշվ. աշխ., էջ 381—386։

[17] Նույն տեղում, էջ 383։ Այս բառարանը կա նաև Մատենադարանի №. 459 ձեռագրում (էջ 25բ—31ա)։ Սակայն վերնագիրը նույնը չէ Դ. Հովհանյանի հիշատակած վերնագրի հետ, այլ՝ «Այս է փոխանն դեղերուն, որ շինեալ է Գեղիանոս, որ թէ դեղն չի գտնուս ի նորայ տեղն դեղ մն այլ գնեն ու բան տանեն, որ կատարի կամաւք աստուծոյ» (Համտ. Դ. Հովճանյան. էջ 383)։

Աւշինդրճ. և իր զքօքն իւր փոխանն ճօտանն է. և չէ-հիարմանին է .և կալուած բանալն. և զստամոքն ուժցնելն. իր զքօքն ասարունն է. և կէս վաղն սև հալիլան է։

Աստուխոտոս. և իր փոխանն ֆրասիոնն է։

Այլնշայր. և իր փոխանն զրտմանան է. զեդ զինքն է։

Ասառուն. և իր փոխանն զրտմանան է, զեդ զինքն է, իր զքօքն է, և գ̅ բաժինէն ա̅. ոճն. և գ̅ ա̅ համաման է։

Աօշախ. և իր փոխանն դեղին զանպուրն է։

Ազատրախտ. և իր փոխանն շահտանայի տերևն է։

Աֆթիմոն. և իր փոխանն. ի սաւտայ լուծելն թրպուձն. գ̅ բաժինէն ա̅ սաւտն է։

Ասպլերլսրֆր. և իր զքօքն կէս հազար ճասան է. և գ̅ բաժինէն ա̅ սաւտն է։

Անուխ. ասէ Գեղիանոս. թէ զեդ զինքն. և իր փոխանն ֆութանաճն է։

Աֆիոն. և իր փոխանն պանճն է, և բ̅ իր չաքն լուֆայն է։

Ամրասիայ. և իր փոխանն տաշմարդան է։

Այեարին նուլինար. և իր փոխանն լաղատի սեան է։

Բալաուռ, ասէ Դէոսկրիտոս. թէ ե̅. իր զքօքն հնդի ֆրնդուխն է. որ է հերսենին և գ̅ բաժինէն ան պալասանի ձեթն է. և դ̅ ան պալասանի տակն է. և զան̅ աֆթիմոն է. և ե̅ ան̅ ֆստուխն է։

Բաճման. և իր փոխանն թուտարին է. և կէս իր զքօքն լիսան ըլ յասաֆուրն է։

Բաբունէճ. և իր փոխանն իր զքօքն իքլիլմէլիքն է։

Բալանճասիֆ. և իր փոխանն ի յլ[ս]տամոքն և գլխացաւուն պապունաճն է[18]։

Այս բառարանն իր երկու մասերում (պարզ և բարդ դեղերի համար) պարունակում է շուրջ 160 բառ։

[18] Մատենադարան, ձեռ. № 459, էջ 25բ—26ա։

Վերջապես, Ամիրդովլաթը 1468 թ., հավանաբար Ֆիլիպե քաղաքում, ընդօրինակել է «Բառք Գաղիանոսի բժշկապետի»[19] բառարանը (տե՛ս Մատենադարան, ձեռ. № 266), որը երբեմն համարվում է Ամիրդովլաթի գրվածքը (Հ. Աճառյան, Անձնանունների բառարան, Ա, էջ 126) կամ նրա կողմից թարգմանված (Ստ. Մալխասյան, Ամիրդովլաթի գրքի առաջաբանը, էջ ԺԴ):

Այսպիսով, Ամիրդովլաթի գործունեությամբ հայ միջնադարյան բառարանագրությունը զարգացման նոր աստիճան բարձրացավ, ձեռք բերելով մի շարք նոր գծեր, որոնք հետևյալն են.

1. Բառացանկի ընդարձակումը, տվյալ մասնագիտության բոլոր բառերն ու տերմիններն ընդգրկելու ձգտումը:

2. Իսկական բառահոդված կազմելը, գլխաբառը բազմակողմանի, զանազան եղանակներով մեկնելը:

3. Վկայություններ բերելը, հղումների և համառոտագրությունների կիրառումը:

4. Բառարանն առաջաբանով, ներածականներով և հիշատակարաններով օժտելը:

5. Բժշկության տարբեր մասնաճյուղերի վերաբերյալ նեղ մասնագիտական բառարաններ ու բառացանկեր կազմելը:

Հայ բառարանագրության այս շեշտակի վերելքը XV դարի վերջերին միակողմանի է և վերաբերում է ոչ թե բոլոր բառարաններին, այլ նրանց երկու հիմնական տեսակներից մեկին՝ հանրագիտական բառարաններին և այն էլ ոչ թե ընդհանուր, այլ նեղ մասնագիտական:

Մյուս տեսակի բառարանների գծով հայ բառարանագրությունը նման զարգացման հասնում է ուշ, ավելի քան երկու դար հետո, այսինքն, երբ ավարտվում է միջնադարյան բառարանագրությունը և սկսվում է նոր շրջան:

Ամիրդովլաթն է Հայաստանում առաջին իսկական, արդի իմաստով, գիտական բառարանի ստեղծողը: Նա միջնադարյան խոշոր բառարանագիր է և գիտական բառարանագրության հիմնադիրը հայ մշակույթի պատմության մեջ:

Ամիրդովլաթի բառարանները հիմնական գծերով ներկայացնելուց հետո անցնենք հայ միջնադարյան բառարանագրության հաջորդ շրջանի՝ XVI—XVII դարերի բժշկական բառարանների քննությանը:

19 Տե՛ս Հ. Ամալյան, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները (V—XV դդ.), Երևան, 1966, էջ 179—196:

ԱՍԱՐ ՍԵԲԱՍՏԱՑՈՒ ԲԱՌԱՐԱՆՆԵՐԸ

Ասար Սեբաստացին, Ամիրդովլաթից հետո, հայ բժշկության ականավոր ներկայացուցիչն է[20]: Նրա կյանքի ու գործունեության մասին առանձին տեղեկություններ պահպանվել են միայն իր գրքում: Ասարը ծնվել է Իրանում 1565—1575 թվականների սահմաններում, երկար ժամանակ ապրել է Սեբաստիայում, մահվան տարեթիվը անհայտ է[21]:

Իր հիմնական երկը՝ «Գիրք բժշկական արհեստի», Ասարը գրել է 1614 թվականին, իսկ 1625-ին վերամշակել է ասորի բժիշկ Աբուսայիդի «Մարդակազմություն» կոչվող աշխատությունը: Հիշված երկու թվականների հիման վրա մոտավորապես որոշում են Ասարի ծննդյան տարեթիվն ու ապրած ժամանակաշրջանը:

Ասարի բժշկարանի հնագույն ընդօրինակություններից մեկն է Մատենադարանի № 413 ձեռագիրը՝ ընդօրինակված Իզմիրում, 1635 թ.[22]: Բժշկարանի վերջում կա մի բառգրքույկ՝ «Բառ և պատմութիւն մեկնած ամենայն ցաւոց» խորագրով[23]:

Ասարի աշխատությանը կից այդ փոքր բառարանն իր տեսակով նորություն է ոչ միայն հայ բժշկական մատենագրության, այլև հայ բառարանագրության պատմության մեջ:

20 Ասար Սեբաստացու մասին տե՛ս Լ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 114—117; Գ. Հովնանյան, նշվ. աշխ., էջ 448—466, Ա. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 406—410; Հ. Աճառյան, նշվ. աշխ., հտ. Ա, էջ 222:

21 Ա. Առաքելյանի հիշատակված աշխատության մեջ (էջ 406), թյուրիմացաբար, 1565 թ. համարված է Ասարի ծննդյան տարեթիվ, իսկ 1675-ը՝ մահվան:

22 Ձեռագրերը հիշված են Լ. Հովհաննիսյանի նշվ. աշխատության վերջում (приложение 2), էջ 286—306:

23 Տե՛ս Մատենադարան, ձեռ. № 413, էջ 189ա—191ա:

Մինչ այդ դեղաբանությանը վերաբերող բառարանների շարքում երևան եկավ ախտաբանական, ավելի ճիշտ՝ ախտաբանական տերմինների բառարան։ Այս բառարանը կազմված է գլխավորապես Ամիրդովլաթի «Օգուտ բժշկութեան» երկի մեջ գործածվող ախտաբանական բառերից, որոնք ըստ դասավորության բաժանված են երկու մասի՝ այբբենական և խառը։ Բառարանի առաջին մասը (այբբենական դասավորությամբ) ընդգրկում է ընդամենը 83 բառ՝ Ա, Գ, Դ, Ե, Զ, Է, Ը, Թ, Ի, Լ, Խ, Հ, Ղ, Ճ, Մ, Յ, Ն, Շ, Պ, Ս, Վ, Տ, Փ, Ք և Ֆ տառերով։ Երկրորդ մասը, որ սկսվում է բառաշարքի վերջին՝ ֆարըխ բառից անմիջապես հետո, առաջինի ապշիփարսի, դաշի, զաթլճամ, ըռէշպալխի, ըռայիթլայի, ըստուղուսար, թարաֆիտայ, թարֆիպ, լակուան, ճատարի, մոլաֆոր, նախունիխոր, պարսամ և այլ բառերի կրկնումով, պարունակում է շուրջ 70 բառ։ Ամբողջ բառարանում առանց կրկնությունների մնում է ընդամենը 133 բառ։

Բառաշարքի անկանոնությունը պետք է բացատրել բառարանի տարբեր հեղինակների կողմից կազմվելու հանգամանքներով։ Քննությունները ցույց են տալիս, որ նախապես կազմվել է բառարանի միայն առաջին մասը, որպես ավարտուն (Ա—Ֆ տառերով) բառարան, իսկ երկրորդ հատվածը ավելի ուշ է կազմվել և այն էլ ոչ թե Ասարի, այլ մեկ ուրիշ հեղինակի կողմից։ Իհարկե, հնարավոր է, որ իր բառարանը լրացնելու նպատակով այդ վերջին բառերը նույնպես Ասարը հավաքած լինի՝ Ամիրդովլաթի երկի հետագա ընթերցումների ժամանակ։ Սակայն այդ դեպքում սպասելի էր, որ Ասարի նման հմուտ բժիշկը իր բառարանը նոր բառերով համալրելով՝ միաժամանակ վերամշակեր, բառերը վերադասավորեր և ամբողջական տեսք տար բառարանին։ Այպ՝ բառարանի երկրորդ մասի համար ուրիշ հեղինակ ենթադրելը հիմնավորվում է նաև նրանով, որ միևնույն հեղինակը (այն էլ Ասարի նման) հազիվ թե այդպիսի մի փոքր բառգրքում (բացառությամբ պատահական վրիպումների) թույլ տար բառահոդվածների այդքան շատ կրկնություններ, ընդ որում միևնույն բառերը

տարբեր տեղերում հաճախ անհետևողական ուղղագրությամբ (օրինակ՝ զաթլճամր-զաթլճամ, ըռայթլայ-ըռայիթլայի, նախխունիխոր-նախունխոր և այլն)։ Զգալի տարբերություններ կան նաև միևնույն բառերի մեկնություններում՝ ձևի և նույնիսկ իմաստի տեսակետից։ Օրինակ, համեմատենք բառարանի տարբեր հատվածների հետևյալ բառահոդվածները.

Բառարանի այբ. մասում	Բառարանի խառը մասում
Զաթըլճամր. *կողին ներքևի ցաւին է։*	Զաթլճամ. *լերդին ուռեցն է։*
Ըռէշ պալխի. *խոց մի է շար և խիստ կու կսկծի, այրած խլտէ կու գոյանայ։*	Ըռէշպալխի. *խոց է, որ չոր է և կսկծէ, այրած արեն է։*
Ըստուղուսար. *թէ տարերբ։*	Ըստուղուսար. *թէ մայր և հիմն տարերաց։*
Ըռայթիլայ. *որ մորն թիւնաւոր։*	Ըռայթիլայի. *հարած, թէ թիւնաւոր հարած։*
Թարաֆիտամն. *որ կնոջն հայգն բացվի։*	Թարաֆիտայ. *հազին շատ քալելն է։*
Թարֆիպ *ասելն դեղերուն շինելն է։*	Թարֆիպ. *արած, խառնած և շաղած, և շինած դեղեր։*
Ճատարի. *բշտեր։*	Ճատարի. *որ է բշտեր դէտ բոր և եռք։*
Մոլաֆոր. *որ է պասան։*	Մոլաֆոր. *որ է տապաստատ տաք հիւանդութիւնք։*
Նախխունիխոր. *որ ըղունքն կու քերվի։*	Նախունիխոր. *որ ընդունկն կերվի և դէտ էրվիշտայ դուրս ելնէ։*
Պարսամ. *սարսամ. դօսան է։*	Պարսամ. *շավսան է, որ է կողից ներքեն ուռենայ։*

Բերված օրինակները, կարծում ենք, հաստատում են, որ Ասարի բժշկարանին կից ախտաբանական բառարանի ընդարձակողը մի անհայտ հեղինակ է։

Գլխաբառերը (բացառությամբ մի քանիսի) զանազան հիվանդությունների անուններ հանդիսացող արաբերեն և մա-

սամբ այլ լեզուների բառեր են, որոնք որպես ախտաբանական տերմիններ, օգտագործվում են հայ բժշկական գրականության և հատկապես Ամիրդովլաթի մատենագրության մեջ։ Մեկնությունները համառոտ են. բացատրվում է, թե ինչ է իրենից ներկայացնում տվյալ հիվանդությունը, ինչ ախտանիշեր ունի, ինչպես է ընթանում, ինչ հետևանք թողնում, մարմնի որ մասին է վերաբերում, որ օրգանն է ցավում այդ հիվանդության դեպքում և այլն։ Մեկնությունների մեջ հաճախ են օգտագործվում օտար բառեր, հատկապես պարսկերեն ու թուրքերեն։ Շատ բառահոդվածներ միայն հիվանդության անունը նշող երկու համանիշների թվարկում են և ոչինչ չեն ասում հիվանդության էության մասին։

Բառարանի մասին պատկերացում կարող է տալ ստորև բերվող հատվածը.

Արղանն. դեղնութիւն է։

Արծուիք. որ է աղեց ուռեց, որ է սխխայն։

Ապիլայ և տաղղայ. որ յաչքն սպիտակ անկանի։

Գանձակցուն. որ դժարութեամբ միզէ. և բուշտն ցաւի։

Գորտուկ. որ է կոծիծն։

Դաշի. խելացն անցընիլն է։

(Եւ) Նախնայ[24]. որ է ըղունկն։

Ջուզամ. ամաղուն է, որ նազլայ ասեն։

Ջայրայիայ. ինքն ուռէց մի է, որ թոքն լինի։

Ջաթըլեամբ. կողին ներքևի ցաւին է։

Էճրնախ. յարգանդին խծկիլն է. որ է գէտ ըխտաւոր լինի։

Ըստուղուսաթ. թէ տարերք։

Ըռայթիլայ. որ մորն թինաւոր։

Ըռույաֆ. քթին կաթիլն է։

Ըխտաւոր. խելաց խառնակիլն է, որ ընկնի գէտ դիւահար։

---

24 Գլխաբառը նախնայ է, որ ճիշտ է մեկնված՝ «ըղունկ»։ Բառի սկզբում Եւ-ը շաղկապ է, որ անհարկի հանդիպում է նաև ֆելինճն, լակոսն, ճկրիսն բառերից առաջ։ Այդ շաղկապը չպետք է ընդունել որպես գլխաբառի բաղադրիչ մաս, որպես մի վանկ։

Ըռանչահ. որ ձեռքն և գլուխն դողայ։

Ըխտաւորութիւն. թուրքերէն սահրոյ ասէ։

Ըռուպու. այն է, որ խոչակն տաք և կամ հով, կուրծքն խռխռայ, և շունչն կարճանայ, պալղամ է։

Ըռիճայ. ցաւ մի է, որ գիտենան, թէ օձ կայ ի փորն կանանց։

Ըռէշ պալխի. խոց մի է չար. և խիստ կու կսկծի, այրած խլտէ կու գոյանայ։

Թարքիպ. սաելն դեղերուն շինելն է։

Թոքացուն. հազն է։

Թաշանուն. ջղերոյն քաշվիլն է, որ թուրքերէն տօվրիճայ ասէ։

Թուլութիւն անդամոցն. որ թուրքերէն ղատար ասէ։

Թարաֆիտամն. որ կնոջն հայլն բացվի....[25]։

Վերևում ասվեց, որ բառարանի բառերը քաղված են Ամիրդովլաթի «Օգուտ բժշկութեան» աշխատությունից։ Սակայն հանդիպում են նաև բառեր՝ **թոքացու**, **լերթացու**, **ֆէլինճ**, (ֆալիճ, ֆէլճ), **մաշարայ** և այլ, որոնք, ըստ Ստ. Մալխասյանի «Բառգրքույկի»[26], չկան այդ երկի մեջ և վերցված են «Անգիտաց անպէտ»-ից, իսկ **գորտակ** (գորտնակ), **դաշի**, **եղփիմայ**, **իսհոլ**, **մահլամ**, **մաշարի**, **մոլաքոր**, **ճիրահակ** (թրք. ճիրահաթ), **շիմասա**, **սալաղ** և այլ բառեր այդ երկու աշխատության մեջ էլ բացակայում են։ Այս վերջին բառերից մի քանիսը գուցե Ամիրդովլաթի գործածած բառերի աղավաղումներն են, ինչպես **ըստուղուսաթ** (ըստուխոտոս), **հազայ** (հայզըն), **ղալահ** (գալահ), **փալաֆ** (քալաֆ), **խափանակ** (խաֆազան) և այլն, որոնք միշտ չէ, որ հեշտությամբ են վերականգնվում, մանավանդ, երբ գործ ունենք միայն մի ձեռագրի հետ։ Գլխաբառերը (բացառությամբ առանձին միակողմանի,

---

25 Մատենադարան, ձեռ. № 413, 189ա—189բ։ **Թուրքերէն** բառի փոխարեն հապավում՝ թ̅։

26 Տե՛ս **Ամիրդովլաթ Ամասիացի**, Օգուտ բժշկութեան, Երևան, 1940, էջ 545—578։ Այդ բառգրքույկի միջոցով ստուգել ենք ձեռագիր բառարանի բառերի առկայությունը Ամիրդովլաթի հիշյալ երկի մեջ։

ընդհանուր բացատրություն ունեցողների) ճիշտ են մեկնվում: Որոշ դեպքերում մեկնությունն իր բովանդակությամբ զգալիորեն տարբերվում է Մալխասյանի «Բառգրքույկի» մեկնությունից և նույնիսկ տվյալ գլխաբառը նաև մեկ այլ հիվանդություն է նշանակում, որ չի հիշվում «Բառգրքույկ»-ում: Օրինակ՝ խնախ տերմինը «կոկորդի ուռչելը, փողացավ, անգինա» իմաստից բացի, մեկ ուրիշ տեղում, որպես առանձին գլխաբառ, նշանակում է նաև պալղամ (ստամոքսում). «Խնախն պալղամն է, որ ստամոքացն դէպ է»: Հետևաբար, այս բառապանը շատ կարևոր է հին ախտաբանական տերմինների իմաստներն ստուգելու, ճշտելու, լրացնելու և նույնիսկ առանձին անհայտ հիվանդությունների ինչ լինելը պարզաբանելու համար:

Մեկնություններում էլ՝ որպես գլխաբառի բացատրություններ, գործածվում են բազմաթիվ բառեր, որոնք մինչև այժմ անհայտ լինելով՝ չեն մտել տպագիր բառարանների մեջ: Այդ բառերը զանազան հիվանդությունների հայերեն կամ օտար անուններ են, որոնք, հավանաբար, գործածվել են ժամանակի խոսակցական լեզվում:

Վերջապես Ասարի բժշկարանի վիեննական ձեռագրի վերջին գլուխը՝ «Վասն բառերու», մեկ ուրիշ բժշկական բառարան է, որը բնագրի հետ ամբողջություն է կազմում[27]:

Ասար Սեբաստացու բառարանները միջնադարյան սովորական, հասարակ կառուցվածք ունեցող բառարաններ են և ընդգրկումով, բովանդակությամբ ու բառարանագրական տեխնիկայի տեսակետից Ամիրդովլաթի բառարանների համեմատությամբ ցածր մակարդակի վրա են գտնվում: Սակայն կարևորն այն է, որ Ասարն ստեղծեց նեղ մասնագիտական բընույթի մի նոր՝ ախտաբանական տերմինների բառարան[28]:

27 *Տե՛ս* Տաշյան, *Ձեռագրացուցակ, թիվ 287:*

28 *XVII դարի հայ բժշկության ականավոր դեմքերից մեկն էլ Գալուստ բժիշկ Ամասիացին է: Նրա հեղինակությամբ պահպանվել է մի ընդարձակ ու հետաքրքիր բժշկարան, որի միակ ձեռագիրը (1669 թ., Կոստանդնուպոլիս) գտնվում է Վիեննայի Մխիթարյանների մատենադարանում (տե՛ս*

ՎԱՍՆ ԴԵՂԵՐՈՒՆ

Հայ բժշկական միտքը XV դարից հետո ընդհանրապես խարսխված է Ամիրդովլաթի վրա, որի թողած հարուստ գիտական ժառանգությունը հետագայում ոչ միայն լայնորեն ընդօրինակվում և ուսումնասիրվում է, այլև նոր բժշկարաններն ու բժշկական բառարանները գրվում են նրա գրվածքների հիման վրա և նրանց օրինակով: Հետամիրդովլաթյան շրջանի բժշկական աշխատություններից մեզ այստեղ հետաքրքրում է մի նոր բառարան, որն «Անգիտաց անպէտ»-ից հետո նշանակալից երևույթ է հայ բառարանագրության և առհասարակ հայ մշակույթի պատմության մեջ:

Այդ նոր բառարանի միակ ձեռագիրը, 3198 թվահամարիտակ, գտնվում է Մաշտոցի անվան Մատենադարանում[29]: Ձեռագիրը գրված է XVII դարում, գրության ստույգ տարեթիվը, տեղը և այլ հանգամանքներ հայտնի չեն: Հետագայում, նորոգման ժամանակ, ձեռագրի սկզբում որպես պահպանակ դըրված՝ որակով մյուս թերթերից խիստ տարբերվող բարակ թըղթի վրա (էջ 1ա) գրված է. «Բառարան շարադրեալ յԱմիրտէվլէթ բժշկապետէ վասն իւր յարմարեցեալ միւֆրէտաթ գրքոյն»: Ապա՝ հաջորդ թերթի վրա (էջ 2ա) բերվում է «Անգիտաց անպէտ»-ի առաջաբանի վերջին մասը՝ լեզուների ու հեղինակների անունների համառոտագրությունների ցանկը, որ սկսվում է Ամիրդովլաթի «Գիտացիր, որ յամէն լեզու մէկ մէկ նշանագիր ունի...» բառերով: Այնուհետև սկսվում է բառարանը՝

Տաշյան, Ձեռագրացուցակ, թ. 540): Այդ ձեռագրի 202ա—227բ էջերում զետեղված բառարանը, ինչպես երևում է, բավականին ընդարձակ դեղաբանական բառարան է՝ դեղերի անունների համառոտ ու պարզ մեկնություններով: Սկսվում է՝ «Միրֆայտաթ ղարմանալի և բատոյզ: Այմասն շատ ցեղ է. և ինքն սպաննող դեղերուն է... Անտուզ, որ է ռասան, որ է զէնճֆի շամին, որ է կղմուխ... Ամպէր Գ ցեղ է» *և ավարտվում է՝* «Զարանճամուլ. *բռահանի ղարանֆուլի վայրի դաղձի ցեղերուն է...» բառահոդվածով:*

29 *Նկարագրությունը տե՛ս* Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաբյան, *Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հտ. Ա, Երևան, 1965, սյուն 961:*

«Վասն դեղերուն զորութեան և ուրիշ ուրիշ զանուանսն կու յայտէ» խորագրի տակ[30]։

Արդ տեսնենք, թե իրենից ինչ է ներկայացնում այդ բառարանը։ Մատենադարանի ձեռագրացուցակը բառարանը ներկայացնում է այսպես՝ «Ամիրդովլաթ Ամասիացի, բառգիրք Անգիտաց անպէտի»։ Որ բառարանն, իրոք, կապ ունի Ամիրդովլաթի այդ երկի հետ, դա իրողություն է։ Բայց այն նախ «Անգիտաց անպէտ»-ի բառերը բացատրող բառարան չէ և այդպիսի նպատակ էլ չունի, ապա՝ Ամիրդովլաթը չէ այդ բառարանի հեղինակը։ Ինչո՞ւ պիտի նա «Անգիտաց անպէտ»-ի նման բառարանից հետո նրա բառերը բացատրող բառարան կազմեր, երբ այդ բոլոր բառերն էլ ավելի բազմակողմանի ու հանգամանորեն մեկնված են արդեն։ Բառարանն իր բովանդակությամբ թեև սկզբից մինչև վերջ սերտորեն կապված է «Անգիտաց անպէտ»-ի հետ, բայց այն ոչ թե նրա բառերը բացատրող մատենակից բառարան է, այլ նրա բառերից կազմված՝ որոշակի նպատակ ունեցող բառարան։ Անհայտ հեղինակը «Անգիտաց անպէտ»-ից նույնությամբ, առանց բառաշարքը խաթարելու, վերցրել է բոլոր գլխաբառերը, իսկ մեկնություններից էլ քաղել է միայն այն տեղերը, որոնք համապատասխանում են իր նպատակներին, իր բառարանի բնույթին։ Առաջին հայացքից թվում է, թե «Վասն դեղերուն» բառարանը նույն «Անգիտաց անպէտ»-ն է՝ համառոտ մեկնություններով, այսինքն՝ նրա մի համառոտ խմբագրությունը։ Սակայն իրականում այդպես չէ. անհայտ բառարանագիրը չի համառոտել Ամիրդովլաթի բառարանը, այլ նրա բառահոդվածներից բառացիորեն քաղել է առանձին հատվածներ, այն էլ որոշակի սկզբունքով։ Ամիրդովլաթի բառահոդվածներից նա վերցնում է միևնույն բաժինները, այն մասերը միայն, որոնք մեկնում են գլխաբառի իմաստը՝ համանիշների միջոցով կամ նկարագրական եղանակով։ Այսինքն՝

[30] Համառոտության համար մենք կվերցնենք վերնագրի միայն սկզբի մասը՝ «Վասն դեղերուն» և այդպես էլ կանվանենք բառարանն այսուհետև։

նա Ամիրդովլաթի բառարանից վերցնում է միայն բառահոդվածների՝ դեղաբանությանը վերաբերող մասերը, որովհետև նրա նպատակը դեղանուններ մեկնող բառարան կազմելն է։ Ուրեմն անանուն հեղինակը հանրագիտական բնույթի բժշկական բառարանից առանձնացնում է բժշկության մի մասնաճյուղին վերաբերող նեղ մասնագիտական բառեր։ Ընդ որում, պարզ երևում է, որ հեղինակը հետևողականորեն իր բառարանի մեջ դեղանունների մեկնությունից բացի, այլ տեղեկություններ չի մտցնում։ Եվ եթե բառարանում, այնուամենայնիվ, հանդիպում են ծանոթություններ դեղերի զորության (տարաճայի, փոխանների) և այլնի մասին, ապա դրանք պատահական չեն, այլ հեղինակը գիտակցաբար է մուծում՝ Ամիրդովլաթից քաղված հատվածների մաքի ամբողջությունը, ճշտությունը պահպանելու, նախադասությունների մեխանիկական մասնատումից, աղավաղումներից ու աղճատումներից խուսափելու նպատակով։ Նշելի է, որ բառարանի հեղինակը թե՛ որպես բժշկական մասնագետ, թե՛ որպես բառարանագիր բարձր մակարդակի վրա է կանգնած։

Բերենք օրինակներ, վերոհիշյալ բառարանների համապատասխան բառահոդվածների համեմատությամբ, անհայտ հեղինակի կատարած աշխատանքն ու նրա բառարանն ակնառու պատկերացնելու համար։

Անգիտաց անպէտ

<Անճիտան (Silphium եւ Asa), որ է սայսալիոսն (Séséli) եւ ինքն Բ ցեղ է, եւ պարսկերէն[31] անկիտան ասեն> ((Ֆարմտանա)). եւ ինքն ճլթիսին ծառն է, եւ մախրուսն է. եւ ճլթիսն իր խէժն է. եւ իր տերեւն սպիտակ եւ սեւ է. եւ լաւն այն է որ սպիտակ լինի եւ անուշահոտ. եւ այն որ տերեւն սեւ է՝ մնրին է, եւ ինքն անճիտանին սամխն է, եւ յիշած է. եւ այն որ՝ ճլթիսի մնրինն է, ինքն անճիտանին սամխն է, եւ ան անճիտանն մնրին կու լինի. եւ այն որ անճիտայի տայրիպն է՝ այնոր ճլթիսի տայրիպ կասեն, եւ ան անճիտանին՝ Ֆաշիմ կա-

[31] Բնագրում բառի փոխարեն հապավում՝ պ̅։

անն. յիշած է. եւ այն որ <անճիտանի խոռասանին է՝ ուշբարխար կասեն> անոր տակին. եւ այն որ <անճիտանի բռուսին է՝ սայսալիոս> կասեն, եւ հունդն՝ բաշիմն է. եւ յիշած է ամէն մէկն իր տեղն։ Իսկ ասէ թէ անճիտանն ուշբարղարն է, եւ կարմիր պտուղն է, եւ դասնին իր խէժն է. եւ ինքն սեւ այլ կու լինի, եւ սպիտակ այլ կու լինի. որ սպիտակ է՝ <տաք է յԴ տարաճան, եւ չոր է Ա տարաճան.> եւ նուրբ այնող է. եւ թէ դինք աւծեն հոռոմ ձիթով՝ զսպինն տանի յերեսացն. եւ ճէ այնէ. եւ աւգտէ խանազիրին. եւ ուշ(թար)զարին քացախն՝ դան լազիճ պալղամն որ ի թոքն եւ ի փայծաղն լինի, տանի. եւ զմերձաւորութիւնն ուժովցնէ. եւ զկերակուրն հալել տայ. եւ ստամոքին զդիճութիւնն շինէ. եւ զգոզն յորդորէ. եւ զճիճին, եւ զաւն ի փորուն հանէ. եւ լուծումն առնէ. եւ թէ քիչ մի ուտես՝ ամենայն մահացու դեղոցն աւգտէ. եւ թէ սուսանի ձիթով աւծես՝ աւգտէ յէրդնիսային. եւ զանձինն պեղծ հոտն փոխէ. եւ աւգտէ այն ջերմանն՝ որ ըռիպ ասեն. եւ իր տալուն չաքն Ա դրամ է. բայց <ըզեղին զեն կու առնէ. եւ զիր չարութիւնն տանի քացախն, եւ իր փոխանն քամանի քրմանին է։> ((Թուրքն դասնու ծառ կասէ))[32]։

Վասն դեղերուն

Անճիտան, *որ է սասալիոսն. բ ցեղ է. պարսկերէն անկիտան ասէ. անճիտան խոռասանի է ուշբուղար ասեն. Անճիտանի ռումի ասեն. սասալիոս. տաք է գ տարաճան, չոր է ա տարաճան. յզեղին զէնէ զիր չարութիւնն տան(է) քացախն. իր փոխանն frմանի զիրան է*[33]։

Երբեմն Ամիրզովլաթի մեկնութիւնն այնքան է համառոտված, որ զխաբառի մեկնութիւնը շատ համառոտ լինելուց բացի, նաև անորոշ է, օրինակ՝ «Ախլսաչ. ինքն ծառ մըն է»[34]։

Բերենք նաև մի քանի բառահոդվածներից բաղկացած մի հատված, որով ամբողջական կլինի պատկերացումը քննվող բառարանի մասին։

Անգիտաց անպէտ

Նաճար ի տիճալ *(Chévrefeuille). զարիմաթ ըլ ճատիճն է. ինքն բուս է. որ ի մօտն ծառ լինի՝ ի յայն փաթթի. եւ ինքն ֆաշարային ղեղերուն է։*

Նաճարայ ի զաւթայ *(Renoncule). որ է բապիճաճն. յիշած է։*

Նաճար ըլ տամ *(Anchusa). որ է շաճարճ. յիշած է։*

Նաճար ի իպրաճիմճ *(Vitex). Ղաֆիղին ասէ թէ փանճանկուշան է. եւ ոմանք ասեն թէ շահպաճճն է. եւ ոմանք ասեն թէ տրախտ ի պարմն է. եւ ինքն մուզայ ըլ աճն է. յիշած է։*

Նաճարաթ ըլ ֆաֆ. *որ է ասապէհ լ սֆրճ. յիշած է։*

Նաճարաթ ըլ պաճաղ *(Dentelaire), որ է դինապարրին. յիշած է։*

Նաճարաթ ըլ ապումէլիֆ *(Saponaire?, յ. Շ. Աբի-Մալէք). ի տիմիշխ՝ Սապուն ըլ դաֆ կասեն. ինքն բուս է. եւ ի հութ տեղեր բուսնի, եւ ի գետերուն ի մէջն. եւ ի հալաւ լուանալն՝ իր տակն զերդ զսապոն է. եւ Պատէհին*[35] *ասէ թէ ի հալիմուին ցեղերուն է. եւ ինքն զսավտան լուծէ. եւ աւգտէ ամենայն ցաւոց, մինչեւ ի գոդութիւնն*[36]։

Վասն դեղերուն.

Նաճար ի տիճալ. *զարիմաթ ըլ ճատին է. բոյս է որ ծառի մօտ լինի յայն ծառին կու փաթթտի. ֆաշարայի ցեղերուն է։*

Նաճարայ ի զաֆտայճ. *որ է քապիբաճճն։*

Նաճարայ ըլ տամ. *շանճարն է։*

---

32 *Ամիրզովլաթի, Անգիտաց անպէտ, էջ 56—57։ Բառահոդվածում բնկալ փակագծերի (< >) մեջ առել ենք այն հատվածները, որոնք այս բառարանից քաղել և իր բառարանի մեջ է համադրել անհայտ հեղինակը։*

33 *Մատենադարան, ձեռ. № 3198, էջ 10ա—10բ։ Բնագրում պարսկերէն բառի փոխարեն հապավում՝ պ։*

34 *Նույն տեղում, էջ 5ա։*

35 *Բնագրում բառի փոխարեն հապավում՝ Պտ.։*

36 *Ամիրզովլաթ, Անգիտաց անպէտ, էջ 419—420։*

Շաճարայ ի իպրահիմ. փանճակուշտն է. ոմանք ասեն թէ շահպանճն է. կամ տրախտի պարմն է. և մուխալլասն է։

Շաճարաթ ըլ ֆաֆ. որ է ասապէհ ըլ սֆրն։

Շաճարաթ ըլ պահաղ. ղինայ պարրին է։

Շաճարաթ ըլ ապումալիֆ. ի տիմիշխ՝ սապուն ըլ ղաֆ կասեն. բուս է ի հուի տեղեր կու բուանի և ի գետերուն մէջն. և ի հալաւ լվանալն. և իր տակն զետ[37] սապօն է. Իպն ասէ թէ ի քալամշուին ցեղերուն է։ Սեւտան այլ լուծէ[38]։

Այսպես հարազատորէն պահպանելով «Անգիտաց անպէտ»-ի բառաշարքը, անհայտ հեղինակն իր բառարանի մեջ է առել շուրջ 3000 գլխաբառ։ Բառերի այս քանակը զգալիորեն փոքր է Ամիրդովլաթի բառարանի (Կ. Յ. Բասմաջյանի հրատարակած) տպագիր բնագրում եղած բառերի քանակից, որը հավասար է 3754-ի։ Սակայն բառացանկերի այդ տարբերությունը որևէ պատահականության կամ թյուրիմացության արդյունք չէ։ Բանն այն է, որ «Անգիտաց անպէտ»-ի տպագիր օրինակը, որոշ չափով, համահավաք բնույթ ունի. հրատարակիչ Կ. Բասմաջյանն իր առաջաբանում նշում է, որ ինքը բնագրի մեջ ընտրությամբ մտցրել է «նաև այն բառերն ու մեկնութիւնները, որոնք՝ եսէէն՝ զանազան անձերու կողմէ եւ տարբեր գրերով աւելցուած են»[39] իր օգտագործած ձեռագրերի լուսանցքներում։ Այդ ավելացումները տպագրված բնագրում վերցված են կրկնակի փակագծերի [(( ))] մեջ՝ իրենց համատոտ, հիմնականում՝ դեղանյութին իր մեկ այլ համանիշով ներկայացնող մեկնությամբ, առանց «լիշած է» հղումի։ Դրանք իսկույն աչքի են ընկնում որպես Ամիրդովլաթի բառարանին անհարազատ բառեր։ Այդ բառերից և ոչ մեկը չկա քննվող բառարանում։ Եվ եթե Ամիրդովլաթի բառարանից դուրս հանենք

37 Ձեռագրում կան հապավումներ։

38 Ձեռ. № 3198, էջ 163բ—164ա։

39 Ամիրդովլաթ, Անգիտաց անպէտ, Կ. Բասմաջյանի առաջաբանը, էջ ժ։ Ընդգծումը մերն է։

հիշյալ անհարազատ բառերը, ապա երկու բառարանների միջև թե՛ բառերի քանակի և թե՛ նրանց դասավորության տեսակետից համապատասխանություններն ակնառու կլինեն[40]։ Օրինակ՝ «Անգիտաց անպէտ»-ի Գ-ի բառացանկը, որ կողմնակի ավելացումներ չունի, պարունակում է 38 գլխաբառ և հիշտ այդքան գլխաբառ էլ կա «Վասն դեղերուն» բառարանի նույն բառացանկում։ Դ-ի բառացանկերն էլ հավասար կլինեն, եթե առաջին բառարանի այդ բառացանկից հանենք հետագայում ավելացված երկու բառը։ Ա-ի բառացանկի 559 բառից 202-ը ավելացում է։ Մնում է հիմնական 357 գլխաբառ, որի դիմաց երկրորդ բառարանն ունի ընդամենը 310 բառ։ Այստեղ էլ տարբերություն կա, որը, սակայն, այնքան էլ մեծ չէ, և, բնականաբար, այդպիսի տարբերություն կարող է լինել, որովհետև բառարանը հիմնված է «Անգիտաց անպէտ»-ի առայժմ մեզ անհայտ մի ընդօրինակության վրա։ Բայց ինչպիսի՞ն է եղել այդ ընդօրինակությունը։ Մեր կարծիքով բառարանի հիմքում ընկած է «Անգիտաց անպէտ»-ի հնագույն և ընտիր գրչագրերից մեկը։ Այն հանգամանքը, որ այդ աղբյուրի մեջ ավելացումներ չեն եղել (եթե լինեին, անշուշտ կանցնեին բառարանին), հավաստում է այդ աղբյուրի հին, Ամիրդովլաթի ժամանակներին մոտ լինելը։ Դրա օգտին է խոսում բառարանի լեզվի և ուղղագրության հարազատությունն Ամիրդովլաթի հնագույն ձեռագրերի հետ։ Բառարանի աղբյուր-գրչագիրը Լոնդոնի բրիտանական թանգարանի Or. 3712[41] և Վիեննայի № № 624, 625 ձեռագրերի[42] նման չունի «չաւփի

40 Բացարձակ համապատասխանության մասին չէ խոսքը։ «Անգիտաց անպէտ»-ի ձեռագիրը բառերի կարգով զգալի տարբերվում է իր տպագիր օրինակից, որովհետև հրատարակիչը բառերի որոշ վերադասավորում է կատարել։

41 Ձեռագրի մանրամասն նկարագրությունը տե՛ս Ամիրդովլաթ, Անգիտաց անպէտ, Կ. Բասմաջյանի առաջաբանը, էջ է—Ը։

42 Ձեռագրերի հանգամանալից նկարագրությունը տե՛ս Հ. Ոսկեան, Յուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա, հտ. Բ, Վիեննա, 1963։ № 624-ը գրված է 1611—1619, իսկ № 625-ը՝ 1614 թվականներին։

չինի» գլխաբառն իր մեկնութեամբ։ Այսինքն՝ այդ ձեռագրերի հետ պատահանում է մի խմբագրության և եթե առաջինիդ չի ընդօրինակված, ապա նրա հետ միասին մի մայրօրինակից պիտի արտագրված լինի։ Լոնդոնի հիշյալ ձեռագիրը գրված է 1490 թվականին։ Բասմաջյանը մանրազնին պրպտումներից հետո հավաստում է, որ այն «չի կրնար Ամիրտովլաթի բուն ձեռագրին վրայէն գաղափարուած ըլլալ»[43]։ Ուրեմն այդ ձեռագիրը ծագում է մի ավելի հին բնագրից, որը, թերևս, կարող-է մայրօրինակ լինել նաև քննվող բառարանի անհայտ աղբյուրի համար։

Թե ո՞վ է կազմել այդ հետաքրքիր բառարանը և ե՞րբ՝ հայտնի չէ։ Իրողությունն այն է, որ հիշյալ բառարանը գրվել է «Անգիտաց անպէտ»-ից շատ ուշ։ Բառարանի ձեռագիրն ունի հիշատակարաններ, որոնք բոլորն էլ գրված են հետագայում, տարբեր մարդկանց կողմից և բառարանի հանգամանքները պարզաբանելու տեսակետից արժեք չեն ներկայացնում։

Եվ քանի որ բառարանն ուղղակիորեն ծագում է «Անգիտաց անպէտ»-ից, ապա նրա բովանդակության ու նշանակության մասին մեզ ասելու բան չի մնում, որովհետև նրա աղբյուրը թե՛ բանասիրական, թե՛ բնագրագիտական և թե՛ մասնագիտական ու լեզվաբանական տեսակետներից, գիտական ամենայն խորությամբ ու բազմակողմանիությամբ, սպառիչ կերպով արդեն քննված է Կ. Բասմաջյանի կողմից։

Արտաբինից կարող է թվալ, թե «Անգիտաց անպէտ»-ից հետո «Վասն դեղերուն» բառարանն իրենից առանձին արժեք չի կարող ներկայացնել։ Բայց իրականում այդպես չէ. բառարանն իր տեսակի մեջ, որպես դեղաբանական տերմինների բառարան, շատ կարևոր է ոչ միայն իր բովանդակությամբ, այլև իր հետապնդած գործնական նպատակների տեսակետից։ Դա մի յուրօրինակ բառարան է, որի հանդես գալը պայմանավորված է Հայաստանում բժշկության և հատկապես դեղա-

43 Կ. Բասմաջյանի նշվ. առաջաբանը, էջ Ը։

քանության զարգացման ընթացքով ու անմիջական պահանջներով։ Բառացանկի հարստությամբ ու բառահոդվածի բովանդակությամբ այս բառարանը հազվագյուտ է, իսկ որպես ուսումնական ձեռնարկ և առհասարակ լայն օգտագործման համար նախատեսված բառարան, զուտ կիրառական առումով իր առավելությունն ունի «Անգիտաց անպէտ»-ի նկատմամբ։

ԲԱՌՔ ԲԺՇԿԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԱՅ

Ուշ միջնադարի բժշկական բառարանների շարքում առանձնահատուկ տեղ է գրավում «Բառք են այսոքիկ, որ յայժմ կոչի բառարան։ Շարայարեցեալ բժշկական վարդապետաց հնոց և նորոց արարեալ ի վերայ այբուբենի» երկար խորագիրը կրող ընդարձակ բառարանը։ Սա, ինչպես տեսնում ենք, առաջին բառարանագրական գործն է, որ «բառք» անվանումից բացի կոչվում է նաև «բառարան»։

Այս արժեքավոր բառարանն էլ մեզ հասել է միայն մի գրչագրով, որը պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում 6275 թվահամարի տակ[44]։ Ձեռագիրը բժշկական նյութերի մի ընդարձակ ժողովածու է, որը բացի հիշյալ բառարանից բովանդակում է նաև Ամիրդովլաթի «Օգուտ բժշկութեան», «Ախրապատին» և «Անգիտաց անպէտ» աշխատությունները։ Դարձյալ տեղեկություններ չկան ձեռագրի գրության ժամանակի, հեղինակի, վայրի և այլ հանգամանքների մասին։ Միայն բառարանի վերջում (էջ 239բ) ձեավոր գլխատառերով գրված է՝ «Վերջ եղև», իսկ այդ բառերի տակ՝ գրչի անընդմեջ շարժումով գծված հասարակ վերջազարդի տարբեր անկյուններում գտնվող տառերի կապումով՝ կարդացվում է Սէրօբ։ Իսկ թե ո՞վ է Սերոբը՝ գրի՞չն է, թե՞ բառարանի կազմողը, անհայտ է մնում։ Բանն այն է, որ բառարանի անհայտ հեղինակը մի սովորական, ձեռագրեր արտագրող գրիչ չէ, այլ

44 Ձեռագրի նկարագրությունը տե՛ս Ամիրդովլաթ, Օգուտ բժշկութեան, Ստ. Մալխասյանի առաջաբանը, էջ Լ—ԼԱ։ Բառարանը զետեղված է այդ ձեռագրի 184ա—239բ էջերի վրա։

մի հայ բժիշկ, որը լավ է տիրապետում արաբերեն, պարսկերեն, հունարեն, լատիներեն ու թուրքերեն լեզուներին։

Ձեռագիրը գրված պիտի լինի XVII դարի երկրորդ կեսին կամ, ամենաուշը, XVIII դարի սկզբներին։ Մենք առավել հավանական ենք համարում, որ այն գրված է XVII դարում։ Եթե նույնիսկ ընդունենք, որ ժողովածուն գրված է XVIII դարի սկզբներին, ապա բառարանը, որի կազմելու համար, անշուշտ, տարիների աշխատանք է պահանջվել, կազմված պիտի լինի XVII դարում։ Եվ դա այն դեպքում, եթե ընդունենք, որ այդ բառարանը (այլև ամբողջ ժողովածուն) ընդօրինակված չէ մի այլ ձեռագրից։

Արտաքինով (կառուցվածքով) «Բառք բժշկական վարդապետաց»-ը չի տարբերվում իր համանման նախորդներից. բերվում է գլխաբառը, ապա տրվում է նրա համառոտ, մեծ մասամբ՝ համարժեքային մեկնությունը։ Այսինքն՝ բառարանը որևէ նորություն չի մուծում բառարանագրության տեխնիկայի մեջ։ Ահա մի ընդարձակ հատված այդ բառարանի սկըզբից.

Ալուսան. որ է ալուսանք։
Ատրիլալ. որ է ագռաւու ճանկ։
Ատրիլալ ի ղալպ. որ է ատրիլան. որ կանանչ է և քիչ մի մեծկակ է։
Ատրիլալ ի մարի. որ է ատրիլալն որ կապոյտ է։
Արղիս. որ է ծորին տակի կեղևն. որ է դեղնո տակ։
Աբարբեղ. որ է աբարբուն։
Աֆսար. որ է խլալ։
Աբարբիոն. որ է սատապի խէժն. որ է ֆարպիոն. որ է ֆարֆիոնն։
Աբիոն. որ է աբիմոն։
Աբարբուն. որ է աբարբիոն։
Աբիմոն. որ է աբիրոն։
Աբիրոն. որ է աբպիուն։
Աբիուն. որ է աֆիոն։
Աբրոտանոն. որ է այխտանայ։

Աբիմոն. որ է աֆիոն. որ է սև խաշխաշին և հազրին խէժն. որ է կաթն. կիսաւն. որ է բացւեննկն։
Աբրինճ. որ է ապրանձ։
Աբիուն. որ է քարաֆս։
Ագարուս. որ է ախարուն։
Ագռաւ. որ է ղարղայ։
Ագռաւին ոտճ. որ է բոխճլիլ ղուռապ։
Ագուբարոբինայ. որ է ամբարբիոն։
Ագար. որ է ըրինջն։
Ագֆար. որ է երինջն։
Ադմտ. որ է սիմիտ։
Ագռաւու ճանկ. որ է բոխճլիլ ղուռապն. որ է թախլալթոխի ասէ։
Ագացիայ. որ է ագասիայ։
Ագասիայ. որ է աղաղիայ։
Աեմարիդալիս, որ է դեղին սուսանն. որ է այմառուղալառ։
Ախարանուտանի. որ է ղուեթլունճա օթ։
Ագայի. որ է ղարաղի ծառն։
Ագայ բլ ֆալպ. որ է միխատայ։
Ագատրախտ. որ է շաճարի ղամին...[45]

Ավարտվում է բառարանը ֆրաբեճն, ֆրապիոն, ֆիֆալ գլխաբառերով։ Բառացանկեր կան Ա—Ֆ տառերով, բացառությամբ Ի և Օ տառերի (Օ-ով բառերը սկսվում են աւ երկբարբառով և բերված են Ա-ի բառացանկում)։ Բառացանկերից առաջ կան նշումներ՝ տվյալ բառացանկի ավարտման և հաջորդի սկսելու մասին, օրինակ՝ «Կատարեցաւ բենն և ըսկսիմք գրել գիմի բառն», «Բառ ի վերայ գային», «Եւ այժմ ըսկսանիմք Է. որ գրեալ են այսոքիկ», «Եւ այժմ գրեմք ինին», «Բառ ի վերայ փիւրին է» և այլն։ Շատ բառահոդվածներ կրկնվելով, նույնությամբ կամ որոշ ձևական տարբերություններով հանդիպում են մի քանի անգամ։ «Բառք բժշկական վարդապետաց»-ը մեր հին բառարանագրության գլուխգործոցներից է։ Բառացանկի հարստությամբ այն անգերազանցելի մնաց ընդ-

45 Մատենադարան, ձեռ. № 6275, էջ 184ա։

Հուպ մինչև մեր օրերը, մինչև լատին-հայերեն բժշկական բառարանների հանդես գալը: Բառարանի մեջ կան, իհարկե, ուրիշ բառեր էլ, առհասարակ բժշկական տերմիններ, սակայն դեղանունները կազմում են բառամթերքի հիմնական մասը: Իսկ դա էլ պատահական չէ, այլ արտացոլումն է այն իրողության, որ միջնադարյան բժշկությունը, մասնավորապես XV—XVII դարերում, Հայաստանում իր տարբեր մասնաճյուղերի մեջ զարգացման նույն մակարդակը չուներ և համեմատաբար բարձր էր դեղագիտության ասպարեզում: Բառարանը միջնադարյան հայ բժշկության տերմինաբանության գանձարանն է. նրա մեջ ամփոփված են վաղ ժամանակներից մինչև XVII դարի վերջերը գրված բժշկարաններում գործածված տերմինները: Եվ պատահական չէ, որ բառարանի հեղինակը վերնագրում հիշատակում է «հնոց և նորոց վարդապետաց», որոնց երկերը աղբյուր են հանդիսացել իր բառարանի համար: Եվ ոչ միայն հայ բժշկության, այլ այդ ժամանակ Հայաստանում աստիճանաբար ճանաչում գտնող եվրոպական աղբյուրների բազմաթիվ դեղանուններ անցել են բառարանին:

Բառացանկում եղած կրկնություններով հանդերձ այս բառարանում հաշվվում է շուրջ 9650 գլխաբառ, այսինքն՝ երկուսուկես անգամ ավելի «Անգիտաց անպէտ»-ի բառերից: Սա պերճախոս վկայությունն է այդ շրջանում բառարանագրության բուռն վերելքի, որն իր փայլուն արտահայտությունն է գտնում գլխավորապես բժշկության մեջ, ի դեմս մասնագիտական բառարանների: Ստորև բերվող համեմատական տախտակը ակնառու կերպով ցույց է տալիս բժշկական բառարանների ծավալային աճը ժամանակի ընթացքում: Առաղրված են հայ բժշկության տարբեր շրջանների երեք հիմնական բառարանների՝ «Բառք Գաղիանոսի բժշկապետի», «Անգիտաց անպէտ»-ի և «Բառք բժշկական վարդապետաց»-ի համապատասխան բառացանկերում առկա գլխաբառերի քանակը ցույց տվող թվերը:

Նախ նշենք, որ բերված տախտակը բառերի քանակի հետ միաժամանակ ցույց է տալիս, որ «Բառք Գաղիանոսի» բառա-

բանը (որի մեջ Ը, Ծ, Ճ և այլ տառերով սկսվող բառեր չկան և առկա են Ի-ով սկսվող բառեր) շատ ավելի հին է մյուս երկու բառարաններից, գրված է այն ժամանակ, երբ հայ բժշկությունը դեռևս չէր կրում արաբականի ազդեցությունը:

Բառացանկ	Բառք Գաղ.	Անգիտ. անպէտ	Բառք բժ. վարդապետաց
Ա	90	559	1024
Բ	27	31	128
Գ	19	38	87
Դ	18	20	131
Ե	29	45	288
Զ	1	127	54
Է	—	17	106
Ը	—	10	213
Թ	14	75	11
Ժ	—	3	88
Ի	7	23	255
Լ	7	104	438
Խ	6	161	51
Ծ	—	17	369
Կ	71	86	652
Հ	25	289	37
Ձ	—	18	513
Ղ	20	244	223
Ճ	—	106	651
Մ	29	216	259
Յ	—	157	237
Ն	12	70	416
Շ	—	154	91
Ո	22	36	71
Չ	—	17	625
Պ	24	259	40
Ջ	4	10	146
Ռ	9	77	753
Ս	46	264	216
Վ	1	81	492
Տ	6	198	8
Ր	3	2	14
Ց	—	4	—
Ւ	10	—	128
Փ	19	13	427
Ք	21	126	213
Ֆ	—	97	
Ընդամենը	540	3754	9601

Տախտակում նշված թվերն, այնուամենայնիվ, սպառիչ չեն, նրանք ցույց են տալիս միայն գլխաբառերի քանակը և ոչ

թե բառարանների բացարձակ հարստությունը, որի մեջ մըտնում են նաև մեկնություններում գործածվող բազմաթիվ դեղանուններ և այլ բառեր։

Այս հանգամանքը մենք նշում ենք հատկապես «Անգիտաց անպէտ»-ը նկատի ունենալով. Ամիրդովլաթը բառահոդվածներում բերում է մեկնվող գլխաբառերի բազմաթիվ համանիշներ զանազան լեզուներով, ինչպես նաև տեղական ու բարբառային անվանումներ (տե՛ս, օրինակ, ապուխալիսայ, դինի, դիվու. ձար, զաճ, թուտարի, իթխիր, իսլիխ, լուֆ, հաշայ, զուլպ, մայ ըլ պահր, մալճ, յաղյաղ, շահպանակ, ուպհուլ, սարախս, սաճար ըլ զուտրուպ, տինսաղուս, քունտուր և բազմաթիվ այլ բառերի մեկնություններ), որոնք, սակայն, մեծ մասամբ բառարանում որպես գլխաբառեր չեն բերվում, Օրինակ՝ «Զէպախ»-ի մեկնության մեջ, որպես այդ բառի համանիշներ, հիշվում են սնդիկ, ժիվա, սիմասր, ալյաեան, ալդապիտ, ալզամզամ, ալհայը, ալմայ, ալսահապ, ալնուր, ալդավատուղ, ալբռաւհանի, յայն, ալհայըվան, ալլին, ալհալ, ալտաւհն, ալապախ, ալֆարար, ալբռուհ, ալբռւհ, ալնաղիտ և ալտայեարին բառերը, որոնցից և ոչ մեկն էլ գլխաբառ չէ «Անգիտաց անպէտ»-ում։ Մինչդեռ «Բառք բժշկական վարդապետաց» բառարանում այդ բոլոր բառերն էլ բերվում են որպես գլխաբառեր։ Բացի դրանից, այս բառարանի մեկնություններում էլ կան շատ բառեր, որոնք չեն մտնում բառաշարքի մեջ, սակայն դրանք անհամեմատ քիչ են, քան Ամիրդովլաթի բառարանում։

Գլխաբառերի հետ միաժամանակ մեկնություններում եղած բառերի հաշվառումը, որ մենք պայմանականորեն բառարանի «բացարձակ» հարստություն ենք համարում, կիրառելի է միայն հին բառարանների նկատմամբ, որովհետև, վերջին հաշվով, մեզ համար կարևորն այն է, թե որքան և ինչպիսի տերմիններ կան տվյալ հին բնագրում առհասարակ։ Մենք նկատի ունենք, իհարկե, այն տերմիններն ու մասնագիտական բառերը, որոնք բառաշարքի մեջ գրանցելը չի հակասում տվյալ բառարանի բնույթին ու նպատակներին։

Արդ, հաշվառման վերոհիշյալ եղանակով տեսնենք, թե որքան տերմիններ ունի ընդհանրապես հիշատակված երկու մեծ բառարաններից յուրաքանչյուրը։ Եթե հաշվի առնենք «Անգիտաց անպէտ»-ի նաև մեկնություններում առկա դեղաբանական բառերը, որոնք չկան բառաշարքի մեջ, ապա այդ բառարանում բառերի թիվը կլինի մոտ 7500։ Եվ եթե դրան ավելացնենք նաև շուրջ 3100 ախտաբանական այն տերմինները, որոնք դարձյալ կան մեկնությունների մեջ և չեն հիշվում բառաշարքում, ապա կտեսնենք, որ բառարանի մեջ կա 10600 բառ, ինչ կազմում է այդ բառարանի բացարձակ հարստությունը։ Մյուս կողմից, եթե «Բառք բժշկական վարդապետաց»-ից դուրս հանենք կրկնությունները, ինչպես նաև գլխաբառերի այլևայլ տարաձևերը, որոնք նույնպես առանձին գլխաբառեր են հանդիսանում, ապա այդ բառարանի բառաքանակը զգալիորեն կպակասի։ Ահա մի օրինակ. «Բառք բժշկական վարդապետաց»-ի Պ-ի բառացանկում կա 625 գլխաբառ, որի դիմաց Ամիրդովլաթի բառարանն ունի ընդամենը 259 բառ։ Սակայն վերջինիս մեջ Պ-ով սկսվող դեղաբանական բառերի ընդհանուր թիվը հավասար է 520, իսկ ախտաբանական բառերինը՝ 126-ի։ Ուրեմն առաջին բառարանը երկրորդից ընդամենը 105 դեղաբանական բառ ավելի ունի։ Եվ եթե այդ 105 բառից հանենք Պ-ի բառացանկում կրկնվող՝ պալամուտ, պախիլաչ, պախուր, պահար, պանիր, պանավշայ, պանտաֆիլօն, պապունաճ, պասվայիճ, պասպասայ, պատրուճ, պատվայդ, պատեխ և այլ, շուրջ 50 գլխաբառեր, կմնա 60 բառ, ինչպես՝ պարկիլիլի, պարկուկ, պէսէտ, պուղ և այլն։ Ընդ որում այդ մնացյալ բառերի մեծ մասը պզր (արաբ. برز բզր «հունդ») բառով կազմված բարդ կամ բաղադրյալ տերմիններ են։ Նման բառերը (պզր-ով կազմված) «Անգիտաց անպէտ»-ում 56 են, իսկ մյուս բառարանում՝ 90։ Այսպիսով, տեսնում ենք, որ բժշկական տերմինների ընդհանուր քանակով բառարանների տարբերությունն այնքան մեծ չէ, որքան ցույց են տալիս գլխաբառերի քանակն արտահայտող թվերը. այդ տարբերությունը հազիվ 1000-ի հասնի։ Այնուամենայնիվ տարբերու-

Թյունը փոքր չէ. մոտ 1000 նոր բժշկական տերմիններ ունենալը մեծ առավելություն է միջնադարյան մի բառարանի համար: Դա ցույց է տալիս, որ բժշկական գրականությունն Ամիրդովլաթից հետո համալրվել ու հարստացել է նոր երկերով, որոնք և նոր տերմիններ ու մասնագիտական բառեր են տվել բառարաններին:

«Բառք բժշկական վարդապետաց» բառարանի այդ հատուստ բառամթերքը գոյացել է հետևյալ աղբյուրներից.

ա) Ամիրդովլաթի «Անգիտաց անպէտ»-ից, մասամբ «Օգուտ բժշկութեան» և այլ երկերից:

բ) Հին բժշկական բառարաններից՝ «Բառք Գաղիանոսի», «Թարգմանութիւն դեղոց» և այլ:

գ) Հետամիրդովլաթյան շրջանի նոր հայերեն բժշկական երկերից:

դ) Արևելյան և եվրոպական բժշկական երկերի հայերեն նոր թարգմանություններից:

ե) Խոսակցական լեզվում ու բարբառներում գործածվող դեղանուններից և այլ բժշկական բառերից:

Այսինքն՝ բառարանագիրն օգտվել է իր ժամանակի այն բոլոր աղբյուրներից, որոնք հայտնի են եղել հայ բժշկությանը: Այդ բոլորի մեջ, իհարկե, նրա համար հիմնական աղբյուր է եղել «Անգիտաց անպէտ»-ը, որի բառերը (բացառությամբ նրանց, որոնք չեն եղել հեղինակի օգտագործած գրշագրում) լրիվ մտել են բառարանի մեջ: Բայց դրանով չի սահմանափակվում «Անգիտաց անպէտ»-ի նշանակությունը այս բառարանի համար: Այն ոչ միայն բառամթերքի աղբյուր է եղել, այլև, ինչպես ստորև կտեսնենք բառահոդվածի քննության ժամանակ, բառարանի հեղինակին օգնել է տերմինների իմաստները մեկնելու և հատկապես դեղանյութերի տարբեր օտար անունները որոշելու ու ճշտելու գործում: Իհարկե, «Անգիտաց անպէտ»-ի մի շարք բառեր չկան բառարանում. եթե, օրինակ, երկու բառարանների Ծ-ի բառացանկերը լրիվ համապատասխանում են իրար, ապա այդ չի կարելի ասել մի քանի այլ բառացանկերի մասին: Սակայն դա բառարանագրի

աշխատանքով չի պայմանավորված, այլ բառարանին աղբյուր ծառայած գրշագրով, որի մեջ, հավանաբար, չեն եղել «Անգիտաց անպէտ»-ի այն բառերը, որոնք չկան քննվող բառարանում: Մյուս աղբյուրներից (հատկապես XV դարից հետո գրված) վերցված բառերի զգալի մասը հունա-լատինական և թուրքական ծագում ունեցող բառեր են, որոնք անծանոթ են նախորդ շրջանների բժշկարաններին: Այս կարգի բառերի քանակի աճը բառացանկում հետևանք է այն բանի, որ հայ բժշկության վրա արաբական ազդեցությունն աստիճանաբար թուլանում է և համեմատաբար ուժեղանում են կապերը եվրոպական բժշկության հետ: Մյուս կողմից թուրքերենն այն աստիճան է թափանցում հայերի (հատկապես Արևմտյան Հայաստանի) խոսակցական լեզվում, որ թուրքերենի կերպարանք ստացած արաբական ու պարսկական բառերը անցնում են նույնիսկ բժշկարանների մեջ և արմատավորվում:

Ըստ իմաստի դեղանունները բազմազան են. դրանք նշանակում են օրգանական և անօրգանական ծագում ունեցող նյութեր, որոնք կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

ա) Բուսական աշխարհին կամ բուսականությանը վերաբերող դեղանյութեր՝ խոտեր, ծառեր, ծաղիկներ, բանջարեղեններ, բույսերի արմատներ, տերևներ, կեղևներ, սերմեր, հատիկներ, հունդեր, պտուղներ, ինչպես նաև բուսական յուղեր, ձեթեր, խեժեր, դինիներ, հյութեր, օշարակներ և այլն:

բ) Կենդանական աշխարհին վերաբերող դեղանյութեր՝ ընտանի ու վայրենի խոշոր ու մանր եղջերավոր անասուններ, գազաններ, թռչուններ, ձկներ, միջատներ, սողուններ, երկկենցաղներ, կենդանիների մարմնի զանազան օրգաններ, ինչպես նաև կաթ, միս, յուղ, բուրդ, ձու, արյուն, մեղ և այլ բաներ:

գ) Քիմիական դեղանյութեր՝ մետաղներ, մետաղակերպներ (մետալոիդներ), հեղուկներ, ժանգեր, ներկեր, աղեր, կավեր, թանկագին ու բուժիչ քարեր, լուծույթներ, միացություններ, փոշիներ և այլն:

Բառարանում կան նաև մի շարք այլ բառեր, որոնք դեղանյութեր չեն նշանակում և բժշկական բառեր չեն (ինչպես՝ կղմինդր, ածուխ, պուտուկ, աճոր և այլն), սակայն բառաշարքի մեջ են առնված, պարզապես, բժշկարաններում գործածված լինելու համար։

Դեղանունների մեջ գերակշռություն ունեն արաբերեն բառերը (այդ թվում նրանք, որոնք բժշկարաններին են անցել ոչ թե արաբական, այլ պարսկական ու թուրքական աղբյուրներից և կրում են այդ լեզուների կնիքը), ապա գալիս են հունա-լատին և վերջապես հայերեն բառերը՝ ագռաւու ճանկ, աղած միս, աղուէս, այրած պղինձ, այծ, բարդի, բզեզ, գայլ, ջորեկ, գառնալեզու, դեղձ, եղևնահունդ, լոր, խաղող, ծովու փրփուր, ծիրան, կաքաւ, հաւկիթ, ձիւնծաղիկ, մարգարիտ, ոսկի եղէգ, շարհոտ, ջրախոտ, սիսեռ, վաղամեռուկ, ցմխտակ և այլն, որոնց թիվն, ի շարս գլխաբառերի, շատ փոքր է։ Հայերեն բառերն, ընդհակառակն, ավելի շատ են մեկնություններ մեջ. դրանք գլխաբառերի հայերեն համանիշներն են, որոնց դպալի մասը օտար բառերի պատճեններ են։

Անցնենք բառահոդվածի վերլուծությանը։

Նշվել է արդեն, որ բառարանը սովորական, հասարակ կառուցվածք ունի և այդ կողմից ուշադրության արժանի չէ։

Վերևում տեսանք, որ խնդրո առարկա բառարանը դեղաբանական բառերի քանակով գերազանցում է «Անգիտաց անպէտ»-ին, սակայն բառահոդվածի կառուցվածքով ու բովանդակությամբ չի հասնում նրան և մնում է ավելի հին բառարանների մակարդակին։ Դա մասամբ պայմանավորված է բառարանի բնույթով ու նպատակներով։ Անհայտ բառարանագիրը բառերը կատարյալ այբբենական կարգով չդասավորելով ու հղումներ չկատարելով, այնուամենայնիվ, յուրահատուկ է լուծում բառարանից դյուրությամբ օգտվելու հարցը։ այն է՝ բառարանում ընդգրկված յուրաքանչյուր տերմինի գրության ու արտասանության բոլոր ձևերը ներկայացնում է որպես առանձին գլխաբառեր, ընդ որում խմբավորելով դրանք բառաշարքի մի որոշակի հատվածում։ Սա, ըստ էության, նա-

հանջ է բառարանագրական տեխնիկայի ամրիդովլաթյան նվաճումներից, սակայն գործնական տեսակետից իր առավելությունն ունի. դրանով հեշտանում է բառարանից օգտվելը՝ որոնելի բառը կարելի է շուտ գտնել, նվազում են հնարավոր շփոթումներն ու թյուրիմացությունները, չնայած միաժամանակ ընդլայնվում է բառացանկը։

Բառարանի հեղինակը իր օգտագործած աղբյուրի հետ վարվել է ճիշտ այնպես, ինչպես այդ նույն աղբյուրի հետ վարվել է մեզ արդեն ծանոթ ախտաբանական բառարանի հեղինակը։ Այսինքն՝ «Անգիտաց անպէտ»-ից նա զգուշությամբ, իր նպատակին խստիվ համապատասխան, վերցրել է դեղաբանական տերմիններն իրենց համառոտված, երբեմն էլ բառացի մեկնություններով։ Բերենք օրինակներ այդ հանգամանքը ցուցադրելու համար՝ առնչվող բառարանների համապատասխան բառահոդվածների համեմատությամբ։

Անգիտաց անպէտ	Բառ բժշկ. վարդապետաց
Մարվարիայ (Chondrille). որ է պաֆաստե. եւ ինքն վայրի հնդուպէին ցեղերուն է. խիստ լեղի է. եւ Ղռազկանն Որդին ասէ, թէ մարվարիան ի քաֆուրին ցեղերուն է, եւ լեղի է, որ կաթն յիրմէն կու քայլէ եւ կերթայ[46]։	Մարվարիայ. որ է պաֆաստե. և ինքն ի վայրի հնդուպէին ցեղերուն է։ խիստ լեղի է։ և Ղռազկան Որդին ասէ թէ մարվարիան ի քաֆուրին ցեղերուն է. և լեղի է. և կաթն յիրմէն կու քայլէ և կու երթայ[47]։
Շապաի. (Rhamnus paliurus). ինքն խոտ մըն է որ տերեւն նման է մրտենոյ տերեւին...[48]։	Շապաի. ինքն խոտմն է. որ տերևն նման է մրտենու տերևին[49]։

46 Ամիրդովլաթ, Անգիտաց անպէտ, էջ 352։
47 Մատենադարան, ձեռ. № 6275, էջ 213ա։
48 Ամիրդովլաթ, նույն տեղում, էջ 417։
49 Ձեռ. № 6275, էջ 218բ։

Ռախպիճ (Petit laitacide). որ է այն ջուրն որ ի քամած մածունէն կու ելնէ, եւ կու եփեն որ կու թանձրանայ...[50]

Նաւմալ. դեղնգուն կու լինի. տերեւին կարմիր կարմիր ծաղիկ կունենայ, որպէս տղտի ծաղիկ լինի. բայց տերեւին բոլոր լինի, եւ ծաղիկն ի պնակ կու նմանի. եւ մարդու յերկանութեանով է յերկանքն...[52]

Ռախպիճ. որ է այն ջուրն որ քամած մածնէն կու ելանէ. և կու եփեն որ կոչ թանձրանայ[51];

Նաւմալ. խոտէ դեղնգուն կու լինի. տերևին կարմիր կարմիր ծաղիկ կունենայ. որպէս տղտի ծաղիկ կու լինի. բայց տերևին բոլոր լինի. և ծաղիկն ի պնակ կու նմանի. և ինքն մարդայչափ մի է յերկայնութիւնն[53];

Այդպես են բառարանում «Անգիտաց անպէտ»-ից քաղված գրեթե բոլոր ընդարձակ բառահոդվածները: Բառարանի հեղինակը բաց է թողնում Ամիրդովլաթի հղումները, ինչպես նաև բառի ծագումը ցույց տվող համառոտագրությունները, որոնք սակայն, պատահաբար, պահպանվել են նորուն, ձաղկորեկ, յարար, ֆախտայ և այլ բառերի մեկնություններում:

Մեկնությունները կատարված են գերազանցապես համանիշային կամ համարժեքային եղանակով, օրինակ՝ «Անզազ. որ է ծոր» ձևով, իսկ երբեմն էլ՝ «Պալսուղուսուն. իրենն վայրի քառաթ կու ասեն» կամ այլ կերպ: Առանձին դեպքերում գլխաբառը բացատրվում է նաև նկարագրական եղանակով, ինչպես՝ «Ֆալպիրնաս. եղէգ կու նմանի. պտուղն պուղուն է և սպիտակ հունդ ունի կորեկի չափ»:

Վերևում ասվեց, որ միևնույն դեղանվան տարբեր ձևերը բերվում են որպես առանձին գլխաբառեր: Դրանք մեծ մասամբ փնջեր են կազմում և մեկնվում են հաջորդաբար՝ առաջին գլխաբառը մեկնվում է իր մի որևէ համանիշով, ապա այդ համանիշ-մեկնությունը առնվում է որպես գլխաբառ և մեկնվում մեկ այլ բառով, վերջինս էլ գլխաբառ դառնալով՝ մեկնվում է իր հերթին և այլն: Ինչպես, օրինակ՝

Նաեմ. որ է նաճլ:
Նաճլ. որ է նաճիր:
Նաճիր. որ է նաճիլ:
Նաճիլ. որ է սէդ[54]:
Տիճաշուս. որ է տինաղուս:
Տիճաղուս. որ է տինճաղուս:
Տիճճաղուս. որ է տինղասուս:
Տիճղասուս. որ է խաս ըլ քալպ և չօպան տայճաղի ասեն:
Տիճսաֆուս. որ է խաս ըլ քալպ:
Տիճղասուս. որ թուրքերէն[55] տարախլիկ ասէ. և չօպան տայճաղի ալ ասեն[56]:
Ջաճճար. որ է զանճաճ:
Ջաճճաո. որ է զանկաո:
Ջանկաո. որ է զանճար[57]:
Ջաճճար. որ է զանկաո:
Ջանկար. որ է շինճար. խոտ է[58]:

Այդպես են մեկնվում նաև արարբեղ, արիոն, ազարիոն, ազլեմիայ, ամիրպարիս, անիզուն, գաղտակուր, գոպոպէ, թառանճապին, թարպօզայ, լաճուվարդ, ճալխուզայ, մալհաճաճին, մօլօխիայ, մամիսայ և բազմաթիվ այլ գլխաբառեր իրենց տարաձևերի բառափնջերում: Հաջորդական մեկնության այդ կարգը միշտ չէ, որ ճշտությամբ պահպանվում է, ինչպես նաև բառի օրինակում, երբ գլխաբառը մեկնվում է իր այլաձևերի օգնությամբ: Կան նաև փունջ կազմող գլխաբառի այլ մեկնություններ: Օրինակ.

50 Ամիրդովլաթ, նույն տեղում, էջ 487:
51 Ձեռ. № 6275, էջ 225բ:
52 Ամիրդովլաթ, նույն տեղում, էջ 406:
53 Ձեռ. № 6275, էջ 216բ:
54 Ձեռ. № 6275, էջ 216բ:
55 Բառի փոխարեն ձեռագրում հապավում թ:
56 Ձեռ. № 6275, էջ 234ա:
57 Այդ բառահոդվածը թյուրիմացորեն է առաջացել, չպետք է լիներ:
58 Ձեռ. № 6275, էջ 193ա:

Յարար. որ է ուպհուլ:
Յարար. որ է վայրի սարվն:
Յարար. որ է պահարն[59]:
Ջեռնատաղոյ տակն. որ է ձեռատաղոյ տակն:
Ջեռատաղոյ տակն. որ է ղաֆէթն:
Ջեռատաղոյ տակ. որ է ծոթնոյ տակն[60]:

Սակայն բառերի փնջավորման այդ եղանակը մինչև վերջ կանոնավոր չէ և հետևողականորեն չի կիրառվում ամբողջ բառացանկում: Օրինակ յարար բառը, բացի վերևում բերված փնջից, կա նաև նույն բառացանկի մեկ այլ տեղում՝ «Յարար. նայ է»: Շատ հաճախ տարբեր ձևի մեկնվող միևնույն գլխաբառերը բոլորովին չեն փնջվում և գտնվում են բառացանկի տարբեր տեղերում: Դրանք, այնուամենայնիվ, շեղումներ են և արդյունք են անհետևողականության: Բառացանկում բառերի փնջային եղանակով դասավորելու փորձը վաղուց արդեն գոյություն ուներ և կիրառվել է մեր միջնադարյան շատ բառարաններում, բայց քննվող բառարանում այն անհամեմատ լայն կիրառում ունի:

Գլխաբառերը մեկնվում են ինչպես հայերեն, այնպես էլ օտար բառերի օգնությամբ. այն բոլոր դեպքերում, երբ հնարավոր է բառը մեկնել հայերեն, երբ կան տվյալ բառի հայերեն համարժեքները՝ բառարանի հեղինակը գործածում է հայերեն բառեր, իսկ օտար բառերին դիմում է այն ժամանակ, երբ համապատասխան հայերեն բառեր չկան, կամ եթե կան էլ՝ բժշկության մեջ որպես տերմիններ չեն ճանաչվում: Հայերենի հնարավորությունները լրիվ չեն օգտագործվում և նախապատվությունը տրվում է օտար բառերին այն դեպքերում միայն, երբ վերջիններս արդեն արմատավորված են բժշկական գրականության մեջ, խոսակցական լեզվում, և մարդիկ տվյալ դեղանյութը ճանաչում են նրա հենց այդ օտար անվանումով: Այդ պատճառով էլ «Մայ. որ է ջուր», «էլլեպօրում. որ

---

59 Ձեռ. № 6275, էջ 215բ:

60 Նույն տեղում, էջ 207ա:

է սև վրացի կոճ», «Արփա. որ է գարի», «Մար. որ է օձ» և բազմաթիվ նման բառահոդվածների կողքին կան նաև՝ «Աղադիայ. որ է հազազն», «էլենիում. որ է ռասան», «Սամսիմոն. որ է ազան ըլ ֆար», «Ֆատ. որ է քուշուլայ» և այլ մեկնություններ: Ջենք խոսում այլևս այն մասին, որ երբեմն հայերեն բառերն էլ են բացատրվում օտար բառերով (հատկապես չիչակի, յափրաղ, քօքի, տաշի, օթի, ղուլաղի, պալղի և այլ բառաձևերի օգնությամբ): Հայերեն գլխաբառերը մեկնվում են նաև բարբառային բառերով՝ «Իղ. եղ», «Միծեռն. ծղծղնիկ» կամ՝ «Ագացիայ. ագասիայ» և այլն: Կան նաև այնպիսի բառահոդվածներ, որոնք չեն բացահայտում գլխաբառի իմաստը, այլ մոտավոր տեղեկություն են տալիս նրա մասին. իգիդոն, լայրխատաս, ճարսիմոնայ բառերի դիմաց կա միայն՝ «ինքն խոտ է», ճեղասանն մեկնվում է՝ «ինքն համն է ի միջացետսն» և այլն: Հանդիպում են նաև սոսկ գլխաբառի կրկնություն հանդիսացող, կեղծ կամ սխալ մեկնություններ՝ «Առջասպ. որ է առջասպ», «Մօշի. որ է մօշի», «Յարար. եղէգըն» (նախորդ յարաֆ-ի հետ շփոթելով) և այլն: Իսկ խատաաջրի, կաւֆաւարօտ, ճսկիլ, մումզին, պունղա և այլ գլխաբառեր չեն մեկնված, նրանց դիմաց կա միայն՝ «որ է»: Մեկնությունների բացթողման պատճառն այն է, որ բառարան կազմողը հավանաբար հստակորեն չի պատկերացրել կամ պարզապես չի իմացել, թե ինչ է նշանակում գլխաբառը, որն, այնուամենայնիվ, բառարանի մեջ է մտցրել նրա նշանակությունը հետագայում պարզելու, ճշգրտելու և ճիշտ մեկնությունը տալու նպատակով: Սակայն նման կարգի թերությունները շատ չեն և եղածներն էլ, ինչպես ցույց են տալիս օրինակները, շփոթումների, վրիպումների և այլ թյուրիմացությունների հետևանք են:

Նշելի է, որ այս բառարանի մի շարք բառեր իմաստով տարբերվում են «Անգիտաց անպէտ»-ում առկա նույն բառերից: Այսպես՝ «Ազարպու. որ է օշնան» իմաստով չի համապատասխանում «Անգիտաց անպէտ»-ի նույն բառահոդվածին, որտեղ ազարպու գլխաբառը բացատրված է որպես յարտա-

196—4

նիսա և պուխուրի մարիամ: Իսկ օշնան, յարտանիսա և պուխուրի մարիամ գլխաբառերի մեկնություններում ազարպու չկա և չի էլ հանդիպում առհասարակ այն տեղերում, որտեղ գործածվում են հիշյալ բառերը: Նշանակում է ազարպու (cyclamen) և օշնան (soude) բառերը համանիշներ չեն, այլ տարբեր դեղանյութեր: Ուրեմն գլխաբառը սխալ է մեկնված: Նման դեպքերում, սակայն, երևույթը ճիշտ բացատրելու համար, պետք է նկատի ունենալ ոչ միայն սխալների, այլև համանունության հնարավորությունը: Սխալներ կամ կասկածներ հարուցող բառերի իսկության բացահայտումը մեծ նշանակություն ունի թե մասնագիտական՝ դեղաբանական, և թե բառագիտական տեսակետից:

Բառարանը շատ հետաքրքիր է նաև իր արտաքին, լեզվական կողմով: Ասվել է, որ մեծ մասամբ միաբառ մեկնությունները, գլխաբառերի հետ, Ամիրդովլաթի բառարանից և մյուս աղբյուրներից վերցված են նույնությամբ, առանց ուղղագրական և տառադարձական փոփոխությունների: Այդ պատճառով բառարանի բնագրում գոյակցում են միևնույն տերմինի մի քանի այլ ձևեր, որոնք ծագում են տարբեր ժամանակներից ու տարբեր օտար լեզուներից: Նշանակում է, այս բնագրի փաստերի հիման վրա չենք կարող դատողություններ անել հայերենի վաղ աշխարհաբարի շրջանի լեզվական իրողությունների վերաբերյալ: Բայց դրա փոխարեն հայ բժշկության ամբողջ միջնադարյան շրջանի տերմինների գանձարան հանդիսացող այդ բառարանը չափազանց արժեքավոր փաստեր է տալիս ինչպես առանձին տերմինների, այնպես էլ առհասարակ դեղաբանական տերմինաբանության պատմության՝ կապված ուղղագրական, տառադարձական, բառափոխառումների, բառապատճենումների և այլ մասնավոր հարցերի հետ: Բառարանը ցույց է տալիս, թե այս կամ այն տերմինը, վերջապես, որքան և ինչպիսի ձևերով է գործածված հայ միջնադարյան բժշկական մատենագրության մեջ: Մենք նպատակ չունենք հանգամանորեն վերլուծել տերմիններին ու տերմինաբանությանը վերաբերող հարցերը, որոնք արժանի են

մասնագիտական-բանասիրական հատուկ քննության և կրավարարվենք ընդհանուր դիտողություններով: Սկսենք տերմինների տարաձևությունները ցուցադրող օրինակներով: Քանի որ տերմինների տարբերակները հիմնականում հանգում են առանձին հնչյունների (լծորդների), ապա կբերենք հնչյունական տարբերակների բոլոր հիմնական դեպքերին վերաբերող օրինակներ՝ բառերը համապատասխան հնչյունների տակ խմբավորելով:

Ա և Ե, կավան—կեվան
նարճիս—ներկիս
ռաւանդ—ռեւանդ

Ա և Է, աբլիլմէլիք—էբլիլմէլիք
պալիլաճ—բելիլէճ
քապիքաճ—գէպիգէճ
ծաթրին—ծէթրին
սաքպինաճ—սէքպինաճ
սանամաքի—սէնէմաքի
ֆալանճ—ֆէլէնճ
արնապ—էրնապ
տաֆնայ—տէֆնի

Ա և Ը, ասպանախ—ըսպանախ

Ա և Ի, զամիրան—զիմիրան
նաշայ—նիշայ
հալիօն—հիլիոն
շապրամ—շիպրամ
շապ—շիպ
սալխ—սիլխ
սանամաքի—սինամաքի
քամօն—քիմօն
քամիօն—քիմիօն
ֆալանճ—ֆիլէնճ

Ա և Ու, ասրունճ—ուսրունճ
հապալաս-հապուլուս
ճալ—ճուլ
նաշաթ—նուշաթ
ապանօս—ուպանօս

Ա և Օ(Ո), ատխար—օտխօր
յաշր—յօշր
յավանակ—յովանակ
աշաղ—օշաղ

Այ և Ա, սայթար—սաթար

Այ և Ի, տաֆնայ—տէֆնի
ֆավանայ—ֆուվանի

Օ(ու) և Ու, մարզանճօշ—մարզանգուշ
թօթիայ—թութիայ
լօք—լուք
տարխօն—տարխուն

ԵԱ և Ա, ևասամին—ասմին

է և Ի, շէհ—շիհ
շիմշէր—շիմշիր
շրէշ—շիրիշ

է և Ու, սէք—սուք

էյ և է, պէյզ—պէզ

Ի և ե, տապիխ—տապեխ
սիլխում—սելխում

Ի և Ու, ճիմար—ճումար
յասֆիր—յասֆուր
սիսամպար—սուսամպար
փիրան—փուրան

ԻԱ և Ա, քուռիաթ—քուռաթ

Ո և ՈՒ, հոմզ—հումզ
քամոն—քամուն
գաղտակոր—գաղտակուր
փրասիոն—փրասիուն

Բ և Պ, բաթ—պաթ
բալիլէճ—պալիլաճ (բէլիլէճ)
բալասան—պալասան
բալատուր—պալատուր
բան—պան

Բ և Փ, հուրբ—հուրփ
բակըլայ—փախլայ
ճբնի—ճփնի
քալը—քալփ

Բ և Ֆ, աբիոն—աֆիոն

Գ և Ճ, գազար—ճազար
մարգանգուշ—մարգանճօշ

Գ և Ղ, գաւրան—ղաթրան

Գ և Կ, գոէզ—կոէզ

Գ և Ք, գէպիգէճ—քապիքաճ

Դ և Տ, դահին—տահին
դալխն—տալխն
լաճավարդ—լաճուվարտ
կանդանայ—կանտանայ
անդիկ—անտիկ
դինիշամուշ—տինիսամուս

Դ և Թ, մարդաք—մարթաք

Զ և Ս, մարմահուզ—մարմահուս
մազտաքէ—մաստաքէ
զուֆ—սուֆ

Թ և Տ, շաթիլ—շատիլ
օթիսօր—օտիսօր
եանթախ—եանտախ
թիրֆիլ—տիրֆիլ
սիթր—սիտր

Թ և Ջ, թաշմիզաճ—չաշմիզաճ

Թ և Պ, թուլ—պուլ

Ժ և Ճ, ժիւայ—ճիւայ

Լ և Մ, նաճալ—նաճամ

Լ և Ր, հալֆայ—հարֆայ
նաճիլ—նաճիր

Խ և Կ, օշախ—օշակ
լախլախ—լակլակ
խախուլայ—կակաւլայ
ժախուխ—ժախուկ
փախլայ—բակլայ

Խ և Հ, լախանայ—լահանայ
խարտան—հարտան
խումխում—հումհում

Խ և Ճ, աւշախ—աւշաճ

Խ և Ղ, խխիլ—խղիլ
խախաց—խաղաց
խախուլայ—ղաղուլայ
մխնատիս—մղնատիս
տալխ—տալղ

Խ և Շ, սարմաշուխ—սարմաշուշ

Խ և Ք, խամալիոն—քամալիոն

Կ և Ճ, ժանկատ—ժանճատ
կավզմաթիլ—ճավզմաթիլ
կաւզիկանդում—ճաւզիճանդում
կուլինար—ճուլինար
մարզակօշ—մարզանճօշ
նարկիլ—նարճիլ
պանկ—պանճ

Կ և Ղ, Կակուլէ—ղաղուլէ
կանափ-ղանափ
մարտակօշ—մարտաղօշ

Կ և Ս, կիպեռիս—սիբեռի (սիբիրէս)

Կ և Տ, բաթկուկ—բաթտուկ

Ղ և Ճ, ղատվար—ճատվար
շալղամ—շալճամ

Ղ և Ք, ղամաշիր—քամաշիր
ղանտուսայ—քունդուսայ
ղիշմիշ—քիշմիշ
ղուստ—քուշտ

Ճ և Ջ, ճալապահանկ—չալապահանկ
ճինար—չինար

Ճ և Ջ, ճատվար—ջատվար
ճօտայ—ջօտայ

Ճ և Ք, ճազմազուճ—քազմազուճ
քուճուման—քուքուման

Մ և Պ, մուրմ—պուրմ
թմրհնդի—թպրհնդի

Շ և Ս, կուրշանայ—կուրսանայ
քունտուշ—քունտուս
մամիշայ—մամիսայ
մուշք—մուսք

շկուրդիոն — սկուրտիոն
շահապ — սահապ
տինիշամուշ — տինիսամուս
քուշտ — ղուստ
շատանամ — սատանամ

Պ և Վ, պասպայիճ — պասվայիճ

Պ և Փ, պալճ — փալճ
պանճակուշտ — փանճակուշտ
քալպ — քալփ
չապիչ — չափիչ

Պ և Ֆ, ապիոն — աֆիոն
պնտուխ — ֆնտուխ
պանիտ — ֆանիտ
ֆարպիոն — ֆարֆիոն
պլպուլ — ֆլֆուլ

Ռ և Ր, առճիճ — արճիճ
նուռայ — նուրայ

Վ և Ֆ, ավիոն — աֆիոն
խարվայ — խարֆայ
նավթ — նաֆթ (նֆտ)

Փ և Ֆ, ճփնի — ճֆնի
սնփուլ — սնֆուլ
բափուր — բաֆուր և այլն։

Օրինակների մեծ մասը նույնութեամբ վերցված բառահոդվածներ են և միայն առանձին դեպքերում, հարմարութեան նկատառումով, փոփոխված է բառերի տեղը՝ մեկնող համանիշը դրված է գլխաբառից առաջ։ Բերված բառագույդերի մեջ տեսանք, որ ոչ միայն մեկ, այլ մի քանի և նույնիսկ ավելի լծորդութիւն կայ։ Օրինակ, հետևյալ զուգաձևերում՝ բալիլէճ — պալիլաճ, գէպիգէճ — քապիքաճ, բոասաս — բոխուս, կակօլայ — խախուլայ, կակուլէ — ղաղուլէ,

ներկիս — նարճիս, մամիրէ — մամիթէ, կիպարի — սիբերի, շապանակ — չիպանաճ, սիբրամ — շիպրամ, տինիսամուս — դինիշամուշ, փախլայ — բակլայ, քուշտ — ղուստ, քունտուշ — ղունտուս, ֆօտինէճ — ֆութանաճ, օթխօր — օտխօր — ատխար, տարզուն — տարզօն — տարխօն — թարխուն, քունտուշ — քունդուս — ղունտուզ, քամօն — քիմօն — քամիօն — քիմիօն, պայզ — պէյզ — պէզ, շիրիշ — չիրիշ — շրէշ — շրէզ, սանամաքի — սէնէմաքի — սինամաքի, մարսանգուշ — մարզանգուշ — մարզանճօշ, արիոն — արիմոն — աբիրոն — աբպիուն, մուշք — մուշկ — մուսք — միսք, խարտան — ղարտան — հարտան, սարկօկոլայ — սարքօքօլայ — սարգայգօլայ, փարփիուն — փարբիոն — ֆարֆիոն, տարշիշխան — տարսիհան — տարշիշան — քարշիշխան, տինաշուշ — տինաղուս — տինեաղուս — տինղասուս — տինսաֆուս, մամիսայ — մամիշայ — մամիթայ — մամիտայ — մամշայ, անիսոն — անիզոն — անիսում — անասօն — եանասօն, օշակ — օշախ — օշաղ — օշաճ, զանճար — զանճառ — զանճաթ — զանկար — զանկառ — շինճար, թառանճուպին — թառանկուպին — թառանգպին — թառանջպին և այլն։ Կան զուգաձևեր, որոնք իրարից տարբերվում են հնչյունակազմի մեջ եղած ավելի կամ պակաս հնչյուններով, ինչպես՝ բաղիշտակ — բազշտակ, արիոն — արիմոն, թաթրի — թաթրիլ, մու — միու, սուսամ — սումսամ, կազամբոս — կալամբ, կամ այլ կերպ՝ անկիտան — անճիտայ, ֆաշախ — ֆաշայ, ֆարմիում — ֆարմայ և այլն։

Միասնական ուղղագրական կանոնների չեն ենթարկված նաև հայերեն բառերը։ Նկատելի է, որ գրաբարյան ձևերը տեղի են տալիս նոր, աշխարհաբար ուղղագրութեանը՝ աղուէս — աղվես, լուի — լվի, ճանճուայ — ճանճվայ և այլն, այս հետևողութեամբ էլ նաև՝ խօլճճան — խավլճճան, որ սխալ է։ Զուգահեռաբար գործածվում են ճալիօճ և ճալիոճ, մոռէ և մօռէ, բացւեճեկ և բացվեճեկ, ճարար և յարար և այլ գրութիւններ։

Բառերի բազմապիսի տարաձևութիւնները՝ հնչյունական տարբերակները, սակայն, միշտ չէ, որ պայմանավորված են արտասանական ու տառադարձական հանգամանքներով։ Դրանք հաճախ գրչագրական վրիպումների և աղավաղումների

արդյունք են։ Հետևաբար բառաքննությունը պարտադիր կերպով պետք է սկսվի տվյալ բառի՝ ձեռագրով երաշխավորված ձևի վավերականությունը պարզելուց։

Ընդհանուր առումով քննենք նաև տերմինների հարցը։ Հայտնի է, որ հայ բժշկության տերմինաբանությունն ստեղծվել ու իր զարգացման ընթացքում հարստացել է երկու հիմնական ճանապարհով՝ փոխառությունների (կամ արտաքին) և լեզվի սեփական միջոցների (կամ ներքին)։ Փոխառյալ տերմինները (հունարեն, արաբերեն, պարսկերեն, լատիներեն և այլ) գերակշռություն ունեն ընդհ՝ հայերեն, տերմինների նրկատմամբ։ Այդպես է հայ բժշկական տերմինաբանության մեջ առհասարակ։ Սակայն բժշկության տարբեր մասնաճյուղերում օտար և բնիկ տերմինների հարաբերակցությունը տարբեր է, միշտ չէ, որ օտար տերմինները գերակշռություն ունեն։ Այսպես՝ դեղաբանության մեջ ավելի շատ են այն օտար տերմինները, որոնք բուսական աշխարհին են վերաբերում, իսկ կենդանական աշխարհի հետ կապված տերմիններն, ընդհակառակը, մեծ մասամբ հայերեն են։ Դա, իհարկե, պայմանավորված է մի շարք օբյեկտիվ իրողություններով, որոնց մասին և անհրաժեշտ ենք համարում տալ համառոտ բացատրություն։ Սկսենք դեղաբանությունից, նախ՝ դեղաբույսերից։

Հին բժշկության բուժիչ նյութերը մեծ մասամբ բույսեր էին։ Արաբներից էլ առաջ՝ հունական ու հռոմեական բժիշկների աշխատություններում, որպես դեղանյութեր, հիշատակվում են բազմաթիվ բուսանուններ։ Բժշկապետ Գալիանոսի հայերեն թարգմանություններին վերաբերող հին բառարանում բույսերի անուններն այնքան շատ են, որ, կարծես, այն ոչ թե բժշկական, այլ բուսաբանական բառարան է և, իրավամբ, հայ մշակույթի մեծ երախտավոր Ղ. Ալիշանը «Բառք Գաղիանոսի»-ն միաժամանակ մեր առաջին բուսաբանական բառարանն է համարում։ Հունական բժիշկներից հետո դեղաբույսերը չտեսնված մեծ ուշադրության արժանացան արաբ բժիշկների կողմից, որոնք զարգացման բարձր

մակարդակի հասցրին գլխավորապես դեղաբանությունը։ Արաբերենից հայերեն թարգմանված առաջին բժշկական աշխատություններում՝ ախրապատիններում, հիշատակվող դեղանյութերը գերազանցապես բույսեր են։ Ախրապատինների հայ թարգմանիչները, որպես տերմիններ, մեծ մասամբ նույնությամբ էին վերցնում բույսերի անունները։ Օտար տերմինների փոխառման սովորույթը վաղուց արդեն դոյություն ուներ հայ մատենագրության մեջ և գալիս էր դեռևս հունական բժշկարանների թարգմանությունների շրջանից։ Սովորույթից բացի, տերմինները փոխ էին առնվում այն պատճառով, որ օտար բնագրերում հանդիպող դեղանունների մի մասի համար համարժեք հայերեն բառեր չկային, համապատասխան բույսերը Հայաստանում չլինելու պատճառով կամ եթե կային առանձին տեղերում, թերևս անծանոթ էին հայ թարգմանիչներին։ Ուստի բույսերի անունները մեզ մոտ (ինչպես նաև Եվրոպայում, որտեղ միջին դարերում դեղաբույսերով չէին զբաղվում) պարզապես փոխ էին առնվում, իսկ մայրենի լեզվում եղած անուններից գործածվում էին միայն ամենաուրեք հայտնի անուններ, ինչպես՝ ցորեն, եղեգ, եղինջ, նուշ, ոսպ, խաղող, նուռ, շաղգամ, սիսեռ, ձմերուկ, խնձոր, տանձ, կորեկ, գարի, վարդ, անանուխ, ձնծաղիկ և այլն։ Մինչդեռ կենդանական ծագում ունեցող դեղերի անունները (նաև դանազան քիմիական նյութերը), որ անհամեմատ քիչ են բուսանուններից, մեծ մասամբ ունեին իրենց հայերեն համանիշները, որովհետև Հայաստանում կային բժշկարաններում հիշատակվող գրեթե բոլոր կենդանիներն ու ոչ բուսական դեղանյութերը։ Ուրեմն հայ միջնադարյան բժշկական տերմինաբանության մեջ օտար տերմիններ մեծ մասամբ վերաբերում են դեղաբանությանը, գլխավորապես բուսական դեղանյութերին, իսկ կենդանական և այլ ծագում ունեցող դեղերի անուններ գերազանցապես հայերեն են կամ հին փոխառություններ, որոնք արդեն հայացվել էին։

Ինչ վերաբերում է ախտաբանական տերմիններին, ապա գրանք գրեթե ամբողջովին հայերեն են։ Ախտաբանական

տերմինները կապված են մարմնի հետ, նշանակում են մարմնի զանազան գործարանները, նրանց գործողություններն ու փոփոխությունները, որոնք ոչ միայն հայերեն, այլ ցանկացած լեզվում ունեն իրենց մայրենի անունները։ Ուստի որևէ լեզու կարիք չունի ուրիշ լեզվից փոխ առնելու, ասենք՝ գլուխ, սիրտ, արյուն, աչք, ցավ, խոց, ուռուցք և այլ բառեր։ Ամիրդովլաթի «Անգիտաց անպէտ»-ում միայն աչք բառով կազմված են՝ աչաց առաստաւ, աչաց արցունել, աչաց բալ, աչաց բորբոս, աչաց դեղնութիւն, աչաց զեն առնող, աչաց լաւ եղող, աչաց լուսն յաւելցնող, աչաց խոց, աչաց կարմրութիւն, աչաց կիծ, աչաց կոպի խոշորութիւն, աչաց կոպն ուժով առնել, աչաց ճլէ տալ, աչաց մթնալ, աչաց չորութիւն, աչաց պայծառութիւն, աչաց պաւասիր, աչաց պնտութիւն, աչաց ջուր իջնուլ, աչաց սպիտակ, աչաց սրութիւն, աչաց վատուժութիւն, աչաց տաք ուռեց, աչաց տեսութիւնն աւելցնել տերմինները։ Իսկ ընդհանրապես բոլոր՝ աչաց, աչացաւ, աչից, աչուին, աչէ, աչի, աչին բառաձևերով սկսվող տերմինների թիվը հավասար է 121-ի[61]։ Այդ բոլոր տերմիններն էլ հայերեն են և միայն մի քանի բաղադրյալ տերմիններում, որպես նրանց բաղադրիչներ, հանդես են գալիս պաւասիր, նասուր, սաֆրայ, սուլսխ, տապաղայ, գաֆրայ, ինթիշար, խլտ, դարապ, պուրտ, սապալ, տարֆայ և նուզլայ փոխառյալ բառերը։

«Բառք բժշկական վարդապետաց» բառարանից հայտնի են դառնում բազմաթիվ նոր բժշկական բառեր, որոնք մասամբ գործածական են եղել բառարանի մեզ այսօր անհայտ կամ հայտնի, բայց չտպագրված աղբյուրներում։ Ըստ որում եթե գլխաբառերի շարքում գերակշռում են օտար տերմինները, ապա մեկնությունների մեջ, ընդհակառակն, հայերեն բառերն են շատ։ Եվ այդ բնական է, որովհետև օտար բառերը հայ ընթերցողին բացատրել կարելի է մայրենի լեզվի բառերով ու տերմիններով։ Ընդ որում բառարանի հեղինակը օգտվում է ոչ միայն գրական, այլև խոսակցական լեզվի ու

61 Տե՛ս Ամիրդովլաթ, Անգիտաց անպէտ, էջ 692—753։

բարբառների բոլոր հնարավորություններից։ Պարզվում է, որ հայերենն ընդհանրապես հնարավորություններ ունի թարգմանելու եթե ոչ բոլոր օտար բժշկական բառերը, ապա նրանց անհամեմատ մեծ մասը։

Քանի որ հեղինակն օգտվում է խոսակցական լեզվից ու բարբառներից, ապա մեկնությունների մեջ ցարդ անծանոթ, նոր բժշկական բառերն ավելի շատ են, քան գլխաբառերի շարքում, որտեղ նույնպես նորահայտ տերմիններ ու բառեր կան։ Վերջիններիս թիվը չի էլ կարող մեծ լինել, որովհետև Ամիրդովլաթին հաջորդող բժիշկները՝ Ասար Սեբաստացին, Գալուստ Ամասիացին, Բունիաթ Սեբաստացին և ուրիշներ հենւում են Ամիրդովլաթին, հիմնականում վերարտադրում ու կրկնում են նրա գրույթները։ Ուստի նրանց երկերում նոր բժշկական բառեր կարող են լինել այն չափով, որչափով որ նրանք նորույթներ են մուծում բժշկության մեջ։ Այսուամենայնիվ, բառացանկում կան նոր բառեր, որոնք զգալի չափով հունա-լատինական ծագում ունեն։ Այլ է վիճակը մեկնություններում, որտեղ գլխաբառը ոչ միայն բժիշկներին, այլև սովորողներին ու այլ ընթերցողներին բացատրելու նպատակով բառարանագիրը միաժամանակ լայնորեն օգտվում է կենդանի լեզվից, որի մեջ դարեր ի վեր պահպանվել են մատենագրությամբ չվկայված բազմաթիվ բույսերի, կենդանիների անուններ և այլ հայերեն բառեր։ Ձեռագիր բառարաններում գրված այդ բառերը երբեմն բոլորովին նոր դեղեր են նշանակում, իսկ մեծ մասամբ՝ արդեն հայտնի դեղանունների ու բժշկական այլ բառերի հայերեն համանիշներն են։ Օրինակ. «Բառք բժշկական վարդապետաց» բառարանը նովիի գաւազան և նովիի բիր բառերին ավելացնում է խաշբիր նոր համանիշը, տուղտին՝ իպիսկոս և այլն։ Բայց ոչ միայն այդ հազվագյուտ բառերը, այլև բժշկարաններում չեն գործածվել այնպիսի հայերեն բառեր, ինչպես աճթառամ ծաղիկ, առագիլ, առջատակ, գի (գիհի), իշկորճգան, նոճի (նոճ), որոնց դիմաց Ամիրդովլաթը («Անգիտաց անպէտ» և «Օգուտ բժշկութեան» երկերում) համապատասխանաբար գործածում է ամարիտին,

ամարանտոճ (elichrysum), պալարաճ, ֆաղասղուս, լակլակ (cigogne), պուխուր ի մէյրամ (κυκλάμινος, cyclamen), յարար, կաւչաշմն, պաճար (buphthalme), աքլիլմէլիք, ղաւչպուլնուզի, խաղուշիճ (mélilot), սարվ, կիպարի (cyprés) և այլ օտար բառեր:

Բառարանում առկա նոր բառերի մի մասն, անշուշտ, գործածված է եղել բժշկական այնպիսի բնագրերում ու բառարաններում, որոնք մասամբ մեզ չեն հասել, իսկ պահպանվածներն էլ դեռևս գտնվում են ձեռագիր վիճակում: Նորագյուտ բառերով համալրվում ու հարստանում է մեր հին բժշկության մասնագիտական բառապաշարը: Այդ բառերի հետազոտությունը նորույթներ կտա միջնադարյան բժշկությունն ուսումնասիրող մասնագետներին և օգտակար է ընդհանրապես հայագիտության, առանձնապես հայ տերմինաբանության համար:

Ստորև, առանց մեկնությունների, կբերենք «Բառք բժշկական վարդապետաց» բառարանի միայն այն հայերեն բառերը, որոնք, ըստ մեր հետախուզումների, չեն հանդիպում Ամիրդովլաթի տպագիր երկերում և մասամբ չկան նաև տպագիր բառարաններում: Ահավասիկ՝ աղի ծաղիկ, անթառամ ծաղիկն, արագիլ, արջտակն, գահտակ, գայլախաղն, գելաս, գելու բրդրղանի[62] սերմ, գետնի թութն, գետնի խէժ, գետնի կաղնի, գետնի ստուկն, գետնի քօքն, գիոյ պտուղ, գոլար լոյս, գորուկ (գորտուկ, գորտնուկ), դահն, դիւրի քար (դուրի քար), դրամդրամուկ, եղդոն խոտն, թեղարին տերևն, թնոպի սունկ, թորվան խոցատ, թութակ, իլրունքն, իշկալոկ, իշկորնգան (իշկորկան), իշկորնգային հունդն, իշուկ, իշտոմուղ, իպիսկոս, լերդայխոտն, լուսնատակին ծառ, լուացատակի ծառ. խաղարկու, խաշբիր, խաւծանայ, խլէզ, խճէճ, խնգայմորին. խործուվիլ, խուռն, ծանրապոյր, կակաջ (կակաչ, կակաճ),

62 «Հայբուսակը» բառը բլղրխա ձևով հարցականի տակ է գնում: Այդ բառը նույն բլղրղան է, որ ունի Ստ. Մալխասյանի «Հայերեն բացատրական բառարան»-ը:

կակաւիլ (կաքաւիլ), կապուտիկ, կլորան պօչիկ, կճղակ, կովու շռաւտ, կուղայն, կպերթ, կպերթին տակն, կպրէթ (կպրեբ), կսիրթ, կսիրթին (կսիրդին) տակն, կտրածու աղն, հաւճ (հաւուճ), հաւթրէճ (հաւթրիէճ), հելթան, հելթան հոռոմի, հինօղակ, հննէ, հոլեան, հողային ծուծ, հողային մարմին, հողային նիւթ, հողային շունչ, հոճպել (փետել), հոռոմթութն, հովիւի բիր, հարբ բաբելացի, ձաւար, ձկան տուիղալն, մարդատակ, մաքքային ճանճն, մոշան պտուղն, միկոկոմն, մորէ, նեպուկ, նշանաւորին կաւն, նոճի (նոճ), շինգղ (շնկղ), շընկրտրի, չաման թագաւորի, պեխմարճան, պնդկուկ կաշի, պտիկ բանճար, ջալամուկ հաւ, ջանջիր, չկրբիտն, չղջիկան, չնջագիր, ջրիմուռ, սատանի սեխ, սուրբ Գորգու խոտին տակն, վարդ մարապար, տղվտակ, փշորուկ ճիճի, քարայճանճ, քարաքոս, քարի թութն, քիրան, քիփէ, քոիկան, քսոտնի քամուքսն[63]: Այս ցանկը կարելի է ընդարձակել հայերեն, նաև օտար բժշկական բառերի և նրանցով կազմված զանազան բաղադրյալ տերմինների հաշվին: Դա շատ կարևոր է, սակայն կարելի է անել բառարանի ավելի խոր, հատուկ մասնագիտական ուսումնասիրության դեպքում: Նման ուսումնասիրության կարող են ձեռնարկել բժշկության մասնագետները, որոնց հիմնական խնդիրը, մեր կարծիքով, պետք է լինի.

1. Հավաքել նոր տերմիններ ու բժշկական բառեր. ա) արդեն հայտնի, գրականության մեջ վաղուց արմատավորված, փոխառյալ բառերի հայերեն համանիշներ՝ ցույց տալու համար, որ հայ բժիշկները օտար բառերին դիմել են ոչ միայն նրա համար, որ այդ բառերի հայերեն համարժեքները գոյություն չեն ունեցել, այլև օտար տերմինների փոխառման սովորությամբ և մասամբ էլ գոյություն ունեցող հայերեն բառերին անտեղյակ լինելու պատճառով. բ) հայտնի ու գործածական հայերեն բառերի նոր համանիշներ՝ հայերենի բառային կազմի հարստությունը, բառակազմական հնարա-

63 Ցանկի մեջ չենք մտցրել օտար բառերը, այլև նրանք, որոնց ծագումը, բառաձևը կամ իմաստը կասկածելի է:

վորությունների լայնությունն ու բազմազանությունը ցուցադրելու համար. գ) նոր դեղանյութեր և բժշկական այլևայլ հասկացություններ նշանակող բառեր՝ բժշկության նորույթներն ու առաջընթացը բացահայտելու համար. դ) փոխառյալ բառերի նոր օտար համանիշներ՝ բժշկական գրականության նոր թարգմանական ու բնագիր երկերով հարստանալը պատկերելու նպատակով։ Օտար լեզուներից եկող բառերի քանակական հարաբերությունները քննելով՝ անհրաժեշտ է ցույց տալ հայ բժշկության բառապաշարի մեջ տեղի ունեցող տեղաշարժերը, տեսնել, թե տարբեր լեզուներ ինչպիսի հարաբերություն ունեն հայերենի հետ և ինչ ազդեցություն են թողնում նրա վրա։

2. Միևնույն դեղանյութը նշանակող բառերի ուսումնասիրությամբ պարզել կասկածներ ու տարաձայնություններ հարուցող դեղերի իւկությունը։ Հայտնի է, որ բժշկարաններում, օրինակ, «Անգիտաց անպէտ»-ում, միևնույն դեղանյութը ներկայանում է իր զանազան տարալեզու անուններով, որոնք երբեմն իմաստով լրիվ չեն համապատասխանում իրար։ Ամիրդովլաթը, շատ դեպքերում, նշելով, թե տվյալ բույսն ինչպես է կոչվում այս կամ այն լեզվում կամ հեղինակի մոտ, ավելացնում է, թե ինքը համաձայն չէ դրան, թե դա բոլորովին այլ բույս է, վկայակոչում է զանազան հին բժիշկների, լրացուցիչ բացատրություններ է տալիս և այլն։ Նման անորոշությունները պարզելու, միևնույն բույսին վերագրվող տարբեր անունների համարժեքությունը ճշգրտելու գործում վճռական նշանակություն կարող են ունենալ այդ բառերի նորահայտ համանիշները։

3. Պահպանել բաղադրյալ տերմինների ամբողջությունը, ինչպես այն կա հին բնագրում, խուսափել միևնույն բույսի հետ կապված, իմաստով մոտ տերմինների կամայական նույնացումից ու նրանց բաղադրիչների շփոթումներից, որովհետև միևնույն բույսի արմատից, ցողունից, տերևներից, սերմերից և այլ մասերից, ինչպես նաև միևնույն կենդանուց ստացվող մթերքներից ու նրա մարմնի զանազան մասերից ստացվում են տարբեր դեղանյութեր՝ տարբեր բուժիչ հատկություններով։

4. Ուսումնասիրել օտար բառերի հայերեն տառադարձությունները, ինչպես նաև բարբառային հնչյունական իրակությունները բացահայտող բոլոր դեպքերը, որոնք չափազանց արժեքավոր ու հազվագյուտ միջոցներ են տվյալ շրջանում հայերենի հնչյունային առանձնահատկությունների և առհասարակ՝ հնչյունական վիճակի հետազոտության համար։ Միևնույն դիրքում տվյալ օտար հնչյունը հայերեն տարբեր հնչյուններով արտահայտելու դեպքերը, այսինքն՝ տառադարձական տարաձևությունները միշտ որպես սխալներ չդիտել, որովհետև դրանք ոչ միայն վրիպումների ու թյուրիմացությունների արդյունք կարող են լինել, այլև մեծ մասամբ կապված են ձեռագրի դրության վայրի (դավառի), ժամանակի, թարգմանչի կարողությունների, հայերենի միասնական ուղղագրության բացակայության և այլ հանգամանքների հետ։ Տառադարձությունների ուսումնասիրությունը հավասարաչափ կարևոր է թե՛ մայրենի և թե՛ նրա հետ առնչվող օտար լեզուների պատմության համար։

Սրանք են բառարանի ուսումնասիրության հետ կապված կարևոր հարցերը։ Նշենք, վերջապես, որ այդ հարցերի լուծման դեպքում բառարանը խիստ կարևոր կլինի տպագիր բառարաններում տեղ գտած վրիպակներն ու անճշտությունները ուղղելու և անորոշ իմաստ ունեցող գլխաբառերը ճիշտ մեկնելու համար։

«Բառք բժշկական վարդապետաց»-ը հայ բառարանագրության միջնադարյան շրջանը եզրափակող հուշարձաններից է, որն իր մեջ ամփոփելով մինչև XVII դարի վերջը գոյություն ունեցած բոլոր բժշկական բառերն ու տերմինները՝ նմանվում է «Անգիտաց անպէտ»-ին։ Այդպիսի հարուստ մասնագիտական բառարանը արդյունքն ու վկայությունն է դարավոր փորձ ու սովորույթներ ունեցող, բարձր զարգացման հասած բառարանագրության և առհասարակ հարուստ մշակույթի։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՍՈՒԲԲ ԳՐՈՑ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

Մինչև XVII դարը «Բառք եբրայեցւոց»[1] կոչվող բառարանը Աստվածաշնչի գրեթե միակ բառարանն էր հայ մատենագրության մեջ։ XVII դարի առաջին կեսին եթևան են գալիս Աստվածաշնչի նոր տեսակի՝ բացատրական բառարաններ, որոնց հեղինակներն, անշուշտ, օգտագործել են «Բառք եբրայեցւոց»-ը՝ հատուկ անունները մեկնելու համար։ Սակայն այդ նոր բառարաններում հատուկ անունների սակավության պատճառով ընթերցողը դարձյալ պիտի օգտվեր հիշյալ հին բառարանից։ Ուստի, վերջինս անընդհատ ընդօրինակվում և տարածվում էր նորանոր գրչագրերով։ Դրան վերջապես հետևում է Աստվածաշնչի հատուկ անունների մի նոր բառարան։ Այդպիսով ընթերցողներին տրամադրվում են Աստվածաշնչի տարբեր բառարաններ՝ բառերի այբբենական կամ խառը դասավորությամբ։

Աստվածաշնչի բացատրական բառարանները ձևի ու բովանդակության բազմաթիվ նմանություններով իրարից տարբերվում են գլխավորապես ընդգրկումների տեսակետից. սկզբնական շրջանում դրանք փոքրածավալ են, համառոտ մեկնություններով, իսկ հետո ընդօրինակողների կողմից վերամշակվում են, համալրվում նոր բառերով։ Դրան հակառակ՝ Աստվածաշնչի հատուկ անունների նոր բառարանը, որ վերաբերում է հիմնականում Նոր կտակարանին, ծավալով փոքր է «Բառք եբրայեցւոց» բառարանից։

Այս բառարաններն էլ մյուսների նման ընդհանուր առմամբ հայտնի են եղել հայ բանասերներին, սակայն առանձին քննության չեն արժանացել։ Ընդհակառակն, հաճախ շփոթվել են իրար հետ, նույնացվել և «Բառարան Սուրբ գրոց» կամ նման ուրիշ ընդհանուր անվանումներով երբեմն ընդունվել են միևնույն բնագրի կամ նրա մի մասի տեղ։ Նույնացվել են ոչ միայն համասեռ, այլև տարատեսակ բառարաններ՝ հատուկ անունների և զանազան բառեր մեկնող բացատրական բառարաններ, որոնք տարբեր ժամանակների ու հեղինակների գործեր են և վերաբերում են Աստվածաշնչի տարբեր գրքերին։ Այնինչ պետք է իրարից որոշակիորեն զատել Ս. գրոց բառարանները, որպես ուրույն բովանդակություն, ձև, լեզվական կերպարանք, մատենական վերաբերություն, նպատակ ու անվանում ունեցող բնագրեր։

XVII դարի հայ մատենագրության մեջ, ըստ ձեռագիր աղբյուրների, առայժմ մեզ հայտնի է Ս. գրոց երեք բացատրական և մեկ հատուկ անունների բառարան։

Բացատրական բառարանները սովորական բառարանների նման միասնական, մի ընդհանուր այբբենական համակարգի ենթարկված բառաշարք չունեն, այլ բաղկացած են առանձին մեծ ու փոքր բառացանկերից (գլոսարիաներից), որոնք բացատրում են Աստվածաշնչի այս կամ այն գրքի (երբեմն նաև առանձին գլուխների) բառերը՝ համապատասխան խորագրերի տակ՝ «Բառք ի գրոց Ելից», «Բառք ի գրոց Թուոց», «Բառք ի գրոց մարգարէին Դանիէլի», «Թագաւորաց առաջին», «Յառակացն Սողոմոնի», «Գաղատացւոց գլխոյն» և այլն։ Ուրեմն մեր ձեռքը առարկա բառարանները Աստվածաշնչի գրքերին վերաբերող մատենակից բառացանկերի ամբողջություն են՝ առանց ընդհանուր այբբենական

1 Հ. Ամալյան, նշվ. աշխ., էջ 143—154։

բառաշարքի։ Բառերն այբբենական կարգով չեն դասավորված նաև առանձին բառացանկերում[2]։

Եվ քանի որ բառարանների բառացանկերը դասավորված են ոչ թե հայերեն այբուբենի տառերի, այլ Աստվածաշնչի գրքերի կարգով, ապա անհրաժեշտ է թեկուզ բանասիրական-աղբյուրագիտական նկատառումներով, ամփոփ անդրադառնալ Ս. գրքերի կանոնին, որովհետև միևնույն բառարանի տարբեր ընդօրինակություններում բառացանկերի կարգի համապատասխանություն չկա։ Դրա պատճառն այն է, որ գրիչները ձեռքի տակ ունենալով բառարանի մի որևէ գրչագիր՝ նույնությամբ, տառացիորեն չէին պատճենում այն, այլ ստուգում էին Աստվածաշնչի՝ իրենց ունեցած օրինակի հետ՝ ճշգրտումներ էին անում, բառեր ավելացնում, փոփոխում էին բառացանկերի կարգը։

Կանոնի հարցը Ս. գրոց պատմության կարևոր հարցերից մեկն է[3], որ անմիջականորեն կապված է մեր նյութի հետ։ Բանն այն է, որ այսօր էլ Աստվածաշնչի հրատարակությունները իրարից տարբերվում են բնագրում առկա գլուխների քանակով ու դասավորությամբ։ Դա գալիս է հնուց, սկսած Աստվածաշնչի թարգմանության ժամանակներից։ Դարերի ընթացքում Ս. գրքերն ընդօրինակող դպիրները, եկեղեցու ու կլորոնի գործիչները բնագրերի մեջ ավելացրել են եկեղեցու հայրերի մեկնությունների հատվածներ, նոր գրքեր ու գլուխներ, նրանց կցելով զանազան նախադրություններ ու նոր մեկնու-

2 Բառերն այբբենական կարգով են դասավորված միայն Մատենադարանի № 3286 ձեռագրի ընդարձակ բառարանում։ Դա բառարանի ստեղծումից շատ ուշ է կատարված։ Հիշյալ ձեռագիրն անթվակիր է, գրված է հավանաբար ԺԷ դարի վերջերին։

3 Աստվածաշնչի հայերեն թարգմանությունների, հետագա փոփոխությունների, տարբեր հին բնագրերի հետ նրա ունեցած կապերի և ընդհանրապես նրա պատմության հարցերը զանազան նպատակներով ուսումնասիրված են Զարբհանալյանի, Կոնիբերի, Լաքրոզի, Նորայրի, Խալաթյանցի, Վիլֆրուայի, Մառի, Վեբերի, Ֆեստերի, Պատկանովի, Կարիերի, Ցանի, Ծրմոնիի, Տեր-Մովսիսյանի, Էսապալյանի և այլ հայագետների կողմից։

թյուններ, փոխելով գլուխների կարգն ու տնտեսման սկզբունքները։ Ս. Տեր-Մովսիսյանը գրում է. «...արդեն VII դարում Սիոն կաթողիկոսը ստիպված էր եկեղեցական կարգով ցույց տալ կանոնական գրքերը, քանի որ, Քոթենավորի վկայությամբ, շատերը նորարարություն էին ցույց տալիս՝ կանոնին զանազան գրքեր ավելացնելով կամ պակասեցնելով։ Բայց պաշտոնական կարգն էլ ժամանակի ընթացքում չէր պահպանվում»[4]։ Եվ այդ կատարվում էր ոչ թե Ս. գրքերի նկատմամբ հարգանքի չգոյության, այլ, ընդհակառակն՝ այդ գրքերն, ըստ տարբեր ըմբռնումների, առավել լրիվ, ամբողջական ու կատարյալ դարձնելու, նրանց ուսուցումն ու պրոպագանդան ավելի դյուրացնելու և ընդլայնելու նպատակով։ Այդպիսի վերաբերմունքը չէր կարող վրիպել քրիստոնեական եկեղեցու պարագլուխների աչքից, որոնք ձգտում էին Ս. գրքերի բնագրերը միշտ հարազատ պահել նրանց հնագույն, նախնիների ձեռքով գրված օրինակներին։ Հայ եկեղեցու կողմից ընդունված Աստվածաշնչի կանոնը պարտադիր էր գրիչների ու դպիրների համար[5]։ Եկեղեցական զանազան կանոնների գրքերում պահպանվել են Աստվածաշնչի կանոնի չորս տարբեր բնագրեր։ Հայաստանում արմատավորված է եղել չորրորդ կանոնը, որն ընդունել է 768 թ. Պարտավի եկեղեցական ժողովը՝ Սիոն կաթողիկոսի նախագահությամբ։ Սիոն կաթողիկոսի երկու մասից բաղկացած կանոնի միայն երկրորդ մասն է վերաբերում Ս. գրքերին՝ Հին և Նոր կտակարաննե-

4 М. Тер-Мовсесян, История перевода Библии на армянский язык, С.-Петербург, 1902, стр. 224. Աստվածաշնչի թարգմանության գրքերի կարգի, անվավեր գրքերի և այլնի մասին տե՛ս Գ. Ջարբհանալեան, Հայկական թարգմանութիւն Նախնեաց, Վենետիկ, 1889, էջ 171—206։ Կանոնական և պարականոն կամ ծածուկ գրքերի մասին ընդհանրապես տե՛ս Թ. Իշխանյան, Հայ մատենագիտության պատմություն, պրակ Ա, V—XVIII դարեր, Երևան, 1964, էջ 22—30։

5 Ս. գրոց կանոնի մասին մանրամասն տե՛ս Մ. Տեր-Մովսիսյանի հիշատակված աշխատության 6-րդ գլուխը՝ «Канон Библии», էջ 224—266։

րին[6]։ Սակայն պաշտոնապես ընդունված այդ կարգն էլ ժամանակի ընթացքում ճշտորեն չի պահպանվել[7]։

Հայերեն առաջին տպագիր Աստվածաշունչը, որ լույս ընծայեց Ոսկան Երևանցին 1666 թ.[8], լրիվ լինելով հանդերձ՝ չի համապատասխանում հայ եկեղեցու ընդունած կանոնին։ Հրատարակիչը, գրքերի որոշ վերադասավորում կատարելով, Աստվածաշունչը հարմարեցրել է նրա լատինական օրինակին՝ նշելով այդ հանգամանքը գրքի տիտղոսաթերթի վրա, նաև «Առ ընթերցօղ» վերջաբանի հենց սկզբում. «Շնորհիւ և ողորմութեամբ ամենազօրին Աստուծոյ մատեանս Աստուածաշունչ բազմաւ աշխատութեամբ կարգաւորեցաւ՝ գլխագրութեամբ և տնաւտութեամբ ըստ դպրմատացւոցն. նաև ցանգաւ և համաձայնութեամբ»[9]։

Աստվածաշնչի հաջորդ հրատարակությունը լույս տեսավ 1805 թ. Վենետիկում, Հովհան Զոհրաբյանի աշխատասիրությամբ[10]։ Այս բնագիրը մի քանի հին, լավագույն գրչագրերի վրա հենված իսկական համեմատական բնագիր է և, ըստ Տեր-Մովսիսյանի, հանդիսանում է «կիլիկիական շրջանի հայկական Աստվածաշնչի կանոնի ճշգրիտ վերարտադրությունը»[11]։

Ապա, Աստվածաշնչի 1817 (Պետերբուրգ), 1860 (Վենետիկ), 1895 (Կոստանդնուպոլիս) թվականների հրատարակությունները վերարտադրություն են Զոհրաբյանի տպագրած բնագրի, որը մինչև օրս էլ մնում է որպես հայկական Աստվածաշնչի լավագույն օրինակ։

Աստվածաշնչի բառարանների հեղինակները օգտվել են այդ գրքի այն բնագրերից, որոնք համապատասխանում են հայկական կանոնին։ Կան, իհարկե, բառարանների այնպիսի ընդօրինակություններ, որոնք հարմարեցված և խմբագրված են Աստվածաշնչի այլ բնագրերից։ Ուստի բառարանների քննության ժամանակ, գլխավորապես նրանց խմբագրությունները որոշելիս, մենք աչքաթող չենք անում վերոհիշյալ հանգամանքը, չնայած որպես հիմնական աղբյուր ենք ընդունում Զոհրաբյանի հրատարակած Աստվածաշունչը։ Աստվածաշնչի բացատրական բառարանների միջև եղած տարբերությունը, սակայն, ոչ թե Ս. գրոց՝ ըստ կանոնի տարբերվող օրինակներից է բխում, այլ պարզապես կայանում է ընդգրկման մեջ. մի բառարանը վերաբերում է Հին կտակարանի երկրորդ մասին՝ Դավթի սաղմոսներից սկսած, և ամբողջ Նոր կտակարանին։ Մյուս բառարանը լրիվ է և Աստվածաշնչի բոլոր գրքերից էլ բառեր ունի։ Առաջին բառարանը, որ սկսվում է «Բառք ի Սաղմոսաց մարգարէին Դաւթի», ինչպես երևում է թերի է, հավանաբար ունեցել է նաև Հին կտակարանի մյուս գլուխների բառացանկերն էլ։ Այդ բառարանն ընդհանուր խորագիր չունի, իսկ առաջին բառացանկի՝ Սաղմոսաց գրքի, խորագրով էլ չի կարող իր բովանդակությունը ճիշտ ներկայացնել։ Ուստի այսուհետև այդ բառարանը պայմանականորեն կանվանենք «Բառք Սուրբ գրոց» ի տարբերություն մյուս բառարանի, որ լրիվ է և իր խորագիրն ունի։

Արդ անցնենք Աստվածաշնչի բառարանների քննությանը։

ԲԱՌՔ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ

Ձեռագիր աղբյուրները մեզ հասցրել են այս բառարանի մի քանի ընդօրինակություններ[12]։ Հնագույն ձեռագիրը՝ № 2292 ժողովածուն, գրված է 1624 թվականին Մադաթիա-

6 Սիոնի կանոնի առաջին մասը հոգևորականներին տրվող հրաման է՝ աղջիկներ ամուսնացնելու մի մասնավոր հարցի վերաբերյալ։

7 Տե՛ս Մ. Տեր-Մովսիսյան, նշվ. աշխ., էջ 224։

8 Աստուածաշունչ, Հնոց և Նորոց կտակարանաց ներպարունակող շարակարգութեամբ նախնեացն մերոց եւ ճշմարտասիրաց թարգմանչաց, Յամստրատրդամ, 1666։ Այս Աստվածաշունչը նույնությամբ վերահրատարակվել է 1705 և 1733 թվականներին։

9 Աստուածաշունչ Հնոց և Նորոց կտակարանաց, Ամստերդամ, 1666, էջ 831։

10 Աստուածաշունչ մատեան Հին և Նոր կտակարանաց ըստ ճշգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց ի հելլենականն հաւատարմագոյն բնագրէ ի հայկականս բարբառ, Վենետիկ, 1805

11 Մ. Տեր-Մովսիսյան, նշվ. աշխ., էջ 35։

12 Տե՛ս Մատենադարանի ձեռ. № № 542, 2292, 2450, 5132, 6162։ Սիսյուրքահայ ձեռագրացուցակներում հիշատակվում են Աստվածաշնչի

արեղայի ձեռքով[13], մի ձեռագիր էլ՝ № 5132, ընդօրինակված է 1661 թվականին։ Մյուս ձեռագրերը թվակիր չեն, բայց գրված պիտի լինեն XVII դարում։ Այս գրչագրերում, բացառությամբ № 5132-ի[14], բառարանն սկսվում է Դավթի սաղմոսների գրքի բառերը բացատրող բառացանկով և ավարտվում է տարբեր գրքերին վերաբերող բառացանկերով։ Այսինքն՝ գրչագրերը ընդգրկման տարբեր չափերով են ներկայացնում բառարանը։ Երկու ձեռագրերում, № 2292 և № 5132, բառարանը բառացանկեր ունի սկզբից, այսինքն՝ Դավթի սաղմոսների գրքից մինչև Նոր կտակարանի վերջն ընկած բոլոր գրքերի ու գլուխների համար։ Մինչդեռ մյուս ձեռագրերը բովանդակում են բառարանի միայն մի մասը՝ Սաղմոսաց գրքից մինչև Մաղաքիա մարգարեի գրքի բառացանկը ներառյալ։ Ուրեմն բառարանն այդ ձեռագրերում թերի է, ամբողջությամբ չի պահպանվել, կապ չունի Նոր կտակարանի հետ և վերաբերում է միայն Հին կտակարանի մի մասին։ Այդպիսով մեր տրամադրության տակ մնում է միայն № 2292 ձեռագիրը, որպես բառարանի լրիվ բնագիրը ներկայացնող աղբյուր։

Բայց, իրո՞ք, այդ մի ձեռագրում ամբողջական է Դավթի սաղմոսներով սկսվող բառարանի բնագիրը։ Արդյո՞ք այն մի մասը չէ երբեմնի լրիվ՝ Աստվածաշնչի բոլոր գրքերի համար բառացանկեր ունեցած, մեզ անհայտ բառարանի։ Վերջինիս երբեմնի գոյությունը թերևս կարելի է ենթադրել բառարանի բնագրից անմիջապես հետո զետեղված գրչի հետևյալ հիշատակարանից. «Մեղսամակարդ Մագաթեայիս անուամբ եւ եթ քահանայի ձեռամբ գրեցաւ յայս մատենի բառք Նոր և Հին կտակարանի»[15]։ Գրիչը հիշատակում է Նոր և Հին (փոխանակ՝ Հին և Նոր) կտակարանները, այսինքն՝ Աստվածաշունչն ամբողջությամբ։ Սակայն հետաքրքիր է, թե ինչո՞ւ է գրիչը շրջում կտակարանների տեղերը՝ Նորը Հնից առաջ դնելով։ Չենք կարծում, թե դա պարզապես վրիպում է կամ պատահականություն։ Սակայն չենք էլ կարող ճշտությամբ կռահել դրա պատճառը, բացի ենթադրելուց, թե, հավանաբար, գաարված է այն նկատառումով, որ բառարանը հիմնական մասով վերաբերում է Նոր կտակարանին, որ այն չի ընդգրկում Աստվածաշունչն ամբողջությամբ։ Նշանակում է բառարանի թերի լինելու մասին ենթադրությունը հիմք չունի, որովհետև բառարանը իր այդ ձևով լրիվ, ամբողջական բնագիր է։ Գրիչն ընդհանրապես, առանց կոնկրետացման, նշում է բառարանի աղբյուրները, այն, որ բառերը քաղված են երկու կտակարաններից էլ։ Եվ դա դեռևս չի նշանակում, թե բառարանի բնագիրը ամբողջությամբ չի պահպանվել։ Մատնանշված հանգամանքները, այնուամենայնիվ, բառարանի լրիվ պահպանված լինելու մեր կարծիքը հաստատող անառարկելի կռվաններ չեն։ Սակայն մեր կարծիքը հիմնավորելու համար ուշադրության առնենք նաև այն հարցը, թե ինչո՞ւ բառարանի հեղինակը սկսում է Դավթի սաղմոսներից և ոչ թե հենց

բառարաններ, որոնք ներկայացվում են միևնույն անվան տակ, առանց մանրամասն նկարագրության։ Ուստի դժվար է որոշել, թե տվյալ ձեռագիրն Աստվածաշնչի որ բառարանն է ընդգրկում։

[13] Մատենադարանի ձեռագրացուցակում, որտեղ բառարանը ներկայացված է որպես «Երեմիայի Մեղրեցւոյ բառգիրք», հարցականի տակ է դրված № 2292 ձեռագրի գրության ժամանակը՝ 1624 թվականը, որ նշված է հիշատակարանում. «Թուականն ՌՀԳ էր, որ ի մարտի ԻԴ լուսին խաւարեցաւ երեկուն առաջին ժամն. որ է խաւարակն. որն աւագ չորեք շաբթի և անտի յառաջ եկն ՃՀԵ օր, որ սեպտեմբերի ԺԷ էր խաւարեցաւ արեգակն. որն ուրբաթ և անտի յառաջ համարեա ՃՀԵ միւս անգամ կու խաւարի» (էջ 273 ա)։ Մեր կարծիքով՝ հիշատակարանի «միւս անգամ կու խաւարի» արտահայտությունը հաստատում է, որ 1624 թվականը ձեռագրի գրության տարեթիվն է։

[14] № 5132 ձեռագրում բացակայում են Դաւթի սաղմոսների, Սողոմոնի առակների առաջին գրքի բոլոր բառերը և բառարանն, առանց վերնագրի, սկսվում է առակների երկրորդ գրքի մի մասի բառերով։ Հիշյալ գրքերի բառացանկերի բացակայությունը ձեռագրի (կամ նրա մայրօրինակի) թերթերի անհայտացման արդյունք է. 234ա էջի հենց սկզբի տողը (որով սկսվում է բառարանը) սկսվում է տողադարձի ենթարկված ինչ-որ գխարաւի «...բոյ» վանկով, որին հետևում է մեկնությունը, ապա բառարանի այդ հատվածը շարունակվում է ճիշտ այնպես, ինչպես մյուս գրչագրերում։

[15] Մատենադարան, ձեռ. № 2292, էջ 68բ։

սկզբից՝ Մենդոց գրքից։ Հարցին պատասխանելու համար նորից դառնանք Աստվածաշնչի պատմությանը։

Աստվածաշունչը կանոնական ճանաչված Ս. գրքերի հավաքածու է։ Որպես ուսումնասիրության, մեկնությունների, դասագան նպատակներով օգտագործելու, այլև ընդօրինակումների առարկա միշտ չէ, որ այն մի անբաժանելի ամբողջություն է դիտվել։ Նրա գրքերը հավասար նշանակություն չեն ունեցել և միատեսակ դեր չեն կատարել ժողովրդի կրոնական դաստիարակության և եկեղեցու առօրյա գործունեության ասպարեզներում։ Առավել գործածական են եղել սաղմոսաց գրքերը, ավետարաններն ու ամբողջ Նոր կտակարանը։ «Ամբողջ Աստվածաշնչի բնագիրը,— գրում է Մ. Տեր-Մովսիսյանը,— սովորական առօրյա կյանքում երբեք չունի այն նշանակությունը, որ ունեն ավետարանները, ամբողջ Նոր կտակարանը և սաղմոսները, դրա համար էլ, հասկանալի է, որ լրիվ Աստվածաշնչի վեց հրատարակության դիմաց, չորս Ավետարանի, Նոր կտակարանի և սաղմոսների հրատարակությունները կարելի է հաշվել տասնյակներով»[16]։ Ըստ Գ. Զարբհանալյանի տվյալների, Նոր կտակարանի, սաղմոսների և ավետարանի հրատարակությունների ընդհանուր թիվն անցնում է 75-ից, ընդ որում միայն սաղմոսները հրատարակվել են 42 անգամ[17]։

Հետևաբար բառարանի համար աղբյուր է եղել ոչ թե ամբողջ Աստվածաշունչը, այլ մի ժողովածու, որի մեջ զետեղված են եղել վերևում հիշատակված՝ շատ գործածական Ս. գրքերը։ Այդպիսի ժողովածուն, որ նախատեսված էր ուսուցման ու լայն գործածության համար, պետք է որ օժտված լիներ անհրաժեշտ բառերը բացատրող բառարանով։ Այդպիսի մատենակից բառարան է եղել «Բառք Սուրբ գրոց»-ը, որի բնագիրը Մատենադարանի № 2292 ձեռագրով մեզ հասել

16 Մ. Տեր-Մովսիսյան, նշվ. աշխ., էջ 44։

17 Տե՛ս Գ. Զարբհանալեան, *Հայկական մատենագիտութիւն*, Վենետիկ, 1883, էջ 75—78, 502—505, 595—608։

է լրիվ վիճակում։ Քննվող բառարանը Աստվածաշնչի առաջին բացատրական բառարանն է հայ մատենագրության մեջ։ Նրա հեղինակման հանգամանքները պարզված չեն՝ փաստերի բացակայության պատճառով։ Բառարանի հնագույն գրչագիրը, ավելի շուտ, կարող է ընդօրինակություն լինել, քան նախագաղափար օրինակ։

Գրչագրերը թերություններով հանդերձ հարազատ են իրար և ներկայացնում են միևնույն բնագիրը՝ առանց խմբագրումների և տարբերակների։ Սակայն կան առանձին անհամապատասխանություններ տարբեր գրչագրերի միևնույն բառացանկերի միջև՝ բառերի քանակի տեսակետից։ Օրինակ, «Բառք ի գրոց մարգարէին Յովնանու» բառացանկում №2292 ձեռագիրն ունի 8 բառ, իսկ № 5132-ը՝ 9։ Բացի դրանից, կան նաև գլխաբառերի տարբերություն. առաջին ձեռագրի քաւլիցի և աղխմ գլխաբառերը չկան երկրորդի մեջ և, ընդհակառակն՝ երկրորդի արի, մրրիկ, փապար բառերը բացակայում են առաջինում։ Սակայն նման տարբերությունները, որ շատ թե քիչ առկա են գրչագրերի միջև, էական նշանակություն չունեն բառագրային տեսակետից։ Դրանք բնականաբար առաջացել են ընդօրինակումների ընթացքում, երբ գրիչները ոչ միայն մասնակի խմբագրումներ էին կատարում, այլև վրիպումներ թույլ տալիս։

Բառացանկերի կարգը, որ այնքան միօրինակ է բոլոր գրչագրերում, զգալիորեն տարբերվում է Աստվածաշնչի կանոնից։ Եվ տարբերությունն ավելի է, քան այն անհամապատասխանությունները, որ, ինչպես տեսանք, գոյություն ունեն Աստվածաշնչի տարբեր կանոնների միջև։ Իսկ դա էլ կարող էր առաջանալ երկու առավել հնարավոր ճանապարհով. նախ՝ բնագրի ընդօրինակման ժամանակ, երբ գրիչը, գիտակցաբար, կարող էր բառացանկերի կարգը հարմարեցնել իր ձեռքի տակ գտնվող Աստվածաշնչի կանոնին, ապա՝ թյուրիմացաբար ձեռագրի թերթերի ու պրակների չփոթման հետևանքով։ Դրանով չի՞ բացատրվում արդյոք, որ № 5132 ձեռագրում բացակայում են Սաղմոսաց և Առակաց գրքերի բառացանկերը

կամ այն, որ բոլոր գրչագրերում էլ չորս ավետարանների (Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասու, Յովհաննու) բառացանկերը գտնվում են մյուս բոլոր բառացանկերից հետո, այսինքն՝ բառարանի վերջում։ Կան գուցե այլ հանգամանքներ, սակայն իրողությունն այն է, որ բառարանի մեզ հասած բնագրում բառացանկերի կարգը խախտված է և չի համապատասխանում Աստվածաշնչի կանոնին։ Դա միաժամանակ ապացուցում է, որ բառարանի հնագույն գրչագիրը նախադաղափար չէ և ծագում է մի անհայտ հին օրինակից։

Անցնելով բառարանի բնագրին, նախ տեսնենք, թե ինչպիսի բառացանկեր կան, և ինչ կարգով են դասավորված գրբանք։ Այդ նպատակով բերում ենք բառացանկերն ըստ կարգի՝ իրենց խորագրերով, յուրաքանչյուրի դիմաց նշելով նրբանում առկա գլխաբառերի քանակը (ըստ № 5132 և № 542 ձեռագրերի).

Բառք ի սաղմոսաց մարգարէին Դաւթի	144
Բառք ի գրոց յառակաց Սողոմոնի	31
Բառք յառակաց երկրորդ գլխոյն	42
Բառք ի գրոց ունայնութեանց Սողոմոնի	11
Բառք ի գրոց Վերգոյն Սողոմոնի	40
Բառք ի գրոց իմաստութեան Սողոմոնի	66
Բառք ի գրոց Նահապետին Յոբայ	60
Տեառն խօսել ընդ Յոբայ	20
Բառք ի գրոց մարգարէին Եսայեայ	165
Բառք ի գրոց մարգարէին Երեմիայ	110
Բառք ի գրոց մարգարէին Եզեկիէլի	137
Բառք ի գրոց մարգարէին Դանիէլի	35
Բառք ի գրոց մարգարէին Յովսիայ	21
Բառք ի գրոց մարգարէին Ամովսայ	13
Բառք ի գրոց մարգարէին Միքիայ	14
Բառք ի գրոց մարգարէին Յովէլեայ	11
Բառք ի գրոց մարգարէին Աբդիու	3
Բառք ի գրոց մարգարէին Յովնանու	8
Բառք ի գրոց մարգարէին Նաւումայ	11

Բառք ի գրոց մարգարէին Ամբակումայ	7
Բառք ի գրոց մարգարէին Սոփոնիայ	6
Բառք ի գրոց մարգարէին Անգեայ	4
Բառք ի գրոց մարգարէին Զաքարիայ	14
Բառք ի գրոց մարգարէին Մաղաքիայ	9
Բառք ի գրոց Սիրաքայ	19
Բառք ի գործոց առաքելոց	41
Բառք կաթուղիկէից թղթոց. նախ Յակոբայ	6
Բառք առաջին թղթոյն Պետրոսի	8
Երկրորդ գլխոյն	10
Բառք թղթոյն Յոհաննու	3
ի գրոց թղթոյն Յուդայի[18]	10
Բառք տեսլեանն Յոհաննու	8
Բառք ի գրոց առաքելոյն Պողոսի	29
Բառք կորնթացւոց առաջին	26
Բառք երկրորդ գլխոյն	10
Բառք գաղատացւոց գլխոյն	12
Եփեսացւոց գլխոյն	3
Բառք փիլիպեցւոց գլխոյն	12
Բառք ի կողոսացւոց թղթոյն	2
Երբայեցւոց գլխոյն[19]	17
Բառք Տիմոթէոսի առաջին գլխոյն	8
Բառք երկրորդ գլխոյն	9
Բառք Տիտոսի գլխոյն[20]	4
Բառք Մաթէոսեան աւետարանին	100

18 № 2292 ձեռագրում այս վերնագիրը չկա և բառերը բերվում են նախորդ գլխի բառերից հետո։

19 № 2292 ձեռագրում Կողոսացւոց թղթի բառացանկում կա ընդամենը 2 բառ՝ զրաճեա և լրումն։ № 5132 ձեռագրի նույն բառացանկում այդ բառերը չկան, այլ բերված են հաջորդ գլխի բոլոր բառերը։ Այսինքն՝ այդ ձեռագրում չկա «Երբայեցւոց գլխոյն» վերնագիրը։ Դա շփոթում է։ Ճիշտ է № 2292-ի բառարանը, որ ունի այդ երկու գլուխների բառացանկերը համապատասխան վերնագրերով։

20 № 2292 ձեռագրում այս վերնագիրը չկա, բայց բառացանկը կա նախորդ վերնագրի տակ։ Հետևաբար «Բառք երկրորդ գլխոյն» (Տիմոթէոսի) բառացանկում կա 13 բառ։

Բառք Մարկոսեան գլխոյն 42
Բառք Ղուկասու գլխոյն 50
Բառք Յոհաննու գլխոյն 20

Այս ցանկում, Զոհրաբյանի հրատարակած Աստվածաշնչի համեմատությամբ, բացակայում են Հովհաննու երկրորդ և երրորդ թղթերը, Պողոսի թղթերը Թեսաղոնիկեցիներին, Սիրաքի խոսքը, Մանասեի աղոթքը, Կորնթացւոց թուղթը՝ Պողոսին, Հովհաննու հանգիստը, Եվթաղի աղերսը, խառնված է մարգարեների գրքերի ու այլ գլուխների դասավորությունը, չորս ավետարանները տեղավորված են վերջում:

Վերևի ցանկում բերված թվերից երևում է, որ բառարանը հարուստ չէ, պարունակում է ընդամենը 1420 բառ: Սակայն այս թիվն էլ բառամթերքի իրական չափը չէ, որովհետև կան բառեր, որոնք կրկնվում են միաժամանակ մի քանի բառացանկերում: Օրինակ՝ զարգանալ գլխաբառը («աճել» մեկնությամբ) հանդիպում է «Բառք ի գրոց մարգարէին Եզեկիէլի», «Բառք փիլիպեցւոց թղթոյն», «Բառք Ղուկասու գլխոյն», վարմ բառը՝ «Բառք ի գրոց մարգարէին Երեմիայ», «Բառք ի գրոյ մարգարէին Եզեկիէլի», «Բառք ի գրոց մարգարէին Յովսիայ» բառացանկերում: Կրկնվում են նաև դանդաչել, կարփ, կայծն, շառաւ, ոզոռել, պատսպարել, ճզմել, ծիածան, չինչ, աճխայել, պշնուլ, քուրջ, տոկոս, ճպատ, ոսոխ, արգանակ, դրօշակ, խրամատել, բարապան, աւանդել, սէողել, դանդանաւանդ, ճանդէս, մարթ, յարդարել, զաւշաֆաղ, պայթել, փապար, վիճ, ճկուճ, եղուկ, ճռձիկ, մռռիկ, աւրիորդ և այլ գլխաբառեր: Իսկ եթե չհաշվենք կրկնությունները, ապա բառարանում կմնա մոտ 1200 բառ:

Բառարանի հեղինակը օգտագործել է մի շարք հին բառարաններ. բազմաթիվ բառեր մեկնված են ճիշտ այնպես, ինչպես «Բառք քերթողականք» բառարանում: Իր հերթին այս բառարանը հիմք է հանդիսացել «Բառգիրք Հայոց» բառարանի համար: Վերջինիս մեջ ընդգրկվել է քննվող բառարանի բառամթերքի հիմնական մասը: Դուրս են մնացել Բարուք, բալ, Գաղղա, գաւթել, Դաւիթ, դանգատել, գաւղ, Զաքարիայ,

թոթովախօս, թարթափել, լաստեցի, խօթասիրտ, կարիճ, ճարակել, մարդելուզել, Մաթէոս, մատակ, Մաղաքիայ, յարդյանձն առնել, շահատակել, Պաթուրէս, պանդոկ, պալարակերպ երիւարօք, պագշոտել, սաւառնել, սատարութիւն, տաշխն, տատամսել, փարձլի, քաղքաղել, քաղցր, գեղ, գեղմն, թեկն, թեղոշն, յեփաղնան, եռել, ներուն, (զ)էշտրմուղ, ծիր, Միքիայ, նինջ, սին, Սիրաք, խլայ, խլխլել, սկինդ, աղաւեղագէս, եղջերիկն, մղեղ, ուղխք, այժմ, այսհարցուկ, Անգէսս, անագովթ, անթոց, ընդարոյս, ընձիւղել, ընդելուզել, պնակն, ցնծալ, խշտիս, գոգիմայ, թուանալ, խոտորնակ, խոհական, հոլովումն, Յոբ, սովոր, Սոփոնիայ, Սողոմոն, ուռի, քամնել, արմաչեալ, արշաւել, լրիւ, հրատ, հրաշագեղ, որոտ, աւերձեալ, ուճար, տուն, շքեցի և այլ բառեր: Այդ երկու բառարանների կապերին դեռևս կանդրադառնանք՝ «Բառգիրք Հայոց»-ի քննության ժամանակ:

Արտաքին կողմով՝ կառուցվածքով, այս բառարանը որևէ նորություն չի դրսևորում: Այնուամենայնիվ, ծանոթացնելու համար, բերում ենք մի հատված՝ Ովսե մարգարեի գրքի բառացանկը.

Բառք ի գրոց մարգարէին Յովսիա

Յովսիա. ընծայ տեառն կամ ապրեալ:
Հոմանի[21]. սեղեխ կամ տլոն:
Առականեցից. ապականեցից կամ ընդդէմ արարից:
Ծանական. առական[22]:
Կապենէ. շանխուր, շնութեան վարձք:
Ստերիւել. թիւրել:
Քոռի. պ̅ծ, քսեստ է. մէկ քսեստն որ է բ̅ լիտր. ճ̅ քսեստ է մար մի:
Քուեայս. փայտ ընդհանուր:
Գաճաւանդ. տաքիրոն կամ թաքոր:

21 Ձեռագրում, վրիպակով՝ Հովանի: Այդպես է նաև մյուս ձեռագրերում:
22 № 5132 ձեռագրում՝ Ծանակել. խայտառակել:

Յորձիւմ. *ընծայիւք:*
Խոյս. *փախ կամ թագ:*
Խայթոց. *սողնահարած թոյնը:*
Յովազ. *մատակ առիւծ. ինձն:*
Նկան. *այրեցեալ և քարացեալ հաց:*
Վարմ. *գործի:*
Յատիճն. *տրանջէին կամ խնդրէին*[23]*:*
Խիւս. *խուս:*
Դիտակ. *դիտօղ:*
Կուրդ. *անվար կամ խոպան:*
Պաշտպանել. *փրկել:*
Պաշտպան. *օգնական կամ զօր հանապազ. կամ փրկիչ:*
Կրայս. *կուրիայ:*
Լիբաեոս. *կնդրուկ:*
Խայծեալ. *վաղահաս*[24]*:*

Բառահոդվածներում գլխաբառերի բացատրության ժամանակ երբեմն հանդիպում են օտար բառեր, սելաւ, ղալխան, մեշա, արաբայ, քէֆիլ, խիար, կիտր, հարիֆտանա, գեաշտ, փիչի, խանշար, տալբանդ, գեհիմ (կէյիմ), ղապալա, խարբուզակ, ղրմզ, ելասար, խալխալայ, փարիզայ, ալամ, նաղարայ, քարրիչ, զօլչայ, սիպայ, քաշաւայ, մաֆայ, գոմրուկ, չէշնի, բեհ՛ և այլն: Այս բառերը մեծ մասամբ թուրքերեն են: Մինչդեռ նախորդ շրջանի բառարաններում թուրքերեն բառերը հազվագյուտ են և օտար բառերը գերազանցապես արաբերեն են: Հետագա շրջանի որոշ բառարաններում թուրքերեն բառերի թիվն ավելանում է, սակայն հանդես են գալիս բառարաններ, որոնք ընդհակառակն՝ լեզվի մաքրությամբ չեն պիջում «Բառք քերթողականք» և մյուս հնագույն բացատրական բառարաններին:

Վերևում քննված բառարանը մեկն է հայ ուշ միջնադարի անդրանիկ գրական երկերից, որոնցով սկսվում են հայ մա-

23 *№ 5132 ձեռագրում՝ «Ցետել. տրանջել կամ խնդրեն»:*

24 *Մատենադարան, ձեռ. № 542, էջ 187ա—187բ:*

տենագրության վերակենդանացման ու վերելքի առաջին քայլերն այնքան տևական անկումից հետո: Ժամանակին բառարանը մեծ դեր է խաղացել պարսկա-թուրքական արյունոտ տիրապետության շրջանում իր գոյության համար ոգորող հայերի մշակութային կյանքում, օգնելով նրանց հասկանալու դասական հայերենով գրված բնագրերը, որոնց բազմաթիվ բառեր արդեն անհասկանալի էին: Եվ ոչ միայն բնագրեր կարդալու, այլ բառարանը պետք էր սովորելու և գործածելու բազմաթիվ հայերեն բառեր, որոնք աստիճանաբար փոխարինվում էին թուրքերեն բառերով՝ ճակատագրով ձուլման և օտարախոսության բռնադատված հայերի լեզվում: Արդի հայագիտության համար, որպես մշակութային մի նոր, անտիպ հուշարձան, պատմական նշանակությունից բացի, բառարանը հետաքրքիր է իր բովանդակությամբ՝ հայերենի բառային կազմի, ինչպես նաև բարբառների ուսումնասիրության տեսակետից:

ԼՈՒՍԻՄԻՆ ԲԱՌԻՑ ՅԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ԳՐՈՑ

Աստվածաշնչի այս բառարանը մեզ հասել է շատ ձեռագրերով, որոնք պահվում են Մատենադարանում, ինչպես նաև Զմմառում, Անկյուրիայում, Վենետիկում, Փարիզում, Բեռլինում և այլուր[25]*: Հնագույն թվակիր ձեռագիրը № 3468 ժողովածուն, գրված է 1665—1669 թվականներին Աստապատում, բովանդակում է մեզ հետաքրքրող բնագիրը, այլ բառարաններ և Առաքել Սյունեցու տաղերը*[26]*: Հեղինակման ու գրչա-*

25 *Տե՛ս Մատենադարան, ձեռ. №№ 268, 451, 528, 941, 2466, 3169, 3171, 3257, 3286, 3397, 3468, 3283, 4294, 6097, 6568, 6993, 7012, 7035, 7103, 8010, 8501, 8614: Նաև ՔՅՐ № 82, ՁՄՅ № 288, ԱՆՅ № 72, ՎԵՏՅ № 242, 250, ՓՅ № 261:*

26 *Ձեռագրի համառոտ նկարագրությունը տե՛ս Մատենադարանի ձեռագրացուցակում (այուն 1019): Այս ցուցակն իրավամբ հարցականի տակ է դնում 1616 թվականը՝ որպես № 4283 ժողովածուի գրության ժամանակ: Բ. Բունիաթյանը (Հայ աստղագիտության պատմություն, Երևան, 1964, էջ 337) անվերապահորեն այդ թվականը համարում է ժողովածուի գրության տարեթիվ: Սակայն, ուշադիր պրպտումներից հետո, մենք գտնում ենք, որ*

գրման տեսակետից էլ այս ձեռագիրը նախընտրելի է, գոնըվում է լավ վիճակում, ուստի և ընդունված է որպես հիմնական աղբյուր բառարանի ուսումնասիրության համար։

Ի տարբերություն նախորդի, բառարանը բառացանկերի վերևում Աստվածաշնչի համապատասխան գլուխների վերնագրերը նշելուց բացի ունի մի ընդհանուր խորագիր, որ է. «Համառօտ գումարումն և լուծումն բառից յԱստուածաշունչ գրոց յումեմնէ երեմիայ բանասիրէ»։ Շատ ձեռագրերում այս խորագրի գումարումն բառից առաջ կա նաև հաւաքումն, այսինքն՝ «Համառօտ հաւաքումն եւ գումարումն եւ լուծումն...», իսկ երեմիա անունից հետո՝ Մեղրեցւոյ՝ «...երեմիայէ բանասիրէ Մեղրեցւոյ»։ Գրչագրերի (գլխավորապես ուշ շրջանների) մի մասը բանասիրէ բառի փոխարեն ունի վարդապետ։ Հարմարության համար նախ համառոտենք բառարանի վերնագիրը՝ այսուհետև կոչելով բառարանը «Լուծումն բառից յԱստուածաշունչ գրոց», ապա անցնենք նրա քննությանը, սկսելով հենց վերնագրում հիշատակվող անունից՝ բառարանի հեղինակից։

Երեմիա Մեղրեցին XVII դարի հայ մատենագրության մեջ հայտնի է որպես բառարանագիր և հրատարակիչ։ Նրա կյանքի, ու գործունեության մասին տեղեկությունները սուղ են, հայտնի չեն ծննդյան ու մահվան տարեթվերը։ Հավանաբար նա ծնվել ու մանկությունը անց է կացրել Մեղրիում (որտեղից էլ՝ նրա Մեղրեցի անունը)։ Թե որքան ժամանակ է ապրել ծննդավայրում, երբ և որտեղ ստացել կրթությունը, ինչպես կապվել էջմիածնի հետ ու վարդապետ դարձել՝ դեռևս պարզված չէ։ Բանասիրական ճանապարհով պարզվում է, որ Աստվածաշնչի բառարանը, որ ամենուրեք հայտնի է Մեղրեցու անունով, գրվել է XVII դարի վաթսունական թվականներին։ Այդ ժամանակներից էլ Երեմիան եղել է էջմիածնում։ Նա կենդանի է եղել մինչև XVII դարի վերջը. 1698 թ. որպես հրատարակիչ, լույս է ընծայել «Աղուէսագիրք»-ը և «Բառգիրք Հայոց» բառարանը[27]։ Այսպիսով, դեռևս ծայրակետեր (terminus a quo և terminus ad quem) չհամարվող, երկու թվականների (1665 և 1698) միջև ընկած է բավականին երկար (33 տարվա) մի շրջան, որը Երեմիա վարդապետի գործունեության հիմնական ժամանակաշրջանը պետք է համարել։ Հայ բառարանագրության մասին խոսելիս Գ. Զարբհանալյանը նշում է, որ «...կը յիշատակուի Երեմիայ վարդապետի աշխատասիրած Բառգիրք մը, որ էջմիածնի միաբաններէն էր, ու իրեն գործակից կամ աշխատակից ունեցած է Սարգիս անունով եպիսկոպոս մը»[28]։ Սարգիս եպիսկոպոսը, որի անունը հիշատակված է տպագիր բառարանի տիտղոսաթերթի վրա և հիշատակարանում, անմիջական մասնակցություն է ունեցել բառարանի հրատարակության աշխատանքներին և եղել է, հավանաբար, Երեմիա Մեղրեցու ընկերներից մեկը։

Երեմիա Մեղրեցու բառարանի հեղինակային օրինակը մեզ հայտնի չէ։ Չգիտենք նաև, թե Մատենադարանի № 3463 ձեռագրում այդ բառարանն ինչպիսի նախօրինակի վերարտադրություն է՝ նախագաղափա՞ր, թե դարձյալ ընդօրինակություն։ Աղբյուրները պարզում են սակայն, որ հիշյալ ժողովածուի մայրօրինակը գոյություն է ունեցել, համենայն դեպս, 1665 թվականից առաջ։ Իսկ ե՞րբ կարող է կազմված լինել բառարանը, որի գրչագրերն արդեն կային (և հավանաբար բազմաթիվ օրինակներով տարածված էին) 1665 թվականից առաջ։ Այդպիսի բառարան կազմելու համար երկար ժամանակ էր պետք։ Ուրեմն Երեմիա վարդապետն իր աշխատանքը սկսած պիտի լինի մոտավորապես վաթսունական թվականների սկզբին։ Աստվածաշնչի այդ բառարանը լեզվական բավա-

---

տոմարական աշխատությանը վերաբերող այդ թիվը ձեռագրի գրության ժամանակը չի նշում։ Ժողովածուն գրված է ավելի ուշ և չի կարելի այն համարել քննվող բառարանի հնագույն օրինակը ներկայացնող ձեռագիր։ Բառարանի հեղինակ Երեմիա Մեղրեցին, որի գործունեությունը հասնում է մինչև XVII դարի վերջը, այդ ժամանակ՝ 1616 թ. թերևս կարող էր ծնված էլ չլինել։

27 Տե՛ս Ա. Ղազիկյան, Հայկական նոր մատենագիտություն եւ հանրագիտարան հայ կեանքի, հտ. Ա, Վենետիկ, 1909—1912, սյուն 590։ Գ. Զարբհանալեան, Հայկական մատենագիտութիւն, Վենետիկ, 1883, էջ 21։

28 Գ. Զարբհանալեան, Պատմութիւն հայերէն դպրութեան, Բ, Վենետիկ, 1878, էջ 407։

կանաչափ գիտելիքներ ու բառարանագրական փորձ ունեցող, այլև բանասիրական հմտություններով օժտված մատենագրականի աշխատանքի արդյունք է։ Եվ եթե բառարանը կազմելիս Երեմիան այդպիսի բանասեր էր, ապա նա պետք է բավականին տարիք ունենար (25—30, թերևս ոչ պակաս)։ Ուրեմն նա ծնված պիտի լինի XVII դարի առաջին քառորդում, նրա գործունեությունն սկսվում է այդ դարի կեսերից և շարունակվում մինչև դարագլուխ։

Աստվածաշնչի բառարանը Երեմիա Մեղրեցու գրչին պատկանող (առայժմ մեզ հայտնի) հիմնական երկն է։ Սակայն քիչ աշխատանք չի կատարել նա որպես հրատարակիչ «Աղուէսագրքի»[29] և հայերեն առաջին ընդարձակ բառարանի՝ «Բառգիրք Հայոց»-ի խմբագրման և լույս ընծայման ուղղությամբ։

Երեմիա Մեղրեցու բառարանն, ի տարբերություն նախորդ բառարանների, բառացանկեր ունի Աստվածաշնչի բոլոր գրքերի համար և աչքի է ընկնում ոչ միայն բառացանկերի ընդարձակությամբ, այլև մեկնություններով, որոնք մեծ մասամբ միարան չեն, այլ ընդարձակ են ու բազմակողմանի։ «Բառք Ս. գրոց» բառարանը, ինչպես նշվել է վերևում, ամբողջությամբ ընկած է այս բառարանի հիմքում՝ նրա 1200 բառից Երեմիան վերցրել է շուրջ 1100 բառ, երբեմն մեկնությունները նոր համանիշներ ավելացնելով և առանձին դեպքերում նոր բացատրություններ տալով։ Մյուս բառերը մեկնելիս Երեմիան օգտվել է այլ հին բառարաններից, գլխավորապես «Բառք քերթողականք»-ից։

Բառարանի գրչագրերի միջև եղած տարբերությունները բառացանկերի դասավորության մեջ են և ըստ այդմ կա բառարանի գրչագրերի երկու հիմնական խումբ։ Սկզբից մինչև Մակաբայեցոց երրորդ գլուխը ներառյալ, մինչև Հոբի գիրքը, բոլոր ձեռագրերում բառացանկերի կարգը ճիշտ կերպով համապատասխանում է Աստվածաշնչի գրքերի կարգին (նկատի ունենք Զոհրաբյանի հրատարակությունը)։ Դրանից հետո, առաջին խմբի ձեռագրերը, որ համեմատաբար հին են և, մեր կարծիքով, հարազատ են բառարանի հեղինակային օրինակին, բառացանկերի դասավորությամբ հիմնականում համընկնում են Աստվածաշնչի գրքերի հետ։ Տարբերությունն այն է, որ Հոբի գրքի երկու բառացանկերի («Յոբայ» և «Տեառն խօսելոյ ընդ Յոբայ») միջև ընկած է «Ելիուսայ», իսկ մարգարեներից հետո՝ «Սիրաքայ» բառացանկերը։ Սիրաքի գիրքն Աստվածաշնչում Հին կտակարանի մեջ չի մտնում, այլ դրված է հավելվածում։ Նոր կտակարանի կողմից բառարանի և Աստվածաշնչի տարբերությունն այն է, որ բառացանկեր չկան Հովհաննու երկրորդ և երրորդ թղթերի համար, սակայն բառարանի վերջում կա «Ընդ եղբարն»։ Երկրորդ խմբի ձեռագրերում Մակաբայեցոց երրորդ գլխից հետո գալիս են «Յոբայ», «Ելիուսայ», «Տեառն խօսելոյ ընդ Յոբայ», Սաղմոսաց, Առակաց ու Սիրաքի գրքերի, ապա մարգարեությունների գրքերի բառացանկերը այսպիսի հաջորդությամբ՝ Եսայեայ, Երեմիայ, Բարուքայ, Դանիելի, Եզեկիելի, Ովսեայ, Ամովսայ, Միքիայ, Աբդիու, Յովնանու, Նաւումայ, Ամբակումայ, Սոփոնիայ, Անգեայ, Զաքարիայ, Մաղաքիայ, որով ավարտվում է Հին կտակարանը։ Նոր կտակարանում միակ տարբերությունն այն է, որ երկրորդ խմբի գրչագրերն ունեն նաև «Կորնթացւոց երրորդ» բառացանկը։ Դժվար չէ նկատել, որ երկրորդ խմբի ձեռագրերում Մակաբայեցոց գրքին հաջորդող գրքերի, հատ-

29 Աղվեսագիրքը՝ «Գիրք աշխարհաց և առասպելաբանութեանց, որ է Աղուէսագիրքը», առաջին անգամ տպագրվել է Ամստերդամում, 1668 թ.։ Գրքի մեջ Երեմիա Մեղրեցին կամ որևէ հեղինակ չի հիշատակվում։ Երկրորդ անգամ հրատարակվել է էջմիածնում 1698 թ.՝ «Գիրք աշխարհաց և առասպելաբանութեանց։ Որ է Աղուէսագիրք։ Ի Սուրբ էջմիածին երեմիայ վարդապետէ» տիտղոսաթերթով։ Սակայն հրատարակիչ Երեմիա վարդապետին գրքի հեղինակ համարելը, ինչպես այդ արվել է հետագայում, թյուրիմացություն է, ինչ իրավացիորեն մատնանշում է Հ. Տաշյանը («Ժողովածոյք առակաց վարդանայ», Վիեննա, 1900, էջ 8—9)։ Աղվեսագրքի հիշյալ հրատարակությունների մատենագիտությունը տե՛ս Հ. Մ. Դավթյան, Հ. Հ. Սիլվանյան, Ն. Ա. Ոսկանյան, Ք. Ա. Կոչկոտյան, Մ. Ե. Միրզոյան, Ա. Մ. Սավալյան, Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակ (1512—1800), Երևան, 1963, էջ 49։

կապես մարգարեների դասավորության անկանոնությունը ոչ թե Աստվածաշնչի ինչ-որ բնագրի վրա է հենված, այլ պարզապես թյուրիմացության արդյունք է: Այդ խմբի ձեռագրերի հիմքում ընկած է մի բնագիր, որի բառացանկերի դասավորությունը հավանաբար խաթարվել է ձեռագրի թերթերի շփոթման պատճառով: Այլապես չի կարելի բացատրել Հին կտակարանի վերջում՝ Սիրաքի, Երեմիայի, Բարուքի, Դանիելի և Եզեկիելի գրքերի տեղաշարժերը, մյուս մարգարեների գրքերից առաջ դասավորված լինելը:

Քննվող բառարանում էլ բառացանկն անկանոն է, բառերը այբբենական կարգով չեն շարված (բացառությամբ № 3286 ձեռագրի): Նշելի է, սակայն, մի հանգամանք, որ կարևոր է բառարանագրական տեխնիկայի տեսակետից. այն, որ գլխաբառերը բերվում են ուղիղ ձևերով: Մեկնությունները բավականին ընդարձակ են, իսկ բարբառային և օտար բառեր համեմատաբար քիչ են օգտագործվում: Բառացանկն ընդարձակ է. գլխաբառերի թիվը, օրինակ, № 3468 ձեռագրում հասնում է 8700-ի: Սակայն սա բառերի ընդհանուր քանակն է՝ բառացանկերում կրկնվող բոլոր գլխաբառերի հաշվառումով: Իսկ կրկնությունները շատ են, միևնույն գլխաբառը մեկնվում է մի քանի բառացանկերում, օրինակ՝ «Աչտաճակ. ճրագակալ» բառահոդվածը կա Թուոց, Թագաւորութեանց երրորդ, Մակաբայեցւոց առաջին, Մարգարէութիւն Զաքարիայ, Աւետարան ըստ Մատթէոսի, Աւետարան ըստ Ղուկասու, Եբրայեցւոց և Տեսիլ Յոհաննու գրքերի ու գլուխների բառացանկերում[30]: Կրկնվելով տարբեր բառացանկերում՝ Տակաւին բառը բացատրվում է 19, պատմուճան-ը՝ 18, աւար-ը՝ 17, կշռամբել-ը՝ 16, անսալ-ը՝ 15 անգամ: Միայն՝ ագարակ, ժառանգել, խայտալ, քուրմ, նուիրել, անիւ, ողջոյն, պանդուխտ, նկուն, շտեմարան, դիտել, ձորձ, սատակել, ջնջել, սուտեր, ոռճիկ, դէտ, չուել, տուժել, ապաստան, անգոսնել, պաշարել, լթել, տադ-

30 Տե՛ս Մատենադարան, ձեռ. № 3468, էջ 41ա, 85ա, 110բ, 197ա, 233բ, 245ա, 270ա, 272բ:

նապ, կորզել և այլ՝ 8—14 անգամ կրկնվող 90 բառերին բաժին է ընկնում շուրջ 800 բառահոդված, ինչ կազմում է ամբողջ բառացանկի ավելի քան 9 տոկոսը: Կրկնություններից դուրս բառարանում կմնա 3700 բառ: Եվ այդպիսի բառացանկով, ինչպես տեսնում ենք, բառարանը երեք անգամ հարուստ է նախորդ բառարանից:

Արդ տեսնենք, թե ինչպես են մեկնվում միևնույն բառերը Աստվածաշնչի երկու բառարաններում: Առաջին բառարանը «Բառք ի գրոց մարգարէին Յովսիայ» բառացանկում ունի 24, իսկ Երեմիա Մեղրեցու բառարանը՝ 46 բառ: Համեմատենք միևնույն բառահոդվածները.

Բառք Ս. գրոց	Լուծումն բառից յԱստուածաշունչ գրոց
Յովսիա. *ընծայ տեառն. կամ ապրեալ:*	Յովսիեայ. *ընծայ տեառն. կամ հուր տեառն. կամ ապրեալ:*
Առակաւեցից. *ապականեցից կամ ընդդէմ արարից:*	Առակաւել. *փակել. կամ ծածկել:*
Մաճակաճ. *առական:*	Մաճակաճս. *զառականս. կամ ամաւթոյք:*
Մտերիւրել. *թիւրել:*	Մտերիւրել. *թիւրել. կամ մոլորել:*
Քուեայս. *փայտ ընդհանուր:*	Քուեայս. *փայտ:*
Յովազ. *մատակ առիւծ. կամ ինձն:*	Յովազ. *վագր:*
Վարմ. *գործի թռչնոց:*	Վարմ. *ըմբռնիչ. գործի թռչնոց:*
Յատիճն. *տրտնջէին. կամ խնդրէին:*	Յատել. *տրտնջել. կամ խընդրել. կամ փնտռել:*
Դիտակ. *դիտօղ:*	Դիտակ. *դիտօղ կամ աշօղ:*

Կուրդ. *անվար կամ խոպան,*	Կուրդ. *խոպան. կամ խոզան. կամ անվար:*
Խայծեալ. *վազահաս*[31]:	Խայծ. *վազահաս կամ կանխահաս*[32]:

«Լուծումն բառից Ս. գրոց» բառարանի մնացած 12 բառից 3-ը՝ խոյս, պաշտպանել, յոռնիւք չկան Երեմիա Մեղրեցու բառարանում, գաճաւաղդ և խայծեալ բառերի դիմաց կա գաճաւաղակ և խայծ, իսկ 7 բառահոդվածներ միևնույնն են երկու բառարաններում: Բառահոդվածների համեմատությունից տեսանք, որ տարբերություններ (թեև ոչ էական նշանակություն ունեցող) այնուամենայնիվ կան. Երեմիա Մեղրեցին նույնությամբ չի վերցնում բառահոդվածները, այլ խմբագրումներ և լրացումներ է կատարում՝ բառի իմաստն ավելի լրիվ ու հասկանալի բացատրելու նպատակով: Նա օգտագործել է նաև *«Բառք քերթողականք»*, *«Բառք Հայոց»* և այլ հին բացատրական բառարաններ՝ նույնպես յուրովի մոտեցմամբ, ընդ որում ձգտելով պահպանել հայերեն լեզվի մաքրությունը. *«Բառք Հայոց»* բառարանից վտարում է բոլոր թուրքերեն բառերը և իր բառարանում նրանց փոխարեն դնում է հայերեն գրական, իսկ առանձին դեպքերում նաև բարբառային բառեր:

Գրչագրերի երկու խմբի բաժանելը, տեսանք, ձևական է, հիմնված է միայն բառացանկերի դասավորության վրա և կապ չունի բառարանի բովանդակության հետ: Նշանակում է բառարանի խմբագրություններ չկան, այլ կան կառուցվածքային առանձնահատկություններով տարբերվող գրչագրական տարբերակներ, որոնք ներկայացնում են միևնույն բնագիրն իր ամբողջության մեջ: Ասենք, ի դեպ, որ գրչագրերի՝ ըստ արտաքին, ձևական հատկանիշների դասդասումը կարևոր և անհրաժեշտ է ոչ միայն գրչագրերի առնչությունները ցույց տալու, այլև բառարանի պատմությունը լուսաբանելու և բնագրային աշխատանքներ կատարելու համար:

31 *Մատենադարան, ձեռ. № 2292:*

32 *Մատենադարան, ձեռ. № 4283:*

Այնուամենայնիվ գրչագրերի բաղդատումներն ի հայտ են բերում առանձին տարբերություններ (իհարկե, ոչ գրչագրական բնույթի), որոնք վերաբերում են թե՛ բառացանկերում եղած բառերի քանակին և թե՛ բառահոդվածներին: Միշտ չէ, որ տարբեր տեղերում կրկնվող գլխաբառերը միատեսակ են մեկնվում, ինչպես, ասենք՝ «Վրիպել. սխալել»[33], որ այս նույն ձևով կրկնվում է 14 անգամ: Բազմաթիվ դեպքերում միևնույն գլխաբառի մեկնությունները տարբեր բառացանկերում նման չեն: Օրինակ.

Դարաճակալ. *թաք կենօղ. կամ յորոգայթ դնօղ (Ծննդ.).*
Դարաճակալ. *քմի (Յեսու):*
Դարաճակալ. *շրջանակալ (Իմաստ. Սող.):*
Դարաճակալ. *որոգայթադիրք. կամ դարանամուտք (Եսայեայ)*[34]:
կամ՝
Ամփոփել. *ժողովել. կամ կուտել (Դեւտ.):*
Ամփոփել. *ժողովել. կամ ծրարել (Առակ. Բ):*
Ամփոփել. *ժողովել (Տեառն խօս. ընդ Յորայ):*
Ամփոփել. *ժողովել. կամ ծածկել (Ամբակում)*[35]:

Այս բառահոդվածներից դարաճակալ-ի առաջին և չորրորդ օրինակները իմաստով նույնն են, սակայն տարբերվում են բացատրության ձևով. երկրորդի մեկնությունը թերի է և չի համապատասխանում գլխաբառին՝ քմի (ճիշտ՝ քմին=արսկ. كمين) նշանակում է դարան և ոչ թե դարաճակալ, իսկ երրորդ օրինակում սխալ է մեկնությունը. շրջանակալ բառը վկայված չէ հայ մատենագրության հին երկերով. հավանաբար այն կազմված է դարաճակ[36] *բառի նմանակու-*

33 *Տե՛ս Մատենադարան, ձեռ. № 3468, էջ 7բ, 31բ, 42ա, 45բ, 62ա, 85բ, 97բ, 104ա, 164ա, 176բ, 201բ, 228բ, 259ա, 270բ:*

34 *Նույն տեղում, էջ 14ա, 60ա, 153բ, 174ա:*

35 *Նույն տեղում, էջ 39ա, 146ա, 167բ, 195ա:*

36 *Մալխասյանի բառարանում դարաճակ բացատրվում է որպես «1. Դարերի շրջան, տարիների բոլորում: 2. Պարսպի անկիւնները, որտեղ շրջում են մի կողմից դէպի միւս կողմը»: «Բառգիրք Հայոց» բառարանն ունի՝ «Դարաճակ. շրջանակ»:*

Թյամբ կամ, գուցե, խոսակցական լեզվում այդ բառը, իրոք, գոյություն ունեցել է՝ դարաճակալ նշանակությամբ։

Տեսնենք, սակայն, թե դարաճակալ բառն ինչպես է գործածված Աստվածաշնչի համապատասխան գրքերում։

«...և եղիցի դան՝ օձ դարաճակալ ի ճանապարհի, հարկանել զգարշապար երիվարի...» (Մենդ. ԽԹ. *17*)[37];

«...և դարաճակալքն ելցեն վաղվաղակի ի տեղւոջէ իւրեանց» (Յեսու. Ը. *18*)[38];

«եւ դարաճակալքն յարեան վաղվաղակի ի տեղւոջէ իւրեանց...» (Յեսու. Ը *19*)[39];

«եւ Յեսու և ամենայն ժողովուրդն իբրև տեսին թէ առին դարաճակալքն զքաղաքն...» (Յեսու. Ը. *21*)[40];

«Դարաճակալ լիցուք արդարոյն զի զժպհի եղև մեզ...» (Իմաս. Բ. *12*)[41];

«Տուր ինձ զքոյոց աթոռոցդ զդարաճակալ իմաստութիւն...» (Իմաս. Թ. 4)[42];

«եւ ի դարաճակալաց նորա զգուշացաւ...» (Իմաս. Ժ. *12*)[43];

«Բայց տուն Յակովբու յորոգայթ և ի ծուծորս դարաճակալաց երուսաղէմի» (Եսայ. Ը. *14*)[44];

Այս քաղվածքներում (և առհասարակ ամբողջ Աստվածաշնչում, որտեղ բառը հանդիպում է 25 անգամ) դարաճակալ-ը գործածված է ուղիղ կամ հիմնական իմաստով. բացի Իմաս. (Թ, 4) *դեպից, որտեղ՝ «...զքոյոց աթոռոցդ զդարաճակալ...» կապակցության մեջ բառն իր հիմնական իմաստներից ոչ մեկը, այլև փոխաբերական գործածություն չունի,*

37 *Աստուածաշունչ, Վենետիկ, 1805, էջ 32։*
38 *Նույն տեղում, էջ 139։*
39 *Նույն տեղում։*
40 *Նույն տեղում։*
41 *Նույն տեղում, էջ 464։*
42 *Նույն տեղում, էջ 468։*
43 *Նույն տեղում։*
44 *Նույն տեղում, էջ 498։*

ինքնուրույն իմաստային միավոր չէ և լոկ դարձվածաբանական միասնության (фразеологическое единство) *բաղադրիչ է։ Այդ ամբողջ դարձվածը նշանակում է «աթոռակից», «առընթեր նստած»* (πάρεδρος, adsessor)[45], *ռուս.* приседящий („Даруй мне приседящую престолу Твоему премудрость...)[46]։ *Բերենք նաև ամփոփել բառի վկայությունները։*

«...մի առհասարակ զնշխար հնձող անդին քոյ ի հնձել քում ամփոփեսցես...» (Ղեւտ. ԻԳ. *22*)[47];

«...ո՞վ ամփոփեաց զջուրս ի ձորձս իւր...» (Առակ. Լ. *4*)[48];

«Հաւատասցե՞ս եթէ հատուցանիցէ քեզ զսերմանիս. և ամփոփիցէ զկալ քո...» (Յովբ. ԼԹ. *12*)[49];

«...եւ զազգս ամենայն յինքն ամփոփեսցէ» (Ամբակ. Բ. *5*)[50];

Աստվածաշնչում 18 անգամ գործածված ամփոփել բառը մեկնված է վերևում բերված նախադասություններում ունեցած իմաստով։ Սակայն այդ բազմիմաստ բառը (որ ըստ ՆՀԲ նշանակում է՝ ժողովել ի մի, հաւաքել, յինքն ձգել կամ առնուլ, կարճել, զսպել, պատել, թաղել, ափով կամ ձեռամբ շօշափել, փայփայել, սփոփել, մեղմել և այլն) Աստվածաշնչի մյուս գլուխներում (Մենդ., Ա. Թագ., Տովբ., Երեմ. և այլ) ունի այնպիսի նշանակություններ, որոնք չեն նշված բառարանում։ Ուրեմն այստեղ էլ, ինչպես մյուս հին բառարաններում, բառն իր ամբողջ բովանդակությամբ, բազմակողմանի բացատրելը սկզբունք չէ և չի բխում բառարանի նեղ գործնական նպատակներից։

Նշելի է, սակայն, որ բառը համառոտ մեկնելու ընդհանուր սկզբունքը Երեմիա Մեղրեցու բառարանում տիրապետող

45 *Տե՛ս ՆՀԲ։*
46 „Библия, или книги священного писания Ветхого и Нового завета", М., 1956, стр. 635.
47 *Աստուածաշունչ, էջ 78։*
48 *Նույն տեղում, էջ 447։*
49 *Նույն տեղում, էջ 490։*
50 *Նույն տեղում, էջ 544։*

չէ։ Այդ բառարանում, ի տարբերություն մյուս հին բառարանների, գլխաբառերն ավելի հանգամանորեն են մեկնվում, հաճախ լիարժեք կերպով՝ 2—4 և ավելի համանիշների օգնությամբ։ Դա կարևոր նորարարություն է, որ կատարում է Երեմիա Մեղրեցին հայ բառարանագրության զարգացման ընթացքում՝ խախտելով ժամանակից բառարանների միաբառ մեկնություններ կատարելու դարավոր սովորույթը, դրանով իսկ՝ վճռական քայլ կատարելով դեպի ընդարձակ ու բազմակողմանի բառահոդվածը։ Վերևի օրինակները, որ բերվեցին ոչ լիարժեք ու ըստ ամենայնի ճիշտ մեկնությունները ցուցադրելու նպատակով, պարզ է, որ ճիշտ ու լրիվ պատկերացում չեն կարող տալ բառարանի մասին։ Ուստի միակողմանի չլինելու և բառարանի արժանիքներն ըստ կարելվույն լրիվ բացահայտելու համար բերենք նաև մի ամբողջ բառացանկ.

Բառք ի գրոց առաքելոյն Պողոսի

Պողոս. *եբրայեցերէն թարգմանի բերան փողոյ. կամ ընտրեալ զարմանալի. յունարէն՝ հանգարտ. լատիներէն՝ փոքր։*

Շնորհս. *ձիրս. կամ պարգևս։*

Շնորհք. *ողջոյն կամ խաղաղութիւն։*

Երբէք. *երբեմն. կամ երբ. կամ ժամանակ մի. կամ անգամ մի. կամ յորժամ։ Առբայ ժամանակական։*

Հաւատ. *հաւանումն։*

Անձկալ. *ցանկալ. կամ բղձալ, կամ փափագել. կամ տարփալ. կամ տենչալ։*

Անն. *արգակ. կամ հարթ։*

Մշտնջենաւորութիւն. *յաւիտենականութիւն։*

Նանրանալ. *ունայնանալ. կամ սնոտի լինել։*

Օրհնեալ. *պատմեալ կամ բարեբանեալ։*

Անզգամ. *տգէտ. կամ յանդուգն. կամ անզգա։*

Հեռ. *խեռ կամ քէն. կամ ոխ։*

Շոքմոգ. *փասքուս. կամ բանսարկու. կամ երկխօս։*

Թշնամանել. *անարգել. կամ արհամարհել։*

Ամբարտաւան. *մեծամիտ. կամ հպարտ։*

Ամբարհաւան. *ոչ բարին հաճեալ։*

Ամբարհաւան. *ամբարտաւան. կամ փառասէր. կամ անհաճ։*

Ուխ(տա)դրուժ. *ուխտազանց. կամ ստող։*

Անագորոն. *անգութ, կամ անողորմ. կամ տմարդի. կամ անմարդի։*

Աննուէր. *վայրենամիտ. կամ անպտուղ։*

Ապստամբ. *անհաւան. կամ ի բաց դարձող։*

Անձկութիւն. *նեղութիւն. կամ դժուարութիւն։*

Ակնառութիւն. *երեսպաշտութիւն։*

Վտահ.... *կամ արձակ*[51]։

Կողոպտել. *կապտել. կամ մերկացնել. կամ թալանել։*

Քաւ. *մի։*

Ապիրատ. *անիրաւ։*

Թշուառ. *չուառ. կամ եղկելի. կամ գերի. կամ ողորմելի. կամ մուրացի*[52]. *կամ աղքատ. կամ վատաբախտ։*

Հանդէս. *համար. կամ ընտրութիւն. կամ ժողով. կամ յայտնութիւն։*

Տակաւին. *դեռ. կամ դեռևս. կամ մինչև ցայժմ։*

Տնկակից. *բնութենակից։*

Աւանդել. *պահ տալ. կամ պատուիրել. կամ յանձնել։*

Տառապեալ. *չքաւոր. կամ աղքատ։*

Հեծել. *վշտանալ. կամ նեղանալ. կամ հոգոց հանել։*

Երկնել. *աշխատել. կամ ցաւել։*

Անմռունչ. *անխօս. կամ լուռ. կամ լռիկ. կամ լռելեայն։*

Հրաւիրել. *կոչել. կամ կանչել. կամ յորդորել. կամ մեծարել։*

Մարթ. *պատեհ. կամ պատշաճ. կամ պարտ. կամ հնար։*

Անկած. *անկարգ. կամ քամահանելի։*

---

51 *Ձեռագրում (№ 3468) այդպես է միայն այս բառացանկում, մյուս բառացանկերում կա՝* «վտահ. *համարձակ*» *(տե՛ս էջ 65բ, 70բ, 148ա, 162բ, 215բ, 267բ)։*

52 *Ձեռագրում, մյուս բառացանկերում՝ «...կամ մուրացիկ...» (տե՛ս էջ 191բ, 227ա)։*

Անկած. անսահման. կամ անյարմար. կամ անոճ։
Զանկուած. արարած. կամ ստեղծուած։
Հակիրճ. համառօտ. կամ կարճառօտ. կամ հաստատուն։
Ժամանել. յառաջել. կամ հասանել։
Խտիր. խտրութիւն. կամ որոշումն։
Լրութիւն. կատարելութիւն։
Պատուաստել. յարել. կամ կցել. կամ պատրուսել։
Կոնոպել. կորել. կամ բեկտել։
Բուն. ի բուսանելոյ։
Զննել. քննել. կամ որոնել։
Խօսուն. բան ունօղ։
Լրջմտութիւն. պարզմտութիւն։
Լուրջ. զուարթ. կամ արթուն։
Վեհերոտ. հեղգ. կամ դանդաղ։
Ստէպ. շտապ. կամ փոյթ։
Մաք[53]. գումրուկ։
Պարտապան. պարտական։
Լրումն. կատարումն։
Անգոսնել. անգուշել. կամ անարգել. կամ արհամարհել։
Ըղձակերտ. ցանկութեամբ շինեալ։
Անձուկ. բաղձանք. ցանկութիւն. կամ փափագ. կամ իղձք։
Ողջոյն. համբոյր. կամ բարև. կամ խաղաղութիւն։
Վաստակել. գործել. կամ աշխատել. կամ շահել։
Դիտել. հայել. կամ աչել։
Խորշել. մերժել. կամ հեռանալ։
Ասպնջական. ընտանի. կամ ծանօթ. կամ դրացի. կամ դրկից։
Շահապ. գանձապետ. կամ խազնադար[54]։

Այս բառացանկի 66 գլխաբառից միայն 15-ը ունեն համառոտ մեկնություն՝ մեկ բառով։ Իհարկե, չի կարելի սպասել, որ բոլոր բառերը ընդարձակ մեկնություն ունենան։ Դա նախ և առաջ կախված է գլխաբառից. եթե այն միանիմաստ է, ապա համանիշով կամ որևէ եղանակով պիտի մեկնվի, ինչպես վերևի բառացանկի մաՖս բառը։ Կարևորն այն է, որ բառարանագիրը ձգտում է գլխաբառը մեկնել իր ամբողջ բովանդակությամբ, անկախ այն բանից, թե տվյալ բնագրում բառը գործածված է մի որոշակի, կոնկրետ իմաստով։ Այդուհանդերձ Երեմիան կատարելության չի հասնում և ճիշտ էլ չէ նրանից ու նրա ժամանակակից բառարանագիրներից ավելին սպասել, մանավանդ, որ Երեմիայի բառարանը Աստվածաշնչի կամ առհասարակ հայերենի ամբողջական, ընդհանուր բացատրական բառարան չէ, այլ ընդամենը «համառօտ գումարումն և լուծումն բառից», ինչպես անվանում է հեղինակը։

Այնուհետև բառերի սխալ կամ միակողմանի մեկնությունների մասին խոսելիս, հարկ է նկատի ունենալ, որ մեր ձեռքի տակ են բառարանի՝ բազմաթիվ գրիչների կողմից գրված, գրչագրական վրիպումներով ու աղավաղումներով եղծված ընդօրինակությունները և ոչ թե նախագաղափար օրինակը։

Հաճախ բառարանի ցանկերում գրանցված այս կամ այն բառը չկա Աստվածաշնչի համապատասխան գրքում։ Օրինակ՝ «Բառք ի գրոց մնացորդաց առաջին» բառացանկի բենեգ, դրդուել, կողոպտել, ճարուստ, յատակ, յորելեան, յափիս, ջնար, տէգ, ունայն բառերը, ըստ «Համաբարբառ»-ի[55], չկան Աստվածաշնչի նույն գրքում, այլ գործածված են Մնացորդաց

53 Պիտի լինի մաՖս, ինչպես ցույց է տալիս մեկնությունը՝ գումրուկ = թրք. կյօմրուք («մաքս»)։

54 Մատենադարան, ձեռ. № 3468, էջ 259բ—261բ։

55 Թ. Աստուածատուրեան, Համաբարբառ Հին և Նոր կտակարանաց, Երուսաղէմ, 1895։ Այս Համաբարբառում Աստվածաշնչի շատ բառեր՝ տոմար (Բ. Եզր. Զ. 2), ամարանոց (Ամովս. Գ. 15), կրատ (Երր. ԺԲ. 12), նստոււ (Երր. Դ. 12), մերք (Երր. Ժ. 33), ուստի (Մատթ. ԺԳ. 7։ Երր. Բ. 17. Գ. 1։ Իմաստ. ԺԲ. 23) և այլն, բացակայում են։ Հետևաբար բնագրագիտական նպատակով կատարվող ստուգումները միշտ չէ, որ կարող են ճշգրիտ լինել։ Համաբարբառում ընդգրկված չեն Աստվածաշնչի միայն նախադրություններում գործածված այն բառերը, որոնք Երեմիայի բառարանում բերվում են համապատասխան գրքերի բառացանկերում։

Անկած. անսահման. կամ անյարմար. կամ անոճ։

Զանկուած. արարած. կամ ստեղծուած։

Հակիրճ. համառօտ. կամ կարճառօտ. կամ հաստատուն։

Ժամանել. յառաջել. կամ հասանել։

Խտիր. խտրութիւն. կամ որոշումն։

Լրութիւն. կատարելութիւն։

Պատուաստել. յարել. կամ կցել. կամ պատրուսել։

Կռնոպել. կտրել. կամ բեկտել։

Բուն. ի բուսանելոյ։

Զննել. քննել. կամ որոնել։

Խօսուն. բան ունօղ։

Լրջմտութիւն. պարզմտութիւն։

Լուրջ. զուարթ. կամ արթուն։

Վեհերոտ. հեղգ. կամ դանդաղ։

Ստէպ. շտապ. կամ փոյթ։

Մաք[53]. գումրուկ։

Պարտապան. պարտական։

Լրումն. կատարումն։

Անգոսնել. անգուշել. կամ անարգել. կամ արհամարհել։

Ըղձակերտ. ցանկութեամբ շինեալ։

Անձուկ. բաղձանք. ցանկութիւն. կամ փափագ. կամ իղձք։

Ողջոյն. համբոյր. կամ բարև. կամ խաղաղութիւն։

Վաստակել. գործել. կամ աշխատել. կամ շահել։

Դիտել. հայել. կամ աշել։

Խորշել. մերժել. կամ հեռանալ։

Ասպնջական. ընտանի. կամ ծանօթ. կամ դրացի. կամ դրկից։

Նահապ. գանձապետ. կամ խաղնադար[54]։

Այս բառացանկի 66 գլխաբառից միայն 15-ը ունեն համառոտ մեկնություն՝ մեկ բառով։ Իհարկե, չի կարելի սպասել, որ բոլոր բառերը ընդարձակ մեկնություն ունենան։ Դա նախ և առաջ կախված է գլխաբառից. եթե այն մենիմաստ է, ապա համանիշով կամ որևէ եղանակով պիտի մեկնվի, ինչպես վերևի բառացանկի մաքս բառը։ Կարևորն այն է, որ բառարանագիրը ձգտում է գլխաբառը մեկնել իր ամբողջ բովանդակությամբ, անկախ այն բանից, թե տվյալ բնագրում բառը գործածված է մի որոշակի, կոնկրետ իմաստով։ Այդուհանդերձ Երեմիան կատարելության չի հասնում և ճիշտ էլ չէ նրանից ու նրա ժամանակակից բառարանագիրներից ավելին սպասել, մանավանդ, որ Երեմիայի բառարանը Աստվածաշնչի կամ առհասարակ հայերենի ամբողջական, ընդհանուր բացատրական բառարան չէ, այլ ընդամենը «համառօտ գումարումն և լուծումն բառից», ինչպես անվանում է հեղինակը։

Այնուհետև բառերի սխալ կամ միակողմանի մեկնությունների մասին խոսելիս, հարկ է նկատի ունենալ, որ մեր ձեռքի տակ են բառարանի՝ բազմաթիվ գրիչների կողմից գրված, գրչագրական վրիպումներով ու աղավաղումներով եղծված ընդօրինակությունները և ոչ թե նախագաղափար օրինակը։

Հաճախ բառարանի ցանկերում գրանցված այս կամ այն բառը չկա Աստվածաշնչի համապատասխան գրքում։ Օրինակ՝ «Բառք ի գրոց մնացորդաց առաջին» բառացանկի բեհեզ, դրդուել, կողոպտել, հարուստ, յատակ, յոբելեան, յափիս, քնար, տէզ, ունայն բառերը, ըստ «Համաբարբառ»-ի[55], չկան Աստվածաշնչի նույն գրքում, այլ գործածված են Մնացորդաց

[53] Պիտի լինի մաքս, ինչպես ցույց է տալիս մեկնությունը՝ գումրուկ = Թրք. կէօմրիւք («մաքս»)։

[54] Մատենադարան, ձեռ. № 3468, էջ 259բ—261բ։

[55] Թ. Աստուածատուրեան, Համաբարբառ Հին և Նոր կտակարանաց, Երուսաղէմ, 1895։ Այս Համաբարբառում Աստվածաշնչի շատ բառեր՝ տոմար (Բ. Եզր. Զ .2), ամարատուն (Ամովս. Գ. 15), կրատ (Եր. ԺԲ. 12), հատու (Եր. Դ. 12), մեր (Եր. Ժ. 33), ուտի (Մատթ. ԺԴ. 7։ Եր. Բ. 17. Գ. 1։ Իմաստ. ԺԲ. 23) և այլն, բացակայում են։ Հետևաբար բնագրագիտական նպատակով կատարվող ստուգումները միշտ չէ, որ կարող են ճշգրիտ լինել։ Համաբարբառում ընդգրկված չեն Աստվածաշնչի միայն նախադրություններում գործածված այն բառերը, որոնք Երեմիայի բառարանում բերվում են համապատասխան գրքերի բառացանկերում։

Բ, ինչպես նաև այլ գրքերում։ Դա կարելի է բացատրել նրանով, որ եթե Ս. Գրոց կանոնն, այնուամենայնիվ, միանգամայն կայուն ու անխախտելի չի եղել, ապա չի եղել նաև գրքերի գլխակարգման միասնական կարգ, գլուխների սահմանները, հետևաբար նաև նրանց քանակը, ըստ տարբեր խմբագրությունների, տարբեր է միևնույն գրքի մեջ։

Երեմիա Մեղրեցին էլ բառերը բացատրելիս դիմում է բարբառային, ինչպես նաև օտար բառերի, սակայն չի չարաշահում բառերը մեկնելու այդ բառանյութը։ Ընդհակառակն՝ նա գործածում է սահմանափակ թվով օտարաբանություններ և բարբառային բառեր, այն էլ այնպիսի, որոնք խորապես արմատավորված են եղել խոսակցական լեզվում և մասամբ նույնիսկ գրականության մեջ։ Օրինակ, բառարանի մեկնությունների մեջ հայերեն գրական լեզվի բառերի կողքին կան և այսպիսի բառեր. չատիր, փոշիմանիլ, թամաշայ, հերիք, դարիպ, քքուրթ, ծիծ, զարաւաշ, դարման, կակուղ, դափ, դաստայ, շարիտ, չուան, շլինք, թապաղ, սաղանալ, զայիշ, թիքայ, ռանգ, մահրամայ, բեհ, զազղան, յեախայ, չալ, զապնիլ և այլ, թվով շուրջ 200 բառ։ Այս բառերը գալիս են այն բառարաններից, որոնցից օգտվել է Երեմիա Մեղրեցին՝ մեծ մասամբ նույնությամբ վերցնելով աղբյուրների բառահոդվածները։

«Համառօտ գումարումն և լուծումն բառից» բառարանը, XVII դարի հայ բառարանագրության նվաճումն է՝ թե՛ բովանդակության ու բառարանագրական տեխնիկայի տեսակետից, թե՛ հայ մտավորականության առօրյա գործունեության բնագավառում ունեցած իր նշանակությամբ։ Այդ երկը մոտ մեկ դար (մինչև Մխիթար Աբբայի բառարանը) եղել է Ս. գրքեր (նաև այլ գրականություն) ընթերցողների համար միակ բառարանը, լայնորեն տարածված լինելով Հայաստանում և արտասահմանի հայաբնակ վայրերում։

Վերջապես Երեմիա Մեղրեցու բառարանը կարևոր աղբյուր դարձավ հայերեն մյուս ընդարձակ «Բառգիրք հայոց» կոչվող բառարանի համար։

ԱՅՍ ԲԱՌԻՔ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ԳՐՈՑ

Սա Աստվածաշնչի մի նոր բառգիրք է[56], որը առայժմ հայտնի է ընդամենը 3 գրչագրով։ Երկուսը գտնվում են Մաշտոցի անվան Մատենադարանում, իսկ մյուսը՝ Վիեննայում։ Բառգիրքը բովանդակող Մատենադարանի № 2291 և № 2265 ձեռագրերից սույն ուսումնասիրության համար հիմնական աղբյուր է եղել առաջինը։ Դա բառարանագրական, քերականական, իմաստասիրական և այլ նյութերի մի ժողովածու է, գրված 1665 թվականին՝ Եփրեմ Տաթևացի և Պողոս Մազուսացի գրիչների կողմից[57]։

Բառարանը ընդարձակ չէ ծավալով, բառացանկի հարբուտությամբ այն միջին դիրք է գրավում Աստվածաշնչի նախորդ երկու բառարանների միջև, պարունակում է 1900 գլխաբառ՝ համառոտ մեկնություններով։ Սակայն այս բառգիրքն իր նախորդների նկատմամբ ունի մի առավելություն, այն է, որ նրա բառացանկերում բառերը դասավորված են այբբենական կարգով։ Սկսվում է բառգիրքս աբբա, աբբանա, արդիա, աբիբեան գլխաբառերով և ավարտվում Ֆ տառով սկսվող միակ բառով՝ ֆրէր։ Բառարանի խորագիրն է. «Այս բառ Աստուածաշունչ գրոց, սկսեալ յարարածոց գրոց, մինչև ի աւետարանն Քրիստոսի, ՀԲ գրոց, ժողովեալ և շարագրեալ ի մի, վասն դիւրեաւ գտանելոյ խնդրողացն ի սաղմոսն և յայլն»[58]։

Առանց բառարանին ծանոթանալու, վերոնշյալ խորագրից արդեն երևում է, որ բառարանի հեղինակը մի մտավորական է, որ հմուտ է իր կատարած աշխատանքի մեջ, ծանոթ է մեր հին բառարաններին, մասնավորապես Աստվածաշնչի բառգրքերին, որոնց օգտագործումով ու կառուցվածքի թերությունների (բառերի խառը դասավորության) հաշ-

56 Տե՛ս Մատենադարան, ձեռ. № 2291, էջ 142բ—204ա։ Նաև՝ Հ. Տաշյանի ձեռագրացուցակը, թիվ 396։

57 Նկարագրությունը տե՛ս Մատենադարանի ձեռագրացուցակ, հտ. Ա, այուն 768։

58 Ձեռ. № 2291, էջ 142բ։

վառումով կազմել է նոր՝ այբբենական բառարան «վասն դիւրեաւ գտանելոյ խնդրողացն»։

Վերնագրում ամբողջ Աստվածաշնչի կողքին Սաղմոսաց գրքի հիշատակումը պատահական չէ. բառարանում իրոք հավաքված են բառեր բոլոր գրքերից էլ, սակայն մեծ ուշադրության է արժանացել Սաղմոսաց գիրքը, որը, ինչպես նշվել է վերևում, լայն մասսայականություն է ունեցել։

Այժմ, բառգրքի առանձնահատկությունները քննելուց առաջ, բերենք հատվածներ.

Խ Մխել. մանել. կամ մեկնել. կամ ձգել։
Մխեալ. պնդեալ. կամ լցեալ։
Կ Մկաճանց. թիկանցն։
Մկաճուճ. կոհակ. կամ ալիք. կամ լափուլ։
Մկնդաւոր. գալխանաւոր։
Ղ Մղել. վարել. կամ հարկանել։
Մղեղ. մանր գարման. կամ փոշի։
Ճ Մճասն. և տաղանտն. և քանքարն մի է. Ճ ի և լիտր է. և լիտրն ծր նուկի. նուկին՝ ղ մսխալ, որ լինի լիտրն հբ մսխալ. և մնասն՝ թո մսխալ՝ թէ ոսկի, թէ արծաթ։
Շ Մշտիկ. փունջ. կամ դաստայ. կամ ցանիչ. կամ սպունկ. կամ դոպա. կամ կորթին. կամ դա-[լարի][59]։
Ո Մոգ. աստղաբաշխ։
Մոխոց. մոխիր։
Մոյր. խէշ կամ վերունդ[60]։
Պ Պաճեճ. պատմութիւն. կամ օրինակ։
Պաճուճեալ. պճնեալ. կամ զարդարեալ։
Յ Պայթել. պատառել։

59 Ձեռագրում կա դալարի բառի միայն դա վանկը։
60 Ձեռ. № 2291, էջ 180բ—181ա։

Պայման. սահման. կամ նշան. կամ գոգչի. կամ վատա։
Պայուսակ. մաղախ. կամ չէնթէ։
Ճ Պան. բլիթ. կամ լօշ։
Պանծել. պարծենալ։
Պանտուխտ. զարիպ. կամ նշտեհ. կամ օտար։
Պանտոկ. օտա։
Պանտոկապան. օտապաշի։
Շ Պաշտատական. ուժիթք։
Պաշտպան. պահապան. կամ օգնական. կամ փրկիչ։
Պաշտեցէք. շրջապատեցէք։
Պապանծել. կարկել. կամ լռել. կամ համբանալ։
Պապակել. այրել։
Ռ Պառակ. ղրռ տեղ. կամ անջրտին։
Պառակամօր. նախրի կով։
Պառակտել. ցրուել. կամ բաժանել։
Ս Պասխա. փրկութիւն. կամ տօն չարչարանաց։
Պասեխ. ելք. կամ անցք[61]։

Քաղվածքները բերվեցին ոչ միայն բառերին ծանոթացնելու, այլև բառարանագրական տեխնիկային վերաբերող մի հնարանք ցուցադրելու նպատակով։ Արդեն գիտենք, որ բառգիրքն օգտագործողներին օգնելու համար ձեռագրերի լուսանցքներում հաճախ նշվում էին բառաշարքի առանձին գլխաբառերի սկզբի երկրորդ տառերը (ինչպես վերը բերված առաջին քաղվածքում)։ Այս բառգրքում, նայած գլխաբառի հնչյունակազմին, երկրորդ տառի փոխարեն մեծ մասամբ նշվում է երրորդ տառը (ինչպես երկրորդ քաղվածքում)։ Սակայն դա ընդհանուր կիրառում չունի և բառարանից օգտվելը դյուրացնելու մի մանավոր միջոց է, որին բառարանագիրները դիմում են այն դեպքում, երբ գլխաբառն սկսվում է նա-

61 Ձեռ. № 2291, էջ 190բ—191ա։

խածանցով, ինչպես նաև բաղադրյուն+ձայնավոր+բաղաձայն հնչյունակապակցությամբ (մեծ մասամբ ա ձայնավորով)։

Բառացանկը կազմված է Աստվածաշնչի մեզ արդեն ծանոթ բառարանների բառերից. բառգրքի 1900 բառից 1600-ը կա Երեմիա Մեղրեցու բառարանում։ Մնացած շուրջ 300 բառերը, ինչպես՝ ադար, ազատ, բիւրեղական, գիրկտեալ, դաժանութիւն, դարաստան, եղջերու, ենթակա, զարգանալ, ընջուղ, լամբ, խանութ, ծիր, համբակ, մարզիկ, շռայլ, պնակիտ, սրնար, վերնայարկ, տապար, փակեղ, քարաժայռ և այլն, որոնք չեն հանդիպում Երեմիայի բառարանում (ձեռ. № 3468), մեծ մասամբ կան ուրիշ հին բառարաններում։ Միայն սահմանափակ թվով բառեր, որոնք եթե մեզ անհայտ այլ հին բառարաններից չեն վերցված, հեղինակն ինքն է քաղել Աստվածաշնչի գրքերից ու մտցրել բառգրքի մեջ։ Այդ բառերն էլ ոչ թե հնացած, դժվարիմաց բառեր են, այլ Աստվածաշնչում և ընդհանուր գրական հայերենում շատ կենսունակ բառերի, գլխավորապես բայերի ու դերանունների դանազան թեք ձևեր են, ինչպես՝ գոգչիր, եկեր, եկուլ, զմէնջ, զձէնջ, իմիք և այլն։

Սակայն մնացյալ 300 բառից՝ ակոա, անթուոց, բիւրեղակըն, գիրկտեալ, գունով, դոյդ, դրուատել, ենթակա, ընդթուր, ընձիւղել, ընջուղ, թևասքողել, թուրմ, ժխորել, շատ, խան, խանութ, խիզախել, խոհական, կեղտանուն, կերտել, կորովամիտ, կքոց, համբակ, հրատ, ձիր, ղեկավար, ճապաղել, մակաղածին, մղել, յերտակից, որդագնաց, պնակիտ, պրչակ, ռակա, ռահ, սաւառնաթեւել, սեղմնատոր, վուծին, տլոն, փակեղ, քեղի, քատակ, քնքշել և այլ բառեր (շուրջ 100) չկան Աստվածաշնչում և բառգրքին են անցել հիմնականում «Բառք քերթողականք» բառարանից։ Հետևաբար, ինչպես տեսանք աղբյուրների ստուգումից, հեղինակը բառգիրքը կազմել է ոչ թե Աստվածաշնչի բնագրի վրա հիմնվելով, ոչ թե բառահավաքման ու բառամեկնութիւններ կատարելու սեփական աշխատանքով, այլ արդեն պատրաստի բառարանների օգտագործումով՝ հիմնական աղբյուր ունենալով Երեմիայի բառա-

բանը։ Հեղինակը բառեր է քաղել նաև «Բառք Ս. գրոց», «Բառք քերթողականք» և այլ բառգրքերից։

Այնուամենայնիվ այս բառգրքի շատ բառահոդվածներ տարբերվում են աղբյուր-բառարանների համապատասխան բառահոդվածներից։ Սույն բառարանում բացատրություններ համառոտ են, երբեմն տրվում են գլխաբառի նոր իմաստներ, գործածվում են թուրքերեն և այլ լեզուներից ծագող օտարաբանություններ. օրինակ՝ պուճախ, մեյտան, բաքռու, լէկլէկ, մզրախ, կօզչի, ալամ, բայրաղ, զամիշ, զալին, օտա, ափսունչի, ղօշ, քէշ, չանկալ, զախիրա, հասապ, գօլ, չատիր, չափռաստ, գօմրուկ, դաստայ, զամչի, թօզ, թուփուզ, ուլուխճի, պուղայ և այլն։

Համեմատենք Աստվածաշնչի երեք բառարանների բառահոդվածները՝ ցույց տալու համար այդ բառգրքերի տարբերությունները։ Բնագրային այդ համեմատությունները, մեր կարծիքով, շատ կարևոր են ոչ միայն բառարանների առանձնահատկություններն ու առնչությունները բացահայտելու, այլև բառիմաստի ուսումնասիրության տեսակետից։ Օրինակները բերում ենք բառգրքերի հետազոտությունների համար որպես հիմնական աղբյուր ընդունված այն գրչագրերից, որոնք բազմիցս հիշատակվել են վերևի շարադրանքում։ Թվահամարները ամեն անգամ չկրկնելու համար ձեռագրերը պայմանականորեն նշանակում ենք լատիներեն տառերով՝ a = ձեռ. № 2292, b = ձեռ. № 3468, c = ձեռ. № 2291։

a Ա.նապակ. սեռն. յատակ. սուրբ. կամ անխառն գինի։
b Ա.նապակ. մաքուր. կամ զուտ. կամ անխառն գինի։
Ա.նապակ. սեռն. կամ յատակ. կամ անխառն գինի։
Ա.նապակ. սուրբ. կամ յատակ. կամ անխառն գինի։
Ա.նապակ. սուրբ. կամ անխառն գինի[62]։
c Ա.նապակ. մաքուր. կամ զուտ. կամ անխառն գինի։

62 Ձեռագրի բառացանկերից վերցնում ենք միայն գլխաբառի այն բոլոր մեկնությունները, որոնք տառացիորեն նույնական չեն։ Գումարելով Ա.նապակ-ի իմաստները նրա համար կստանանք՝ մաքուր, սեռն, սուրբ, յատակ, զուտ և անխառն գինի, որոնք բոլորը միասին չկան բառահոդվածներից որևէ մեկի մեջ։

a Անգոսնել. անգուշել. կամ քամահել. կամ անարգել։
b Անգոսնել. անգուշել. կամ անարգել։
Անգոսնել. անգուշել. կամ անարգել. կամ արհամարհել։
Անգոսնել. անարգել։
Անգոսնել. անգուշել. կամ քամահել։
Անգոսնել. անարգել. կամ արհամարհել։
c Անգոսնել. անարգել. կամ արհամարհել։
a Առիաւիրք. ահ. կամ երկիւղ. կամ վախ։
b Առիաւիրք. երկիւղ. կամ ահ։
Առիաւիրք. զարհուրումն։
c Առիաւիրք. ահ. կամ երկիւղ։
a Առչաւել. վազցնել. կամ ընթացուցանել։
b Առչաւել. վազել. կամ ընթանալ։
c Առչաւել. ընթանալ. կամ հասանել։
a Հանգաճակօղ. ժողովօղ. կամ հարիֆանալ։
b Հանգաճակօղ. ժողովօղ. կամ կուտօղ։
Հանգաճակօղ. ժողովօղ. կամ հարիֆանալ[63]։
c Հանգաճ(ակ)օղ[64]. ժողովօղ. կամ կուտօղ. կամ ամբարօղ։
a Զրպարտել. զուր պարտաւորել։
b Զրպարտել. ի զուր պարտաւորել։
c Զրպարտել. զուր. կամ սուտ դատել։
a Անջրպետել. բաժանել. կամ զատել. կամ որոշել։
b Անջրպետել. որոշել կամ բաժանել։
Անջրպետել. անջատել։
Անջրպետել. որոշել. կամ բաժանել. կամ անջատել։
c Անջրպետել. բաժանել. կամ որոշել. կամ մեկնել։
a Խորշ. անգիւն։
b Խորշ. անկիւնն է։
Խորշ. անկիւն. կամ բոյն. կամ քունջ. կամ պուճախ
Խորշ. անկիւն. կամ քունջ։

63 Թրք. արիֆանէ, ոէրիֆանէ։
64 Ձեռագրում՝ հանգանօղ։

Խորշ. անկիւնք. կամ մանր մանր կացոցն է։
c Խորշ. անկիւն. կամ պուճախ. կամ բոուքն։
a Դիտակ. դիտօղ։
b Դիտակ. կամ աշօղ. կամ հայօղ։
c Դիտակ. դիտող. կամ տեսող։
a Ճիշտ. ուիշտ. պինդ. կամ նաքաս։
b Ճիշտ. խիստ. կամ պինդ։
Ճիշտ. ուիշտ. կամ պինդ. կամ նաքազ։
c Ճիշտ. բուիշտ. կամ ժլատ. կամ ագահ. կամ պինդ։
a Կասիա. մուշկ։
b Կասիայ. հիլ. կամ եղէգ. նունուֆար։
Կասիայ. մուշկ. ծաղիկ եղեգան։
Կասիա. մուշկ։
Կասիա. կոուանկուզն։
Կասիայն. մա[ն]րածու խունկ է։
c Կասիա. հիլ. կամ մուշկ. կամ եղէգ[ի]ն ծաղիկ, որ է նունուֆար. կամ խունկ մանրաւածու։
a Վտանգ. նեղութիւն։
b Վտանգ. նեղութիւն։
Վտանգ. նեղութիւն. կամ վնաս։
Վտանգ. նեղութիւն. կամ աղէտ. կամ վնաս։
c Վտանգ. նեղութիւն. կամ վնաս։
a Ազոխ. ժուռ. կամ խակ թթու միրգ. կամ խազ։
b Ազոխ. ժուռ. կամ խակ. կամ խազ։
Ազոխ. ժուռ. կամ խակ. կամ խազ. կամ անհաս. կամ տհաս։
c Ազոխ. ժուռ։
a Քուեայս. փայտ ընդհանուր։
b Քուայս. տփեր կամ փայտ։
c Քուեայս. փայտ։
a Հրաշակերտ. հրաշագործ։
b Հրաշակերտ. հրաշագործ. կամ շէն։
c Հրաշակերտ. հրաշագործ, որ է հրաշալի շինուած։

a Անգոսնել. անգուշել. կամ քամահել. կամ անարգել։
b Անգոսնել. անգուշել. կամ անարգել։
Անգոսնել. անգուշել. կամ անարգել. կամ արհամարհել։
Անգոսնել. անարգել։
Անգոսնել. անգուշել. կամ քամահել։
Անգոսնել. անարգել. կամ արհամարհել։
c Անգոսնել. անարգել. կամ արհամարհել։
a Առիաւիրճ. ահ. կամ երկիւղ. կամ վախ։
b Առիաւիրճ. երկիւղ. կամ ահ։
Առիաւիրճ. զարհուրումն։
c Առիաւիրճ. ահ. կամ երկիւղ։
a Առչաւել. վազցնել. կամ ընթացուցանել։
b Առչաւել. վազել. կամ ընթանալ։
c Առչաւել. ընթանալ. կամ հասանել։
a Հանգաճակօղ. ժողովօղ. կամ հարիֆանաւ։
b Հանգաճակօղ. ժողովօղ. կամ կուտօղ։
Հանգաճակօղ. ժողովօղ. կամ հարիֆանայ[63]։
c Հանգաճ(ակ)օղ[64]. ժողովօղ. կամ կուտօղ. կամ ամբարօղ։
a Զրպարտել. զուր պարտաւորել։
b Զրպարտել. ի զուր պարտաւորել։
c Զրպարտել. զուր. կամ սուտ դատել։
a Անջրպետել. բաժանել. կամ դատել. կամ որոշել։
b Անջրպետել. որոշել կամ բաժանել։
Անջրպետել. անջատել։
Անջրպետել. որոշել. կամ բաժանել. կամ անջատել։
c Անջրպետել. բաժանել. կամ որոշել. կամ մեկնել։
a Խորշ. անգիւն։
b Խորշ. անկիւնն է։
Խորշ. անկիւն. կամ բոյն. կամ քունջ. կամ պուճախ
Խորշ. անկիւն. կամ քունջ։

63 Թրք. արիֆանէ, ոէրիֆանէ։
64 Ձեռագրում՝ հանգանօղ։

Խորշ. անկիւնք. կամ մանր մանր կացոցն է։
c Խորշ. անկիւն. կամ պուճախ. կամ բոուքն։
a Դիտակ. դիտօղ։
b Դիտակ. կամ աշօղ. կամ հայօղ։
c Դիտակ. դիտող. կամ տեսող։
a Ճիշտ. ուիշտ. պինդ. կամ նաքաս։
b Ճիշտ. խիստ. կամ պինդ։
Ճիշտ. ուիշտ. կամ պինդ. կամ նաքաղ։
c Ճիշտ. բուիշտ. կամ ժլատ. կամ ագահ. կամ պինդ։
a Կասիա. մուշկ։
b Կասիայ. հիլ. կամ եղէգ. նունուֆար։
Կասիայ. մուշկ. ծաղիկ եղեգան։
Կասիա. մուշկ։
Կասիա. կոուանկուզն։
Կասիայե. մա[ն]րածու խունկ է։
c Կասիա. հիլ. կամ մուշկ. կամ եղէգ[ի]ն ծաղիկ, որ է նունուֆար. կամ խունկ մանրածու։
a Վտանգ. նեղութիւն։
b Վտանգ. նեղութիւն։
Վտանգ. նեղութիւն. կամ վնաս։
Վտանգ. նեղութիւն. կամ ազէտ. կամ վնաս։
c Վտանգ. նեղութիւն. կամ վնաս։
a Ազոխ. ժուռ. կամ խակ թթու միրգ. կամ խազ։
b Ազոխ. ժուռ. կամ խակ. կամ խազ։
Ազոխ. ժուռ. կամ խակ. կամ խազ. կամ անհաս. կամ տհաս։
c Ազոխ. ժուռ։
a Քուեայս. փայտ ընդհանուր։
b Քուեայս. տփեր կամ փայտ։
c Քուեայս. փայտ։
a Հրաշակերտ. հրաշագործ։
b Հրաշակերտ. հրաշագործ. կամ շէն։
c Հրաշակերտ. հրաշագործ, որ է հրաշալի շինուած։

Կարելի է բազմաթիվ նման օրինակներ բերել ցույց տալու համար, որ այդ բառարաններից յուրաքանչյուրը ոչ միայն տարբեր չափով է բացահայտում գլխաբառի նշանակությունը, այլև երբեմն նշում է բոլորովին նոր իմաստներ, բառի գործածության նոր առումներ, որոնք չունի տվյալ բառը Աստվածաշնչում կամ ընդհանրապես որևէ բնագրում։ Վերևի համեմատություններից երևում է նաև, որ քննվող բառարանի հեղինակը հենվում է մեծ մասամբ իր բառարանի աղբյուրների վրա և բառն առավել լիարժեք մեկնելու փորձեր գրեթե չի կատարում։

Այնուհետև, անհրաժեշտ է նշել երկու մասնավոր հանգամանք ևս։ Բ-ի բառացանկի վերջում «Այս բառ յաղագս նաւի» (էջ 151ա) ենթավերնագրի տակ մեկնվում են **լաստափայտ. կայմն, քեղին, լուծ ստուարք, հատուածք զոհին, սամիք, խելս, զոգ, վանդակապ**[65]**, առասանք ձգողականք, ապաւանդակ, տեսարան, արմիոն** *և* **զանաւորակք** *բառերը, որոնցից* **քեղի, հատուածք**[66]**, խէլ**[67]**, տեսարան և արմիոն** *բառերը կան Աստվածաշնչում։ Այսպիսի փոքր բառացանկեր երբեմն կցվում են բառարաններին, թեև չեն համապատասխանում բառարանի մատենական վերաբերությանն ու նպատակներին։ Երբեմն էլ, բառարաններում, նույնիսկ բնորոշ վերնագրի տակ՝ բառացանկի մի որևէ հատվածում գումարվում են իմաստով մոտ, նման առարկաներ ու երևույթներ նշանակող բառեր։ Օրինակ, Երեմիա Մեղրեցու բառարանի «Բառք ի գրոց ելիցն» բառացանկում «Անուանք երկոտասան ականց» ենթավերնագրի տակ բացատրվում են թանկագին քարերի անուններ։ Այդ քարերը հիշատակվում են Աստվածաշնչի «Ելք» գրքի* **ԻԸ** *գլխում, օրինակ՝ «Կարգս ականց, Առաջին՝ զըմրուխտ, և սարդիոն, և տպազիոն. կարգ մի։ և Կարգն երկրորդ՝ կարկեհան, և շափիղա, և յասպիս։ և Կարգն երրորդ՝ գոճազմ, և ակատ, և սուտակ։ և Կարգն չորրորդ՝ յակինթ, և բիւրեղ և եղունգն»*[68]*։ Եթե Երեմիայի բառարանում «Անուանք երկոտասան ականց» փոքր բառացանկը պատահական չէ, ապա այրբենական բառարանի մեջ նավին վերաբերող խառը կարգով գրված բառերի առկայությունը չի պատճառաբանվում, մանավանդ որ այդ բառերի մեծ մասը չկա Աստվածաշնչում։ Բառարանագիրները երբեմն այդպիսի շեղումներ կատարում են ուսուցողական նպատակներով։ Առանձին բառերի իմացումը սովորողների համար առավել անհրաժեշտ համարելով՝ նրանք առանձնացնում և ընդգծում են այդ բառերը, տալիս ավելի երկար մեկնություններ, բառիմաստի հետ ուղղակիորեն չըկապվող զանազան տեղեկություններ, բերում են առանձնահատուկ արտահայտություններ, ոճեր և այլն։*

Բառարանում հանդիպում են ընդարձակ, նկարագրական բացատրություններ՝ հաւալուսան, ճնճղուկ, մանրագոր, յուշկապարիկ, միեղջերու և այլ գլխաբառերի վերաբերյալ։ Ահա մի բառահոդված.

«Հաւալուսան. Թռչուն է անապատի, զոր ձագն նեղէ վասն կերակրոյ. և բարկացեալ հարկանէ և մեռանի ձագն։ Յայնժամ փոշիմանեալ պատառէ կողուցաւ զկուրծս իւր. և թափէ արիւնն ի վերայ ձագին, և յետ գ աւուր կենդանանա օրինակ Քրիստոսի. որ Ադամ պատուհասիւ մեռոյց. եւ եկեալ թափեաց զարիւնն իւր ի վերայ գերեզմանին. և յետ գ աւուր յարոյց ի դժոխոցն հանդերձ իւրովքն»[69]*։*

Աստվածաշնչի այս բառարանը կազմվել է աշակերտների և ընթերցողների առավել լայն շրջանների համար և ժամանակին կարևոր դեր է խաղացել հայ մարդկանց մայրենի լեզվի բառերը բացատրելու ու սովորեցնելու գործում։

---

65 *Իմա՝* վանդակակապ, *ինչպես Աստվածաշնչում է* (Ա Մակ. Զ. 37)։

66 Հատուած *բառը* կող *(մանր կողերն) իմաստով, ինչպես ձեռագրում է, և ընդհանրապես* բաժին, մասն, կտոր, շերտ *և այլ գոյականական իմաստներով Աստվածաշնչում չի գործածված։*

67 Խէլ *անստույգ և հազվագյուտ բառը (տե՛ս Հ. Աճառյան, Արմ. բառ. Բ, էջ 474), որ գործածված է միայն Կիրակոս Գանձակեցու պատմության մեջ «Այս բառք Աստուածաշունչ գրոց» բառարանում (որտեղ բառը վկայվում է երկրորդ անգամ) նշանակում է նավի վերջին մասի եզրերը՝ շուրթերը։ Սակայն Կիրակոս Գանձակեցու պատմության մեջ* խէլ *բառը նշանակում է կողմ։*

68 *Աստուածաշունչ, Վենետիկ, 1805, էջ 52։*

69 *Ձեռ. № 2291, էջ 174բ։*

Բացատրական բառարաններից բացի, ինչպես նշվեց վերևում, XVII դարում ստեղծվում են Աստվածաշնչի հատուկ անունների նոր բառարաններ՝ «Մեկնութիւն անուանց եբրայեցւոց լեզուէ ի հայ բարբառ»[70] և «Եբրայեցւոց. Քաղդէացւոց. և Յունաց անուանց թարգմանութիւն»[71]։ Վերջինս, որ լույս է տեսել հայերեն առաջին տպագիր (Ոսկան Երևանցու) Աստվածաշնչի կից, այս աշխատության մեջ չի քննվելու։ Բայց քանի որ բառարանը բովանդակությամբ մոտ է «Մեկնութիւն անուանց եբրայեցւոց»-ին և հաճախ շփոթվում ու նույնացվում է նրա հետ, ապա որոշակիություն մտցնելու նպատակով անհրաժեշտ ենք համարում համառոտ ծանոթություն տալ այդ բառարանի մասին։ Ընդ որում, նկատի ունենք նաև այն, որ ոսկանյան Աստվածաշնչին կից բառարանը երրորդ տպագիր բառարանն է հայ մշակույթի մեջ։ Աստվածաշնչի հետ հիշյալ բառարանն էլ տարածվել է բոլոր հայաբնակ վայրերում, այլև հայտնի դարձել հարևան վրաց ժողովրդի մշակույթի մեջ։ Դեռևս XVIII դարում վրաց բառարանագիր Սուլխան-Սաբա Օրբելիանին այդ բառարանն օգտագործեց Աստվածաշնչի համառոտ համաբարբառ կազմելու համար։ Այդ առթիվ Ն. Մառը գրում է. «Ի վերջո ասենք, որ լեքսիկոգրաֆ Սուլխան Օրբելիանին կազմել է Համառոտ համաբարբառ Աստվածաշունչի, մասամբ հայկական աղբյուրից, եթե դատելու լինենք մեզ մոտ գտնվող ձեռագրի հետևյալ գրությունից, որ արված է եկեղեցական գրերով. «Համաբարբառ Հին և Նոր կտակարանի, համառոտությամբ թարգմանեց հայերենից և լատիներենից Սավվա Օրբելիանի» և այլ»[72]։ Բառարանում, ինչպես «Բառք եբրայեցւոց»-ում, տրվում է Աստվածաշնչի հատուկ անուն-

70 Բառարանը կա Մատենադարանի №№ 2261, 4283, 5184, 7012, 7035, 7039, 9449, Հալեպի № 25, Վենետիկի № 242 և այլ ձեռագրերում։

71 Տե՛ս «Աստուածաշունչ Հնոց և Նորոց կտակարանաց», Ամստերդամ, 1666, էջ 765—773։

72 Նիկ. Մառ, Հայ-վրացական յարաբերությունների մասին անցեալում, Թիֆլիս, 1898, էջ 44։ Տե՛ս նաև Պ. Мурадян, Армяно-грузинские литературные взаимоотношения в XVIII веке, Ереван, 1966, стр. 136. Տե՛ս նաև Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հտ. Բ, Երևան, 1936, էջ 123 (ծանոթագրություն 1)։

ների (անձնանուններ, տեղանուններ և այլն), ինչպես նաև որոշ այլ բառերի համառոտ մեկնությունները։ Բառերը շարված են բավականին կանոնավոր այբբենականությամբ, կատարվում են հղումներ։ Օրինակ. եբեր. եբրայեցի գլխաբառերի դիմաց մեկնությունների փոխարեն դրված են «Տե՛ս Հէբէր», «Տե՛ս Հեբրայեցի» նշումները, իսկ բառացանկի վերջում կարդում ենք՝ «Եւ զմնացեալն տե՛ս էն», այսինքն՝ ե-ով սկսվող մյուս բառերը, որոնք չկան այդտեղ, փնտրիր է-ի բառացանկում, Ջերոնիմոս բառը հղված է Հերոնիմոս-ին և այլն։ Բառացանկեր չկան հայերեն Ը, ԺԼ, Ծ, Ձ, Ղ, Ց, Ի տառերով, Ճ, Ջ տառերով մեկական, իսկ Շ-ով երկու բառ կա։ Բառացանկեր չունեցող տառերի դիմաց նշվում է, որ այդ տառերով անուններ չկան՝ «Հեբրայեցւոցն ոչ գոյ Ը», «Ոչ գոյ առ Հեբրայեցիս Ժ», «Յոյիւ անուն ոչ գոյ» և այլն։ Ամբողջ բառարանում կա ընդամենը 751 բառ՝ շուրջ 250-ով պակաս «Բառք եբրայեցւոց» և նույնքանով ավել «Մեկնութիւն անուանց եբրայեցւոց» բառարանից։ Բառերի տեսակետից այս երեք բառարանների տարբերությունն այն է, որ մեծ բառարանի մեջ կան փոքրի ոչ թե բոլոր բառերը, այլ նրանց մեծ մասը։ Մնացած բառերը հատուկ են միայն տվյալ բառարանին և չկան մյուս բառարաններում։ Այլ կերպ ասած՝ երեք բառարաններում եղած հատուկ անունների (ոչ թե գլխաբառերի) ընդհանուր թիվը մեծ է բառարաններից ամենամեծի՝ «Բառք եբրայեցւոց»-ի բառերի թվից։ Բառարանները կազմել են տարբեր հեղինակներ, որոնք Աստվածաշնչից հատուկ անունները վերցրել են իրենց նպատակներին համապատասխան, երբեմն նախապատվություն տալով այս կամ այն գրքին։ Իրողությունն այն է, որ հիշյալ բառարանները համառոտ են և նրանցից ոչ մեկը Աստվածաշնչի բոլոր հատուկ անունները չի ընդգրկում։

Անցնենք մեր քննության առարկա՝ «Մեկնութիւն անուանց եբրայեցւոց» բառարանին։ Ձեռագրերի մեծ մասը թվա-

կիր չէ, բայց գրված է XVII դարում: Մատենադարանի № 7035 ժողովածուն՝ բառարանի ամենահին թվակիր ձեռագիրը, գրված է 1690 թվականին: Այս ձեռագրում բառարանը նախադաղափար օրինակ չէ: Միակ հանգամանքը, որ թույլ է տալիս մոտավորապես կողմնորոշվելու բառարանի գրության ժամանակի հարցում, այն է, որ այդ բառարանն իր բառաշարքի կանոնավոր այբբենական կարգով տարբերվում է մինչ այդ մեզ հայտնի բոլոր հին բառարաններից: Ուրեմն՝ բառարանը գրված պիտի լինի XVII դարի երկրորդ կեսում, ավելի վաղ նրա գոյությունը հավանական չէ: Բառարանի պատմության վերաբերյալ ուրիշ տվյալներ առայժմ չկան:

Տեսնենք, թե ինչ ազերսներ կան Աստվածաշնչի հատուկ անունների այս բառարանների միջև: Բնագրային համեմատությունները բերում են այն եզրակացության, որ «Մեկնութիւն անուանց եբրայեցւոց» և ոսկանյան Աստվածաշնչի բառարանները սերտորեն կապված են իրենց տեսակի հնագույն՝ «Քառք եբրայեցւոց» բառարանի հետ: Վերջինս ծանոթ է եղել երկու բառարանների հեղինակներին և օգտագործվել է նրանց կողմից եբրայական բառերը ստուգաբանելու համար: «Մեկնութիւն անուանց եբրայեցւոց»-ը ոսկանյան Աստվածաշնչի բառարանի 750 բառի դիմաց ունի ընդամենը 500 գլխաբառ, ընդ որում Ր և Ո տառերով սկսվող բառեր, որոնք կան մյուսի մեջ: Երկու բառարանների համար ընդհանուր (թե մեկ և թե մյուս բառարանում առկա) 350 գլխաբառերի մեկնությունները շատ դեպքերում էականորեն տարբերվում են իրարից. տպագիր բառարանն ավելի ընդարձակ է բացատրում բառերը (տե՛ս օրինակ, Արամ, զաբուղոն, լիթոստրոտոս, Մանասէ, Մարիա և այլն), պարզաբանելու համար երբեմն բերում է գլխաբառի ղուգաձևերը (տե՛ս Աբեդնագով, Աբէլ, Աներ, բոսոր, դագոն և այլն), գործածում է այնպիսի համանիշներ, ինչպես՝ արհայ, ազիտութիւն, առաստաղ, բնդարձակեալ, տխմար, շաճեկան, պարարակ, կարկառ և այլն, որոնց դիմաց մյուս բառարանն ունի համապատասխանաբար՝ թագաւոր, անգիտութիւն, տանիք, լայնացեալ, անմիտ, օգտա-

կար, կուշտ, կոյտ և այլ բառեր (տե՛ս Աբդիմելէք, Աբիսակ, ագագ, Յարէթ, Նաբաղ, ոնիսիմոս, Ռեբեկայ և Սիօն բառերի մեկնությունները երկու բառարաններում էլ), հաճախ տալիս է գլխաբառի մի շարք համանիշներ և առանձին դեպքերում (Արաբիա, Եսայի, Մօսա, Սաուղ, Փարէս և այլ բառերի մեկնություններում), իսկական համաբարբառ (concordia) բառարանի նման, նշում է, թե տվյալ բառն Աստվածաշնչի որ տեղում է գործածված: Կան նաև դեպքեր, երբ բառարաններում միևնույն բառի բացատրություն-ստուգաբանություններն իրար լրիվ չեն համապատասխանում: Ահա մի քանի օրինակ.

Ոսկանյան Աստվածաշնչի բառարան	Մեկնութիւն անուանց եբրայեցւոց
Աբիեզդար. *հայր հարսնաւուր:*	Աբիեաբափ. *հայր կամաւոր:*
Ամաղէկ. *ժողովուրդ լեղուօղ:*	Ամաղէկ. *թագաւոր:*
Ամբակում. *ըմբշամարտ:*	Ամբակում. *յողբասէր:*
Անեա. *շնորհաւոր:*	Անեա. *ցանկալի. կամ ողորմած:*
Գազեր. *նախագիտութիւն:*	Գազեր. *հատանումն:*
Գագոն. *միրգ. բստ մեղ. ձուկն. կամ գօրութիւն:*	Գագոն. *ցորեան:*
Մադաբիա. *հրեշտակ իմ:*	Մադաբիա. *հրեշտակ տեառն:*
Յակոբ. *գոտէմարտօղ. ձուկն դնօղ:*	Յակոբ. *խարօղ:*
Ռահաբ. *լայն. ընդարձակեալ: Ըստ Ռախաբ:*	Ռահաբ. *ամբարտաւան. կամ քաջ:*
Ռէսփա. *ձգումն. բստ յարման:*	Ռէսփայ. *սաստկութիւն:*
Սարօն. *կամ Սարօնայ. Հարթութիւն:*	Սարոնայ. *մակարդակ*[73]*:*

73 Տե՛ս ձեռ. № 4283:

Եթե բերենք նաև «Բառք եբրայեցւոց» բառարանի նույն բառահոդվածները, ապա կտեսնենք, որ մի դեպքում բառարաններից մեկի, մյուս դեպքում մյուսի հետ համընկնելուց բացի կունենանք նաև մի նոր՝ երրորդ, մեկնութիւն միևնույն գլխաբառի համար: Դա, իհարկե, սխալների արդյունք չէ, թեև սխալներն ու աղավաղումները բացառված չեն: Բանն այն է, որ Աստվածաշնչի հատուկ անունները մեծ մասամբ եբրայական բառերի թեք ձևեր են, որոնք բազմաթիվ իմաստներ ունեն: Մինչդեռ բառարանները նշում են այդ իմաստներից մեկը կամ երկուսը, գլխավորապես բառի հիմնական նշանակությունը և հազվագյուտ դեպքերում է բառն իր բազմիմաստությամբ ներկայացվում: Եվ եթե միևնույն գլխաբառը, երբեմն, տարբեր բառարաններում տարբեր նշանակություն ունի, ապա դա կախված է այն բանից, թե տվյալ բառարանի հեղինակը ինչ աստիճանի է տիրապետել եբրայերենին կամ ասորերենին, որքանով ճիշտ է կարողացել հասկանալ բառի բուն իմաստը՝ Աստվածաշնչի բնագրում այդ բառի կոնկրետ գործածությամբ կամ առարկայական վերաբերությամբ: Հայտնի է, որ «Բառք եբրայեցւոց» բառարանը եբրայերենից թարգմանվել է հունարեն և վերջինից էլ հայերեն: Սակայն մեր հայ բառարանագիրները նկատի ունեն, առաջին հերթին, ասորական աղբյուրները, ինչ երևում է նրանց սակավադեպ վկայություններից՝ «ասորոց է բառ»: Դրա համար էլ, ասենք, վերևի օրինակներից, դազոն և «ցորեան» է նշանակում, և «ձուկ»[74], Յակոբ անունն ունի երկու բառարանների նշած իմաստներն էլ, Ռեսփա և Սարոնա բառերը երկրորդ բառարանը ոչ թե սխալ, այլ մոտավոր ճշտությամբ, անհաջող է ստուգաբանում: Համեմատությունները ցույց են տալիս, որ առաջին (ոսկանյան Աստվածաշնչի) բառարանն ավելի լրիվ է ստուգաբանում եբրայական բառերը, ուրեմն

74 Տե՛ս Մխիթար Սեբաստացի. Բառարան յատուկ անուանց Աստուածաշունչ գրոց Հին և Նոր կտակարանաց.—«Բառգիրք հայկազեան լեզուի», հտ. Բ, Վենետիկ, 1769, էջ 69:

նրա հեղինակը հավանաբար տիրապետել է եբրայերեն լեզվին: Այս հանգամանքը, ինչպես և բառարանի՝ վերևում նշված մի շարք առավելություններ, հիմք են տալիս եզրակացնելու, որ «Մեկնութիւն անուանց եբրայեցւոց» բառարանը կազմվել է ոսկանյան Աստվածաշնչին կից բառարանից ոչ ուշ, նրա հեղինակը ձեռքի տակ չի ունեցել այդ տպագիր բառարանը և օգտվել է «Բառք եբրայեցւոց» բառարանից միայն: Անհայտ բառարանագիրը, որ ճիշտ է ստուգաբանում Աստվածաշնչի բնագրից իր ընտրած բառերը, ամենայն հավանականությամբ տիրապետել է ասորերեն և հունարեն լեզուներին և ունեցել է բառարանագրական աշխատանքի հմտություններ:

«Մեկնութիւն անուանց եբրայեցւոց» բառարանում ստուգաբանությունները, իհարկե, ճիշտ են՝ «Ղազարոս. օգնութիւն», «Մելխիսեդէկ. թագաւոր արդարութեան», «Նաբովթ. խօսք կամ մարգարէութիւն», «Նոյ. դադարումն կամ հանդիստ» և այլն, սակայն ստուգաբանությունները համառոտ են՝ տալիս են գլխաբառի հիմնական իմաստը: Կան անշուշտ առանձին միակողմանի, մոտավոր մեկնություններ, որոնք որակ չեն կազմում, չեն նսեմացնում բառարանի արժանիքները:

Բերենք մի քանի օրինակ ևս, այս անգամ համեմատելով Մխիթար Աբբայի «Բառարան յատուկ անուանց» բառարանի հետ.

Մեկնութիւն անուանց եբրայեցւոց	Բառարան յատուկ անուանց[75]
Ահարոն. լեառն. կամ լեռնային:	Ահարօն. ի: Լեառն. կամ լեռնական· կամ. լեառն զօրեղ. կամ ուսուցանօղ. կամ իմացօղ:

75 Վերցնում ենք բառահոդվածների միայն սկզբի մասը՝ ստուգաբանությունը:

Բոսովր. *ամրութիւն։*	**Բոսոր.** *կամ* **բոսոր.** *այր Հնձանք. կամ կութք. կամ ամրութիւն. կամ ի բաց բարձումն. կամ արգելումն. կամ ի յանձկութեան. կամ ի նեղութեան։*
Եբեր. *ընկեր. կամ հաղորդակից. կամ անցք։*	**Եբեր.** *այր Անցաւոր. կամ անցք. կամ բարկութիւն. կամ յղի. և կամ առրբերէն՝ ցորեան։*
Թամար. *տերև. կամ ոստ։*	**Թամար.** *այր Արմաւենի. կամ արմաւ. կամ փոփոխութիւն. կամ դառնութիւն։*
Կանայ. *նախանձ. կամ 'հետեւումն։*	**Կանայ.** *իր Նախանձ. կամ նախանձայուզութիւն. կամ ստացուած. կամ ոզր. կամ բոյն նորա. կամ եղէգն. կամ շամբ։*
Ղովտ. *խառնեալ. կամ պատեալ.*	**Ղովտ.** *կամ* **Ղոտ.** *այր Պատեալ. կամ ծրարեալ. կամ հաւաքեալ. կամ ծածկեալ. կամ զմուռս. կամ ռետին։*
Մակեդոն. *բոց։*	**Մակեդոն.** *կամ* **Մակեդոն։** *Եբրայեցերէն ստուգաբանի, երկրպագութիւն. կամ անկումն ի վերայ երեսաց. իսկ յունարէն, երկայնանիստ. կամ ըստ ոմանց գերազանցեալ. կամ բարձրացեալ։*
Յեսու. *տէր փրկիչ։*	**Յեսու.** *այր Փրկիչ. կամ խնայօղ։*
Նային. *գեղեցիկ։*	**Նային։** *Գեղեցկութիւն. կամ վայելչութիւն. կամ դղրդումն. կամ շարժումն նոցա։*

Ռախաբ. *լայնացեալ։*	**Ռախաբ.** *կամ* **Ռահաբ.** *կամ* **Րախաբ։** *Լայն. կամ լայնութիւն. կամ ընդարձակ. կամ հրապարակ։*
Քուշ. *եթովպացի*[76]*։*	**Քուշ.** *կամ* **Քուս.** *այր Սեաւ. կամ եթէովպացի։*

Այն, ինչ արդեն ասվեց, կարծում ենք, բավական է բառարանն իր էական կողմերով պատկերելու համար։ Մնում է կանգ առնել բառամթերքի և ստուգաբանությունների մասնավոր հարցերի վրա, կոնկրետ դիտողություններ անել **Ամաղէկ**. **աման, ամանա, Ամբակում, Ամեսայի, Ասփինէ, ասֆա, արաբացիք, Ենովք, Խառան, Մաաքեա, մակեդոն, Յեսու և Ռահաբ** *բառերի վերաբերյալ։ Մխիթար Աբբայի բառարանում այս բառերը բոլորովին այլ ստուգաբանություն ունեն։ Օրինակ՝* **ամանա**, *որ այս (նաև ոսկանյան Աստվածաշնչի) բառարանը ստուգաբանում է «հաւատ կամ ճշմարտութիւն», Մխ. Աբբան հղում է* **Նաադօլ** *բառին, որը նշանակում է «զօվեալ. կամ լուսափայլ. կամ զօրեղ»։ Սակայն ձեռագիր բառարանը սխալ չի ստուգաբանում. եբր.* aman, emūn-a[77] *բառերը նշանակում են «հաւատալ», «հաւատ».* **Ասփինէ** *բառը, հավանաբար, բառարանում մեկնված է ըստ եբր.* sōnē-*ի, որ «ըմպող» է նշանակում.* **խառան**-*ը եբր.* hāras *«ավերել» բառից է ծագում.* **Յեսու** *բառի "ցեց» իմաստն առացվել է հավանաբար եբր.* sās, āš *«ցեց» բառից.* **Ռահաբ** *(=Ռախաբ, Րախաբ) բառի «ամբարտաւան կամ քաջ» մեկնությունը նույնպես ճիշտ է և գալիս է եբր.* rāhab-*ից, որ «լայն, լայնութիւն» իմաստներից բացի նշանակում է նաև «քաջ դարձնել, քաջացնել»* (tapfer machen)[78]*։ Սխալ չէ նաև* **ամաղէկ** *բառի «թա-*

---

76 *Տե՛ս ձեռ. № 4283։*

77 *Եբրայական բառերը ստուգաբանելու համար օգտագործել ենք* *D. Carl Siegfried, und D. Bernhard Stade*, Hebräisches Wörterbuch zum Alten Testamente, Leipzig, 1893.

78 *Տե՛ս նույն տեղը, էջ 954։*

գաւոր» մեկնութիւնը, որի դիմաց մյուս բառարանն ունի «ժողովուրդ լեզուաղ» կամ «ազգ լեզուօղ» մեկնութիւնները։ Թերևս ամաղէկ նշանակել է նաև «թագաւոր» և այդ իմաստը պահպանվել է քննվող բառարանում։ Եվ եթե այդպես չէ, ապա այդ իմաստը ստացվել է meleq «թագաւոր» բառի ā մասնիկի հետ միասին թարգմանելուց։ Մնացած ութ բառերի մեկնութիւնները (որ չենք հակադրում Մխիթար Աբբայի ստուգաբանութիւններին), որոնք չեն հիմնավորվում եբրայերենով, այնուամենայնիվ, մասամբ վիճելի են մնում և միշտ չէ, որ պետք է սխալ համարել, չնայած սխալներն ու աղավաղումները միշտ էլ հավանական են։ Բոլոր դեպքերում պետք է հավատալ հին բնագրերին և աշխատել պատճառներ ու հանգամանքներ գտնել՝ անսովոր ու սխալ թվացող երևույթները բացատրելու համար։

Բառարանի մեկնութիւնները համառոտ լինելով, այնուամենայնիվ տալիս են առանձին գլխաբառերի նաև այնպիսի իմաստներ, որոնք մինչև այժմ հայտնի չեն եղել և գրանցված չեն տպագիր բառարաններում։

Հատուկ անուններից բացի «Մեկնութիւն անուանց եբրայեցւոց»-ի բառացանկում կան մի շարք այլ բառեր՝ ալելուիա, ամեն, թաւ, թերափիմ, կարկառ, կորբան, մնաս, գոմոր (չափի միավորը), մոգ, շարաթ, պասէք, սորեկ, որոնք բառարանի մեջ են մտել նրա համար, որ գործածվում են Աստվածաշնչում։ Կան նաև բառեր, ինչպես՝ ազան, բատոս, դիթալոսոն, կարիաթսեփէրիմ, մեսոպոտամիա, նէապոլիս, Պաղեստին և այլն, որոնք գործածված չեն Աստվածաշնչում և վերցված են հունարենից հայերեն թարգմանված այլ բնագրերից՝ հավանաբար Ս. գրոց զանազան մեկնութիւններից, որոնք հանդես են եկել ավելի ուշ շրջանում։ Իրոք, այս կարգի բառերի մի մասն ընդհանրապես վկայված չէ հայ մատենագրության վաղ շրջանի երկերով։ Ստորև բերում ենք այդ բառերն իրենց մեկնութիւններով, հնարավոր դեպքերում տալով օտար բառերի ստուգաբանությունը.

Ագան. նեղութիւն։

Բարիովնա. որդի աղաւնւոյ։ Եբր. berjōvnā *բառից*[79]։

Դիաբոլոս. ծորեալ։ Հուն. διάβολος «սատանա» բառն է, որ գուցե հայերեն «ծորեալ» էլ է կոչվել, եթե աղավաղում կամ վրիպակ չկա։

Դիդիմոս. հոտ։ Հուն. δίδυμος «երկուորեակ» բառն է, սակայն հայտնի չէ, թե ինչու է հայերեն «հոտ» նշանակում։

Դիբալոսոն. երկու ծովք։ Հուն. διθάλασσος.

Եզրով. նետ ցնծութեան։ Եբր. nez «նետ» և rōā «ուրախութիւն ունենալ» բառերից[80]։

Եկեղեիա. Նաւակատիք։ Հուն. εγκαίνια։

Լիբոստրատոս. քարամբ շարեալ։ Հուն. λίθος «քար» և τάσσω (ատ. τάττω) «շարեմ» բառերից։

Կարիաթսեփէր. քաղաք նամակաց։ Եբր. kerəjāth «քաղաք» և sēfer «նամակ» բառերից։

Կաթեալ՝ Գաղատացիք բառի մեկնության մեջ։

Կասբին. իբրև դեւք։

Կեէաս. ուրախ։ Հուն. χαίρων (χαίρω «ուրախանամ»)։

Ղապիովք. փայլատականք։

Ղեկի. օրէնք։ Հավանաբար եբր. xōk *բառից*։ Լատ. lex։

Ճերոնիմոս (ջերոնիմոս, հերոնիմոս). սուրբ անուն։ Հուն. ἱερό և ὄνομα *բառերից*։

Մամզէր.ի պոռնկէ ծնեալ (հմմտ. մամձիր, Հովհան Մանդակունու մոտ՝ «...որք կոչին յամենեցուն մամձիրք, այսինքն խառնարեալք, զի ոչ աւրինաւքն վարեցան, և ոչ հաւատոց հնազանդեցան»)։

Մեսոպոտամիա. միջագէտ։ Հուն. Μεσοποταμία։

Միսփաք. որ է կադէս, դարաստան։

Նէապօլիս. նոր քաղաք։ Հուն. νέος «նոր» և πόλις «քաղաք» բառերից։

Սիբողէք. բեռն։ Եբր. sibolā կամ sēbel «բեռ» բառերից։

---

[79] Տե՛ս Carl Siegfried und Bernhard Stade, հիշատակված բառարանը, էջ 954։

[80] Նույն տեղում, էջ 920։

Այս ստուգաբանություններից ոչ բոլորը կարող են լիարժեք համարվել։ Այն բառերը, որոնք չստուգաբանվեցին, թերևս վրիպակներ են պարունակում (մեկնությունների մեջ էլ սխալներ հնարավոր են)։ Մյուս ձեռագրերի օգնությամբ պետք է պարզել այդ բառերի վավերականությունը։

Թե՛ ձևի և թե՛ բովանդակության տեսակետից «Մեկնութիւն անուանց երրայեցւոց» բառարանը արժեքավոր բառարանագրական հուշարձան է։ Բառերը լրիվ այբբենական կարգով դասավորելու, այլև հղումներ կատարելու ու բառի ծագումը նշելու իր հաղվադեպ փորձերով բառարանը զգալի նորույթներ է մտցնում բառարանագրության տեսության և տեխնիկայի մեջ։ Սակայն բառարանի գլխավոր արժանիքը կայանում է նրանում, որ այն ոչ միայն նոր բառեր է պարունակում, այլև նյութեր է տալիս հունարեն ու երրայերեն բառերի հայերեն տառադարձությունների ուսումնասիրության համար։

* * *

XVII դարում Աստվածաշնչի բացատրական բառարանները և հատուկ անունների նոր բառարանները արդյունք են հայ բառարանագրության լայն ծավալման ու բուռն վերելքի։ Այդ բառարանները տակավին հեռու են Աստվածաշնչի բոլոր բառերը կամ բոլոր հատուկ անուններն ընդգրկելու կարողությունից, կառուցվածքի ակնառու բարելավումներով հանդերձ դեռևս հին տեսք ունեն և դարձյալ գործնական նպատակներ են հետապնդում։ Աչքի է ընկնում հատկապես Երեմիա Մեղրեցու բառարանը, որը բառացանկեր ունի Աստվածաշնչի բոլոր գրքերի համար, ավելի հանգամանորեն է մեկնում գլխաբառերը և հիմնականում ազատ է թուրքերեն և այլ օտար բառերի գործածումից։ Առհասարակ Աստվածաշնչի բառարանների լեզուն համեմատաբար մաքուր է XVII դարի մյուս բառարանների և այլ գրական երկերի լեզվից։

ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

Ուսումնասիրվող շրջանում հայ բառարանագրությունն առավել առաջադիմության է հասնում թարգմանական բառարանների ուղղությամբ։ Թարգմանական բառարանագրության բովանդակությունն էական կողմերով հետևյալն է.

1. Մշակութային ասպարեզ են մտնում նոր թարգմանական բառարաններ, որոնք և հայերենն առնչում են նոր, մինչ այդ հայերենի հետ կապ չունեցող օտար լեզուների հետ (պփշաղերենի[1], ֆրանսերենի, իտալերենի և այլն)։

2. Նախորդ շրջանի (V—XV դդ.) գերազանցապես օտար-լեզվյան- հայերեն բառարաններին հավասար տեղ ու նշանակություն են ստանում հայ-օտարլեզվյան բառարանները, հատկապես հայ-լատիներեն և հայ-պփշաղերեն երկլեզվյան բառարանները։ Ուրեմն՝ թարգմանական բառարանագրությունն այլևս միակողմանի բնույթ չունի։

3. Բառարաններում արդեն հիմնական տեղ են գրավում նաև եվրոպական լեզուները, հատկապես լատիներենը, իսկ

1 Թյուրքական լեզվաբնտանիքի արևմտյան կամ արևմտախունական (западнохунский) ճյուղի մի շարք լեզուներ կազմում են պփշաղական լեզվախումբը՝ պփշաղա-օղուզական, պփշաղա-բուլղարական և պփշաղա-նոգայական ենթախմբերով։ Պփշաղերենի մասին տե՛ս «Языки народов СССР», т. 2, тюркские языки. М., 1966, стр. 15. *А. А. Реформатский.* Введение в языковедение, М., 1967, стр. 426.

նախկինում հայերենին առավել խիստ առնչվող պարսկերենն ու արաբերենը տեղի են տալիս արևելյան այլ լեզուների, գլխավորապես ղփչաղերենին։

4. Թարգմանական բառարանագրությունը որոշակիորեն փոխվում է նաև բովանդակությամբ. մեծ մասամբ տերմիններ ու մասնագիտական բառեր թարգմանող հին սակավաբառ բառարանների կողքին հանդես են գալիս նոր բառարաններ, որոնց գլխավոր նպատակն ընդհանրապես լեզուների բառերի ու դարձվածների և ոչ թե միայն տերմինների թարգմանությունն է։

5. Փորձեր են կատարվում նոր տեսակի թարգմանական բառարաններ կազմելու ուղղությամբ. արդեն առկա են դարձվածներ ու բարբառային բառեր թարգմանող բառարաններ։

6. Ընդարձակվում է թարգմանական բառարանների բառացանկը։ Դա վերաբերում է հատկապես հայերենին ու լատիներենին առնչվող բառարաններին։

7. Թարգմանական բառարանները (գլխավորապես հայ-լատիներեն և լատին-հայերեն) գործնական նշանակությունից բացի գիտական բնույթ են ստանում. բարելավվում է բառաշարքի այբբենական կարգը, գլխաբառերը ավելի բազմակողմանի և ճիշտ են մեկնվում, տրվում են քերականական նշումներ, կանոնավոր կերպով կիրառվում են հղումներն ու համառոտագրությունները և այլն։

Աշխարհի տարբեր անկյուններում ցրված հայերեն ձեռագրերով մեզ հասել են XVI—XVII դարերի բազմաթիվ թարգմանական բառարաններ, որոնք դեռևս ուսումնասիրված չեն և ներկայանում են միայն ձեռագրացուցակների սեղմ նկարագրություններով։ Անկասկած, բառարաններ կան նաև տակավին չնկարագրված հայերեն ձեռագրերում։ Այդ շրջանի հայտնի տպագիր ու ձեռագիր լատին-հայերեն և հայ-լատիներեն բառարաններից բացի գոյություն են ունեցել նաև հայ-ղփչաղերեն ընդհանուր թարգմանական բառարաններ (Վիեննայի ձեռ. № 311, Լենինգրադի ձեռ. Арм. № 8), հայ-ղփչաղերեն քերականական բառարաններ (Մատենադարանի ձեռ. № 3522, Վիեննայի ձեռ. № 84 և № 95, Լենինգրադի ձեռ. Арм. № 8), «Բառք երբայեցւոց»՝ թարգմանված թաթարերեն (Լվովի հմլս. ձեռ. № 22), ֆրանսերեն-հայերեն բառարան (Փարիզի ձեռ. № 262 և № 310), հայ-ֆրանսերեն բառարան (Փարիզի ձեռ. № 310), թուրքերեն-հայերեն-ֆրանսերեն բառացանկ (Լոնդոնի ձեռ. № 125), Սուրբ գրքի դժվարիմաց բառերի հայերեն-լատիներեն-լեհերեն բառարան (Լվովի հմլս. ձեռ. № 22), հայ-լատիներեն փիլիսոփայական բառարան (Լվովի հմլս. ձեռ. № 23), իտալերեն-հայերեն բառացանկ (Փարիզի ձեռ. № 186) և այլն։

Սակայն, ձեռքի տակ չունենալով հիշյալ շրջանի այդ բոլոր ձեռագիր բառարանների բնագրերը, մենք ստորև կքննենք միայն Մատենադարանի ու Լենինգրադի հայերեն ձեռագրերով պահպանված հայ-ղփչաղերեն բառարանները։

Հայերեն ու ղփչաղերեն լեզուների փոխհարաբերությունը պատահական երևույթ չէ և ոչ էլ ինչ-որ սովորական մշակութային կապերի արդյունք, այլ ավելի խոր պատմական արմատներ ունի։ XVI—XVII դարերում Լեհաստանի հայ գաղութները համալրվեցին Վոլգայի ափերից, Ղրիմից և այլ վայրերից եկած հայերի խմբերով։ Մայրենի լեզուն մոռացած կամ դեռևս որոշ չափով իմացող այդ հայ գաղթականները խոսում էին ղփչաղերեն։ Նրանք չէին կարող հաղորդակից դառնալ հայ մշակույթին, որը Լեհաստանում զարգացման նպաստավոր պայմաններ ունենալով, վերելք էր ապրում։ Եվ, ահա, վարչական, տնտեսական, դատական և այլ բնույթի հայատառ ղփչաղերեն փաստաթղթերից ու արձանագրություններից բացի հանդես եկան հայերենից ղփչաղերենի թարգմանված բնագրեր, ստեղծվեցին քերականական ձեռնարկներ ու թարգմանական բառարաններ։

Հայ-ղփչաղերեն երկու քերականական ձեռնարկներ պահպանվել են Մաշտոցի անվան Մատենադարանի № 2267 և № 3522 ձեռագիր ժողովածուներում։ Առաջինը՝ Լուսիկ Սարկավագի կազմած ձեռնարկը, օժտված է ղփչաղերեն թարգ-

մանվող հայերեն բառերի, գլխավորապես գոյական և ածական անունների բառացանկերով[2]։

Երկրորդը (№ 3522 ձեռագրում) մի անհայտ հեղինակի աշխատություն է, որ սկզբից մինչև վերջ բաղկացած է հայերենի հոլովման ու խոնարհման զանազան ձևերի աղյուսակներից, որոնց մեջ հայերեն բառերի ուղիղ և թեք ձևերին առադրվում են համապատասխան զփշաղերեն ձևերը։ Այս հայ-զփշաղերեն քերականական ձեռնարկներից բացի կան նաև իսկական բառարաններ։ Օրինակ՝ հայ-զփշաղերեն մի ընդարձակ բառարան առկա է Լենինգրադի Арм. № 8 ձեռագրում։ Դա մի ընդարձակ քերթողական բառարան է, որի մեկնությունները թարգմանված են զփշաղերեն։ Այդ նույն ձեռագրի վերջում կա նաև մի քերականական բառարան, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ «Բառոք քերականին» բառարանը՝ զփշաղերեն թարգմանված մեկնություններով։ Վերջինիս երկու այլ դրշագրեր էլ հիշատակվում են Հ. Տաշյանի ձեռագրացուցակում (տե՛ս ձեռ. № 84 և № 95)։ Ապա, այս նույն ձեռագրացուցակի № 311 (ԺԵ—ԺՉ դարեր) ժողովածուի նկարագրության մեջ խոսվում է մեկ այլ հայ-զփշաղերեն բառարանի մասին։ Այդ բառարանն արդեն լենինգրադյան ձեռագրի ընդարձակ բառարանի գրչագիրը չէ, այլ ավելի համառոտ մի բառարան, ամենայն հավանականությամբ «Բառոք քերթողականքի»-ի ընդօրինակություններից մեկն է զփշաղերեն մեկնություններով։ Արդ անցնենք Մատենադարանի և լենինգրադյան ձեռագրերի հայ-զփշաղերեն բառարանների քննությանը։

ՀԱՅ-ՂՓՉԱՂԵՐԵՆ ԲԱՌԳԻՐՔ

Լեհաստանում բնակվող զփշաղախոս հայերին հայերեն լեզուն սովորեցնելու և հայ մշակույթին հաղորդակից դարձնելու գործում մեծ դեր է խաղացել ստորև քննվող հայ-զփշաղերեն ընդարձակ երկլեզվյան բառարանը։ Հայ բառարանագրության այդ արժեքավոր հուշարձանը մեզ է հասել Լենինգրադի Մ. Ե. Սալտիկով-Շչեդրինի անվան պետական հանրային գրադարանում պահվող Арм. № 8 հայերեն ձեռագրով։

Ցավոք, ձեռագիրը տեղեկություններ չի տալիս իր հանգամանքների մասին. հայտնի չեն բառարանի հեղինակը, գրության ժամանակը, տեղը և այլն։ Բնագրի բնույթը և տառատեսակները ցույց են տալիս, որ ձեռագիրը գրված պիտի լինի XVI—XVII դարերում, ըստ երևույթին, Լեհաստանում։ Գրությունը երկսյուն է (բացառությամբ սկզբի մի քանի եռասյուն էջերի), արագագրությանը մոտեցող, ընթեռնելի նոտրգրով։ Սկզբի էջի ներքևի լուսանցքում կա 1714 թվականի հունվարի 18-ին գրված մի հիշատակագրություն այն մասին, որ ձեռագիրը պատկանել է Կամենիցի հայկական Սուրբ Գրիգոր Լուսավորչի եկեղեցուն։ Նախավերջին էջի ներքևի լուսանցքում էլ անհայտ գրչի՝ ընթերցողի և լսողի համար բարեխոսություն հայցող համառոտ հիշատակագրություն է։ Վերջապես կափմի ետևի կողի ներքին երեսին կպցված է զուգահեռաբար հայերեն և զփշաղերեն գրված մի թերթ, որի ներքևում նշված է 1646 և այս թվի տակ էլ՝ septenbris։ Այս թվականն էլ սակայն գրեթե բան չի հուշում ձեռագրի գրության ժամանակի մասին, որովհետև պահպանակի ձևով կափմին կպցված այս թերթը մնացորդ է մի ուրիշ ձեռագրի, որը կարող է ձեռագրից և՛ առաջ, և թե՛ հետո գրված լինել։

Մեր կարծիքով բառարանը կազմված պիտի լինի XVII դարի երկրորդ կեսին և ոչ վաղ, քան «Բառգիրք հայոց» բառարանի հանդես գալը։ Այդ բառարանը հենց վերջինիս մի ընդարձակ խմբագրությունն է՝ գլխաբառերի զփշաղերեն մեկնություններով։ Շատ հավանական է, որ բառարանի համար հիմք է եղել «Բառգիրք հայոց»-ի սկզբնօրինակը, որի բառացանկն ընդարձակելով ու բառաշարքը վերակառուցելով անանուն բառարանագիրը գլխաբառերի մեկնությունները թարգմանել է զփշաղերեն։

2 Լուսիկ Սարկավագի այդ աշխատությունը քննված է Հ. Եգանյանի «Об одном армяно-кыпчакском грамматическом пособии XVI века» հոդվածում։ Տե՛ս «Вопросы языкознания», Москва, 1962, № 5, стр. 152—154։

Ձեռագրում բառարանն անխորագիր է։ Սկզբից, Ա-ի բառացանկի վերևում, կա զփշաղերեն այսպիսի մի գրություն՝ «Ախօրխուտան քիմտա չահը սայ», տպա՝ աբանա, աբբայ և այլ գլխաբառերով սկսվում է բառաշարքը։ Ավարտվում է բառարանը ֆարտ, օրտու, օղամանեակ գլխաբառերով, որոնցից վերջինը չի մեկնված։ Այդ բառերից բացի Ֆ և Օ տառերով այլ գլխաբառեր չկան (Օ-ով բառերը սկզբնատառի աւ գրությամբ բերված են Ա-ի բառացանկի համապատասխան տեղում)։ Հայերեն մյուս բոլոր տառերով կան բառացանկեր, որոնք երբեմն շատ ընդարձակ են «Բառգիրք հայոց»-ի համապատասխան բառացանկերից։

Անանուն բառարանագիրը «Բառգիրք հայոց»-ի բառացանկն ընդարձակել է հենց այդ բառարանի գլխաբառերի հիման վրա՝ նրանց հետ նույնատառ սկիզբ ունեցող կամ նրանց արմատներից կազմված այլ բառերի ավելացումով։ Օրինակ. «Բառգիրք հայոց»-ի այց և այցելու բառերին ավելացված է այցելութիւն։ Այս կարգի ավելացումներից բացի կան նաև գլխաբառեր, որոնք հին բառարանում առկա բառերի թեք ձևեր են, ինչպես, օրինակ, եմ, չոգալ և այլ գլխաբառերի դիմաց ունենք եմ, եաու, չոգ, չոգամ, չոգան և այլն։ Այդ ձևերը բառարանի հեղինակը բերում է ուսուցողական նպատակներով, տվյալ դեպքում, օրինակ, անկանոն բայերի ձևերը ցույց տալու և սովորեցնելու համար։

Շուրջ 200 բառ է ավելացվել բառարանի համար հիմք ընդունված «Բառգիրք հայոց»-ի բառացանկին։ Այդ ավելացումների մեկ երրորդ մասը բաժին է ընկնում միայն Ա-ի բառացանկին, որը մոտ 1500 բառահոդված ունի, այսինքն՝ մեկ ու կես անգամ ավելի «Բառգիրք հայոց»-ի նույն բառացանկից։ Համեմատենք, օրինակ, երկու բառարանների այ տառակապակցությամբ սկսվող գլխաբառերի շարքերը.

Հայ-զփշաղերեն բառարան	Բառգիրք հայոց
Աշալոյս[3]	Աշալոյս
Աշակ	—
Աշակերտ	Աշակերտ
Աշակերտութիւն	—
Աշակերտ[4]	—
Աշակերտեմ	—
Աշակերտակից	—
Աշդահակ	Աշտակ[5]
Աշխոյժ	Աշխոյժ
Աշխոյժուհի	Աշխուժուհի
Աշխարհ	—
Աշխարհամար	—
Աշխարհակալ	—
Աշխարհամուր	—
Աշխարեմ	Աշխարել
—	Աշխ
Աշխարհագիր	—
Աշխէտ	Աշխէտ
Աշտարակ	Աշտարակ
Աշտէ	Աշտեան
Աշտանակ	Աշտանակ

Այս շարքերում գլխաբառերի տարբերությունը մեծ է, սակայն այդպես չէ այդ բառացանկի մյուս հատվածներում կամ մյուս բառացանկերում, իսկ Ե, Ժ, Ճ, Ն, Ջ, Ր և այլ տառերով սկսվող բառերի թիվը երկու բառարաններում գրեթե հավասար է։ Անհրաժեշտ է նշել նաև, որ «Բառգիրք հայոց»-ում էլ այնուամենայնիվ կան բառեր, որոնք բացակայում են մյուս բառարանում։

3 Ձեռագրում՝ Անշալուչ։

4 Գլխաբառը զփշաղերեն չի թարգմանվում, այլ մեկնվում է որպես «շակերտ»։

5 «Բառգիրք հայոց» տպագիր բառարանում սխալ է, իմա՝ Աշդահակ։

Բառացանկին անցնելուց առաջ բերենք մի հատված բառարանից.

Պատկաճեմ. դուզիյիր մէն, տօնադրյրը մէն։
Պատգամաւորութիւն. խնամախօսութիւն։
Պատգամաւոր. կալաճի էլգիր, քէլդիրկան։
Պատուաստեմ. աշլիյիր մէն, շչէրիթէդիյիր մէն։
Պատենից. եսայ [Զ]։
Պատրոյկ. դիբչուք, օհարօք։
Պատառեմ. եըրդըյըր մէն, եարըյըր մէն։
Պատուճան. դէրէճա։
Պատիժ. խըշըմ։
Պատժեմ. խըշըմլըյըր մէն։
Պատմութիւն. հագիաթ, իսդօրիայ։
Պատմեմ. այդիյիր մէն, հագիաթլըյըր մէն։
Պատարագ. խուրպան, պէրնա։
Պատարագեմ. խուրպան էդիյիր մէն։
Պատկեր. սուրադ։
Պատանի. իկիդ օղլան. վըրօսդօք։
Պատասխանի. ճուվաբ։
Պատասխանեմ. ճուվաբ պէրիյիր մէն[6]։

Գլխաբառերը թարգմանելիս բառարանի հեղինակը հաճախ դիմում է լեհերեն բառերի, որոնք ոչ միայն միջնորդի դեր են կատարում, այլև հանդես են գալիս որպես գլխաբառի հիմնական, իսկ երբեմն էլ միակ համանշանակներ։ Այդ կարելի է տեսնել վերևում բերված հատվածի բառահոդվածներից էլ, սակայն բերենք նաև մի քանի օրինակ. Աձուղ. քօմուր եա սաժա, Ականատ. սամօլուվքա, Անձն. պոյ եա օսօպա, Ապօր. սդօրօժ, Գաճ. սդօլէց, լօժա, Երրորդութիւն. ուճ պօյ, դրույցա, Ժայռ. սքալա, խայա, դաղ, Խուրց. սնօք, պաղ, Կողմն. եան, սդրօնա, Հասկ. քօլօս, Զոյք. սմօլա, Պատմագիր. իսդօրիք,

6 Զեռագրի թերթերը համարակալված չեն, ուստի էջը չենք կարող նշել։ Սակայն բերված հատվածը առանց դժվարության կարելի է գտնել Պ-ի բառացանկում։

Տիպ. ֆօրմա, սուրաթ, դիբար, Յաւղ. բօսա և այլն։ Հանդիպում են հայերեն մեկնվող բառեր, ինչպես Բով. քուրա, Բանակիստ. գերեզման, Երկերիւր. Բճ և այլն։

Շատ հաճախ Աստվածաշնչում գործածված բառերի դիմաց թարգմանության փոխարեն կան միայն նրանց գործածության տեղը նշող համառոտագրումներ, օրինակ՝ Գամ. Բ Մակ. Ը, Թամբ Ա թգր. Թ, Կոփածուին. Թիւ ԻԱ, ԻԳ և այլն։ Որոշ գլխաբառերի (բըբաւք, կինիկոս, հակասութիւն և ուրիշ) դիմաց ոչինչ չկա գրված։

Այս նշումները ճիշտ են։ Ըստ երևույթին հեղինակը ձեռքի տակ է ունեցել Աստվածաշնչի գլուխների բաժանված ու տրնատված մի բնագիր, այսինքն տպագիր օրինակ։ Եվ եթե այդպես է, ապա մեր կարծիքը բառարանի գրության ժամանակի մասին ավելի հավաստի է դառնում. բառարանը գրված պիտի լինի XVII դարի երկրորդ կեսերին, ոսկանյան Աստվածաշնչի տպագրումից ու տարածումից հետո։

Գլխաբառերը դասավորված են այբբենական կարգով, նրանց շարքը հաճախակի ընդհատվում է հետագայում նոր բառերի համար նախատեսված փոքր կամ մեծ մասամբ ընդարձակ բացատներով։ Բառացանկը կազմված է գերազանցապես առանձին, ինքնուրույն բառերից, բառակապակցություններն ու դարձվածքները հազվագյուտ են։ Ի տարբերություն մյուս բառարանների, բառաշարքում բայերը բերված են ոչ թե անորոշ դերբայի ձևերով, այլ հիմնականում ներկա ժամանակի եղակի թվի առաջին դեմքով։

Հայ-ղիփչաղերեն բառարանը միջնադարյան հայ բառարանագրության և մշակույթի կարևոր նվաճումներից է։ Դեռևս XVII դարում այդպիսի ընդարձակ թարգմանական բառարան կազմելը հայ մատենագրության համար հիրավի պատիվ բերող գործ է, որ կատարել է մեր մշակույթի անանուն երախտավորը։ Եվ մինչ օրս դեռ հայտնի չէ հայերենը ղիփչաղերենին առնչող ավելի հարուստ բառարան։

Հայ-ղիփչաղերեն բառարանի մեր քննությունը ընդհանուր, հիմնականում բանասիրական բնույթ ունի և ղիփչաղե-

րենի ուսումնասիրության համար այդ հուշարձանի ունեցած նշանակությունը լրիվ չի բացահայտում, որը մասնագիտական հատուկ հետազոտության խնդիր է։

ՀՈԼՈՎՔ ԱՆՈՒԱՆՅ ԵՎ ԽՈՆԱՐՀՄՈՒՆՔ ԲԱՅԻՑ

Բառարանագրական մի հազվագյուտ հուշարձան պահպանվել է Մաշտոցի անվան Մատենադարանի № 3522 ձեռագրում[7]։ Այս ձեռագիր ժողովածուն, որի 226ա—342ա էջերում զետեղված է քննության ենթակա բառարանը, ամբողջությամբ ընդօրինակված է մի անհայտ հին նախօրինակից։ Միակ հիշատակարանը (էջ 223ա) հաղորդում է, որ ձեռագիրը գրել է տեր Սիմոն քահանայի որդի, սկսնակ գրիչ Ավետիքը, 1634 թվականին, Լվովում։ Այլ տեղեկություններ չկան, հայտնի չէ, թե երբ և ով է կազմել մեզ հետաքրքրող բառարանը[8]։

Արդ տեսնենք, թե ինչպիսի հուշարձանի հետ գործ ունենք։ Նախապես ասենք, որ նման բառարանները վերաբերում են քերականությանը և էությամբ ու նպատակներով տարբերվում են մյուս բառարաններից։ Դրանք հոլովման ու խոնարհման դանազան ձևերի, այլև շարահյուսական կապակցությունների առադրական ցանկեր են, հայերեն ու դիչաղերեն լեզուների համապատասխան հարացույցային աղյուսակներ։ Այդպիսի աղյուսակներ կան, օրինակ, Կղեմես Գալանոսի քերականության բնագրում, որտեղ քերականության բաժինների նկատագրություններից ու կանոններից հետո բերվում են համապատասխան օրինակներ զուգահեռաբար հայերեն և լատիներեն լեզուներով։ Քերականական այդ ցանկերը բառարանի նշանակություն են ձեռք բերում նրա համար, որ մի լեզվի բառաձևերը թարգմանում են մյուս լեզվով։ Նկատենք, ի դեպ, որ հիշյալ ցանկերը առադրում են բառաձևերը ու կապակցությունները որպես համարժեք լեզվական միավորներ, որպես համապատասխան կաղապարներ և ոչ թե բառը թարգմանում են իր բառային ամբողջ իմաստով ու կիրառական առումներով։ Այս տեսակետից այդ ցանկերը նման են տերմինների բառարաններին։ Հիշյալ քերականական ցանկերը սահմանափակ թվով բառեր են ընդգրկում և նպատակ էլ չունեն շատ բառեր թարգմանելու, օրինակ՝ Լուսիկ Սարկավագի կազմած քերականական ձեռնարկում անունների հոլովմանը վերաբերող, իրենց ուղիղ ու զանազան թեք ձևերով բերված գոյականների ու ածականների ընդհանուր թիվը շուրջ 500 է[9]։ Իսկական իմաստով քերականական զուգադրական ցանկերի համար «թարգմանական բառարան» ընդհանուր անվանումը հարաբերական է։ Ավելի հարմար է այդ ցանկերը երկլեզվյան քերականական բառարան կոչելը։

Գործնական առումով էլ քերականական բառացանկերը լայն նպատակադրումներ չունեն, լայն օգտագործման համար չեն նախատեսված։ Նրանք, առաջին հերթին, կազմված են թարգմանություն կատարող դպիրներին, գյուղական ու քաղաքային ղեկավար վարչական հաստատություններում աշխատող պաշտոնյաներին և այլ մտավորականներին օգնելու համար։ Հենց այդ մարդիկ էլ ամենայն հավանականությամբ կազմել են նման քերականական ձեռնարկներն ու բառարանները։ Իհարկե, դա չի նշանակում, թե այդ բառացանկերը չեն օգտագործվել սովորողների և այլ մարդկանց կողմից՝ հայերենի կամ ղփչաղերենի քերականությունը, ինչպես նաև առանձին բառեր ու բառակապակցություններ ուսանելու նպատակով։ Բանն այն է, սակայն, որ այդ բառացանկերը այնպիսի դեր չեն խաղացել, ինչպես «Բառք քերթողականք», «Հանդէս բանաստեղծաց», «Բառգիրք հայոց» և այլ բառարանները, որոնք մեզ հասել են տասնյակ գրչագրերով։

Դառնալով ուսումնասիրվող բառարանին, նշենք, որ այն մի ընդհանուր երկի հիմնական ու առաջին մասն է, որին

7 Ձեռագրի նկարագրությունը տե՛ս Մատենադարանի ձեռագրացուցակ, հտ. Ա, սյուն 1033։

8 Այս բառարանը հիշատակվում է նաև Գ. Գասպարյանի վերջերս լույս տեսած «Հայ բառարանագրության պատմություն» (Երևան, 1968) աշխատության մեջ, որտեղ հեղինակը ընդհանուր ակնարկ է տալիս հայ միջնադարյան բառարանագրության և առանձին բառարանների վերաբերյալ։

9 Տե՛ս Ս. Եգանյան, նշվ. աշխ., էջ 152—153։

հետևում է նույն անհայտ հեղինակի կողմից հորինված իմաստասիրական-աստվածաբանական բնույթի հարց ու պատասխանների հավաքածուն։ Որ բառարանը և նրան հաջորդող հարց ու պատասխանները մի ամբողջական ձեռնարկ են կազմում և գրված են մի հեղինակի կողմից, ուղղակի հաստատվում է բառարանին նախորդող ընդհանուր ցանկով։ Այդ ընդարձակ ցանկում (էջ 226ա—229բ) նախ՝ ընդհանուր այբբենական կարգով, ապա՝ ըստ նյութերի հաջորդականության, թվարկված են բառարանի բաժինները (բառացանկերը ըստ հոլովման ու խոնարհման հարցերի) և հարց ու պատասխանի նյութերը։ Այս ցանկին էլ անմիջականորեն նախորդում է աշխատության ընդհանուր խորագիրը՝ «Ցանկ գրոցս, զոր գրեալ է և ունի յինքեան զհոլովս անուանց և զխոնարհմունք բայից ի հայ և ի թաթար լեզու»։

Հարց ու պատասխանները բառարանին ծառայող օժանդակ նյութ են ուսուցման ու վարժեցման համար։ Հեղինակն այդտեղ արդեն նախադասություններում գործածում է իր բառարանում բերված անուններն ու բայերը իրենց ուղիղ ու թեք ձևերով։ Այսինքն նա բառաձևերն աղյուսակից տեղափոխում է խոսքի մեջ։ Հարց ու պատասխանների բաժինն անվերնագիր է, սակայն նյութերի ցանկում այն հիշատակվում է «Հոլովմամբ հարց և պատասխան երկու լեզուաւ» խորագրով։

Բառարանն այսպիսի կառուցվածք ունի. մատյանի էջերը բաժանված են երեք սյունակի՝ առաջինում, ձախ կողմից, գրված են հայերեն բառերը, նրանց դիմաց համապատասխան ղփչաղերեն բառերը, իսկ երրորդ սյունակն ազատ է, բացառությամբ 230ա էջի։ Այս էջի երրորդ սյունակում հայերեն և ղփչաղերեն բառերի դիմաց գրված են նրանց լեհերեն համարժեքները։ Այսպես.

Հայր	*աթա*	*օչեց*
Որդի	*ուղուլ*	*սըն*
Հոգի	*ճան*	*տուշա ապօլ տուխ*
Հայրք	*աթալար*	*օյցօվեէ*

Որդիք	*օղուլլար*	*սընօվեէ*
Հոգիք	*ճանլար*	*տուշըլ*
Աստուածութիւն	*թէնկրիլիս*	*պոսդվոյ*
Աստուածութիւնք	*թէնկրիլիսլար*	
Հայրութիւն	*աթալիս*	*օյցօվսդվօյ*
Հայրութիւնք	*աթալիսլար*	*օյցովսդվա*
Որդեութիւն	*օղուլլուխ*	*սընօվսդվօյ*
Որդեութիւնք	*օղուլլուխլար*	*սնօվսդվա*
Հոգեութիւն	*ճանլխ*	*տուշօվսդվօյ, տուխօվեն*
Հոգեութիւնք	*ճանլխլար*	*տուխօվենսդվա*
Սուրբ	*արի*	*շվենդըյ*
Սրբութիւն	*արիլիս*	*շվենդօշչ*
Սրբութիւնք	*արիլար*	*շվենչի*[10]

Լեհերեն բառերը դժվար թե բառարանի հեղինակը գրած լինի, դրանք ավելացվել են ընդօրինակման ժամանակ։ Հաջորդ էջի կեսից լեհերեն բառեր արդեն չկան և բառարանը շարունակվում է երկլեզու սյունակներով։

Բառարանի բովանդակությունը հանդամանորեն ամփոփված է հայ-ղփչաղերեն քերականական ձեռնարկի սկզբում՝ նյութերի ցանկում։ Ի տարբերություն մյուս բառարանների, այս բառարանում չկան հայերեն այբուբենի տառերի կարգով դասավորված բառացանկեր։ Կան առանձին հոլովների ու բայի ժամանակային ձևերին վերաբերող բառացանկեր, որոնցում բառերը շարված են խառը, բայց ըստ արմատների՝ բնային եղանակով։ Այսպես.

Լոյս	*եաորխ*
Լոյսք	*եաորխլար*
Լուսաւոր	*եաորխլը*
Լուսեղէն	*եաորխտան*

10 *Մատենադարան, ձեռ. № 3522, էջ 230ա։*

Լուսեղէնք	եառբխատանլար
Լուսաւորութիւն	եառբխչիլխ
Լուսաւորութիւնք	եառբխչիլխլար
Դէւ	տէվ
Դէւք	տէվլար
Դէւութիւն	տէվլիք
Դէւութիւնք	տէվլիքլար
Մոլոր	պուլար եա անկլըշ
Մոլորել	պուլար մախ
Մոլորեալ	պուլարկան
Մոլորեալք	պուլարկանլար
Մոլորութիւն	պուլար ղըլխ
Ջար	եաման
Ջարք	եամանլար
Ջարութիւն	եամանլխ
Ջարութիւնք	եամանլխլար
Հպարտ	օքդամ
Հպարտք	օքդամլար
Հպարտութիւն	օքդամլիք
Հպարտութիւնք	օքդամլիք լար...[11]

Բառարանի առաջին՝ «Ուղղականք անուանց» կոչվող բաժնում կամ բառացանկում բերվում են ոչ թե միայն անունները, որոնք հոլովվում են, այլ ընդհանրապես տարբեր խոսքի մասերին պատկանող բառերն իրենց ուղիղ (չթեքված) ձևերով, եղակի ու հոգնակի թվով: Այդ բառացանկը ամենաընդարձակն է բառարանում:

Թեք հոլովների բառացանկերի սկզբում, հոլովների իմաստը ճիշտ բացատրելու և հասկացնելու նպատակով, հեղինակը տալիս է այնպիսի համառոտ հարցեր, որոնց ճիշտ պատասխանելու համար անունը պետք է դնել տվյալ հոլովով: Այլ կերպ ասած՝ բառացանկերի սկզբում բերվում են համապատասխան հոլովների հարցերը՝ նախադասությունների մեջ:

11 Ձեռ. № 3522, էջ 242ա:

Օրինակ՝ սեռական հոլովին վերաբերող բառացանկն (էջ267ա) սկսվում է այսպես.

Սեռական	Երեսլանական
Հարց. *Որոյի՞ն չես դու:*	*Քիմնինկնէ մասը սէն սէն:*
Պատասխանի. *Հաւրն:*	*Ձէվապ. Ադանընկ:*
Հարց. *Որոյի՞ն չեմ ես:*	*Քիմնինկնէ*[12] *մասը մէն:*
Պատասխանի. *Հաւրն:*	*Ձէվապ. Ադանընկ:*
Հարց. *Որոյի՞ն չէ նա:*	*Քիմնինկնէ. մասըտըրօլ:*
Պատասխանի. *Հաւրն:*	[*Ձէվապ*]. *Ադանընկ: Եւ այլն:*

Ապա հետևում է հոլովաձևերի շարքը՝ աստուծոյ, աստուծոց, աստուածութեան, աստուածութեանց, հաւր, որդւոյ, հոգւոյ, հարց, որդոց, հոգւոց, հայրութեան, հայրութեանց և այլն:

Բառարանի հեղինակը հայոց լեզվի մեջ ճանաչում է յոթ հոլով՝ ուղղական, սեռական, տրական, առաքական (գործիական), հայցական, կոչական, փաստաբանական կամ պատճառական (բացառական):

Համեմատաբար քիչ տեղ է հատկացվում խոնարհմանը, որն առհասարակ ներկայացված է ամփոփ, հիմնական կողմերով: Ահա բայի խոնարհման սխեման բառարանում:

1. Բայք անցեալ ժամանակի ներգործական (անցյալ կատարյալ).

2. Ներկայական ժամանակի ներգործական բայք յանձնառական.

3. Ապագայ ժամանակի ներգործական բայք յանձնառական.

4. Բայք անցեալ ժամանակաց կրական.

5. [Բայք] ներկայ ժամանակի կրական.

6. Հրամայական բայք.

7. Ըղձական բայք անցեալ ժամանակի (վաղակատար-հարակատար անցյալ կամ գերակատար). Ոչ թէ արարեալ էի. ոչ թէ արարեալ էամ և այլն.

12 Ձեռագրում՝ գիմնինկնէ:

8. Ղձական բայք ներկա ժամանակի (անցյալ անկատար). Երանի թէ աղօթէի, ոչ թէ աղօթէ(յ)ամ և այլն.

9. Ղձական բայք ապագայ ժամանակաց (առաջին ապառնի). Երանի թէ երթայցեմ.

10. Ուրացական [բայք] անցեալ ժամանակաց. չառի, ոչ առի, չառաք, ոչ առաք և այլն.

11. Հրաժարական [բայք]. չեմ առնել, ոչ առնեմ և այլն:

Խոնարհման ցանկերից հետո, նախ՝ բոլոր հոլովների եզակի ու հոգնակի թվերով հոլովվում են աստուած, ապա՝ անձնական և ցուցական դերանունները: Վերջապես հետևում են մի քանի վարժություններ հարց ու պատասխանով, նորից բոլոր հոլովներով հոլովվում են հայր, ծնելութիւն, որդի, բղխումն, հոգի, հայրութիւն և այլ բառեր:

Քննված բառարանում, ինչպես տեսանք, լատինաբան քերականության հետքեր չկան: Բառարանի անանուն հեղինակը, որ լեզվաբանական գիտելիքներ է ունեցել և լեզուների տիրապետել, առանց մանրամասների, հիմնական գծերով տալիս է հայերենի հոլովման ու խոնարհման պատկերը ղփշաղերենի առադրության: Այդ հանգամանքը ցույց է տալիս, որ բառարանը գրված պիտի լինի XVII դարից վաղ, հավանաբար XVI դարի առաջին կեսին՝ նախքան լատինաբան քերականությունների հանդես գալը:

Որպես ղփշաղերենի ուսումնասիրության մի հին աղբյուր և որպես հայերենը մի նոր լեզվի հետ կապող բառարան, այդ հուշարձանը հայ մշակույթի ու մասնավորապես բառարանագրության բարձրարժեք երկերից է: Վերևում կատարված մեր քննությունը ամենևին էլ սպառիչ չէ, այդ հետաքրքիր ձեռագիր հուշարձանը խոր ու հանգամանալից լեզվաբանական ուսումնասիրության կարիք ունի:

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Մեզ արդեն ծանոթ լենինգրադյան ձեռագիրը բովանդակում է նաև քերականությանը վերաբերող մի հայ-ղփշաղերեն

բառարան, որն իր արտաքինով ու բովանդակությամբ, խիստ տարբերվում է նախորդ բառարանից:

Քննվող բառարանը մի ինչ-որ նոր, անծանոթ ձեռագիր բառարան չէ, այլ մեր միջնադարյան հանրահայտ «Բառք քերականին»[13] բառարանն է թարգմանված ղփշաղերեն կամ ավելի ճիշտ՝ մեկնությունների ղփշաղերեն թարգմանությամբ: Ուստի այդ բառարանի վերաբերյալ բան չի մնում ասելու, բացի արտաքին հանգամանքների նկարագրումից:

Բառարանը գետեղված է ձեռագրի վերջին էջերի վրա, վերնագիր չունի, սկսվում է «Մեկնութիւն. այիրմա նա աչմախ» բառահոդվածով և ավարտվում է յարածգական գլխաբառի մեկնությամբ:

Բարեբախտաբար պահպանվել են այս բառարանի ևս երկու ընդօրինակություններ Վիեննայի № 84 և № 95 ձեռագրերում[14]: Այսպիսով ունենք բառարանի երեք գրչագրեր, որոնք բնագրային տարբերություններ գրեթե չեն դրսևորում և եթե մեկը մյուսից ընդօրինակված չեն, ապա ծագում են մի նախօրինակից: Այդ գրչագրերից Լենինգրադինը, ինչպես տեսանք, թվակիր չէր, Վիեննայի № 95-ը գրված է 1682 թվականից առաջ և ամենահինը՝ № 84 ձեռագիրը, 1613 թվականին գրված «Հաւաքումն քերականութեան» կոչվող ժողովածու է, որի մի մասը գրել է Զաւրիկ որդի Պողդանայ գրիչը: Չի նշված գրության տեղը, որը, սակայն, ինչպես և Հ. Տաշյանն էլ է ընդունում, անշուշտ Լեհաստանն է:

Գրչագրերի թիվը, ինչպես նաև նրանց գրության ժամանակների բավականին մեծ տարբերությունը վկայում են, որ հիշյալ քերականական բառարանը լայն տարածում է ունեցել, եթե ոչ այլուր, ապա լեհահայ գաղութում: Բառարանը եղել է կարևոր ուսումնական ձեռնարկ և որոշակի դեր է կատարել ուսումնականներին և այլ անձանց քերականական և մասամբ էլ գրականագիտական տերմինները բացատրելու և սովորեց-

13 Բառարանի քննությունը տե՛ս Հ. Մ. Ամալյան, նշվ. աշխ., էջ 154—166:

14 Տե՛ս Տաշյանի ձեռագրացուցակը, էջ 343—344 և 364—365:

նելու գործում։ Որպես հին ուսումնական ձեռնարկ և ղիշաղերեն լեզվի ուսումնասիրության գրավոր հուշարձան այդ բառարանն էլ արժեքավոր է ժամանակակից գիտության համար։

ԱՆՈՒԱՆՔ ՅՈՒՆԱՐԷՆ

Մատենադարանի № 1806 ձեռագիրն իմաստասիրական նյութերի ժողովածու է[15]։ Բովանդակում է Ներածութիւն Պորփիւրի, Համառօտ հատուածոյ ի վերայ ներածութեանն Պորփիւրի, Յաղագս հնգից ընդհանուրից, Ստորոգութիւնք Արիստոտելի, մի փոքր բառացանկ՝ «Յունարէն այսօրիկ անուանք թարգմանեալք» խորագրով[16], ապա՝ Համառօտ վերլուծութիւն ստորոգութեանցն Արիստոտելի և այլն։ Գրչի միակ հիշատակարանը, որ հետևում է բառացանկին, հայտնում է ձեռագրի ընդօրինակման ժամանակը միայն. «Զծրագրօղըս յիշատակեսջիք միով ողորմեալիւ ովք սուրբք ընթերցօղք՝ ի թուին հազարերորդի. հարիւրորդի. քսաներորդի. եւի և քառեակի»[17]։ Այսինքն՝ ձեռագիրը գրված է 1678 թվականին։ Հենց այդ թվականին էլ, հավանաբար, կազմված է բառացանկը, որի լեզվական-ուղղագրական վիճակը հիմք չի տալիս ավելի վաղ ժամանակների վերագրելու համար։

Հիշյալ հունարեն-հայերեն բառացանկը ժողովածուի մեջ տեղավորելը պատահական չէ, որովհետև բովանդակությամբ հարազատ է մյուս նյութերին և ընդգրկում է հունարեն այնպիսի բառեր, որոնք գործածված են հարակից փիլիսոփայական բնագրերում։ Հայերեն թարգմանվող այդ հունարեն բառերը մեծ մասամբ հայ մատենագրությանը վաղուց ծանոթ ու գործածական իմաստասիրական-քերականական տերմիններ են, որոնք ստեղծվել են դեռևս հունաբան թարգմանությունների ժամանակներում։

15 Նկարագրությունը տե՛ս Մատենադարանի ձեռագրացուցակ, հտ. Ա, սյուն 645։

16 Տե՛ս Մատենադարան, ձեռ. № 1806, էջ 61ա—61բ։

17 Նույն տեղում, էջ 61բ։

Բառացանկը բաղկացած է խառը, ոչ այբբենական կարգով շարված 75 հունարեն բառերից, որոնք գրված են հայերեն տառերով ու տառադարձությամբ։ Ջորս բառահոդվածներ՝ օնոմա, ուսիա, էաթֆասիս և ափոֆասիս գլխաբառերով, կրկնվում են։ Բառերի հայերեն թարգմանությունները ճիշտ են, միայն անթիթեսիս (αντιθεσις)-ը թարգմանված է հակակայ, փոխանակ՝ հակադրութիւն։ Յուրաքանչյուր հունարեն բառի դիմաց, որպես թարգմանություն, գրված է միայն մեկ հայերեն բառ։ Այսինքն՝ հունարեն գլխաբառերը թարգմանվում են ոչ թե ընդհանրապես որպես լեզվի բառեր՝ իրենց ամբողջ բովանդակությամբ, այլ միայն այն իմաստով, որով նրանք գործածված են փիլիսոփայական բնագրերում։ Այսպես՝ հն. στέρησις բառը, որ նշանակում է՝ զրկում, կորուստ, զրկվածություն, զրկանք (лишение, утрата, лишенность)[18] և այլն, հայերեն թարգմանվում է պակասութիւն բառով, որին համապատասխանում են հունարեն ἔλλειψις, ἐλάττωσις, ὑπόστασις, ἐλάττωμα բառերը[19]։ Սակայն Արիստոտելի և մյուս փիլիսոփաների հայերեն թարգմանություններում՝ որևէ հատկություն չունենալու, նրանից զուրկ լինելու հասկացությունը արտահայտված է հենց στέρησις (privatio) փիլիսոփայական տերմինով, որին համապատասխան հայերենն ունի պակասութիւն տերմինը։ Հունարեն ὁρισμός բառն ունի սահմանագատում, սահմանագծում, սահմանում, պայման, պարտավորություն և պայմանագիր իմաստները[20]։ Սակայն որպես փիլիսոփայական տերմին այդ բազմիմաստ բառը նշանակում է միայն սահման կամ սահմանում (définitio)։

Բառարանում հունարեն բառերի հայերեն տառադարձությունը համապատասխանում է հունարենի հնչյուններին, բացառությամբ առանձին շեղումների։ Համեմատաբար հետևո-

18 Տե՛ս И. Х. Дворецкий, Древнегреческо-русский словарь, т. 2, М., 1958, стр. 1503.

19 Տե՛ս Տ. Զօլագեան, Նոր բառարան հայերէնէ ի յունարէն, Կոստանդնուպոլիս, 1868, էջ 252։

20 Տե՛ս Ի. Ս. Դվորեցկի, նշվ. աշխ., էջ 1192։

ղականորեն են կատարված հունարեն երկբարբառները հայերեն երկբարբառներով ու պարզ ձայնավորներով, ω և ο հնչյունները օ-ով, ձայնեղ պայթականները խուլերով և խուլերը շնչեղներով արտահայտող տառադարձումները: Բերում ենք տառադարձման հիմնական դեպքերը.

αι—*է*. κεῖσθαι—*քիսթէ*, ἀναγκαίος—*անագէօն*, δίκαιος—*տիքէօս*:

αυ—*Ավ*, *աֆ*. ἄυξησις—*ավքսիս*, ἐνάυτιοσ—*էնաֆթիա*

ε—*Է*, *Ը*, λέγω—*լէկօ*, ἕξις—*էքսիս*, πότε—*փօթէ*, θεός—*թէօս*, δεσποτης—*դէսփօթիս*, ἐνδεχόμενος—*ընտըխօմէնօն*:

ει—*Ի*. εἰσαγωγή—*իսակօկի*, εἶδος—*իդօս*:

ευ—*Էւ*. λευκός—*լէւքօս*:

η—*Ի*. κίνησις—*գինիսիս*, κατηγόρηματον—*քաթիգօրիմաթօն*, φονή—*ֆօնի*, ῥῆμα—*րիմա*:

υ—*Ի*. συνώνυμος—*սինօնիմա*, δυνατός—*տինաթօն*, κύριος—*գիրիօս*.

ο, ω—*Օ*. γένος—*կենօս*, ὄνομα—-*օնօմա*, ὁρισμός—*օրիսմօս*, λόγος—*լօգօս*, σῶμα—*սօմա*, λέγω—*լէկօ*, πρῶτον—*փրօթօն*, ζωόν (ζῶν)—*զօօն*:

οι—*Ի*. ποιόν—*փիօն*, ἀλλοίωσις—*ալլիօսիս*:

ου—*ՈՒ*. οὐσία—*ուսիա*, ποῦ—*փու*, δοῦλος—*դուլօս*:

β—*Վ*. συμβεβηκός—*սիմվէւիքօս*:

δ—*Տ*. δυνατόν—*տինաթօն*, ἀδύνατον—*ատինաթօն*, δίκαιος—*տիքէօս*:

γ—*Գ*, *Կ*. λόγος—*լօգօս*, ἀγαθόν—*ագաթօն*, γένος—*կենօս*, εἰσαγωγή—*իսակօկի*, λέγω—*լէկօ*, λογικός—*լօկիքօն*:

π—*Փ*, *Բ*. ἄνθρωπος—*անթրօփօս*, πόσον—*փօսօն*, πότε—*փօթէ*, ἀπόφασις—*ափօֆասիս*, πᾶς—*բաս*, πάσχω—*բախին*:

τ—*Թ*. πότε—*փօթէ*, πρός τι—*փրօսթի*, δεσπότης—*դէսփօթիս*, στέρησις—*սթէրսիս*:

κ—*Ք*, *Գ*. λογικόν—*լօկիքօն*, κατηγορία—*քաթիգօրիա*, κεῖσθαι—*քիսթէ*, κίνησις—*գինիսիս*, κυριος—*գիրիօս* և այլն:

Հունարեն մյուս հնչյունները տառադարձվում են հայերեն համապատասխան հնչյուններով: Տառադարձական և այլ տեսակետից հետաքրքրություն ներկայացնող մանրամասները թողնում ենք մասնագետներին:

Ստորև բերում ենք բառացանկի լրիվ բնագիրը, նկատի ունենալով, որ այն փոքր է ծավալով, տպագրված չէ առ այսօր: Սակայն նպատակահարմար ենք համարել բառացանկը ներկայացնել ոչ թե իր իսկական, ձեռագրային վիճակով նույնությամբ, այլ որոշ փոփոխությամբ՝ բառերի այբբենական դասավորությամբ, առանց կրկնվող մեկնությունների: Հայերեն թարգմանություններից հետո, փակագծերի մեջ, բերում ենք գլխաբառերի հունարեն ձևերը՝ նրանց հայերեն թարգմանությունների ճշտությունը, ինչպես նաև տառադարձումները ցույց տալու նպատակով:

Յունարէն այսոքիկ անուանք թարգմանեալք

Ագաթօն՝ *Բարի* (ἀγαθός, αγαθῶν)։
Ալլիօսիս՝ *Այլայլութիւն* (ἀλλοίωσις)
Ալլօս՝ *Այլ* (ἄλλος)։
Ամա՝ *Համանգամայն* (ὁμοῦ)։
Անանգէօն՝ *Հարկաւոր* (ἀναγκαῖον)։
Անթիթէսիս՝ *Հակակայ* (ἀντίθεσις)։
Անթիֆասիս՝ *Հակասութիւն*(ἀντίφασις)։
Անթրօփօս՝ *Մարդ*(ἄνθρωπος)։
Ավքսիսիս՝ *Աճելութիւն* (ἄυξησις)։
Ատինաթօն՝ *Անկարելի* (ἀδύνατος)։
Ափօֆասիս՝ *Բացասութիւն* (ἀπόφασις)[21]։
Ափօֆանսիս՝ *Բացերևութիւն* (αποφανσις)։
Բախին՝ *Կրել* (πάσχω)։
Բաս՝ *Ամենայն* (πᾶς)։

---

21 Նույն՝ բացասութիւն, *թարգմանությամբ կա նաև* ափիֆասիս, *գլխաբառը*:

Գինախա՝ *Շարժողութիւն* (κίνησις)։
Գիրիօս՝ *Տէր* (κύριος)։
Դեսփօրիս՝ *Տէր* (δεσπότης)։
Դիաֆօրա՝ *Տարբերութիւն* (διαφορά)։
Դուլօս՝ *Ծառայ* (δοῦλος)։
Զօօն՝ *Կենդանի* (ζῶν)։
Էխին՝ *Ունել* (ἔχω)։
Էմփսիխօն՝ *Շնչաւոր* (ἔμψυχον)։
Էնաֆքիա՝ *Ներհականք* (ἐναντίος)։
Էքսիս՝ *Ունակութիւն* (ἕξις)։
Ընթրխօմէնօն՝ *Ներընդունական* (ἐνδεχόμενον)։
Թէօս՝ *Աստուած* (θεός)։
Իդօն՝ *Յատուկ* (ἴδιον)։
Իդօս՝ *Տեսակ* (εἶδος)։
Իսակօկի՝ *Ներածութիւն* (εἰσαγωγή)։
Իփօքիմէնօն՝ *Ենթակայ* (ὑποκείμενον)։
Լէկօ՝ *Ասեմ* (λέγω)։
Լևրօս՝ *Սպիտակ* (λευκός)։
Լօգօս՝ *Բան* (λόγος)։
Լօկիքօն՝ *Բանական* (λογικόν)։
Խրօնօն՝ *Ժամանակ* (χρόνος)։
Կենօս՝ *Սեռ* (γένος)։
Կենեսիս՝ *Լինելութիւն* (γένεσις)։
Մետաֆօրի՝ *Փոփոխամն*[22] (μεταβολή)։
Միսոսիս՝ *Նուազութիւն* (μείωσις)։
Ուսիա՝ *Գոյացութիւն* (οὐσία)։
Սթերիսիս՝ *Պակասութիւն* (στέρησις)։
Սինօնիմա՝ *Փոդանուն* (συνώνυμος)։
Սիմվեբիքօս՝ *Պատահամն* (συμβεβηκός)։
Սօմա՝ *Մարմին* (σῶμα)։
Սօֆօս՝ *Իմաստուն* (σοφός)։
Տինաթօն՝ *Կարելի* (δυνατόν)։

22 *Յետագրում՝ փոփոխմն։*

Տիքէօս՝ *Արդար* (δίκαιος)։
Րիմա՝ *Բայ* (ῥῆμα)։
Փիճ՝ *Առնել* (ποιῶ)։
Փիօճ՝ *Որակ* (ποιόν)։
Փու՝ *Ուր* (ποῦ)։
Փրօքէրօճ՝ *Նախկին* (πρότερον)։
Փրօթօճ՝ *Նախ* (πρῶτον)։
Փրօսթի՝ *Առինչ* (πρός τι)։
Փրոս թի՝ *Առնչական*[23] (πρός τι ἔχον)։
Փօթէ՝ *Երբ* (πότε)։
Փօսօճ՝ *Քանակ* (πόσον)։
Փօրօճիմա՝ *Յարանուն* (παρώνυμος)։
Քաթաֆասիս՝ *Սուրբասութիւն* (καθάφασις)։
Քաթիգօրիա՝ *Սուրբգութիւն* (κατηγορία)։
Քաթիգօրիմօրճ՝ *Սուրբգեալ* (κατηγόρημα)։
Քիսթէ՝ *Կալ* (κεῖσθαι)։
Քօրճ՝ *Չար* (κότος)։
Օճօմա՝ *Անուն* (ὄνομα)։
Օճօճօմա՝ *Համանուն* (ὁμώνυμος)։
Օրիսմօս՝ *Սահման* (ὁρισμός)։
Ֆթօրա՝ *Ապականութիւն* (φθορά)։
Ֆիլէօ՝ *Սիրեմ* (φιλέω)։
Ֆիլիսօֆա՝ *Իմաստասէր* (φιλόσοφος)։
Ֆիմի՝ *Սէր* (φιλία)։
Ֆօճի՝ *Զայն* (φονή)։

Այս փոքր բառացանկը, որ կազմել է փիլիսոփայությամբ զբաղվող և հավանարար հունարեն ուսումնասիրող մի անձնավորություն, հայ մշակույթի և մասնավորապես բառարանագրության պատմության մեջ այնքան էլ մեծ դեր չի խաղացել, յայն տարածում ու գործածություն չի ունեցել։ Սակայն բառացանկը լավագույն ապացույցն է այն բանի, որ XVII դարում

23 *Պետք է լինի առինչական։*

հայ բառարանագրության վերելքն արտահայտվում է ոչ միայն ծավալի մեջ, այլև բովանդակության՝ բառարանների տեսակների բազմազանության մեջ։ Մեր բառարանագրության մեջ երևան է գալիս մի նոր երկլեզվյան բառացանկ, որը մեզ հասած երկրորդ հունարեն-հայերեն բառարանն է «Բառք Գաղիանոսի» բառարանից հետո։ Այն, անշուշտ, միջնադարյան մի հետաքրքիր աղբյուր է հունարենի հայերեն տառադարձումների և հնչյունական մասնավոր հարցերի պատմական ուսումնասիրության համար։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԱՅԼ ԲՆԱԳԻՐԵՐԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

Այս բաժնում քննվող բառարաններն ընդհանուր բնույթի բացատրական բառարաններ են, որոնք վերաբերում են XVII դարին, գրված են անհայտ հեղինակների կողմից, մեծ մասամբ պահպանվել են բազմաթիվ գրչագրերով։ Իրենց տեսակի մեջ այդ բառարանները նոր չեն, պատկանում են հայ մատենագրության նոր երկերին, բազմաթիվ անհասկանալի բառեր ու ձևեր են մեկնում և օժտված են մի շարք նոր գծերով, որոնք հատուկ են հայ բառարանագրության զարգացման այդ շրջանին։

XVII դարում է՛լ ավելի շատ աշխատանք է կատարվում դանազան հին բառարանների ու բառացանկերի միացումով նոր համահավաք բառարաններ կազմելու ուղղությամբ։ Այժմ էլ ուշադրության կենտրոնում է «Բառք քերթողականք» բառարանը, որն անընդհատ ուրիշ աղբյուրներից համալրվելով, դառնում է բավականին ընդարձակ մի բացատրական բառարան ու տպագրվում «Բառգիրք հայոց» խորագրով։ Ապա, այդ բառարանը լայնորեն տարածվում ու հայ մշակույթի մեջ հայտնի է դառնում իր հրատարակչի՝ Երեմիա Մեղրեցու, անունով։

Տարբեր փոքր բառարանների միացումը մի ընդհանուր բառարանի մեջ դրական երևույթ է այն առումով, որ մատենագրության տարբեր երկերին առընթեր մատենակից բառա-

բանների կողքին դրվում է մի ընդհանուր բառացանկ ունեցող բառարան, որը ոչ միայն հարուստ է բովանդակությամբ, այլև հարմար է օգտագործման համար:

Բառացանկի ընդլայնումից բացի XVII դարի բացատրական բառարանները երևան են հանում բառարանագրական տեխնիկայի նոր գծեր՝ բառերի այբբենական կարգի բարելավում, համեմատաբար ընդարձակ, բազմահամանիշ մեկնություններ, քերականական բացատրություններ, նկարագրական եղանակով գլխաբառը մեկնելու, հղումներ կատարելու փորձեր և այլն: Բառահոդվածը զգալիորեն տարբերվում է հին շրջանի բառարանների միաբառ, սոսկ համարժեքային մեկնություններից: Այդուհանդերձ բացատրական բառարանները սկզբունքների տեսակետից դեռևս բարձր մակարդակի վրա չեն և զիջում են Ամիրդովլաթի բառարաններին, բացառությամբ բառաշարքի այբբենական կարգից, որ «Բառգիրք հայոց» բառարանում գրեթե կատարելության է հասնում:

XVII դարի առաջին կեսում որոշ բառարաններում («Բառք հայոց», Անանուն բառգիրք), մեկնությունների մեջ, հայերեն բառերի փոխարեն գործածվում են բավականին շատ օտար բառեր, որոնց մեծ մասը թուրքերեն է: Սակայն բառարանների լեզվում սպրդած այդ երևույթը չի տարածվում ու հարատևում: Ընդհակառակն՝ հիշյալ դարի երկրորդ կեսում բառարանները գրեթե մաքրվում են օտարաբանություններից և հայաբառ են դառնում: Ուրեմն բառարանագրության վերելքը ուղեկցվում է ոչ միայն բառարանների քանակական աճով, տեսակների բազմազանությամբ ու բառացանկերի հարստացումով, այլև բառարանների լեզվի մաքրությամբ:

Չնայած բառարանների բառացանկն աստիճանաբար ընդարձակվում է և դարագլխին արդեն հանդես է գալիս 10.000 բառ ունեցող բառարան՝ հայերեն լեզվի կամ մատենագրությամբ ավանդված բոլոր բառերը մի բառարանի մեջ ընդգրկելու փորձ դեռևս չի կատարվում, ինչ արդեն հաջողությամբ կատարված էր բժշկական բառարաններում դեռևս XV դ-

րում, տերմինների նկատմամբ: Բացատրական բառարանների հիմնական խնդիրը դարձյալ հնաբանությունների, նորաբանությունների ու մասամբ օտարաբանությունների բացատրելն է՝ բնագրերի բովանդակությունը ընթերցողներին լրիվ հասկանալի դարձնելու նպատակով: Այնուհետև երևան են գալիս «Բառգիրք հայոց»-ից ավելի հարուստ բառարաններ, որոնք կառուցվածքով ընդհուպ մոտենում են ժամանակակից բառարաններին, բայց, այնուամենայնիվ, մինչև Մխիթար Սեբաստացին հայերենի իսկական, լրիվ բացատրական բառարան դեռևս գոյություն չունի: Եվ այդ էլ այն դեպքում, երբ արդեն վաղուց հրապարակի վրա էին լատին-հայերեն և հայ լատիներեն ընդարձակ թարգմանական բառարաններ:

ԱՆԱՆՈՒՆ ԲԱՌԳԻՐՔ

Մաշտոցի անվան Մատենադարանի № 2370 ձեռագիր ժողովածուն ի շարս այլ բառարանների ունի նաև մի անվերնագիր բացատրական բառարան[1]: Ձեռագիրը բառարանագրական, քերականական և այլ նյութերի ժողովածու է, գրված 1621—1624 թթ. Կ. Պոլսում և Ասպահանում[2]: Գրիչ Պողոս Տիւրիկցին ձեռագրի մասին ընդհանրապես աղբյուրագիտական տեղեկություններ չի տալիս: Հետևաբար նախագաղափար օրինակ լինել կամ չլինելը, հեղինակն ու կազմելու ժամանակը անհայտ են մնում: Բառարանը գետեղված է ձեռագրի 274ա—289բ էջերում, սկսվում է «Ապէնիագ. անկարօտ: Ագօստու[3]. աշխարհակալ: Աւղ. երանի...» և ավարտվում է «Քաղտեայս կախարդ: Քսեսա. չափ է, կշիռ անուն» բառահոդվածներով: Բառերը շարված են անկանոն այբբենական կարգով, բոլոր տառերով կան բառացանկեր, որոնք պարունակում են բառեր հետևյալ քանակի. Ա—161, Բ—57, Գ—62, Դ—56, Ե—57,

1 Ձեռքի տակ եղած ձեռագրացուցակների միջոցով այս բառարանի առկայությունը արտասահմանյան հայերեն ձեռագրերում դժվար է պարզել:

2 Նկարագրությունը տե՛ս Մատենադարանի ձեռագրացուցակ, հտ. Ա, էջեր 788:

3 Իմա՝ Աւգուստոս:

Ջ—59, է—10, Ղ—45, Թ—34, ժ—13, Ի—9, Լ—33, խ—85, Ծ—38, կ—90, Հ—100, Ձ—23, Ղ—8, ճ—24, Մ—90, յ—70, Ն—67, Շ—30, Ո—60, Չ—16, Պ—69, Ջ—28, Ռ—17, Ս—96, վ—76, Տ—64, Ր—10, Ց—20, Ւ—4, Փ—26, Ք—34։

Ինչպես տեսնում ենք, բառաքանակը մեծ չէ, ավելի քան երկու անգամ փոքր է «Բառք քերթողականք»-ի բառացանկից։ Այդուհանդերձ բառարանը մի որևէ երկի առընթեր մատենակից բառգիրք չէ, այլ ամփոփումն է զանազան մատյաններում գործածված բառերի։ Բառարանի մատենագրական աղբյուրները դժվար է որոշակիորեն ցույց տալ, սակայն ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ բառերը վերցված են կրոնական ու աշխարհիկ բնույթի այնպիսի բնագրերից, որոնք լայն գործածություն են ունեցել և ուսումնասիրվել են դպրոցներում։

Բառացանկի ուսումնասիրությունը առաջին հայացքից ցույց է տալիս, որ բազմաթիվ բառեր մեզ արդեն ծանոթ են ուրիշ հին բառարաններից։ Ուրեմն՝ քննվող բառարանի հեղինակը ծանոթ է եղել մեր հին բառարաններին, որոնք և օգտագործել է իր բառգիրքը կազմելու համար։ Նա, սակայն, հին բառարաններից օգտվում է բառիմաստը մեկնելու նպատակով և ոչ թե նրանցից բառերն իրենց մեկնություններով փոխառնելու համար, ինչպես այդ արել են որոշ բառարանագիրներ, հատկապես նրանք, որոնք համահավաք բառարաններ են կազմել։ Այլ կերպ ասած՝ հին բառարանները այս բառգրքի համար բառահոդվածների աղբյուրներ չեն, և հեղինակն ինքն է կազմում իր բառահոդվածները՝ բազմաթիվ դեպքերում գլխաբառն իր ըմբռնումով մեկնելով։ Նման յուրովի, ստեղծագործական մոտեցումով բառարան կազմելը ոչ միայն բառարանագրի գիտելիքների ու հմտությունների արտահայտությունն է, այլև բառարանի նպատակներից բխող անհրաժեշտ պահանջ՝ բառը բացատրել այնպես, որ նրա իմաստը ճշտորեն ու դյուրությամբ ընկալելի լինի ամեն մի ընթերցողի համար։ Հենց դրա համար է, որ անհայտ բառարանագիրը ավելի շատ է դիմում բարբառներին, կենդանի խոսակցական լեզվին ու նրա մեջ

գործածություն ունեցող օտար բառերին։ Լեզվական վիճակով բառարանը խորապես տարբերվում է իր նախորդ բոլոր բառարաններից՝ գլխավորապես մեկնությունների մեջ գործածվող թուրքերեն բառերի առատությամբ։ Թուրքերեն բառերը, որպես համանիշներ, բերվում են հայերեն բառերը հայերին բացատրելու համար։ Այս երևույթը հայ դպրի ցանկությունն ու մեղանչումը չէր, այլ ուղղակի արդյունք էր այն դարը պատմական իրողության, երբ տիրապետող թուրքերեն լեզուն բռնությամբ դուրս էր մղում մայրենի լեզվի հազարավոր բառեր արևմտահայերի լեզվից։ Բառարանը ճիշտ ու անմիջականորեն է արտացոլում ժամանակի արևմտահայերի խոսակցական լեզվի պատկերը։

Բառարանում ոճերը, դարձվածներն ու բառային իմաստ արտահայտող կապակցությունները սակավ են։ Ամբողջ բառացանկի շուրջ 1750 գլխաբառից ավելի քան 300-ի մեկնությունների մեջ օգտագործված են օսմանյան (թուրքերեն և նրան անցած պարսկերեն և արաբերեն) բառեր, որոնք բերվում են հայերեն համանիշների հետ զուգահեռաբար կամ առանձին, որպես գլխաբառի միակ համարժեք։ Ահա մի հատված բառարանի Հ-ի բառացանկից.

Հիլէ. մանրամաղ փոշի։
Հանդէս. տիւան, եօխլամայ։
Հանճար. թապտիր։
Հրեշտակ. էլչի։
Հարուածմ. պատուհաս։
Հրաւիրել. ձեռնել։
Հմուտ. գիտուն։
Հրապարակ. մոյտան, ժողովատեղ։
Հերիսիկոս. հերձւածող։
Հոչակ. չաւ։
Հրեւիլ. խնդալ։
Համոզել. պարշցնել։
Համասեռ. միաճինս։
Հոսել. ցրքել։

196—10

Հակառակ. ինատճի խասմ։
Հրձիմ. հրայրեց։
Հալածել. փախցնել։
Հրաժարել. թօպալ անել։
Հարստահարել· յաղթահարել։
Հիւղ. ալաճուխ։
Հոլովել. գլորել։
Հօտ. սուրու։
Համբար· ամբար։
Հնչել. կանչել։
Հայհոյել. նախատել, քֆրել։
Հեղգ. թամպալ։
Հաճիլ. հավանիլ։
Հերհել. եղդել, փախցնել։
Հենգճել. յայպ դնել։
Հեթեթ. համ։
Հպապակ. առատպուր։
Համբաւ. չաւ։
Հնար. թասնիֆ։
Հերձւածող. բաժանօղ...»[4]։

Մեկնութիւններում գործածված օսմաներեն բառերը, ասացինք, այնպիսի բառեր են, որոնք մեծ մասամբ սովորական են եղել արևմտահայերի խոսակցության մեջ և այսօր էլ այդ բառերի մի մասը դեռևս պահպանվում է հայերենի առանձին բարբառներում։ Այդպիսի բառեր են, օրինակ, ըռանգ (ռանգ, պրսկ. rang), պօլուկ (թրք. bolluk), քութուկ (թրք. kütük), դոնախ (թրք. konak), սազանդար (պրսկ. sazende), մօշակ (թրք. döšek), չայիր (թրք. čayər), չամուռ (թրք. čamur), քուֆր (արաբ. küfr), մեշալ (թրք. miše), դուրպան (արաբ. kurbān), դարիպ (արաբ. garib), ջուբալ

---

4 Մատենադարան, ձեռ. №. 2370, էջ 281ա։ Ձեռագրում բառահոդվածները այնպես չեն դասավորված, ինչպես բերված քաղվածքում, այլ նույն տողի վրա, մեկից հետո անմիջապես սկսվում է մյուսը։

(արաբ. jübbe), ճինս (արաբ. jins), պօստան (պրսկ. bostan), փանճարալ (թրք. penčere), մահլամ (արաբ. malham), ճէյպ (արաբ. jeyb), եարալու (թրք. yaralu, yaralə), չարդախ (թրք. čardak), թէզ (պրսկ. tiz), չադր (թրք. čadər), մոննաթ (արաբ. minnet), գօչ (թրք. koš) և այլն, որոնք հանդիպում են նաև գեղարվեստական գործերում, հատկապես աշուղական ստեղծագործություններում։

Ասացինք, որ թուրքերեն բառեր պարունակող բառահոդվածների թիվն անցնում է 300-ից, որը կազմում է ամբողջ բառացանկի 17 տոկոսը։ Բառարանում այդ կարգի բառերի տոկոսը կնվազի, եթե հաշվի չառնենք այն մեկնությունները, որոնց մեջ թուրքերեն բառերից բացի կան նաև հայերեն բառեր։ Այդ դեպքում, սակայն, բոլոր բառահոդվածներին միատեսակ մոտենալ չի կարելի և տվյալ մեկնության հայերեն կամ թուրքերեն լինելը պետք է որոշել ըստ այն բանի, թե բառը բացատրելու համար նրա ո՞ր համանիշներն են հիմնական համարված՝ հայերե՞ն, թե թուրքերեն։ Օրինակ, եթե բառահոդվածն այնպես է, ինչպես «Լկտի. անամօթ, հաշարի», «Լիճ. ծովակ, կօլ», «Երեխայրի. առաջին պտուղ, թուրվանտայ», «Հայհոյել. նախատել, քֆրել», «Մտերիմ. հաւատարիմ, հալալզատայ», «Յանդեայ. արտ, այգի, պաղչայ», «Տիղմն. չօքակ, չամուռ» և այլն, այսինքն՝ երբ գլխաբառից անմիջապես հետո բերվում է նրա հայերեն համանիշը, ապա այդ մեկնությունն հայերեն է և թուրքերեն բառն օժանդակ դեր է կատարում, որովհետև առանց նրան էլ գլխաբառի իմաստն արդեն բացատրված է։ Հակառակ դեպքում, ինչպես՝ «Սկեմակի. ղըսր, ատերջ» և այլ, մեկնության մեջ գլխավոր դերը պատկանում է թուրքերենին։ Հետևաբար, նման հաշվառումից հետո օտար բառերով մեկնվող գլխաբառերի թիվը կկազմի բառացանկի շուրջ 16 տոկոսը, որը նույնպես բավականին մեծ է։ Հ. Աճառյանը հայերենի թուրքերեն փոխառությունների քննության մեջ գրում է. «Օսմանյան լեզվին գործած ազդեցության աստիճանին համեմատ՝ հայերը կրնանք բաժնել երեք խումբի. առաջին՝ բոլորովին Թրքախոս հայերը, ինչպես Պրու-

սա և այլն։ Երկրորդ՝ այն հայերը՝ որոնք թեև թրքախոս չեն, բայց բավական առատ պաշար մը ունին թրքերենեն փոխ առած բառերու. այսպես են Պոլիս, Զմյուռնիա, Սամսոն և այլն։ Երրորդ՝ այն հայերը, որոնց մեջ թրքերենեն փոխառյալ բառերու թիվը շատ ավելի նվազ է»[5]։ Ըստ այս բաժանման, թուրքերեն բառերի քանակով բառարանը համապատասխանում է հայերի երկրորդ խմբի՝ Պոլսի, Զմյուռնիայի, Սամսոնի և այլ վայրերի հայերի լեզվին։

Միայն թուրքերեն բառերով բացատրվող գլխաբառերն այնքան էլ շատ չեն։ Բառարանի հեղինակն այդ բառերի դիմաց նրանց հայերեն համանիշները չի գրել և թուրքերենին է դիմել՝ ըստ երևույթին մտածելով, որ գլխաբառի իմաստը չի հասկացվի այն հայերի կողմից, որոնք լավ չեն տիրապետում մայրենի լեզվին։ Եթե անունների (գլխավորապես գոյականների) մեկնություններում օսմաներեն և հայերեն բառերն անկախ են իրարից, ապա բայերի մեկնություններում հաճախ թուրքերեն բառերն ուղեկցվում են հայերենի անել, լինել և այլ բայերով՝ հանդես գալով որպես հարադիր բայի բաղադրիչ, ինչպես՝ զապթ առնել, տայանմիշ ըլնալ, շաշմիշ լինել, խրզմաթ այնել, ումէտ տալ, ումէտ ունենալ, ումէտ կտրել, չաւլամիշ անել և այլն։ Սրանցից բացի կան նաև հայերեն ու թուրքերեն բաղադրիչներով կազմված բարդ ու ածանցավոր բառեր՝ տօղխնալ, միաճինս, սէլգնալ, զոֆել, այեխնալ, խապրբեր, պօլութիւն և այլն։

Այս բառարանում էլ կան մեկնություններ, որոնք թեև սխալ չեն, բայց լիովին չեն բացահայտում գլխաբառի իմաստը, օրինակ՝ «Համբարակ. աշտարակ», «Հլու. հարկևոր», «Զօղանջել. անդէպ զրուցել», «Ճոռոմաբան. շատ գիտուն», «Ճախրել. շրջապատել», «Ջրզոդիլ. սիրտն ջուր կանգնիլ», «Ճղճմիլ. մտայուզել կամ ճշդել», «Նկատել. մտաց աչօք տեսանել», «Ուրակ. գոյն», «Նիզակ. ռումբ» և այլն։ Վերջապես կան բառեր (բառաձևեր, հայերեն բառերի նոր իմաստներ), որոնք այսօր ծանոթ չեն տպագիր բառարաններին։ Այդ բառերն են՝ լուսընկալ, բաւիղ, ոգ, բաջառել, լերդողիլ, ըմբոշխնել, ալճնոց, զօչել, խտուտակոտ, թերաբարբ, ակրունեան գօտի, ծրմալ, կտեալ, խապրբեր, կոփել, գունտկներ, կցորդ, կաշկանդ, յառաջարար, ցոլկտուկ, շնորհախօս, գրմխտալ, մարմանդ, յակճիռ, յարկեղ, նախացոյց, մշտացոյց, յաւատ, որթաքաւութիւն, ադէկուկ, չքոտ, հինողակ, սալար, չոքակ, ադէմդիք։

Ի վերջո, պետք է ավելացնել, որ քննված բառարանի շատ բառահոդվածներ հանդիպում են հետագա շրջանի բացատրական բառարաններում։

ԲԱՌՔ ՀԱՅՈՑ

Բառարանը հայտնի է XVI—XVII դարերի բազմաթիվ ձեռագրերով[6]։ Հնագույն թվակիր ձեռագիրը, Մատենադարանի № 1424 ժողովածուն, 1620 թ. ընդօրինակել են Հովհաննես վարդապետը և Պաղշի գպիրը՝ Ղոնեայում։ Այս ժողովածուն բովանդակում է քերականական, մեկնողական, բժշկական, բառարանագրական և այլ բնույթի նյութեր[7]։ Մյուս թվակիր ձեռագրերից № 2370 ժողովածուն գրված է 1624-ին, № 739-ը՝ 1631-ին և № 744-ը՝ 1638 թ.։ Մնացած ձեռագրերից մի քանիսն ընդօրինակված են 1654—1694 թվականներին, մյուսներն անթվակիր են՝ ԺԶ—ԺԷ դարերի։

Շատ ձեռագրերում բառարանն ունի «Բառ է հայոց լեզուէ պարզ և յստակ»[8] խորագիրը, երեք ձեռագրում անվերնագիր

---

5 Հ. Աճառյան, Թուրքերենեն փոխառյալ բառեր հայերենի մեջ.—«Էմինեան ազգագրական ժողովածու», հտ. Գ, Մոսկուա-Վաղարշապատ, 1902, էջ 7։

6 Տե՛ս Մատենադարանի № № 527, 613, 739, 744, 941, 1424, 2331, 2462, 3119, 3207, 5809, 7190, 8554, 9110, Զմմառի № 436, Անկյուրայի № 276, Լոնդոնի № 132, Վիեննայի № 1072, Երուսաղեմի № 2395 և այլ ձեռագրեր։

7 Նկարագրությունը տե՛ս Մատենադարանի ձեռագրացուցակ, հտ. Ա, այուն 548—549։

8 Լոնդոնի № 132 ձեռագրում բառարանի խորագիրն է «Բառք ի հայոց լեզուէ պարզ և բստակ»։ Սա Թերևս բառարանի մեզ հասած ամենահին օրինակը լինի։ Ձեռագրի մասին տե՛ս A Catalogue of the armenian Manuscripts in the British Museum, by *Frederick Cornwallis Conybeare*, London, 1913, p. 312։

է, երեքում էլ վերնագիրը համառոտ է՝ «Բառք Հայոց» և, վերջապես, № 8704 ժողովածուի մեջ կոչվում է «Բառգիրք, որ է լուծումն գրոցս»։ Առաջին խորագիրը, որ հատուկ է համեմատաբար հին գրչագրերին, գալիս է հավանաբար բառարանի նախագաղափար օրինակից, երկրորդը հայտնի է 1664 թվականից (ձեռ. № 527) և վերջին խորագիրն ունեցող միակ ընդօրինակության (ձեռ. № 8704) ժամանակն անհայտ է։

Բոլոր ձեռագրերը, մասնակի տարբերություններով հանդերձ, ներկայացնում են խմբագրություններ չունեցող միևնույն բնագիրը, որը գրեթե միշտ սկսվում է աստուած, աւգուստոս, անգնիհ և ավարտվում է բաղցկեղ, խեստ գլխաբառերով, իսկ № 744 ձեռագրում սկսվում է այլ կերպ՝ աբբայ, աբեննեզէր, ագարակ և այլն։

Մատենադարանի № 1424 ժողովածուի մեջ բառարանն ընդօրինակություն է ոչ թե նախագաղափար օրինակի, այլ մի անհայտ գրչագրի, որ գրված պիտի լինի 1620 թվականից առաջ։ Ավելի կոնկրետացնելու, առավել ևս բառարանի գրության ճիշտ ժամանակը որոշելու համար առայժմ փաստեր չկան։ Իրողությունն այն է, որ բառարանը XVII դարի առաջին քառորդում արդեն հայտնի է եղել հայ մատենագրության մեջ և հավանական է, որ այն կազմված լինի հիշյալ դարից էլ առաջ, առնվազն XVI դարի վերջերին։

Նախորդ՝ անխորագիր բառարանի հետ «Բառք հայոց»-ը հանդես է գալիս գրեթե միևնույն ժամանակ (XVI դարի վերջում կամ XVII դարի սկզբներին) և բառացանկի ու բառամեկնությունների բազմաթիվ աղերսներով կապված է նրա հետ։ Թե բառարաններից ո՞րն է, այնուամենայնիվ, շուտ կազմվել, հետևաբար աղբյուր հանդիսացել մյուսի համար՝ պետք է պարզել բանասիրական ճանապարհով։ Կան կողմնակի փաստեր, որ հիմք են տալիս ենթադրելու, թե բառարաններից առաջինը՝ անխորագիր բացատրական բառարանը, համեմատաբար շուտ է կազմվել և ծանոթ է եղել մյուսի հեղինակին։ Հօգուտ այս ենթադրության նշենք երկու կարևոր հանգամանք.

1. «Բառք Հայոց» բառարանում բառերը համեմատաբար ընդարձակ են մեկնվում, քան անխորագիր բառարանում։ Սովորաբար իրար հետ առնչվող երկու հին բառգրքերից այն է ավելի հին, որը ավելի համառոտ է մեկնում գլխաբառը։ Մինչդեռ մյուս բառարանը, որ կազմվել է հնի օգտագործումով՝ նախ որոշ փոփոխություն է մտցնում բառաշարքի մեջ ապա մեկնություններում գլխաբառի նոր համանիշներ է ավելացնում։ Հակառակ երևույթն էլ, իհարկե, կարող է տեղի ունենալ, բայց դա, ինչպես ցույց է տալիս հայ միջնադարյան բառարանագրության պատմությունը, հազվագյուտ կարող է լինել։ Նորից դիմենք բնագրային համեմատություններին, որոնք իրական փաստերի բացակայության դեպքում կարևոր ու անփոխարինելի միջոցներ են իրողությունը բացահայտելու կամ առնվազն կողմնորոշվելու համար։ Դարձյալ առագրենք առանձին բառահոդվածներ (№ 744 և № 2370 ձեռագրերից).

Բառք Հայոց	Անխորագիր բառարան
Առիք. *մահանայ կամ սապաւ*։	Առիք. *սապաւ*։
Ազատ. *մուսալամ կամ աւճարկատու*։	Ազատ. *մուսալլամ*։
Անդատ. *մէշայ կամ մայրի*։	Անտատ. *մէշայ*։
Ապականել. *մուռտռել կամ աւերել*։	Ապականել. *մուռտռել*։
Գուսան. *խաղասաց կամ սազնդար*։	Գուսան. *սազանդայ*։
Գգվել. *խաղացնել կամ նաւխշամիշ անել*։	Գգլել. *նօղլամիշ անել*։
Գեղարդ. *խռպայ, որ նիզակին երկաթ է սրեալ որպէս սլաք*։	Գեղարդ. *ճիտայ ի երկաթ*։
Երագ. *շուտ կամ թէզ*։	Երագ. *թէզ*։

Էն. *որ է զատիմ կամ կայ կամ մէկ:*	Էն. *այսինքն զատիմ:*
Իրազէկ. *աղէկ մարդի կամ խաւշ գիշի:*	Իրազէկ. *խօշ կիշի:*
Լոռամարգ. *պլտրչին, որ է լոր:*	Լօռամարգ. *պլտրճին:*
Խիճ. *ճար կամ աւազ կամ չանխըլ:*	Խիճ. *աւազ, չախըլ:*
Հակառակ. *ինատչի կամ շարկամ:*	Հակառակ. *ինատճի խասմ:*
Հրատարակել. *պատմել կամ չաւ անել:*	Հրատարակել. *չալամիշ անել:*
Ճապուկ. *նաղլու կամ որ մանիկ լինի:*	Ճապուկ. *նաղլու:*
Մաճառիլ. *ինատ կապիլ կամ կռուիլ:*	Մաճառիլ. *ինատկիլ:*
Ոռդան. *ղրմզն է, կարմիր:*	Ոռդան. *ղրմզ:*
Ուռկան. *սաչմայ կամ վարմ:*	Ուռկան. *սաչմայ:*
Պատճէշ. *մաճարիզ կամ պարիսպն է:*	Պատճէշ. *մաճարիս*
Սեռ. *ազգ կամ ճինս:*	Սեռ. *ճինս:*
Վէպ. *զրոյց կամ ի ղէպ, որ է մաղուլ:*	Վէպ. *զրոյց, մաղուլ:*
Քոռ. *քիլայ կամ կապիճ:*	Քոռ. *քիլայ:*

Այսպիսի օրինակներ բառարաններում շատ կան, բայց բերվածները բավական են մեր ասածը հաստատելու համար: Մենք միտումով վերցրինք թուրքերեն բառեր պարունակող բառահոդվածները, որպեսզի միաժամանակ ցույց տանք, որ «Բառք Հայոց»-ը ոչ միայն համեմատաբար ընդարձակ է մեկնում բառերը, այլև թուրքերեն համանիշներին (երբեմն հենց գլխաբառից հետո) ավելացնում է հայերեն բառեր, որոնք մեր օրինակներում ընդգծված են:

2. Անխորագիր բառարանում հնչյունների սղման դեպքերն ավելի շատ են՝ տաւրտուն, գետկեեր, զասպնոց և այլն, իսկ բարբառային բառերի սկզբում Ո և Ս հնչյուններից առաջ Ը ձայնավորը հաճախ է հանդիպում: Հնչյունական այս առանձնահատկությունները ցույց են տալիս, որ, իրոք, անխորագիր բառարանը լեզվական վիճակով ավելի «ռամկորեն» է, ավելի հարազատ է միջին հայերենին:

Մեզ համար այստեղ բառարաններից հնագույնը որոշելը, թերևս, առաջնահերթ կարևորություն չունի, մանավանդ, որ այդ բառարաններն ստեղծման ժամանակներով իրարից շատ հեռու չեն: Կարևորն այն է, թե դրանցից ո՞րն է մյուսի համար աղբյուր եղել: Վերևում նշված հանգամանքները, կարծում ենք, համոզում են, որ անխորագիր բառգիրքը քննվող բառարանի աղբյուրներից մեկն է:

Արդ տեսնենք, թե բացի այդ բառարանից մատենագրական ինչ ուրիշ աղբյուրներից է գոյացել «Բառք Հայոց»-ի բառացանկը: Հիշենք, որ մի ձեռագրում (№ 8704) բառարանը բերվում է «Բառգիրք, որ է լուծումն գրոցս» խորագրի տակ: Եթե բառարանը «գրոց» բառեր է բացատրում, նշանակում է այն միայն մի բնագրի առընթեր մատենակից բառգիրք չէ և կազմված է զանազան բնագրերում գործածվող բառերից: Բայց որո՞նք են, մոտավորապես, այդ բնագրերը: Առաջին հայացքից թվում է, թե այդ բնագրերը հենց № 8704 ձեռագրում առկա նյութերն են, այսինքն՝ «Հարցմունք և պատասխանիք ի Հին և ի Նոր Կտակարանաց», «Յաղագս Դ աւետարանչացն», «Ամոնայ Աղէքսանդրացւոյ Մեկնութիւն համաբարբառի», «Վանական վարդապետի Համեմատութիւն Կտակարանաց» և այլն[9]*:*

Ստուգումներից պարզվեց, որ հիշյալ ձեռագրի բոլոր նյութերից էլ բառեր կան բառարանում և կազմում են բառամթերքի մեծ մասը: Այդ բառերը գործածված են նաև Աստվածաշըն-

9 Ձեռագրի նկարագրությունը տե՛ս Մատենադարանի ձեռագրացուցակ, հ. Բ, սյուն 797:

չում և այլ կրոնական բովանդակության բնագրերում։ Սակայն բառարանում քիչ չեն նաև այն բառերը, որոնք չեն հանդիպում ձեռագրում հիշատակված նյութերում և Աստվածաշնչում։ Օրինակ՝ բազպան, գերբ, դուքս, երեսանակ, կմայեկ, հակակ, հանիկ, մանուածաւալ, մամոարմատ, շաղկապ, ջոկամանել և այլ բառեր գործածված են ոչ թե վերոնշյալ բնագրերում, այլ Թրակացու քերականության մեջ, Հարանց վարքում, Մաշտոցում, Լամբրոնացու, Վարդան Այգեկցու, Խոսրովիկի, Փիլոնի, Մագիստրոսի, Վարդանի, Նարեկացու և այլոց երկերում։ Որոշ քանակի բառեր էլ՝ երեսազարդ, թաշնաճ, կռնել, հանդակ, հումերել, մետուր, շիրիկ, որկորագէշ, սաւտ, փողան և այլն, որոնց աղբյուրները դժվար է որոշել, մասամբ պատկանում են խոսակցական լեզվին։ Բառարանի հեղինակն օգտվել է նաև ուրիշ հին բառարաններից, մասնավորապես «Բառք քերթողականք»-ից և նրա օրինակով էլ, հավանաբար, կազմել է իր ընդհանուր բնույթի բացատրական բառգիրքը։

Այս բառգիրքն էլ նախորդի նման իր կազմության մեջ նոր բան չունի, բառաշարքն անկանոն է։ Միայն № 744 ձեռագրում բառերը, ի տարբերություն մյուս բոլոր գրչագրերի, դասավորված են առավել հետևողական այբբենականությամբ։ Սակայն բառաշարքի մշակումն առաջին անգամ կատարվել է ոչ թե № 744 ձեռագրում, այլ նրա մայրօրինակում, ըստ հիշյալ ձեռագրի գրիչ Հովհաննեսի՝ հիշատակարանում հաղորդած այն տեղեկության, թե ձեռագիրն ընդօրինակված է լավ նախօրինակից։

Բառարանում բառացանկեր կան Ա—Ք բոլոր տառերով։ Բառերի քանակն ըստ բառացանկերի այսպես է. Ա—307, Բ—121, Գ—108, Դ—100, Ե—85, Զ—154, Է—35, Ը—103, Թ—51, Ժ—22, Ի—35, Լ—48, Խ—122, Ծ—42, Կ—165, Հ—140, Ձ—19, Ղ—6, Ճ—40, Մ—138, Յ—105, Ն—75, Շ—47, Ո—73, Չ—35, Պ—125, Ջ—54, Ռ—14, Ս—112։ Վ—97, Տ—100, Ր—8, Ց—25, Ւ—3, Փ—37, Ք—46։

Մեկնությունների մեջ «Բառք Հայոց»-ն էլ է օգտագործում թուրքերեն բառեր մոտ 500 բառահոդվածներում, որոնցից 200-ը վերցված են անխորագիր բառարանից։ Բառարանի ծավալի համեմատ թուրքաբանություններն զգալիորեն քիչ են, քան նախորդ բառարանում, կազմում են ընդամենը 13 տոկոս։ Ընդ որում թուրքաբառ մեկնությունների մեջ են հաշվված նաև նրանք, որոնք պարունակում են հայերենին, հիմնականում բարբառներին ու խոսակցական լեզվին անցած ու արմատավորված այնպիսի թուրքերեն բառեր, որոնց որոշ մասը արաբական կամ պարսկական ծագում ունի, ինչպես՝ փէշքէշ, հալալ, զսբր, խալի, բաղչա, զնջիլ, քօշա, մէշա, ջիգար, մայմուն, մահանայ, դովլաթ, չախմախ, չամուռ, հալպաթ, բոլուկ, խաթուն, կոտոշ, նազիր, թէղ, մուննաթ, փահլեվան, բալքի, աշքարայ, ղոչ, մասղարայ, քութուրդ, տուզախ, դամաղ, քութուկ, ղասապ, խարճ, յավաշ, թամբալ, սուրու, մեյդան, չայիր, մաղարայ, վազիր, ջինս, խապար, հազր, փարտայ, գոզալ, չարտախ, յարա, չատր, բոյ, սոյ և այլն։

Բառարանների թուրքերեն բառերով ողողված լինելը նույնպես վկայությունն է այն բանի, որ դրանք գրվել են այն ժամանակ, երբ հայ մատենագրությունը դեռևս անկման շրջան էր ապրում, թուրքերի տիրապետության պայմաններում ուժեղանում էր նրանց լեզվի ազդեցությունը, և թուրքերեն բառերը հախուռն կերպով մուտք էին գործում հայերենի մեջ։ Եվ եթե «Բառք Հայոց»-ի մեջ թուրքերեն բառերի քանակն զգալիորեն նվազում է, ապա դա հետևանք է այն բանի, որ բառարանը կազմվել է անխորագիր բառարանից հետո ու նրա հիման վրա, այն ժամանակ, երբ հայ մատենագրությունը աստիճանաբար սկսում էր աշխուժանալ։

Քննվող բառարանում էլ բոլոր գլխաբառերը չէ, որ ճիշտ ու անթերի են մեկնվում. ուղիղ մեկնությունների կողքին կան գլխաբառն իր երկրորդական իմաստով կամ փոխաբերական իմաստով, այլև մակերեսորեն ու նույնիսկ սխալ մեկնելու դեպքեր։ Օրինակ՝

Աշխարհի սիւմ. լեռներն են։
Աղաւաղել. բարձրցնել։
Դժուար. դիւրին կամ դալար։

Գազան. պատառող։
Գուպար. նմանակից։
Աշակերտ. արբանեակ։
Երիտասարդ. երեսուն տարոյ կտրիճ։
Ջետեղել. ճապաղել։
Ջիստ. ծիծ։
Կիր. խորհուրդ. կամ քիրաճին այլ ասէ։
Զաւեղ. մորթվիլ։
Մարգարէ. ծածուկ բանից գիտող։
Յաւդ. ո՛չ երկին և ո՛չ գետին, երկուց մէջն կամ հաւայ։
Փրրթիլ. բացուած վարդն է։
Վարանի. պուտու կամ ճանփայ պահող[10]... եւ այլն։

Մեկնութիւնների մեջ ու բառաշարքում կան նոր բառեր (բառաձևեր), նոր ու անծանոթ իմաստներ, ինչպես՝ աղաւաղել, անցականք (անց), աջորդել, արօտ, բարձք, բաղական, բանջար, բնաբարոյ, քիթրայ (գաղէխէժ), կուշռուվիլ, գումարել, տաւարատուն (գոմ), կուվանդայ (գուսան), դարմանել, դմնի, թօլ (դոյլ), եղնայ, դրջալ (դրջլակ), ամօթատեղ (հրանք), երիզապինդ, երբուծ, ստաղրոյց (զօշաքաղ), դանդարտ, ընդմեր, ինքնաթեմ, լաջ, խարազդեաց, խաւրաստ, ծարակ (ծագք), խաւրօտ, երկի ժամ (խաղաղական), խրթի, խանձրեալ (խորտիկ), կոբիլ, հոմերել, գաւազդայով մարդ (հսկայ), հրաշազան, մանիկ (ճապուկ), յիշատակադպիր, դուղի (որջ), փոթորկէ, քաղք և այլն։ Իհարկե, այդ բառերից ոչ բոլորը կարող են ձևի կամ իմաստի տեսակետից անվերապահորեն որպես վավերական ընդունվել։ Եթե բառարանը կազմողի մակարդակն էլ նկատի չունենանք, ապա միայն գրչագրական եղծումներն էլ բավական են, որ հայերենի շատ սովորական, գործածական բառեր անճանաչելի դառնան ու որպես յուրաձև ինքնուրույն բառ հանդես գան բառարաններում, ինչպես վերևում բերված օրինակներից մեկում՝ դարաւ-

10 Մեկնութիւնը ցույց է տալիս, որ գլխաբառը վրիպակ ունի, պետք է լինի դարանի։

նի-ն դարձել է վարանի։ Բայց հեշտ չէ բացատրել, օրինակ, թե արդյո՞ք իրական է աղաւաղել բառի բարձրացնել իմաստը, կամ թե ինչո՞ւ գուպար-ը մեկնվում է նմանակից և այլն։

«Բառք Հայոց» բառարանն էլ իր հերթին աղբյուր է ծառայել հետագայի բացատրական բառարանների, հատկապես «Բառգիրք Հայոց»-ի համար, որը այդ բառարանից վերցրել է շուրջ 2000 բառ, այսինքն՝ իր ամբողջ բառամթերքի մոտ մեկ քառորդ մասը։ Ընդ որում «Բառգիրք Հայոց»-ը ընդունել է քննվող բառարանի գրեթե այն բոլոր բառահոդվածները, որոնք աղատ են օտարաբանություններից։

Վերևում քննված բացատրական բառարաններն օտարաբանություններով ողողված, լեզվական տեսքով անհամադեպ, բացառիկ օրինակներ են հայ բառարանագրության պատմության մեջ, սակայն ոչ պատահական օրինակներ, այլ ծնունդ են հայ ժողովրդի ու նրա մշակույթի համար չափազանց աննպաստ պայմանների։ Բառամեկնությունների մեջ օտարաբանությունների առատությունը պայմանավորված է նաև բառարանները կազմողների կրթական մակարդակով, որ, անշուշտ, ցածր է նախորդ ժամանակների բառարանագիրների մակարդակից։ Բնակչության աոօրյա մշակութային պահանջմունքները բավարարելու նպատակով բառարաններ և այլ մատյաններ գրելուն երբեմն ձեռնարկում էին ազգային լեզվի ու մշակույթի պահպանման համար մաքառող այնպիսի մտավորականներ, որոնք իրենց հայրենասիրական ձգտումներին համեմատ գիտելիքներ չունեին և նույնիսկ լավ չէին տիրապետում մայրենի լեզվին։ Այդ էր այն մյուս պատճառը, որ հայերեն ապախտ, առիթ, դիւթ, դատիկոն, թաշկինակ, ժպիրհ, խծրծել, կարապետ, հրովարտակ, նաւաստի, ոռճիկ և բազմաթիվ այլ բառեր մեկնվում են թուրքերեն բառերով։ Բարեբախտաբար, բառարանների օտարաբանություններով ողողելու արատը շուտ վերացվեց. XVII դարի երեսունական թվականներից, ինչպես տեսանք նախորդ գլխում, երևան եկան Աստվածաշնչի, այլև ուրիշ բառարաններ, որոնց մեջ վերականգնվեց հայկաբանությունը։ Դա արդեն հայ միջ-

նադարյան բառարանագրության վերջին շրջանն էր, որ սկըսվեց մատենագրության ընդհանուր վերելքի հետ միաժամանակ։

ԲԱՌԻ ՆԱՐԵԿԱՑԻՈՑՆ

Գրիգոր Նարեկացու երկերը, մասնավորապես «Մատեան ողբերգութեան» պոեմն ու տաղերը հայ մշակույթի մեջ աչքի են ընկնում ոչ միայն բովանդակությամբ, այլև ձևով՝ յուրահատուկ լեզվով ու ոճով։ Մեծավաստակ հայագետ Մ. Աբեղյանը Նարեկացու մատենագրության իր համակողմանի ու խոր գիտական քննության մեջ գրում է. «Այսպիսի մեծ երևակայություն ունեցող բանաստեղծին (Նարեկացուն— Հ. Ա.) բնականաբար բավականություն չպիտի տար մեր լեզուն, որ զարգացած էր պատմության, ներբողյանի ու մեկնաբանության համար և արդեն անգույն ու վերացական էր դարձած։ Այս պատճառով և նա ստեղծում է մի նոր, ինքնատիպ լեզու, հարուստ ինքնահնար դարձվածներով և բառերի հաճախ նուրբ ու բազմիմաստ կիրառությամբ։ Եվ որ գլխավորն է՝ նա վերացական դարձած ու ճարտասանական լեզուն դարձնում է թանձրացած ու գունավոր նկարեն, քանի որ նա ամեն ինչ մտածում և զգում է պատկերներով։

Սակայն ճարտասանությունը, այն էլ դպրոցական ճարտասանությունը, դեռ նրա երկի մեջ բավականի տեղ է բռնում։ Նա առաջաբանների մեջ երբեմն նույնիսկ հայտնում էլ է այդ, թե աշխատում է զանազան ճարտասանական ձևեր գործածել, որպեսզի ոճին բազմազանություն տա։ Այդ հին ճարտասանությանն արդեն հատուկ էր համանիշ բառերի և արտահայտությունների կուտակություն, ինքնաստեղծ բառերի ու երկար պարբերությունների սեր, անկանոն ու բարդ, արտասովոր ու նորաձև բացատրության հակում, որ Նարեկացու երկի մեջ ևս տանում է դեպի մթնությունն և երկարաբանությունը։

Գրիգոր Նարեկացու տաղերի մեջ ևս երևում է իր դարի քերթողության վատ ազդեցությունը։ Նրա արվեստն այդ երգերի մեջ հաճախ հետևակ և վերացական է, ինչքան էլ դրանց

ոտանավորներն իբրև այնպիսին զեղեցիկ են։ Ջորս-հինգ ընտիր տաղերի մեջ անգամ երբեմն հորինվածքը շատ մութն է ինքնահնար կամ անգործածական բառերով, կամ թե ժամանակի ճաշակի համեմատ խրթնաբանությամբ, արվեստական կնճռոտ ու խորհրդավոր արտահայտություններով»[11]։

Ուրեմն՝ ինքնահնար բառեր ու դարձվածներ, բառերի բազմիմաստ ու նուրբ կիրառություն, համանիշ բառերի ու արտահայտությունների կուտակումներ, բազմապիսի ճարտասանական ձևեր, հաճախ վերացական մտքեր, երկար պարբերություններ, խրթնաբանություն, արվեստական կնճռոտ ու խորհրդավոր արտահայտություններ, հորինվածքի մթություն, բազմազան ոճ և այլն,— այս առանձնահատկություններով օժտված Նարեկացու ստեղծագործությունները, որ այնքան լայն մասսայականություն ունեին, դժվար էին հասկացվում։ Եվ որքան ձգվում էր հեղինակին ու ընթերցողներին բաժանող ժամանակահատվածը, այնքան ավելի էր մեծանում Նարեկացուն հասկանալու դժվարությունը։

Նարեկացու լայն մասսայականություն ունեցող երկերը, մասնավորապես Նարեկը, ընթերցողներին դյուրըմբռնելի դարձնելու նպատակով, սկսած XIII դարից երևան են գալիս վերացականություններն ու խրթնաբանությունները, անհասկանալի բառերն ու դարձվածները պարզ ու հասարակ ձևով բացատրող համառոտ լուծումներ ու բառարաններ։

XVII դարի վրեջին քառորդում հայ մատենագրության մեջ մտավ Նարեկացու քերթությունների բառերն ու դարձվածները բացատրող առաջին հեղինակային բառարանը, որը, անշուշտ, մշակութային կարևոր դեր խաղաց իր նպատակադրությամբ։ Այդ բառարանը կքննվի ստորև։ Բայց մինչ այդ անհրաժեշտ է ընդհանուր առմամբ ծանոթանալ Նարեկի լուծումներին, որովհետև դրանց հետ անմիջականորեն կապված է քննելի բառարանը։

Հայերեն բազմաթիվ ձեռագրերում պահպանվել են Նարե-

11 Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք առաջին, Երևան, 1944, էջ 554—555։

կի զանազան լուծումներ՝ «Բացայայտութիւն բանից սուրբ Հօրն մերոյ Գրիգորի Նարեկացւոյ», «Լուծմունք Նարեկացւոյն» և այլ խորագրերով[12]։ Այդ լուծումների հեղինակները անհայտ մատենագիրներ են, որոնց մասին ձեռագիր աղբյուրներում տեղեկություններ չկան։ Հ. Նալյանը Նարեկի լուծումները վերագրում է 12-րդ դարի հեղինակ, կաթուղիկեայ Քղթոց ու այլ գործերի մեկնիչ Սարգիս Շնորհալուն ու ներսես Լամբրոնացուն[13]։ Սակայն այս վերագրումը մատենագրական ու բանասիրական հավաստի փաստերով չի հիմնավորվում։ Գ. Ավետիքյանը Նարեկի հիշյալ լուծումների լեզվա-ոճական առանձնահատկությունների հիման վրա համոզիչ կերպով ցույց է տալիս «թէ յիշատակեալ լուծմունքն ո՛չ Սարգսի է մեկնչին, և ո՛չ Լամբրօնացւոյն»[14]։ Ավետիքյանին համամիտ է Գ. Զարբհանալյանը։ Ուրեմն Նարեկի լուծումների հեղինակների հարցը դեռևս անլուծելի է մնում։

Նարեկի լուծումները սերտորեն կապված են միմյանց հետ. հին լուծումները հիմք են եղել նորերի համար, որոնք փաստորեն այդ հին, համառոտ լուծումների ընդարձակ խմբագրություններն են։ Ըստ ծավալի լուծումները կարելի է բաժանել երեք հիմնական խմբի։ Առաջին խումբը կազմում են հնագույն, համառոտ լուծումները, որոնց ամենահին ընդօրինակությունները վերաբերում են XIII դարին[15]։ Երրորդ խմբի

12 Մատենադարանում պահվում են Նարեկի լուծումներ բովանդակող 21 ձեռագրեր՝ № № 59 (ԺԳ), 3170 (ԺԳ), 5364 (1363 թ.), 1152 (1367 թ.), 1980 (1391 թ.), 1573 (1413 թ.), 3275 (1494 թ.), 9283 (1633 թ.), 3117 (1661 թ.) և այլն։

Նարեկի լուծումներ են գրել նաև Հ. Նալյանը («Մեկնութիւն աղօթից և ներբողինաց սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն», Կոստանդնուպոլիս, 1745) և Գարբիել Ավետիքյանը («Նարեկ աղօթից, համառօտ և դիւրաւոր լուծմամբք», Ա տպ. Վենետիկ, 1801, Բ տպ. 1827)։ Գ. Ավետիքյանը համառոտակի բնութագրում է Նարեկի հին լուծումները։ Նարեկի լուծումների մասին խոսում է նաև Գ. Զարբհանալյանը (տե՛ս «Հայկական հին դպրութիւն», Վենետիկ, 1897, էջ 546—547)։

13 Տե՛ս Հ. Նալյան, նշվ. աշխ., էջ 17։

14 Գ. Աւետիքեան, Նարեկ աղօթից, Վենետիկ, 1827, էջ է։

15 Տե՛ս Մատենադարանի № 1573 և այլ ձեռագրեր։

մեջ մտնում են ընդարձակ լուծումները[16], իսկ երկրորդ խմբի լուծումները[17] միջին դիրք ունեն մյուս երկու խմբերի միջև. սրանք (բառերի ու դարձվածների քանակով ու նրանց լուծումներով) մեկնչև ՃԳ գլուխը հարազատ են համառոտ լուծումներին, իսկ այնուհետև մոտենում (և առանձին դեպքերում գրեթե նույնանում) են ընդարձակ լուծումներին։ Երկրորդ խմբի լուծումները ծագում են հին լուծումներից, իսկ ընդարձակները հիմնվում են այդ երկու խմբի լուծումների վրա միաժամանակ։

Համառոտ լուծումներում բառերի ու դարձվածների թիվը մեծ չէ և, օրինակ, ԺԷ, ԻԲ, Ի, ԿԸ, ԿԹ, ՀԳ, ՀԶ, Զ, ՁԱ, ՁԲ, Ձի և այլ գլուխներում հասնում է նվազագույնի՝ 1—3-ի։ Մեկնվող միավորների քանակով ընդարձակ լուծումները շատ են տարբերվում համառոտներից. հաճախ երկու և նույնիսկ ավելի անգամ գերազանցելով դրանց։ Ընդ որում, նշենք, որ համառոտ լուծումներն ամբողջությամբ՝ նույն ձևակերպումներով, միշտ մտնում են ընդարձակների մեջ։ Այսինքն՝ ընդարձակ լուծումները նույն համառոտ լուծումներն են՝ հավելված նոր բառերով ու բացատրություններով։ Այդ նոր ավելացումները մեծ մասամբ առանձին բառեր են։

Լուծումների ցանկերը սովորաբար բերվում են Նարեկի համապատասխան գլուխներից հետո, բայց կան ձեռագրեր (Մատենադարանի № 5364 և այլ), որոնց մեջ այդ կարգի ցանկերն իրար են հավաքված և կազմում են ամբողջական մի բնագիր՝ երևմիա Մեղրեցու «Լուծումն բառից յԱստուածաշունչ գրոց» բառարանի նման։

Լուծումները (հատկապես համառոտ) հիմնականում իմաստաբանական նշանակություն ունեն. պարզ ու հասկանալի լեզվով (երբեմն օտար ու բարբառային բառերի գործածությամբ) մեկնվում է Նարեկի անհասկանալի ու դժվարիմաց դարձվածների, ոճային կապակցությունների և առանձին բա-

16 Տե՛ս Մատենադարանի № 9563 և այլ ձեռագրեր։

17 Տե՛ս Մատենադարանի № 5364 և այլ ձեռագրեր։

ների իմաստը։ Ընդարձակ մեկնությունները հաճախ այնքան են հագեցված առանձին բառերով, որ նրանց ամբողջ հատվածներ պարզապես բացատրական բառարանի բառացանկերի են նմանվում։ Վերցնենք, օրինակ, Նարեկի ԻԵ գլխի լուծումներն ըստ Մատենադարանի № 9563 ձեռագրի.

«Անցիցն ի սմանէ վերաճառելոյդ՝ զնախաճառելոյն ասէ։ Ձեղանակ՝ գոճ։ Կոճակօք՝ թրնդեզօք ալեօք։ Տատանեալ՝ յարահրեալ։ Հինից՝ հեծելոց արշաւելոց։ Զուգաձայնել՝ միաձայնել։ Զուէր՝ գնացի։ Դոյզն՝ փոքր։ Կասկած՝ ահ։ Արկածից՝ աղճից։ Խորոց՝ բաժանումն։ Յերեք ալեանն՝ յերեք դիմաց հողմոց։ Թևոցն՝ թևն թևն է։ Քայքայեցաւ՝ ի վայր անկաւ կամ ցրուեցաւ։ Կայմն՝ սարին է, այսինքն սիւնն կամ որ ի ծայր սայրոյն է խոտորնակ ձողն որ պարզէ զկտաւն։ Թռչարան՝ արմիոնն է։ Առասանք ձգեց՝[18] չուանքն։ Տեսարան՝ հայելին է որպէս նաւապետն նայի և դիտէ. և կամ նշան նաւին. ըստ այնմ զոր նաւ մի որ ունէր զդէոս կորացւոց նշանն[19]։ Ապաւանդակին՝ հաստ ճոպանն է, զոր մալխոյ[20] ասեն։ Լուծ[ք] տուարք ամոլիցն՝ ¯ր հաստ փայտ է յորո[յ] վերայ նաւն է և քիթն կից են ի միմեանս փայտքն[21]։ Սամիքն՝ զծակ փայտքն ասէ, որ ղեկն ցցեալ է, զղեկն[22]։ Լաստ հիմանն՝ զատակս նաւին ասէ. կամ զնաւն բոլորովին։ Սուզան՝ կորեան։ Զուգն յամր՝[23] զգնացիցն ասէ։ Զատին հաստուած՝ յողնափայտերոյն է[24]։ Յուշատեցաւ՝[25] բաժանեցաւ։ Պատրսպարան՝ ամրութիւն։ Դոգ անփոփումն՝[26] զմէջ նաւին ասէ։ Խելք շրթանցն յեզերոց՝ բերան և շուրթն նաւին է. ըստ այնմ Յիսուս ննջէր ի

18 Ձեռ. № 1573, ձգողական (Նարեկ, բան ԻԵ), առասանքն ձգողակա[նացն]։

19 Նույն տեղում,—զդէոսկուրացւոց նշանն։

20 Նույն տեղում,—հաստ ճօպանն է զոր մալուխ ասեն։

21 Նույն տեղում,—և ի քիթն ի կից են ի միմեանս։

22 Նույն տեղում,—ուր ղեկն ցցեալ է. և կամ զղէկն ասէ։

23 Իմա՛ յարմարութիւն: Տե՛ս Նարեկ, բան ԻԵ։

24 Ձեռ. № 1573, մածուածք ողնափայտին։

25 Իմա՛ յօշոտեցաւ: Տե՛ս Նարեկ, բան ԻԵ։

26 Ձեռ. № 1573, զոգ ամփոփմա[ն]։

խելս նաւին։ Ոստեաւ. պրծաւ։ Պաղպաջունք բազմականացն՝ գեղեցկութիւնք, որ ի նաւին լինին. տախտակքամած աթոռք. և բազմականք[27]. և այլ ինչ։ Վանդակապետին՝[28] որ ի մէջ նաւին միջակ լինի ածած. և բաժանած տուն ի տանէ[29]։ Յատակեցաւ՝ անկաւ որ տատակն երևեցաւ։ Գահաւորակին՝ զմահճացն ասէ։ Շփոթեցաւ՝ խառնակեցաւ։ Անջատեցան՝ բաժանեցան։ Հեղոյսք՝ հարմունք։ Արգասիք իւրին՝ զօրութիւնք։ Դեգերեալ ողբ՝ ժրնկռկեալ[30]։ Ազդելոյ՝ շարժմանէ։ Խողխողեալ՝ կտրատեալ. բեկտորք տախտակացն է։ Թաղծանօք՝ տխրանօք երեբայ։ Աշխարէր՝ ողբալ[31]։ Վրիպեսցէ՝ սխալէ։ Աղար[տե]ալ՝ փրշրեալ։ Իսկ միսս[32] հասեալ յատակս՝ Ղազար։ Յանքոյք՝ անվրրդով. անխռով. անսասան։ Իցէ՝ լինի։ Արդեօք՝ իսկի։ Զյոքնաբախիծ՝ զբազմատխուր։ Զյաւէտ խարխարեալ՝[33] բեկտեալ։ Հանդերձեալ՝ պատրաստեալ։ Ապաքէն՝ նախդիր է։ Կազդուրեալ՝ հաստատեալ։ Ժխտալ՝[34] ուրախացեալ ծիծաղել։ Դուժիս՝ բօթոյս։ Մուրհակ՝ զպայլայ։ Անձկութեան՝ յոյժ փափագմամբ։ Հերքել՝ մերժել։ Մշտասառոյց եղանակ՝ զձմռան ժամանակն ասէ։ Նկատել՝ տեսանել։ Ըղձալի՝ փափագելի։ Համառօտելն՝ շուտով վաղվաղակի հասանեմք յորում ակն ունիմք։ Յաւանդ՝ ի պահ. ամանաթ։ Առհաւատչեայ՝ չաշնի. գրաւական։ Յիսկութեան՝ ի ճշտութեան։ Պսակեալ՝ բոլորեալ։ Այո՝ հայ. ճիշտ»[35]։

27 Նույն տեղում,—տախտակամած աթոռք և մահիճք։

28 Իմա՛ Վանդակապատին: Տե՛ս Նարեկ, բան ԻԵ։

29 Ձեռ. № 1573, միջակ։

30 Իմա՛ դեգերեալ ողբալ։ Ձեռ. № 1573, ժրնկռեալ։

31 Իմա՛ աշխարել: Տե՛ս Նարեկ, բան ԻԵ։

32 Իմա՛ միսս։ Տե՛ս Նարեկ, նույն տեղում։

33 Իմա՛ խարարեալ: Տե՛ս Նարեկ, նույն տեղում։

34 Իմա՛ ժպտեալ: Տե՛ս Նարեկ, նույն տեղում։

35 Մատենադարան, ձեռ. № 9563, էջ 83ա—84ա։ Այս լուծումը № 1573 և № 5364 ձեռագրերում ավելի համառոտ է. առաջինում ավարտվում է դեգերեալ, երկրորդում՝ համառօտելն բառերի մեկնություններով։ Իսկ մինչև այդ բառերը, հիշյալ համառոտ լուծումներում բացակայում են նաև մի շարք մեկնություններ։

Նարեկի ընդարձակ լուծումների վերևում բերված հատվածի՝ չփոթեցաւ, հեղոյք, խողխողեալ, վրիպեալ, հանդերձեալ, ապաքէն, կազդուրեալ, մուրհակ, նկատել, ըղձալ, համառօտ, առհաւատչեայ, իսկութիւն, պսակ, իսկ առանձին դեպքերում նաև այլ մեկնություններ չկան համառոտ լուծումների մեջ։ Այժմ տեսնենք, թե ինչպիսի բառարաններ են գրվել Նարեկացու երկերի վերաբերյալ։

Մեզ հայտնի են Նարեկացու ստեղծագործություններին վերաբերող բառարանների ընդամենը հինգ ձեռագրեր, որոնցից երեքն են բովանդակում մեր քննության առարկա բառարանը։ Մյուս երկուսը ներկայացնում են XVIII դարում կազմըված տարբեր բառարաններ։ Դրանցից մեկը՝ «Նշանակութիւնք խրթին բառից, ինչ մատենիս»[36] խորագրով, ընդգրկում է բավականին կանոնավոր այբբենականությամբ դասավորված շուրջ 600 բառ ու դարձված։ Բառամեկնություններից հետո նշվում է, թե տվյալ բառը կամ դարձվածը Նարեկի որ գլխում ու որ հատվածում է գործածված, օրինակ՝ «Ալետանջ հողմ. տալըս հանօղ հով, ԾԴ, 3», «Դանդաչել. գուրգուրալ, շարժիլ, ԺԹ, 3» և այլն։ Թ-ի բառացանկից սկսած նշվում են միայն գլուխները։ Այսպես՝ «Թելադիր. յորդորող, ԽԸ», «Խլրտումն. ի տեղացն շարժիլ, Զ, Է», «Պուրակ. մէշա, քոլ, օրմանըղ, Թ», «Տխրատեսակ. մթնագոյն՝ սևագոյն բանկ, ԼԴ, ՂԳ» և այլն։ Մեկնությունների մեջ, ինչպես երևում է բերված օրինակներից էլ, գործածվում են բազմաթիվ թուրքերեն բառեր։ Մյուս բառարանը, որի հեղինակը ծանոթ է եղել առաջինին, պահպանվել է դարձյալ մի գրչագրով[37]։ Այս բառարանը՝ «Բառք սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն», պարունակում է 1750 բառ։ Մեկնությունները, ինչպես նախորդ բառարանում, հագեցված են թուրքերեն բառերով։

Անցնենք մեր հիմնական նյութին՝ «Բառք ի գրոց սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն» բառարանին, որն արժեքավորն է Նարեկացու երկերին նվիրված բառարաններից և մշակութա-

[36] Տե՛ս Մատենադարանի № 6715 (ԺԸ դար) ձեռագիրը։

[37] Տե՛ս Մատենադարանի № 3996 (ԺԹ դար) ձեռագիրը։

յին կարևոր նշանակություն ունի։ Ասվեց, որ այս բառարանը մեզ հասել է երեք գրչագրով։ Այս գրչագրերը առանց զգալի տարբերությունների են ներկայացնում բառարանի բնագիրը։ Առաջինը՝ Մատենադարանի № 3286 ժողովածուն[38], XVII դարի մի անթվակիր ձեռագիր է, որը բովանդակում է մեզ ծանոթ մի շարք հին բառարաններ և այլ նյութեր։ Մյուս ձեռագիրը՝ № 3172 ժողովածուն[39], որ նույնպես բառարանագրական և այլ նյութեր է բովանդակում, 1677—1695 թվականներին ընդօրինակել է Սիմեոն գրիչ Տաթևացին։ Երրորդ՝ № 450 ժողովածուն[40], որ բովանդակությամբ նման է նախորդ երկուսին, գրված է 1692 թ. Երևանում, Գրիգոր Երևանցու և անանուն գրիչների կողմից։ Հիշյալ երեք ձեռագրերից բառարանի բնագիրը անեղծ է միայն № 3286-ում։ Մյուս երկու գրչագրերը թերություններ ունեն. № 3172-ում կան պատռված թերթեր, անընթեռնելի գեղաթափ տեղեր, իսկ վայելուչ, դյուրընթեռնելի գրված № 450 ձեռագրում բացակայում են Տ—Ք տառերի բառացանկերը։

Ո՞վ է բառարանի հեղինակը։ Առաջին ձեռագիրը (№ 3286), որի սուղ հիշատակարանների բովանդակությունը՝ գրչի կողմից իր աշխատանքի ավարտման առթիվ աստծուն փառք հղելն է միայն, հարցին պատասխան չի տալիս։ Երկրորդ ձեռագրի (№ 450)՝ «Գծեցաւ ի թուին ՌՃԽԱ, ներամսում յուլիսի, ձեռամբ յոգնամեղ Գրիգորիսի Երևանցւոյ» (էջ 121ա) այս միակ սեղմ հիշատակարանը գրողը, ինչպես տեսնում ենք, գրիչն է և ոչ թե բառարանի հեղինակը։ Վերջապես մյուս (№ 3172) ձեռագրի երկու համառոտ հիշատակարաններից հայտնի Սիմեոն Տաթևացին դարձյալ հեղինակ չէ, այլ ընդօրինակող գրիչ։ Նշանակում է բառարանի հեղինակը հայտնի չէ։ Ապա, այս երրորդ ձեռագրի հիշատակարաններում գըր-

[38] Նկարագրությունը տե՛ս Մատենադարանի ձեռագրացուցակ, հտ. Ա, սյուն 981։ Բառարանը զետեղված է ձեռագրի 271ա—292ա էջերում։

[39] Նկարագրությունը տե՛ս Մատենադարանի ձեռագրացուցակ, հտ. Ա, սյուն 955։ Բառարանը զետեղված է ձեռագրի 189ա—215բ էջերում։

[40] Նկարագրությունը տե՛ս Մատենադարանի ձեռագրացուցակ, հտ. Ա, սյուն 322։

չության տարբեր տարեթվեր են նշվում. առաջինում՝ ՌՃԻՉ (էջ 188բ) և երկրորդ հիշատակարանում՝ ՌՃՆԴ (էջ 216ա)։ Եթե նույն գրչի ձեռքով գրված ու նույն ձեռագրի իրարից գրությամբ բոլորովին չտարբերվող երկու մասերում հիշված տարեթվերից մեկը կամ մյուսը սխալ չէ, ապա բառարանը, որի վերջում է գտնվում երկրորդ հիշատակարանը, գրված պիտի լինի հենց այդ հիշատակարանում նշված տարում՝ 1695 թվականին։ Այսինքն՝ առաջին հիշատակարանի տարեթիվը՝ 1677 թվականը, բառարանին չի վերաբերում։ Հետևաբար բառարանն ընդօրինակված է № 450 ձեռագրից, որ գրված է 1692 թ.։ Քանի որ վերջինիս մեջ էլ բառարանի հեղինակային օրինակ լինելն ու չլինելը հայտնի չէ, ուրեմն անհայտ է մնում նաև բառարանի ստեղծման ստույգ ժամանակը։

Վերևում արդեն նշվել է, որ բառարանը անմիջական կապ ունի Նարեկի լուծումների հետ, կազմված է նրանց հիման վրա։ Բառարանի հեղինակը ձեռքի տակ ունեցել է Նարեկի թե՛ համառոտ և թե՛ ընդարձակ լուծումները և նրանցից բառամեկնությունները նույնությամբ առել է բառարանի մեջ։ Նարեկի լուծումների և բառարանի այդ կապը ցույց տալու համար համեմատենք բառամեկնությունները, որոնք վերցված են Նարեկի երկրորդ (ձեռ. № 5364) ու երրորդ (ձեռ. № 9563) խմբի լուծումներից և բառարանից (ձեռ. № 3286)։ Ձեռագրերը պայմանականորեն նշանակում ենք՝ a=ձեռ. № 5364, b=ձեռ. № 9563, c=ձեռ. № 3286։ Մեկնությունների դիմաց նշում ենք ձեռագրի էջերը, ընդգծում ենք բառարանի (c) ամբողջ բառահոդվածը։

a Անճոռնի. *որ ոչ բան կարգի խոսի (299բ)։*
b Անճոռնի. *ոչ բան կարգի խոսի (202ա)։*
c Անճոռնի. nr ոչ բան կարգի խոսի։
a Անշուշտ. *անփոփոխ (312բ)։*
b Անշուշտ. *անփոփոխ (243բ)։*
c Անշուշտ. անփոփ։
a Անոպա. *անխրատ (291ա)։*
b Անոպայ. *անխրատ. չիմար. անհաւան. բարեմոռաց (170բ)։*

c Անոպայ. անխրատ. կամ չիմար. կամ անհաւան. կամ բարեմոռաց։
a Անսաստութեան. *անհնազանդութեան (277 բ)։*
b Անսաստութեան. *անհնազանդութեան (70ա)։*
c Անսաստ. անհնազանդ։
a Ապաւանդակին պարանն. *հաստ չուանն է, զոր մալուխ ասեն (278բ)։*
b Ապաւանդակին. *հաստ ճուպանն է. զոր մալխոյ ասեն (83ա)։*
c Ապաւանդակ. հաս[տ] նոպանն է. զոր մալուխ ասեն։
a Առուարձան ասի որ արտաքոյ պարսպին կանգնեալ լինի, որպէս Սողոմոն կանգնեաց ի բարձունսն զկուռսն. և արուարձան ասի *(303ա)։*
b Առուարձանի. *արուարձան ասի որ արտաքոյ պարսպին կանգնեալ լինի. որպէս Սողոմոն կանգնեաց ի բարձունս զկուռսն. և արուարձանք ասին (216ա)։*
c Առուարձան. nr արտաքոյ պարսպին կանգնեալ լինի. որպէս Սողոմոն կանգնեաց ի բարձունս զկուռս. և արուարձան ասի։
a Խիթացեալ. *անպիտանացեալ. իբրև զխոչ և զխութ ի բաց ընկենլի եղեալ. որպէս ասէ Եսայի. և նա ընդ կրիւք ուրացութեան եղեալ (315 բ)։*
b Խիթացեալ. *այս է*[41] *անպիտանացեալ. իբր զխէշ և զխութ ի բաց ընկենլի եղեալ (253բ)։*
c Խիթացեալ. անպիտանացեալ։
a Խծբիծ. *կարծիք (291ա)։*
b Խծբիծ. *կարծիք. յոյզ. խնդիր (170բ)։*
c Խծբիծ. կարծիք. կամ յոյզ. կամ խնդիր։
a Խշտիս. *ընկողինն է որ ի մահիճս (300ա)։*
b Խշտիս. *անկողինն է որ ի մահիճան (206բ)։*
c Խշտի. խուց. կամ անկողին. կամ մահիճ։
a Կաճառս. *հոյլս. կամ ժողովս (274բ)։*

41 *Իմա՛ ասէ։*

b Կաճառաս. *հոյլս. ժողովս. բաղումս (18բ)։*
c Կաճառաս. հոյլս. կամ գուճդս. կամ ժողովս. կամ բազումս։
a Կայմն. *սարին է. կամ որ ի ծայր սարոյն խոտորնակն ձող որ պարզէ զկտաւն (278բ)։*
b Կայմն. *սարին է. այսինքն սիւնն. կամ որ ի ծայր սայրոյն է խոտորնակ ձողն որ պարզէ զկտաւն (83ա)։*
c Կայմն, սայրին է, որ է սիւնն. կամ որ ի ծայրն սաւուն է խոտորնակ ձողն, որ պարզէ զկտաւն։
a Կնիւնոյ. *ճղեմն է. ի հեղեղատս բուսանի (285բ)։*
b Կնիւնոյ. *ճղեմն է, որ ի հեղեղատս բուսանի. մանր ու բոլոր ճիլ (145բ)։*
c Կնիւն. ճղեմն է, որ ի հեղեղատն բուսանի, մանր բոլոր ճիլ։
a *Ջունի։*
b Հաղբից. *որոգայթից (13բ)։*
c Հաղբից. յորոգայթից։
a Ոստիկան. *վերակացուն մեր (329բ)։*
b Ոստիկան *վերակացուն մեր (299ա)։*
c Ոստիկան. վերակացու։
a *Ջունի։*
b Յատակեցաւ. *անկաւ որ ատակն երևեցաւ (83բ)։*
c Յատակեցաւ. անկաւ. կամ ատակն երևեցաւ։
a *Ջունի։*
b Սեռն. *յատակ և պարզ (32բ)։*
c Սեռն. յատակ. կամ պարզ։
a Վանդակապատիճ. *որ ի մէջ նաւին լինի ածած. և բաժանած տուն ի տան է (279ա)։*
b Վանդակապետիճ. *որ ի մէջ նաւին միջակ լինի ածած. և բաժանած տուն ի տան է (83բ)։*
c Վանդակապատ. որ ի մէջ նաւին միջակ լինի ածած. և բաժանած տուն ի տանէ։
a Տեսարաճիճ. *հայեկն է. կամ նշան նաւին. ըստ այնմ նաւ մի որ ունէր զնշանն դէոսկորացւոց (278բ)։*

b Տեսարաճ. *հայեկն է որպէս նաւապետն նստի և դիտէ. և կամ նշան նաւին. ըստ այնմ գառաք նաւ մի որ ունէր զդէմս կորացւոց նշանն (83ա)։*
c Տեսարաճ. հայեկն է, ուր նաւապետն նստի և դիտէ. կամ նշան նաւին։
a Փարամմուճս. *պարսկերէն փերթ փերթ ասէ. որ է այլ և այլ մեղքն (287ա)։*
b Փարամմուճս. *պարաքմունս. պարսկերէն է. փերթ փերթ ասէ որ է այլ և այլ մեղք (157ա)։*
c Փարամմուճս. փերթ փերթ. կամ այլ և այլ։

Օրինակները, բացի Նարեկի լուծումների ու բառարանի ուղղակի կապից, ցույց են տալիս նաև, որ համառոտ լուծումներում շատ մեկնութիւններ բացակայում են, եղածներն էլ հաճախ ամփոփ են, և որ բառարանը հիմնված է գլխավորապես ընդարձակ լուծումների վրա։

Այժմ էլ դիտենք Նարեկի և «Բառգիրք Հայոց» բառարանների առնչութիւնները։ Առաջին բառարանի շուրջ 600 գլխաբառեր կան նաև մյուսի բառացանկերում, սակայն տարբեր են բառահոդվածները։ Այսինքն՝ «Բառգիրք Հայոց»-ի հեղինակը չի օգտվել Նարեկի լուծումներից, իսկ «Բառք Նարեկացւոյն» բառարանի հեղինակն էլ, իր հերթին, այդ բառարանից չի քաղել այն մեկնութիւնները, որոնք չկան Նարեկի լուծումներում։ Բերենք օրինակներ այդ բառարանների իրարից անկախ ձևինելը ցույց տալու համար.

Բառգիրք Հայոց (տպագիր)	Բառք Նարեկացւոյն[42]
Ածանցական. *թափանցական. կամ յառաջնկական. կամ յայլմէ ածանցեալ։*	Ածանցական. *որ ի քթթելականն ածէ և անցանէ ընդ մարդոյ աչօք որպէս կայծակն յամպոյ։*
Անեռուճի. *յաղթանդամ. կամ մեծ։*	Անեռուճի. *որ ոչ ըստ կարգի խօսի։*

[42] *Օրինակները վերցված են № 3286 ձեռագրից։*

Բարգաւաճ. *ուրախ. կամ փարթամ կամ պայծառ, կամ փառաւոր:*	Բարգաւաճ. *հաստատ. կամ կարօղ:*
Գերաշխարհիկ. *վերաշխարհիկ. կամ ամենակալ. կամ ամենաթագաւոր:*	Գերաշխարհիկ. *ճոխ. կամ փարթամ:*
Գալուկ. *գոյն. կամ ժանդ կամ դեղնացաւ:*	Գալուկ. *անկենդան իր է:*
Ըստմբաբար. *մընջնաքար:*	Ըստմբաբար. *որ է բէլզէ֊հոննն:*
Թարմատար. *անպիտան. կամ հրեշտակ. կամ ծառայ:*	Թարմատար. *անպիտան. կամ անարգ. կամ ոչ յիշելի. կամ ոչ ինչ:*
Փլատ. *նաքազ. կամ կծնի:*	Փլատ. *ծակաչք. կամ անկուշտ. կամ ոիշտ:*
Լաստ. *նաւի ելքն. կամ հաստիր:*	Լաստ. *նաւն է. կամ զատակըս նաւին ասէ:*
Խել. *հնչ:*	Խել. *շուրթ. կամ եղեր. կամ բերան:*
Խալամ. *գլուխ:*	Խալամ. *ոսկր գլխոյն է:*
Մայրագոյն. *համատարած. կամ կատարելագոյն:*	Մայրագոյն. *բոլոր կամ վերին. կամ եղերեալ:*
Կանոն. *քանոն:*	Կանոն. *սահման. կամ կարգ:*
Կտակ. *անդարձ. կամ պատուէր:*	Կտակ. *գիր ուխտի:*
Հողմ. *հոգ. կամ շունչ. կամ օդի*[43]*:*	Հողմ. *օդ. կամ քամի:*
Հոսանուտ. *անկայուն. կամ անարգել:*	Հոսանուտ. *լոյծ:*
Զօճել. *ընծայել. կամ նուէրել*[44]*:*	Զօճել. *պատարագել. կամ աղերսել:*

43 *Իմա՛ հոգի կամ շունչ կամ օդ:*

44 *Կա նաև՝ «Զօն. պարգև. կամ աղերս. կամ ընծայ. կամ նուէր»:*

Ճաճանչ. *փայլածու. կամ նուաղ լոյս:*	Ճաճանչ. *կայծ ջրագի. նշոյլ. կամ շող:*
Մառախուղ. *մշոշ:*	Մառախուղ. *խաւարացուցանօղ. կամ բալ. կամ մոայլ:*
Մատակարար. *վերակացու. կամ հոգաբարձու:*	Մատակարար. *խնամատար. կամ տնտես. կամ վերակացու կամ դարմանօղ. կամ սեղանոյ սպասաւոր:*
Յեղաճակ. *և յորջորջումն. փոփոխումն:*	Յեղաճակ. *շրջանակ. կամ որ յեղաշրջի:*
Նուագել. *երգել:*	Նուագել. *ասել:*
Ողջակէզ. *պատարագ:*	Ողջակէզ. *ողջ կիզեալ. կամ նասխպ. կամ մատաղ աստուծոյ:*
Ջրնաղ. *հրաշագեղ. կամ գեղեցիկ:*	Ջրնաղ. *ի վեր հիանալի:*
Պատեհ. *պատշաճ:*	Պատեհ. *արժան:*
Սահմանե. *սինօտ կամ դրունք:*	Սահմանե. *տեղի:*
Վեհերոտ. *հեղգ. կամ դանդաղ. կամ ծոյլ. կամ թոյլ:*	Վեհերոտ. *երկչոտ. կամ ծոյլ:*
Տաղ *չափով գրեալ:*	Տաղ. *բան:*
Փեսաւէր. *փեսեղբայր:*	Փեսաւէրք. *հարսնածու(ք):*

Որպես նման օրինակներ հիշյալ բառարաններից գուգահեռաբար կարելի է բերել՝ առձեռն, արծարծել, արուսեակ, բիբ, դիմառնութիւն, դիւք, եղծել, զրմբաղ, խորհուրդ, խարել, կաճառ, կապարան, կոճղ, հաստակաճ, ճարակել, ճոխ, յոյզ, նունագոյ, շարունակ, շուայտ, ուղէշ, ուղղել, չնաշխարհիկ, պարառութիւն, պսակ, սփոփել, վանդակապատ, վհատութիւն, տարագիր, տեսարան, տեսուչ, ցնցուղ, փութալ, քայքայել, քանասար, քերել, քիմ, քնար, քննել, օճառ, օրինակ, օրհորդ և բազմաթիվ այլ բառեր իրենց բացատրություններով:

Այսպիսով, «Բառք Նարեկացւոյն» բառարանի հեղինակը ինքնուրույն է մեկնել այն բառերը, որոնք մեկնված չեն Նարեկի լուծումներում։ Բառերը նա մեկնել է Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկի բնագրում ունեցած նրանց կոնկրետ գործածությամբ, առարկայական վերաբերությամբ, ընդամին ցուցաբերելով հայերենի իմացության և բառարանագրական աշխատանքի ակնառու հմտություններ։

Այս բառարանն էլ իր արտաքինով գրեթե չի տարբերվում մյուս հին բառարաններից՝ բառերի ոչ հետևողական այբբենական շարք, համառոտ, գերազանցապես համարժեքային մեկնություններ առանց հղումների, ցուցադրումների և այլն։ Անհավասարիկ մի հատված էլ հիշյալ բառարանից։

Պալար. պինտ. կամ պիրկ. կամ լայնացեալ։
Պալար. պիսակոտ։
Պախարակել. անարգել։
Պակեան. երկեան. կամ թուլացան։
Պակուցեալ. վախեցեալ։
Պաճանջի. խնդրի։
Պաղպաջուն. պսպղուն. կամ շուտ շուտ. կամ շիտ շիտ.
կամ գեղեցկութիւն։
Պաճար. անսասուն։
Պաճարամիտ. անսասնամիտ։
Պաճուճեալ. պճնեալ։
Պայման. սահման. կամ չափ։
Պանից. ըլթալ. կամ շօթից։
Պանծանաց. պարծանաց։
Պաշտօնեայ. սպասաւոր։
Պաշպանել. պահպանել կամ սպասաւորել։
Պասքեալ. ծարաւեալ[45]։

Բառարանում հաշվվում է շուրջ 1100 բառահոդված, մեծ մասամբ առանձին, անկախ բառեր. դարձվածներն ու ոճերը սակավաթիվ են, բառացանկեր չկան Ր և Ւ տառերով։ Հանդիպում են առանձին նկարագրական մեկնություններ, որոնք երբեմն բառի իմաստը ուղղակի չեն բացահայտում՝ «Թափանցութիւն. որպէս հուր ընդ երկաթ. և լոյս ընդ օդ. այնպէս աստուած ընդհանուր էակս», «Եղևին. յայգիսն բուսանի. աւել կապեն զինքն», «Համագուգութեամբ. բաժանել անձամ[բ] և միաւորեալ աստուածութեամբն» և այլն։ Բառիմաստի ուղղակի բացատրություններ չեն նաև «Երջանկաց. վարդապետաց», «Լսնացեալ. կոկեալ», «Խմոր. նիւթ», «Խուփ. և խուչ. փուշ. և քար», «Ողբերգական. երաժշտական» և այլ մեկնություններ։ Որոշ բառահոդվածներում էլ, եթե սխալ չէ գլխաբառի բացատրությունը, ապա երևան են գալիս հայերենի մի շարք հանրահայտ բառերի նոր իմաստներ, ինչպես՝ «Զմայլեցայ. ընկղմեցայ. կամ ծածկեցայ», «Ընկղմել. ծածկել. կամ թաղել կամ զմայլել», «Ունկի. յարդի մոեղն է, ունկն է որ մղաձև[46] պատեալ ունի զհատ ցորենւոյն», «Պան. ծով», «Հեղոյսք. հարմունք»[47] և այլն։ Ձեռագրում կան նաև սխալ, աղճատված և թերի մեկնություններ, օրինակ՝ «Կարգ. ճառ», փոխանակ՝ շար, «Անկերպագրելի. որ ի միտ տպաւորի», փոխանակ՝ ոչ տպաւորի և այլն։ Բառարանում ընդգրկված են Նարեկում գործածվող բազմաթիվ նոր բառաձևեր, որոնք հայերենի բառային նյութի ու բառակազմական կանոնների հիման վրա կերտել է ինքը Գրիգոր Նարեկացին։ Այդ բառերից են՝ ամենապատող, ամենածախ, անստուերագիր, անջնջագիր, անկերպագրելի, անկերպաւոր, անհամառօտ, անկցելի, անձեռնակալ, անձնադատ, անտարտամ, անտարրափակ, ապաձեռնել. ապաջան, ապականասպաս, արարչակերտ, աւողական, բուրանոց, եղեռնալուր, եղ[բ]նձիւղ, զուգաշափող, թռչարան, ինքնաթոյն, ինքնահարուած, խնկապատար, ծածկարան, կիսայար, հերապանծ, ձեռնկալ, յամրային, ողողակ, սրբանուէր և այլն։ Հայերեն տպագիր բառարաններում տեղ չեն գտել Նարեկացու մի շարք այնպիսի բառեր, ինչպես՝ աւանդակ (վարդապետ), տրմղական, խէքաշքն (տկար), կառուցմունք, շախել

45 Մատենադարան, ձեռ. № 3286, էջ 287բ։

46 Մատենադարան, ձեռ. № 450, մղնաձև (էջ 118բ)։

47 Նույն տեղում, հրաման (էջ 116ա)։

(ողբալ), բնդալ, բնդաճալ (դժուարանալ), որոնք կան սույն բառարանում։

Գլխաբառերը մեկնվում են հայերեն գրական բառերի օգնությամբ։ Խոսակցական լեզվում ու բարբառներում գործածվող հայերեն և օտար բառերը, ինչպես՝ ոճորք, հարամի, անդիճել, բոթ, շլինք, ըղորդ, ռիշտ, տէթ (տոթ), ալամ, բայրաղ, բեհ, դաւեքար, դիադոխոսի (հն. διαδοχος «փոխանորդ»), դաղմայ, թախտաբանտ, խազինայ, զաստ (զաստ անել), զապալայ, նաջաղ, չէշնի, սանճախ, սոփի (հն. σοφός) և այլն շատ շեն։

«Մատեան ողբերգութեան» բառերից բացի բառարանում հանդիպում են առանձին բառեր՝ մարակ, պաշտպանել, պատեհ, պատկանաւոր, սամի, վճիռ, տեսչութիւն, բարերարեմ, գահերէցութիւն և այլն, որոնք գործածված են Նարեկացու ճառերում ու ներբողներում։

«Բառք Նարեկացւոյն» բառարանը հայ միջնադարյան բառարանագրության վերջին շրջանում ստեղծված մի նոր կարևոր մատենակից բառարան է՝ նվիրված միջնադարի հանճարեղ բանաստեղծ Գրիգոր Նարեկացու անգուգական «Մատեան ողբերգութեան» պոեմին՝ նրա բովանդակությունն իր ամբողջ խորությամբ ու հմայքով հայ ընթերցողին ընկալելի դարձնելու համար։ Որպես բառարանագրական հուշարձան, որպես նոր բառեր, դարձվածներ և բառերի նոր իմաստներ ու նրբերանգներ ի հայտ բերող գրավոր աղբյուր՝ բառարանն այսօր կարևոր նշանակություն ունի թե՛ բանասիրական և թե՛ լեզվաբանական տեսակետից։

ԲԱՌՔ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ ՍԱՂՄՈՍԱՑ

Ներսես Լամբրոնացու ընդարձակ մատենագրության մեջ մեծ տեղ են գրավում մեկնությունները[48]։ Դրանցից է Դավիթ

48 Մեկնությունների մասին տե՛ս Գ. Զարբհանալեան, Հայկական հին դպրութիւն, Վենետիկ, 1897, էջ 654—659։ Մ. Ջամչեան, Մեկնութիւն սաղմոսաց, հտ. Ա, Վենետիկ, 1823, էջ 3—9։

սաղմոսների մեծածավալ մեկնությունը[49], որ Լամբրոնացին կատարել է վանականների խնդրանքով և հենց նրանց համար՝ «ի պէտս գործածութեան վանականաց»[50] և ոչ թե «ընդհանուր հաւատացելոց համար»[51]։ Հիշյալ մեկնության ամբողջական ու լավագույն մի ընդօրինակություն է Մատենադարանի № 1528 ձեռագիրը[52], որի հենց առաջին երկու թերթերի վրա (էջ 1ա—2բ), Սաղմոսաց մեկնությունից առաջ, զետեղված է մի փոքր բառարան։ Ձեռագիրը գրված է 1649—1651 թվականներին Շոռոթում։ Մեկնությունից ու նրա բառերը բացատրող մատենակից բառարանից բացի ձեռագրում ուրիշ նյութեր չկան։

Բառարանն անխորագիր է, սակայն սկզբից ունի այսպիսի հիշատակագրություն. «Գիտասցէ եղբայրութիւնդ ձեր. ո՛վ ընթերցօղք գրոցս. դի ես մեղաւոր Նահապետս ըստ իմում նուաստութեանս չափու. սրբագրեցի զգիրքս. և զոր ինչ բառ որ յօտար լեզուաց կայր ի մէջ սորա. զամենայն հաւաքեալ. և աստ եդեալ թարգմանութեամբ հանդերձ. դի յընթեռնուլն ձեր. եթէ դիպեսցի բառ ինչ զոր ոչ կարէք գիտել, եկեալ աստ գտանիցէք»[53]։ Ապա անմիջապես սկսվում է բառարանը՝ «Ամբարհաւաճ. անբարին հաճող։ Ամբարիշտ. անբարին պաշտօղ։ Ամբարտաւան. հպարտ» և ավարտվում է «Քեցել. ի բաց ընկենուլ» բառերով։ Բառարանը կազմել է վերևում բերված հիշատակարանի գրողը՝ Նահապետը, որը սրբագրել է Լամբրոնացու մեկնությունը։ Ամբողջ բառացանկում ընդգրկված է 562 բառ, ոչ լիակատար այբբենական դասավորությամբ, առանց է, Ղ, Ռ, Ր, Ի տառերով սկսվող բառերի, գրեթե առանց ոճերի ու դարձվածների։ Մեկնությունները մեծ մասամբ համառոտ են, համարժեքային՝ հոմանիշային բնույթի։ Ահա մի հատված բառարանից.

49 Տպագրված չէ, կա Մատենադարանի մի քանի ձեռագրերում։

50 Մ. Ջամչյան, նշվ. աշխ., էջ 4։

51 Գ. Զարբհանալյան, նշվ. աշխ., էջ 658։

52 Նկարագրությունը տե՛ս Մատենադարանի ձեռագրացուցակ, հտ. Ա, սյուն 576։

53 Մատենադարան, ձեռ. № 1528, էջ 1ա։

Խուզել. *որոնել:*
Խիքալ. *կասկածել:*
Խրթին. *խորին:*
Խնջոյս. *լկտի*[54] *խաղ:*
Խտրել. *որոշել:*
Խտացեալ. *թանձրացեալ:*
Խուսափել. *փախչել:*
Մագ. *եզր կամ ծայր:*
Միւռել. *մաշել. և ծնկել նոյն է:*
Մռդել. *ապականել:*
Մծումբ. *քուքուրդ:*
Մասկել. *ծամել:*
Մուղակ. *ծղաղակ:*
Կաճառ. *ժողովք:*
Կապարճ. *աղեղնաման:*
Կապար. *արճիճ. և քարարն ևս կապար ասի:*
Կայտռել. *խաղալ:*
Կաթսայ. *դաղան:*
Կասիլ. *կոխիլ:*
Կառափ. *գլուխ:*
Կաճխել. *փուճալ*[55]*:*

Բառգրքի մեջ կան բառեր՝ բաղկակից, պալարացեալ և այլն, որոնք ավանդված են միայն սաղմոսաց մեկնութեան բնագրով: Սակայն՝ ապիրատ, արտեւանունք, արտուղի, բաժակ, բարունակ, գրուան, գուսան, դառածեալ, թարմատար, լրտես, խոխ, հանգամանի, հեգնել, մաքի, նկուն, նշանախեց, ուրուկ, չուել, ջրել, սկնդկի, վտարանդի, տակառ, տեռապերծել, քահել և այլ բառեր ըստ ՆՀԲ չկան Լամբրոնացու հիշյալ մեկնութեան մեջ: Այդ բառերը, գուցե, իրոք, կան բառարանի աղբյուրի մեջ և վրիպել են ՆՀԲ հեղինակների աչքից, իսկ վրիպումները հնարավոր են հատկապես այս դեպքում, երբ

[54] *Ձեռագրում՝ լկթի:*
[55] *Մատենադարան, ձեռ. № 1528, էջ 2ա:*

բառարանագիրներն օգտվել են ձեռագրից, որը ընթերցման ու վերծանման յուրահատուկ դժվարություններից բացի պետք է, այնուամենայնիվ, ինչ-որ բնագրային տարբերություն ունենար բառգրքի մեզ անծանոթ աղբյուրի հետ: Համենայն դեպս, այդ բառերը հանդիպում են ընդհանրապես Լամբրոնացու երկերում, օրինակ՝ առոյգ, ըմբերանել, մաքսապետ, յօրանջել, նկարագիր, նիհազ, շիկնել, վաշխ, քեցել և այլ բառեր վկայվում են Պատարագի, Սողոմոնի առակների, Իմաստութեան, Հովհաննու հայտնութեան մեկնութիւններով, «Ատենաբանութիւն»-ով և այլ գործերով:

Քննվող բառգիրքը, որ կազմվել է «Բառգիրք հայոց» բառարանից առաջ, լայն տարածում չի ունեցել և հավանաբար հայտնի չի եղել վերջինիս հեղինակին: Ճիշտ է, բառարանի ավելի քան 400 գլխաբառեր կան նաև «Բառգիրք հայոց»-ում, սակայն այդ բառերը մեկնությունների ձևով և երբեմն էլ իմաստով տարբեր են երկու բառարաններում: Ահա օրինակներ.

Բառ մեկն. սաղմ.	Բառգիրք հայոց (տպագիր)
Ամբարիշտ. *անբարին պաշտօղ:*	Ամբարիշտ. *անհաւան կամ բղջախոհ:*
Բառ. *բան:*	Բառ. *ձայն. կամ ստացուած:*
Գերազանց. *ի վեր քան զամենայն ապգ:*	Գերազանց. *առաւելապանց:*
Գրապանակ. *գրաման:*	Գրապանակ. *պահապանակ:*
Դրուագրել. *նաշխել:*	Դրուագրել. *պատկեր ինչ քանդակել:*
Եղջերու. *վայրի եղն:*	Եղջերու. *վայրի պախրէ:*
Զարտուղի. *ծուռ ճանապարհ:*	Զարտուղի. *թիւր:*
Ընթացրել. *յետս դարձուցանել:*	Ընթացրել. *առկուռն հարկանել:*
Լորամարգի. *յափուն ծովու են ի չափ հաւի:*	Լորամարգ. *լոր:*

Խայթոց. *խարիճ։*	Խայթոց. *սողնահարաց թոյն. կամ կիճ։*
Ծասկել. *ծամել։*	Ծասկել. *մանրել. կամ կակղացուցանել. կամ ծամել։*
Կեղակարծ. *թերամիտ։*	Կեղակարծ. *անկարծ։*
Համակ. *բովանդակ։*	Համակ. *խայտառակ. կամ ամենևին։*
Հորդան. *առաջնորդ որ զճանապարհն հորդէ և պատրաստէ։*	Հորդան. *գրոհ, կամ լայն ճանապարհ. կամ առաջնորդ. կամ ճարակ արօտի։*
Զոռն. *շոր։*	Զոռն. *հանդերձ։*
Ճնշել. *մաշել։*	Ճնշել. *նուաղել. կամ նեղել. կամ նուաճել։*
Մետաղ. *զնդան։*	Մետաղ. *բանտ. կամ որոգայթ. կամ անձրև։*
Յարացոյց. *օրինակ։*	Յարացոյց. *նախացոյց. կամ մշտացոյց։*
Նշկաճել. *քամահել։*	Նշկաճել. *արհամարհել. կամ անգոսնել. կամ ապստամբիլ. կամ որոշիլ։*
Շշրճչել. *քսփսալ։*	Շրշնչել. *քչփչալ կամ քրրտմրնել։*
Ողջակէզ. *այն է զոր բովանդակ այրէին։*	Ողջակէզ. *պատարագ։*
Պարուրել. *ծածկել։*	Պարուրել. *շուրջ պնդել։*
Սարուկ. *անգին ծառայ։*	Սարուկ. *փցուն. կամ ցած. կամ նուաստ. կամ չեմին. աղքատ։*
Վաշխ. *շահ։*	Վաշխ. *կաշառ. կամ բոշըվաթ. կամ շահ արծաթոյ. կամ տոկոսի։*
Տաւաղել. *ժողովել։*	Տաւաղել. *հողանել։*
Քայֆայել. *այլայլել։*	Քայֆայել. *ցրուել։*

Համեմատությունը ցույց է տալիս, որ միայն 70—80 բառահոդվածներ, այն էլ հիմնականում մենիմաստ բառերի մեկնություններ, նույն են երկու բառարաններում, ինչպես՝ «Այտ. թուշ», «Անագ. կլայեկ», «Ծծումբ. բուքուրդ», «Մեղրապոպձմերուկ», «Յարդ. գարման», «Փիղ. ֆիլ» և այլն։

Միաժամանակ շատ մեկնություններ, ինչպես մյուս մատենակից բառարաններում, այստեղ նույնպես պարզունակ են ու միակողմանի և բացահայտում են բառի իմաստային գործածություններից մեկը՝ խոսքի տվյալ ոլորտում միայն, ինչպես՝ «Աշտարակ. բերդ», «Բեկոր. զինուց կոտորուած», «Պպիր. կարդացօղ», «Տոհմական. պաղպաեր» և այլն։ Եթե «Առոյգ. ընտիր», «Թայ. կէս բան», «Հայթայթաճ. սպառնալիք», «Տարտամ. դառարկ» և այլ նման մեկնություններում բառը փոխաբերական իմաստով չի գործածված, ապա մեկնությունը սխալ է կամ առնվազն մոտավոր ճշտություն ունի։

Բառամեկնությունների մեջ օգտագործված են շուրջ 30 օտար (գլխավորապես թուրքերեն) բառեր՝ արապայ, բողազ, գոմրուկչի, դամաղ, թաքայ, ղալխան, շաթիր, ուրտու, չաուիր, չեշնի, սազանտար, քարրիճ և այլն, որոնք մեծ մասամբ մեզ արդեն ծանոթ են նախորդ բառարաններից։ Ուշադրության արժանի են Գայր ի գայր (կաղ ի կաղ), Կոպաո (կուռ), Մոզգայլ (մոմոռալ), Պորնկել (դեգերել), Սարիճ (խեցեմորթ, կրիայ) հազվագյուտ բառերը։ Սակավաթիվ ընդարձակ բառահոդվածներից հետաքրքիր է համ հունարան նախածանցի բառահոդվածը՝ «Համ. մի։ Եթէ համն մի ասել է. ապա նմամագիճ. միաղգի է։ Համագոյն. միագոյ։ Համշիրակն. միակաթիռ։ Համշահիրիճ. ի մի քաղաքէ. Համփսոնճ. մի սեղան։ Համագումար. միաժողով։ Եվ այլն նոյնպէս»[56]*։*

Մատենակից այս նոր բառարանի քննությունը ցույց է տալիս, որ այն անկախ է մյուս բառարաններից և նրա հեղինակն ինքնուրույն է մեկնում բառերն ու դարձվածները։ Այս հանգամանքը կարևոր է այն առումով, որ այդ բնույթի յու-

56 *Մատենագարան, ձեռ. № 1528, էջ 2ա։*

բաբանչյուր նոր բառարան հազվագյուտ բառերից բացի ի հայտ է բերում արդեն հայտնի բառերի նոր իմաստներ, գործածական նոր առումներ ու երանգներ, որոնք շատ կարևոր են բառապաշարի և բառիմաստի ուսումնասիրության տեսակետից:

ԲԱՌԻՔ ՊԻՏՈՅԻՑ ԳՐՔԻ

Այս բառգիրքն էլ մեր հազվագյուտ բնագրերից է: Այն պահպանվել է միայն Մատենադարանի № 7035 ձեռագրում[57]: Մասամբ բոլորգրով և մասամբ նոտրգրով գաղափարված այս ժողովածուն, որ անհարազատ պրակներ էլ ունի, գրված է տարբեր գրիչների կողմից: Ձեռագրի առաջին մասը (էջ 1ա—152 բ), որը մեզ հետաքրքրող բառարանից բացի բովանդակում է նաև Երեմիա Մեղրեցու, «Եբրայեցւոց, քաղդէացւոց և յունաց անուանցն մեկնութիւն» բառարաններն ու այլ նյութեր, գրված է կանոնավոր ու դյուրընթեռնելի բոլորգրով: Հիշատակարանը գետեղված է ձեռագրի հաջորդ՝ նոտրգիր մասի (էջ 153ա—211բ) վերջում: Գրիչ Ստեփաննոսը նշում է, որ ձեռագրի ընդօրինակումն ավարտված է ՌՃԼՔ (1690) թվականի հուլիսի 10-ին:

Բառարանի կազմության հանգամանքներն անհայտ են մնում: Նույնիսկ հիշատակարանում, որտեղ թվարկված են ձեռագրի սկզբից մինչև հիշատակարանը եղած նյութերը, գրիչը այս անվերնագիր բառարանը հավանաբար նախորդի՝ «Եբրայեցւոց, քաղդէացւոց և յունաց անուանց մեկնութիւն» բառարանի շարունակությունը համարելով՝ չի հիշատակում ցանկում, որպես առանձին բնագիր:

Ուսումնասիրությունները, սակայն, պարզեցին, որ բառգիրքը տարբեր բնագրերից վերցված բառերի հավաքածու չէ, այլ ամբողջությամբ վերաբերում է Պիտոյից գրքին, մատենակից բառարան է:

Ձեռագրի հիշատակարանում նշված տարեթիվը (1690) բառգրքի ստեղծման ժամանակը չէ, այսինքն այդ ձեռագիրը

57 Տե՛ս Մատենադարան, ձեռ. № 7035, էջ 88բ—92ա:

ներկայացնում է բառգրքի ոչ թե նախագաղափար օրինակը, այլ ընդօրինակությունը մի անհայտ նախօրինակի: Հետազոտությունները ցույց են տալիս, որ քննության առարկա բառգիրքը բառերի այբբենական կարգի անկատարությամբ, մեկնությունների լեզվի բացառիկ մաքրությամբ և այլ կողմերով բավականին հին է, գրված է, համենայն դեպս, XVII դարից առաջ:

Բառգիրքը շատ սեղմ է ծավալով. պարունակում է այբբենական կարգով շարված ընդամենը 121 գլխաբառեր՝ համառոտ մեկնություններով: Բառացանկեր չկան Ղ, Ո, Ռ, Ր, Յ և Ւ տառերով: Բառարանը սկսվում է «Առատաձիւ. ցասնուլ. կամ զայրանալ: Անմասճելի. տեառն երկիւղ. կամ անզարհուրելի» և ավարտվում է «Քերճելով. բառնալով. կամ կորուսանելով» բառերով: Մեկնությունները մեծ մասամբ կազմված են գլխաբառի երկու և հաճախ ավելի հայերեն համանիշներից, ինչպես՝ «Աղուս. խարդաւանս. կամ չարութիւնս», «Անկճելի. անյաղթելի. կամ անխղելի», «Գեղեցկանսիճ. գեղեցկօրէն. կամ վայելչահանդէս», «Խոշորել. ջնջել կամ նե[ղ]նել կամ կորուսանել», «Ջրդիճ. հնարին. կամ ջանան. կամ խորհին», «Վասել. պնդել. կամ բևեռել. կամ սրել» և այլն: Բառերը մեկնելու միակողմանիության և այլ թերությունները հատուկ են նաև այս բառգրքին:

Բառգրքի գրեթե բոլոր բառերը վերցված են հենց Պիտոյից գրքից: Այդ բառերի մեծ մասը հանդիպում է նաև հայ հին մատենագրության մյուս երկերում՝ Ասողիկացու, Թրակացու քերականության, Փիլոնի, Գրիգոր Նյուսացու, Եղնիկի, Ոսկեբերանի, Բարսեղի, Պլատոնի, Սեբերիանոսի, Կորյունի, Եփրեմի, Նարեկացու, Կաղանկատվացու, Մագիստրոսի, Համբրոնացու և հայերեն բնագիր ու թարգմանական այլ բնագրերում: Սակայն բառգրքի գլխաբառերը վերցված են Պիտոյից գրքից՝ այնտեղ ունեցած իրենց ձևերով, իմաստներով ու գործածությամբ: Այսպես՝ ասպականաց[58] բառը (որ Պիտոյից գրքում գործածված է զ նախդրի հետ) նույն ձևով էլ առկա է

58 Ձեռագրում սղումով՝ ասպակնեաց:

բառարանում՝ «... և նոքա յարձակէին ի ներքս՝ հետաւարեալ զասպականեացն հոյլս»[59]: Մինչդեռ Փիլոնի «Լինելութեանն» երկի մեջ նույն բառը կա ասպականի ձևով՝ «Իսաւ ասպականի էր, և վայրագ: Ասպականին ընդ շունս և ընդ գազանս առնէ՛ դիւր դգեգերումն վարուց»[60]: Կամ՝ բառարանի սաֆրելով բառը նույն (գործիական հոլովի) ձևով գործածված է միայն Պիտույից գրքում. «Ղուղելովն և սաֆրելով ի մէջ խառացեալն անուառի»: Մյուս աղբյուրները ներկայացնում են այդ բառի այլ ձևեր. Փիլոնի «Այլաբանութիւն»-ը՝ սաֆրեաց, Դավիթ Անհաղթի «Հարցուածք իմաստասիրականք»-ը՝ սաֆրի, իսկ «Բարձրացուցէք»-ը ու նրա՝ Ներսես Շնորհալու մեկնությունը՝ սաֆրէին, Անանիա Նարեկացու Քոնդրակեցիների դեմ ուղղված ճառը՝ սաֆրեցին, Բենիկ վարդապետի «Աղօթամատոյց»-ը՝ սաֆրեն, սաֆրին:

Սակայն բառարանը Պիտույից գրքին հատկացնելու հիմնական փաստն այն է, որ այդ բառարանի գլխաբառերի մեկ երրորդ մասը՝ 40 բառ, հայ ամբողջ մատենագրության մեջ վկայված են միայն Պիտույից գրքով: Այդ բառերն են՝ անքաւսքնելի, արդաւուեալ, անկքելի, ապշոպել, անըմբերագոյն, բարեսացս, բաստայեղց, բառացութիւն, գեղեցկանսիհ, գեղեցկանաղ, գարելի, գրգարան, դնդչեցուցել, զառամութիւն, ժոխ[61], լուսաթոյր, խնծղանաց, խարխարիլ, խոշտուրաց[62], ծաղկատարփակ, կարշնեղութեամբ, կոծապարոյք, կացի, կբնի, հաւակ, հուղակահար, հրուանդանս, ձղճմելոյ, մրդեղակ, միջադար, նկնախոհ, նկնաձև, պապախէ[63], ջրդին[64], վանդումն, վադափուտ, վերառնութեամբ[ք], վասել, տորր, փաղփեցուցանել:

Այնուհետև, մեր մատենագրության մեջ հազվագյուտ գործածություն են ունեցել բառարանի մի շարք բառեր, որոնք

59 Մովսէսի Խորենացւոյ Մատենագրութիւնք, Բ տպ., Վենետիկ, 1865, էջ 544:

60 Նր՛Հ, հտ. Ա, էջ 315:

61 Իմա՛ ժեռ, տե՛ս ՆՀԲ:

62 Ձեռագրում՝ խոշտարացի:

63 Պապախել, տե՛ս ՆՀԲ:

64 Ջրդիմ, տե՛ս ՆՀԲ:

Պիտույից գրքից բացի վկայվում են միայն մի այլ աղբյուրով, այսինքն՝ ունեն ընդամենը երկու վկայություն: Այդ բառերից, օրինակ, աղուես, անաւղիլ, ասպկենաց, դեռևացեալ, ձրձեաց, նակաճանութիւն և տարազարդ բառերը կան նաև Փիլոնի, գեղձ և զականել-ը՝ Աստվածաշնչում, խրատ-ը՝ Բարսեղի, դիկլիկոն-ը՝ Թրակացու քերականության, սակեալ-ը՝ Կորյունի, կողաճ (կողաձց)-ը՝ Սերբերիանոսի, սրտապախ-ը՝ Ոսկերբանի, նսեճ-ը՝ Մագիստրոսի և արիւնազանգ-ը՝ Համբրոնացու երկերում: Կան նաև հազվագյուտ գործածված բառեր, որոնք բացի Պիտույից գրքից վկայվում են երկու այլ հին բնագրերով: Վերևում բերված բառերը լիովին բավական են ցույց տալու, որ Պիտույից գրքին առնված բառացանկը կիսով չափ կազմված է հայ մատենագրության հազվագյուտ բառերից, որոնք ընթերցողներին անհասկանալի են եղել դեռևս շատ դարեր առաջ: Անհասկանալի կամ առնվազն դժվարիմաց են եղել բառգրքի նաև մյուս բառերը, որոնք համեմատաբար շատ մատենագրական վկայություններ ունեն:

Քննվող բառգրքի շուրջ 40 բառեր կան նաև «Բառք քերթողականք», հետևաբար՝ նաև «Բառգիրք Հայոց» բառարաններում: Սակայն, այդուհանդերձ հիշատակված բառարաններն իրարից անկախ են, մեկը մյուսից բառեր չի վերցրել, Պիտույից գրքի բառացանկն, ըստ երևույթին, անհայտ է եղել «Բառգիրք Հայոց»-ի ու նրա աղբյուր բառարանների հեղինակներին: Այս փաստը հիմք է տալիս ենթադրելու, թե Պիտույից գրքի բառերը բացատրող բառգիրքն, իրոք, հին է և հավանաբար ժամանակակիցն է «Բառք քերթողականք»-ի, որը գրվել է XII—XIII դարերում:

Արդ անցնենք դարձյալ բնագրային համեմատություններին՝ բառացանկի կազմության հանգամանքները, ինչպես նաև մյուս հին բացատրական բառարաններից անկախ լինելը ցույց տալու համար: Քննվող բառգրքի բառահոդվածներին առադրում ենք «Բառգիրք Հայոց»-ի համապատասխան բառահոդվածները, որոնք գրեթե նույնությամբ վերցված են «Բառք քերթողականք» բառարանից:

Բառք Գիտոյից գրքի	Բառգիրք Հայոց (տպագիր)
Ապալեր. դատարկ. կամ թափուր։	Ապալեր. աւերակ։
Դագ. քէն։	Դագ. քաղցր. կամ նենգ. կամ գէր։
Խարդաւանս. խաբեութիւնս. կամ հնարս. կամ որսումն։	Խարդաւան. կեղծաւոր. կամ պոռնիկ. կամ լկիչ։
Հուղակահար. աւազակ. կամ ելուզակ։	Հուղկահար. աւազակապետ.
Ջնել. հարկանել. կամ զանել։	Ջնել. տանջել. կամ հերքել։
Սակեալ. կարգեալ. կամ հարկեալ։	Սակեալ. արկեալ։
Քերթելով. բանալով. կամ կորուսանելով։	Քերթել. յաղթել. կամ հալածել. կամ մերժել։

Այժմ էլ համեմատենք Նոր հայկազյան բառարանի հետ. Տեսնենք, թե ինչպես են մեկնվում Գիտոյից գրքի միևնույն բառերը ստեղծման ժամանակներով իրարից այնքան հեռու, ծավալով, բովանդակությամբ ու այլ հանգամանքներով իրար հետ անհամեմատելի բառարաններում.

Բառք Գիտոյից գրքի	ՆՀԲ[65]
Անկքելի. անյաղթելի. կամ անխզելի։	Անկքելի, կամ Անկրքելի.ա. Որ ոչն կքի. անկորանելի. անընկճելի. որ չի ճկիր...։
Անրմբերագոյն. անկարկելի. կամ անլռագոյն։	Անրմբերագոյն.ա. Կարի անհամբեր։
Բարեսացս. սիրօղս. կամ բարեկամս. կամ ազնականս։	Բարեսաց.ա. Որպէս թէ բարեասաց. Բարեխօս. ջատագով. միջնորդ։

65 ՆՀԲ բառահոդվածներից վերցրել ենք միայն իմաստաբանական մասերը։

Դնղչեցուցել. վերընծիւղել. կամ բողբոջել։	Դնղչեցուցանեմ.ն. Տալ դընդչել. հնչեցուցանել։
Կրճի. սփռի կամ աճի։	Կրճիմ=Կափչիմ. փեալ. փուցեալ. ձ. Սերտ յարիլ. միանալ. մածանիլ. չփիլ...։
Հրուանդանս իմն. և սառաւանդակս. իբր վարդաբուն ապարանք։	Հրուարդանք, նաց.գ. Հրաձև գահաւանդք ի ծովափունս։
Ճղեմելոյ. դողդոջալոյ. կամ երերալոյ։	Ճղեմիլ. ձ. Ճղճիմ լինել մարմնով (ռմկ. քաշուիլ), ղառամիլ, թառամիլ, կնճռիլ։
Միջագար. միջնատուր. կամ ի միջին ունելով կցուած։	Միջագար,ի,աց.ա. Որոյ մէջըն կամ միջուկն է խանգարեալ. Թոյլ. անպիտան։
Նկճախոճ. կորախորհ. կամ ունայնախոհ։	Նկճախոճ.ա. Նկուն խորհըրդով. յետսամիտ։
Ջրղին. հնարին. կամ ջանան. կամ խորհին։	Ջրղիմ, եցայ. ձ. (Ի Ջիրդ բառէն) Հանապազորդել, ցանգորդել, անդադար ճգնիլ։

Բերված օրինակները ցույց են տալիս, որ ձեռագիր բառարանի մեկնությունները երևան են հանում գլխաբառերի նոր իմաստներ, կիրառական առումներ ու նրբերանգներ, որոնք աստիճանաբար, բառիմաստի պատմական փոփոխությունների ընթացքում, դուրս են մնացել բառի բովանդակությունից ու հասարակական գիտակցումից։ Բառգիրքն, ուրեմն, լրացնում է ՆՀ բառարանը՝ ընդարձակելով առանձին բառերի իմաստային ընդգրկումը։ Հենց դա էլ Գիտոյից գրքի բառարանի, այլև մյուս հին բառարանների, ամենակարևոր նշանակությունն է արդի բառարանագրության և հատկապես հայերենի բառապաշարի և բառիմաստների զարգացման ու փոփոխման

ուսումնասիրության համար: Բառգիրքն արժեքավոր է նաև նրանով, որ բառամեկնություններում պարունակում է մի շարք հետաքրքիր բառաբարդություններ ու բառաձևեր, ինչպես՝ վայելչաճանճէս, փափՒարան, անղրանալի, գնդաքող, ևիղուտ, զեղուցեմ *(զեղուցեն)*, զարտելութիւն, էրել, բոտանցնիւր, զգեստաժողով, ծաղկազմայլ, անզատմտութիւն, պնդաչլութիւն *(պնդաչլութեամբ)*, մարդադիմութիւն, յողն, յոճնուռոշ, կուրախուռն, կուրաձև *(կարաձև)*, չարընթաց, չարշուլէր, սրտազարհուր:

*Ի վերջո, անհրաժեշտ է նշել, որ բառգրքի բնագիրը զերծ չէ գրչագրական վրիպումներից ու սխալներից: Օրինակ՝ «*Անֆասմնելի. *տեսոն երկիւղ. կամ անպարհուրելի» բառահոդվածում* տեսոն *բառը, որ սովորաբար ձեռագրերում նշվում է* տն *հապավումով, ավելորդ է և առաջացել է* ան *ժխտական նախածանցից, որն անջատվել է* երկիւղ *բառից և սխալմամբ որպես առանձին բառ նշանակող հապավում ընդունվել: Ուրեմն այդ բառի մեկնությունը պետք է լինի «աներկիւղ կամ անպարհուրելի»: Կամ՝ «*Ապշուպել. *ոչ յափշտակել» մեկնության մեջ ավելորդ ու անտեղի է* ոչ *ժխտական մասնիկը,* խնծղանաց *բառի մեկնության մեջ* շարմանգ-ը *պետք է լինի* շարժմանց, Տոռր-*ի մեկնության մեջ* արմար-*ը՝* արմատ *և այլն: Նման թերությունները բարեբախտաբար շատ չեն և եղածներով էլ չի նսեմանում այդ փոքր, բայց հետաքրքիր միջնադարյան բառգիրքը:*

ԲԱՌԳԻՐՔ ՀԱՅՈՑ

Հայ միջնադարյան ձեռագիր բառարանագրության ավարտը նշանավորվեց աչքի ընկնող նվաճումով՝ «Բառգիրք Հայոց» բառարանով: Մեզ արդեն ծանոթ գրեթե բոլոր հին բացատրական բառարաններն ու բառացանկերը XVII դարում աստիճանաբար միացվեցին մի ընդհանուր, համահավաք բառարանի մեջ: Մշակութային ասպարեզ մտավ բավականին ընդարձակ և կառուցվածքով առավել կատարյալ մի բացատրական բառարան, որն իր բառացանկի հարստությամբ ավելի քան երկու անգամ գերազանցում էր իր տեսակի մինչ այդ հայտնի ամենամեծ բառարանին: Լայնորեն տարածված լինելով Հայաստանում և հայ գաղութներում, «Բառգիրք»-ը իր գոյության ամբողջ ընթացքում կարևոր դեր է խաղացել հայ ժողովրդի գիտական ու մշակութային կյանքում: Այդ բառարանը հայ մատենագրության այն արժեքավոր երկերից է, որոնք մուտք գործեցին հարևան վրաց ժողովրդի մշակույթի մեջ. վրաց ականավոր բառարանագիր Սուլխան-Սաբա Օրբելիանին ծանոթ է եղել «Բառգիրք»-ին, որը և, որպես աղբյուր, օգտագործել է իր բառարանի վրացերենի փոխառյալ հայերեն բառերի իմաստները պարզելու, ինչպես նաև բառարանագրական տեխնիկան յուրացնելու նպատակով[66]: Նա գրում է. «Եւ ես մի փոքրիկ բառարան տեսա, որը նրանց [հայերեն] լեզվով Բառգիրք է կոչվում. և ես էլ նրանց օրինակով ձեռնարկեցի [սրան] և կազմեցի, որքան էլ ուժս ներում էր...»[67]:

Բավական է ասել, որ «Բառգիրք»-ը ավելի քան 30 տարվա ընթացքում, մինչև Մխիթար Աբբայի «Բառգիրք հայկազեան լեզուի» բառարանը, բազմաթիվ ձեռագրերով, ապա և երկու տպագրությամբ ամենուրեք ճանաչված միակ ընդարձակ բացատրական բառարանն էր հայ մշակույթի մեջ: Հետագայում իր վաղեմի մասսայականությունը, բնականաբար, չունենալով՝ «Բառգիրք»-ը այնուամենայնիվ գործածությու-

66 Գ. *Մուրադյանը (նշվ. աշխ., էջ 135) այն միտքն է հայտնում, թե Սաբան* Բառգիրք *ասելով չի նշում, թե ինչ բառարան նկատի ունի: Ճիշտ է, որ հայ մատենագրության մեջ* Բառգիրք *նշանակում է* բառարան *առհասարակ, սակայն մեր հին բառարաններից միայն Երեմիա Մեղրեցու հրատարակած բառարանն ունի* Բառգիրք-*ով կազմված խորագիր՝ «Բառգիրք Հայոց»: Ուրիշ ի՞նչ բառարանից կարող էր օգտվել Սաբան, երբ հայերեն մյուս բառարանները անհամեմատ փոքր են «Բառգիրք»-ից, ունեն իրենց առանձին խորագրերը և* Բառգիրք *չեն կոչվում: Մինչդեռ «Բառգիրք Հայոց»-ը տարածված էր բազմաթիվ գրչագրերով և տպագրությամբ: Ոչ մի հիմք չկա կասկածելու, որ Սաբայի հիշատակած բառարանը հենց «Բառգիրք Հայոց» բառարանն է:*

67 Լ. Մելիքսեթ-Բեկ, *նշվ. աշխ., էջ 122:*

նից դուրս չեկավ ու չմոռացվեց։ Ընդհակառակն, այն աղբյուր հանդիսացավ Մխիթար Արբայից մինչև մեր ժամանակները գրված գրեթե բոլոր հայերեն բացատրական և մասամբ նաև այլ բնույթի բառարանների համար։ Այսօր էլ «Բառգիրք»-ը բավականաչափ արժեքավոր ու անհրաժեշտ բառարան է հին բնագրերով և բառաքննությամբ ու ստուգաբանությամբ զբաղվող բանասերի, բառարան կազմող ու հայերենի բառային կազմը հետազոտող լեզվաբանի համար։

* * *

Որպես համահավաք բառարան «Բառգիրք»-ը միանգամից չի ստեղծվել, այլ լինելության մի երկար ժամանակաշրջան է անցել. նրա բաղկացուցիչ հին բառարանների ու բառացանկերի միացումը տեղի է ունեցել գրեթե XVII դարի ամբողջ ընթացքում։ Նրա հիմքում ընկած է հայերեն հնագույն բացատրական բառարաններից մեկը՝ «Բառք քերթողականք» բառարանը[68], որն իր մեջ ամբողջությամբ ընդունել է շուրջ 370 բառ պարունակող հայերեն ամենահին «Բառք յունաբէն»[69] կոչվող բառարանը, դրանից բացի ղգալի քանակով բառեր է ընդունել «Բառք Փիլոնի»[70], «Բառք խորանին»[71] և «Եւթներորդ գլուխ գրոց»[72] բառարաններից։ Այդ բառարանը XII դարում արդեն շուրջ 4000 բառ էր ընդգրկում։ «Բառք քերթողականք»-ի ընդարձակումը այլ բառարանների ու մատենագրության զանազան բնագրերից քաղված բառերի հաշվին շարունակվում է և XVII դարի սկզբում (հավանաբար և ավելի վաղ՝ XVI դարի վերջերին) նրա բառացանկը հասնում է շուրջ 4400 բառի (ըստ Մատենադարանի № 267 ձեռագրի, որն ընդօրինակված է 1613 թ.)։ Ապա երևան են գալիս բառարա-

68 Բառարանի քննությունը տե՛ս Հ. Ամալյան, նշվ. աշխ., էջ 82—88։
69 Տե՛ս նույն տեղը, էջ 65—71։
70 Տե՛ս նույն տեղը, էջ 71—76։
71 Տե՛ս նույն տեղը, էջ 76—81։
72 Տե՛ս նույն տեղը, էջ 88—95։

նի 5700, հետո՝ 6700 բառ պարունակող օրինակներ, իսկ XVII դարի կեսերին (1653 թ. գրված № 3430 ձեռագրում) բառացանկում արդեն հաշվվում էր 7500 բառ։ Դրան հետևում են ավելի քան 8100 բառ ունեցող բառարաններ և, վերջապես, հիշյալ դարի 80-ական թվականներից «Բառգիրք»-ի բառամթերքը հասնում է 8500, իսկ դարագլխին՝ ավելի քան 9000 բառի[73]։

Վերջին օրինակով հիմնականում ավարտվում է շուրջ մեկ դար ժամանակահատվածի մեջ ձգվող բառարանների շղթան, որի ստորին օղակներ հանդիսացող բառարանների ստեղծման ժամանակները ճշտությամբ որոշելը դժվար է, որովհետև բառարանների ձեռագրերը մեծ մասամբ անթվակիր են։ Մինչդեռ վերջին շրջանի՝ 7500 և ավելի բառ պարունակող բառարանները, որ պահպանվել են բազմաթիվ թվակիր ձեռագրերով, կազմվել են 1650—1670 թվականների ընթացքում։

Բառարանի ընդարձակման երկրորդ շրջանում, XVII դարում, որպես աղբյուրներ են հանդես գալիս «Բառք եբրայեցւոց», «Մեկնութիւն անուանց եբրայեցւոց», Երեմիա Մեղրեցու «Լուծումն բառից յԱստուածաշունչ գրոց» և այլ բառարաններ, որոնց բառերը գրեթե ամբողջությամբ կամ մեծ մասամբ ընդգրկվում են «Բառգիրք»-ի բառացանկի մեջ։ Դժվար չէ բառաղբյուրների առանձնացնել բառերը, ցույց տալ, թե տվյալ բառը, որ հաճախ առկա է մի քանի տարբեր բառարաններում, առաջին անգամ որ բառարանից է մտել «Բառգիրք»-ի մեջ։ Սակայն առանձին դեպքերում, իմանալով բառի հնագույն աղբյուրը, այնուամենայնիվ դժվար է լինում որոշել՝ տվյալ բառը հենց այդ հնագույն բառարանից է գալիս, թե մեկ ուրիշից։ Այսպես, օրինակ, առած բառը կա «Բառք եբրայեցւոց», «Բառք Փիլոնի», «Եւթներորդ գլուխ», «Բառք Հայոց» և «Բառք

73 Այստեղ խոսքը միևնույն տեսակի և այնպիսի բառարանների մասին է, որոնք ծագում են մեկը մյուսից, ընդ որում հաջորդն իր հիմք բառարանն է՝ հարստացած այլ աղբյուրներից քաղված նոր բառերով։ Ուստի ժամանակի հաշվառումը շատ կարևոր է բառարանի լինելության գործընթացի, խմբագրումների և այլ հարցերի լուսաբանման համար։

Նարեկացւոյն» բառարաններում։ Այդ բառը կա նաև «Բառգիրք»-ի 6500 բառ պարունակող օրինակներում (ձեռ. № 534, 3261 և այլն)։ Հայտնի չէ, թե առած բառը առաջին անգամ որ բառարանից է անցել «Բառգիրք»-ին, թեև գիտենք, որ հիշատակված բառարաններից առաջինն է ամենահինը, իսկ մյուսները գրվել են հետագայում, մինչև XVII դարի կեսերը։ Այլ կերպ ասած՝ հաճախ դժվար է որոշել, թե մի քանի բառարաններում առկա միևնույն բառն իր հնագույն աղբյուրից ինչ ճանապարհով է անցել «Բառգիրք»-ին՝ անմիջապես՝ ավյալ հնագույն աղբյուրից, թե ուրիշ բառարանների միջոցով։ Իսկ այդ պարզելու համար անհրաժեշտ է իրար հետ բառ առ բառ համեմատել ձեռքի տակ եղած այն բոլոր հին բառարանները, որոնք աղբյուր են ծառայել «Բառգիրք»-ի համար։ Համեմատության միջոցով ոչ միայն կորոշվի բառի աղբյուրը, այլև այն, թե տվյալ բառահոդվածը, բառարանից բառարան անցնելով, պահպանե՞լ է իր նախկին՝ սկզբնօրինակում ունեցած ձևը, թե փոփոխությունների է ենթարկվել ընդօրինակողների կողմից, ձեռք բերելով գլխաբառի նոր իմաստներ։ Վերցնենք, օրինակ, նույն առած բառը և տեսնենք, թե ինչպես է այն մեկնվում վերևում թվարկված հին բառարաններում։

1. Առած. պատգամ (Բառք եբրայեցւոց, ձեռ. № 4149)։
2. Առած. պատգամ (Բառք Փիլոնի, ձեռ. № 8198)։
3. Առած. արհեստ (Եւթներորդ գլուխ գրոցս, ձեռ. № 530)։
4. Առած. մարգարէութիւն (Բառք Հայոց, ձեռ. № 744)։
5. Առած. ազդումն (Բառք Նարեկացւոյն, ձեռ. № 3286)։
6. Առած. պատգամ. կամ արհեստ. կամ բան. կամ տեսիլ (Բառք քերթողականք, ձեռ. № 534)։
7. Առած. պատգամ. կամ բան. կամ տեսիլ. կամ խօսք (Լուծումն բառից յԱստուածաշունչ գրոց, ձեռ. № 451)։
8. Առած. բան. կամ պատգամ. կամ տեսիլ. կամ արհեստ (Լուծումն բառից յԱստուածաշունչ գրոց, ձեռ. № 451)։
9. Առած. պատգամ. կամ բան. կամ տեսիլ (Լուծումն բառից յԱստուածաշունչ գրոց, ձեռ. № 451)։

Այս ինը բառահոդվածներում առած բառի 7 մեկնություններից չորսը տալիս են տարբեր իմաստներ, իսկ վերջին երեքը կրկնում են նախորդ իմաստները և ավելացնում են երեք նշանակություն ևս։ Ընդ որում առավել հին բառարանները ներկայացնում են բառի միայն մի իմաստը, իսկ վերջին բառարանը, որի հեղինակն օգտվել է մյուս բառարաններից, բերում է բառի հինգ նշանակություն։ Այս բոլորից հետո «Բառգիրք»-ի 8650 և ավել բառ ունեցող խմբագրությունները կրկնում են «Բառք քերթողականք»-ի բառահոդվածը, իսկ «Բառգիրք»-ի տպագիր օրինակը այդ նույն բառահոդվածին ավելացնում է նաև բրոց և բաղելակ իմաստները, ուստի և առած գլխաբառի համար ստացվում է այսպիսի մի բառահոդված. «Առած. պատգամ. կամ արուեստ. կամ բան. կամ տեսիլ. կամ բթոց. կամ քաղալակ»[74]։

Ի դեպ, բառի մեկնության ճիշտ կամ սխալ լինելու մասին այստեղ մենք խոսելու կարիք չունենք, կասենք սակայն, որ առած գլխաբառի վերջին մեկնության մեջ բրոց և բաղելակ բառերի ավելացումը անտեղի է և ոչինչ ավելի, քան թյուրիմացություն։ Եվ գլխաբառի մեկնության աստիճանական ընդարձակումն ու զանազան խմբագրումները, որ հատկապես շատ են կիրառվում «Բառք քերթողականք»-ի ընդօրինակություններում, հաճախ ուղեկցվում են աղավաղումներով, գլխաբառին ոչ հատուկ, պատահական ու սխալ իմաստների վերագրումով։

Վերևում բերված բառահոդվածների համեմատությունը ցույց տվեց, որ. ա) առած բառն առաջին անգամ, պատգամ իմաստով, գրանցված է եղել «Բառք եբրայեցւոց» բառարանում (1), դեռևս X—XI դարերում, բ) այդ բառարանից բառահոդվածն անցել է «Բառք Փիլոնի» բառարանին (2), գ) այդ երկու (1, 2) բառարաններից (բայց չգիտենք, թե որից) է առած բառն անցել մյուս բառարաններին (6, 7), դ) բառի

---

74 «Բառգիրք Հայոց. արարեալ ի Սուրբ Էջմիածին Երեմիայ Վարդապետէ», Ա տպ., Ալիկօնայ, 1698, էջ 29, Բ տպ., 1728, էջ 39։

մյուս բոլոր իմաստները, բացի պատգամ-ից նշում են միայն XVII դարի բառարանները, ե) «Եւթներորդ գլուխ», «Բառք Հայոց» և «Բառք նարեկացւոյն» բառարանները առած-ը մեկնում են ինքնուրույն (3, 4, 5), զ) «Բառք քերթողականք»-ի մեկնության մեջ (6) մտել են նախորդ մեկնություններից միայն երկուսը (1 կամ 2 և 3), է) «Լուծումն բառից յԱստուածաշունչ գրոց» բառարանի մեկնությունը (8) գալիս է «Բառք քերթողականք»-ից, ը) «Բառգիրք»-ը իր մեկնությունը (10) վերցրել է «Բառք քերթողականք»-ից (6) և ոչ թե «Լուծումն բառից յԱստուածաշունչ գրոց» բառարանից (8), որն ունի նաև երկու այլ մեկնություններ (7, 9)։ Այսպիսով, բնագրերի համեմատության միջոցով նախ պարզվում են տարբեր բառարանների հարաբերությունները, ինչ շատ կարևոր է աղբյուրագիտական տեսակետից, ապա ի հայտ են գալիս իմաստաբանության համար հետաքրքիր փաստեր։

Որոշելով բառարանի հին աղբյուրները, ապա իմանալով նրանց ստեղծման ժամանակը, հնարավոր է դառնում ցույց տալ, թե՝ ա) երբ է տվյալ բառն առաջին անգամ բառարանի մեջ մտել և որ բնագրից, բ) ինչ իմաստ է ունեցել բառն այն ժամանակ (ըստ բառարանի մեկնության), գ) ինչպես է մեկնվել այդ բառը հետագա շրջանի բառարաններում, դ) պահպանվել է արդյոք բառի նախնական ձևը, թե փոփոխություններ է կրել՝ հնչյունափոխական օրենքների կամ գրչագրական սխալների ու աղավաղումների հետևանքով։ Այսինքն՝ բառարանների համեմատական հետազոտությունը շատ կարևոր է նաև բառիմաստի կամ բառի պատմության տեսակետից։ Ընդորում երբեմն ի հայտ են գալիս այնպիսի երևույթներ, որոնք սովորաբար չեն հանդիպում մշակութային մյուս բնույթի գրավոր աղբյուրներում։

«Բառգիրք Հայոց»-ի հետ առնչվող բոլոր հին բառարանները իրենց տարբեր ընդօրինակություններով նախ իրար հետ, ապա՝ «Բառգիրք»-ի ու նրա խմբագրությունների հետ համեմատելուց և ընդամին՝ բառահոդվածների փոխանցումները հնարավորությունների սահմաններում ուշադիր զննելուց հետո պարզվեց, որ քննվող բառարանի համար աղբյուր են եղել չուրջ ինը տարբեր բառարաններ։ Դրանցից միայն վեցն են բառեր տվել բառարանի սկզբնօրինակին, իսկ մյուս երեքը, որ գրվել են հետագայում, XVII դարի երկրորդ կեսերին, աղբյուր են «Բառգիրք»-ի 1670-ական թվականներին, ապա ավելի ուշ երևան եկող խմբագրությունների համար։

Թվարկենք այդ աղբյուրները, նշելով յուրաքանչյուրից «Բառգիրք»-ին անցած բառերի քանակը[75].

Բառք քերթողականք . . .	3500
Բառք երրայեցւոց	990
Բառք Հայոց	1700
Բառք Փիլոնի	140
Բառք խորանին	90
Եւթներորդ գլուխ գրոցս . .	250
Ընդամենը՝	6670

Այսքանը միայն հին բառարաններից։ Մնում են մեզ անհայտ գրական երկերից, ինչպես նաև խոսակցական լեզվից ծագող բառերը, որոնց թիվը շուրջ 830 է։ Ուրեմն ամբողջ բառարանն ընդգրկում է մոտ 7500 բառ։ Եվ հենց դա էլ քննվող բառարանի սկզբնական օրինակն է, այն բառարանի, որ մենք հայ բանասիրության մեջ ընդունված անվանումը պայմանականորեն ընդունելով, կոչում ենք «Բառգիրք Հայոց» կամ կարճ՝ «Բառգիրք», չնայած միայն տպագիր օրինակին հատուկ այս խորագիրը շռնի բառարանի ձեռագիր օրինակներից և ոչ մեկը։

Ասացինք, որ բառարանին նախորդում են իրարից միայն բառերի քանակով տարբերվող և մեկը մյուսի մեջ ամբողջու-

75 Մեր շարադրանքում «Քերթողական բառարաններ» ընդհանուր անվանումը վերաբերում է տարբեր ծավալի ու խմբագրությունների այն բոլոր բառարաններին, որոնք գրված են «Բառգիրք»-ի սկզբնօրինակից առաջ։ Այդ բառարաններն ունեն, իրոք, «Բառք քերթողականք» խորագիրը։ Սակայն պարզությունը մոնենալու և շփոթումները կանխելու նպատակով՝ մենք բազմաթիվ քերթողական բառարաններից թվարկման մեջ նկատի ունենք ամենահինը, որը հիմք է եղել հետագա համանուն բառարանների համար։

թյամբ ընդգրկվող քերթողական բառարաններ: Դրանք առանձին նպատակներով թերևս արժանի լինեն հատուկ քննության, սակայն «Բառգիրք»-ի քննության դեպքում այդ բառարանների բովանդակության մասին ասելու գրեթե բան չի մնում: Անհրաժեշտ է, սակայն, հաշվի առնել նրանց մասնավոր, բնագրային այն առանձնահատկությունները, որոնք գլխավորապես բանասիրական նշանակություն ունեն: Քերթողական բառարանների շարքը մենք կամայականորեն չենք ընդհատում՝ կանգ առնելով 7500 բառ պարունակող բառարանի վրա: Բանն այն է, որ այդ օրինակը իրեն նախորդող 6500 բառ ունեցող բառարանից ոչ միայն ավել բառեր ունի, այլ, որ գլխավորն է, ենթարկված է բառարանագրական մշակման. բառերը վերադասավորված են առավել հաջող այբբենական կարգով և զգալի փոփոխություններ են կատարված բառահոդվածներում: «Բառգիրք Հայոց»-ին նախորդող քերթողական բառարանները կանոնավոր այբբենական բառաշարք չունեն, կրում են իրենց ամենահին նախօրինակի՝ «Բառք քերթողականք»-ի ընդարձակ խորագիրն ամբողջությամբ և սկսվում են աստուածազան, աստուածազարդ, աստուածարեալ և նման այլ գլխաբառերով: Հետագա համալրումների ընթացքում նոր բառերն ավելացվել են համապատասխան բառացանկերի վերջում: Մինչդեռ «Բառգիրք»-ը, որ ամենաընդարձակն է բոլոր քերթողական բառարաններից, վերակառուցված է. բառարանի անհայտ մշակողը, որ փաստորեն հեղինակ է, սկզբից, վերնագրում նշում է, թե ինքը վերադասավորել է բառերը, բառացանկը համալրելով Աստվածաշնչից քաղված նոր բառերով: Բառացանկի ընդլայնումից ու բառաշարքի այբբենական կարգի բարելավումից բացի, բառարանի հեղինակը բառահոդվածին նոր տեսք է տվել՝ երբեմն տալով հղումներ հիշեցնող որոշ տեղեկություններ և առանձին բառերի, հատկապես մակբայների, կապերի ու շաղկապների խոսքի մասային պատկանելությունը նշող բացատրություններ: Այդուհանդերձ «Բառգիրք»-ի բառահոդվածը դեռևս հին կերպարանք ունի և մնում է որպես միջնադարյան բառարանին հա-

տուկ մեկնություն՝ գլխաբառին գլխավորապես հոմանիշների առադրման եղանակով:

«Բառգիրք Հայոց»-ի սկզբնօրինակը մեզ հասել է հայերեն բազմաթիվ ձեռագրերով, որոնցից 15-ը գտնվում է Մատենադարանում[76]: Թվակիր հնագույն գրչագրերն են №№ 3430 (1653 թ.), 533 (1660 թ.), 3468 (1666 թ.), 10223 (1663 թ.), 537 (1673 թ.) և 8606 (1678 թ.): Վերջին թվակիր ձեռագիրը՝ № 540 ժողովածուն, գրված է 1706 թ.: Առաջին ձեռագրի (№ 3430) ընդօրինակման տարեթիվը բառարանի սկզբնօրինակի գրության ժամանակ համարելու հիմք չունենք, այսինքն չենք կարող ապացուցել, թե հիշյալ ձեռագիրը բառարանի նախագաղափար օրինակն է ներկայացնում. ձեռագրի սկզբի թերթերը չկան և խնդրո վերաբերյալ բան չի տալիս գրչի հիշատակարանը, որտեղ ասվում է. «...որ եւ կարողութիւն կոզմաս բազմամեղ գրչի հասանել ի գրաւ բանիս որ կոչի բառ երբայեցի, որ ըստ տառս մեր յար շարաղուգի: Ի թբւականութեանս հայկազնի հազարերորդի. հարիւրերորդի. երրորդի. ի հայրապետութեան տեառն Փիլիպպոսի հայոց կաթողիկոսի...»[77]:

Այստեղ, սակայն, հետաքրքիր է այն, որ գրիչ Կոզման բառարանը **Բառ երբայեցի** է համարում: Գուցե նրա համար, որ բառարանն սկսվում է Աստվածաշնչի երբայական բառերով՝ **աբաթովր, աբաեա, աբարիմ, աբբա, աբբաէլ, աբբաեա, աբբիայ, աբբոր, աբղիմելիխ** և նման գլխաբառերով:

Այդ գրչագրին շատ նման է № 10223-ը, որը նույնպես բառարանի սկիզբը չունի և սկսվում է Ա-ի բառացանկի հենց նույն տեղից ու նույն բառահոդվածից, ինչպես առաջինը: Սակայն հաղիվ թե № 3430-ի ընդօրինակությունը լինի և ավելի հավանական է, որ այդ երկուսն էլ ծագում են մի անհայտ մայրօրինակից: Եթե այդպես է, ապա նշանակում է, որ «Բառգիրք Հայոց»-ը գոյություն է ունեցել 1653 թվականից էլ առաջ:

---

76 Տե՛ս Մատենադարան, ձեռ. №№ 268, 533, 528, 537, 540, 545, 2431, 3286, 3468, 5126, 8292, 8606, 3430, 8494, 10223:

77 Մատենադարան, ձեռ. № 3430, էջ 201ա:

Գոյություն ունեն նաև բառարանի խմբագրություններ, որոնք սկզբնօրինակից տարբերվում են բառերի քանակով ու որոշ չափով նաև կառուցվածքով, ինչպես նաև խմբագրական տարբերակներ, որոնք տարբերվում են միայն բառերի քանակով: Արդ ծանոթանանք այդ բնագրերին:

Բառարանի խմբագրություն է հանդիսանում այն օրինակը, որ մեզ հասել է Մատենադարանի №№ 539, 3171 և 8456 անթվակիր ձեռագրերով: Այս խմբագրությունը պարունակում է շուրջ 8130 բառ և սկզբնօրինակից տարբերվում է նաև նրանով, որ բառացանկերի հենց սկզբից բերվում են համապատասխան տառերը և տրվում է նրանց հնչյունաբանական բնութագիրն ըստ հին քերականների, ինչպես՝ «Այբ. տառ ձայնաւոր և երկամանակ, սկիզբն գրոց», «Բեն. գիր բազաձայն և միջակ. ի մէջ փիւրի և պեի. նոյն և բռնաբարբառ» և այլն:

Առավել տարածված է եղել բառարանի 8650—9000 բառ պարունակող խմբագրությունն իր տարբերակներով: Այս երկրորդ խմբագրությունը պահպանվել է շատ գրչագրերով[78], օրինակ՝ Մատենադարանի № 450 և № 2294 (8740 բառ), № 451 (9030 բառ), № 1495 (8840 բառ), № 535 (9240 բառ) և այլ ձեռագրերում:

Եթե «Բառգիրք»-ի սկզբնօրինակի ձևավորման գործում բառեր մատակարարող հիմնական աղբյուրները եղել են հին բառարանները, ապա խմբագրությունների ու տարբերակների առաջացման գործում աղբյուրներ են դառնում արդեն նոր բառարանները, որոնք կազմվել են բառարանի սկզբնօրինակից հետո: Օրինակ, երկրորդ խմբագրության բառացանկերն են մտել Երեմիա Մեղրեցու բառարանից շուրջ 150, «Մեկնութիւն անուանց եբրայեցւոց»-ից՝ 400 և «Բառք նարեկացւոյն» բառարանից՝ 10, ընդամենը՝ 560 բառ: Գրեթե նույնքան բառեր, որոնք չկան բառարանագրական աղբյուրներում, ծագում են այլ բնույթի բնագրերից, ինչպես նաև խոսակցական լեզվից: Այսինքն՝ խմբագրությունների առաջացման գործում նոր բառարանները որպես աղբյուրներ նշանակությամբ հավասարվում են բառամթերքի մյուս աղբյուրներին, որոնք անհայտ են:

Տեսանք, որ «Բառգիրք»-ը իր սկզբնօրինակից բացի ունի նաև երկու խմբագրություն՝ առաջին (8130 բառ) և երկրորդ (ամենաքիչը 8650 բառ): Նշելի է, սակայն, որ բառարանները, որոնք նման չեն մյուս բնագրերին, խմբագրությունների բաժանելը խիստ դժվար է, ուստի մեր բաժանումն էլ պայմանական է և բառարանների բնագրերի միջև անթափանցելի անջրպետներ չի ենթադրում: Ըստ էության բառարանի խմբագրություն կամ տարբերակ կոչված ամեն մի օրինակ, փաստորեն, ինքնուրույն բառարան է: Նշանակում է, հետևաբար, որ բառարանները խմբագրությունների բաժանելու նպատակը նրանց պատմությունը լուսաբանելն է և ունի գլխավորապես աղբյուրագիտական, բանասիրական նշանակություն:

Ավելորդ չենք համարում տորոն մի համեմատական տախտակում ցույց տալ «Բառգիրք Հայոց»-ի յուրաքանչյուր բառացանկում առկա բառերի քանակն ըստ լավագույն գրչագրերի և տպագիր օրինակի[79].

78 Տե՛ս Մատենադարան, ձեռ. №№ 450, 451, 535, 544, 1495, 2294, 3172, 3192, 3287, 6568:

79 Մեկ առ մեկ հաշվել ենք տախտակում նշված և չնշված բազմաթիվ բառարանների բառերը: Այդուհանդերձ տախտակում բերվող թվերը բառացանկերում առկա բառերի ճշգրիտ քանակն արտահայտող թվեր չեն, թերևս հնարավոր էլ չէ, թերևս, ամենազգուշավոր ու ճիշտ աշխատանքի դեպքում, բացարձակ ճշտությամբ հաշվումներ կատարել տարբեր գրիչների կողմից ընդօրինակված բառարաններում, որոնք գրված են երբեմն խառը, առանց բառանշատման ու գլխաբառերը նոր տողից սկսելու, այլև պարունակում են կրկնություններ, աղավաղումներ, խաթարված անընթեռնելի տեղեր և այլ նյութական ու գրչագրական թերություններ: Ասողիկով նշված են այն թվերը, որոնք չեն համապատասխանում ձեռագրերում եղած բառերի փաստացի քանակին. այդ բառացանկերը ձեռագրերում սկզբից կամ վերջից թերի են՝ թերթերի բացակայության պատճառով: Այդպիսի ձեռագրերում բառերի թիվը ցույց տալու և ամբողջական պատկեր ստեղծելու նպատակով թերի բառացանկերի բառերի քանակը վերականգնել ենք տվյալ ընդօրինակությանը հարազատ, նրա հետ մի մայրօրինակից արտագրված ձեռագրերի օգնությամբ:

Բառացանկեր	Բառերի քանակը սկզբնօրինակի ձեռ.					Բառ. ք. Ա խմբ. ձեռ.	Բառերի քանակը Բ խմբ. ձեռ.			
	3430	533	10223	537	545	3171	3172	1495	451	տպագիր
Ա	810	834	807	800	855	870	920	1060	1155	1013
Բ	340	339	338	332	337	345	415	411	419	405
Գ	280	285	282	294	290	290	331	323	340	322
Դ	250	276	277	280	275	256	319	298	283	286
Ե	300	318	300	324	310	310	310	346	333	337
Զ	215	233	214	238	235	216	237	248	280	238
Է	63	65	66	66	65	59	61	69	75	70
Ը	125	129	120	140	127	130	143	141	138	140
Թ	200	217	212	222	219	231	244	240	239	239
Ժ	37	47	45	47	47	44	50	52	54	51
Ի	143	146	147	148	149	143	154	145	177	146
Լ	100	106	102	98	106	110	119	118	126	112
Խ	270	285	275	285	284	316	324	330	335	326
Ծ	90	95	89	95	97	114	125	127	125	117
Կ	420	427	420	433	434	465	503	531	524	511
Հ	360	379	363	373	377	445	460	417	470	450
Ձ	61	61	60	58	62	77	79	79	87	77
Ղ	71	71	71*	64	68	74	77	73	86	72
Ճ	105	112	112*	104	112	140	144	147	150	139
Մ	360	385	381	332	383	440	455	463	484	466
Յ	297	281	244	255	288	306	319	314	338	315
Ն	268	272	272*	257	262	305	317	312	308	314
Շ	172	178	178*	173	174	218	216	213	219	209
Ո	222*	222	222*	225	227	250	281	263	286	260
Չ	45*	45	45	46	45	48	56	57	57	54
Պ	250	260	260	260	260	302	323	315	264	303
Ջ	56	57	56	58	55	61	63	64	63	63
Ռ	59*	59	59	60	62	63	69	64	70	63
Ս	407*	337	365	407	413	421	438	427	451	430
Վ	210	217	211	215	223	247	245	246	248	250
Տ	256	260	259	281	261	291	295	295	305	297
Ր	27	28	26	28	28	32	33	33	36	31
Ց	58	56	55	56	59	70	76	73	78	74
Ւ	11	11	11	11	12	8	12	13	17	13
Փ	153	154	178	156	152	176	190	184	190	184
Ք	180	195	192	196	190	210	220	212	230	215
Օ	53	40	39	40	40	48	63	69	66	58
Ֆ	—	—	—	—	—	—	—	—	16	—
Ընդամենը	7324	7482	7353	7457	7583	8131	8686	8772	9122	8650

Ձեռագրերի համեմատությունից, մասամբ նաև վերևից աղյուսակից, անմիջապես աչքի է ընկնում այն, որ «Բառգիրք»-ի միևնույն խմբագրությանը պատկանող ընդօրինակությունները, հատկապես բառերի քանակի տեսակետից, երբեմն են հանում զգալի տարբերություններ նաև այն դեպքում, երբ դրանք ընդօրինակված են մի մայրօրինակից կամ նույնիսկ մեկը մյուսից։ Բացի դրանից, բառարանի գրչագրերը տարբերվում են նաև հենց բառերով, այսինքն՝ սկզբնօրինակը ամբողջությամբ, նույն բառերով, չի ամփոփվում ավելի ընդարձակ բառացանկ ունեցող խմբագրությունների մեջ։ Օրինակ՝ բաց № 533 ձեռագրի՝ անդամաթիւ, բարիշ, գազմաթ, դամոն, եթեր, զինհար, ընդաթուր, թիւր, ինքնեակ, լիճ, խուղ, ծայրատ, կապարճակիր, համադամ, ձիւթադէմ, ճոռոմ, մարզպան, յոքնիշխան, նազարէթ, շնջրի, պատկանապէս, սեռական, վղուրկ, տուայտել, փառնակ, քանզի և այլ, շուրջ 400 բառեր չկան բառարանի երկրորդ խմբագրության բառացանկում։

Ուրեմն պետք է նկատի ունենալ, որ խմբագրությունների բառացանկերն, այնուամենայնիվ, սկզբնօրինակի բառացանկը լիակատար ամբողջությամբ չեն պարունակում։ Բառարանի ու նրա խմբագրությունների բնագրերը վերարտադրող նույնական, իրարից միայն գրչագրման տեխնիկական հանգամանքներով տարբերվող ձեռագրերը հազվագյուտ են։ Այս երևույթը հատուկ չէ հայերեն մյուս ձեռագիր բառարաններից և ոչ մեկին։ Մինչդեռ դա քննվող բառարանի համար պատահական չէ և իր պատճառներն ունի։ Եթե մյուս բառարանները՝ «Բառք քերականին», «Բառք Փիլոնի», «Բառք Վարդան գրոց», «Բառք Գազիանոսի» և այլն մատենակից բառարաններ են և պահպանվել են առանց խմբագրությունների ու էական փոփոխումների, ապա «Բառք քերթողականք»-ը եղել է ընդհանրապես բառարան քերթողական ու ճարտասանական կոչվող բառերի, որոնք քաղված են հայ մատենագրության բազմազան երկերից և ոչ թե մի որևէ բնագրից միայն։ Հետագայում այդ բառարանն ընդօրինակողներն իրենց ազատ էին զգում որևէ

որոշակի բնագրի չվերաբերող ու որևէ հեղինակի անուն չկրող այդ բառարանի նկատմամբ, ինչ, դարավոր սովորույթին հնազանդ, չէին կատարում մյուս բնագրերն ընդօրինակելիս:

«Բառգիրք Հայոց»-ը գրչագրերի մեծ մասում անխորագիր է: Մնացած ձեռագրերում հիմնականում անփոփոխ կերպով պահպանվել է «Այս բառք քերթողականք...» սվանդական վերնագիրն ամբողջությամբ, հետագայում լրացվելով անհայտ հեղինակի խոսքերով՝ բառարանն Աստվածաշնչի նոր բառերով համալրելու և բառաշարքի այբբենական կարգը բարելավելու մասին: Այդ լրացումով հանդերձ բառարանի ամբողջական վերնագիրն այսպես է՝ «Այս բանք[80] են քերթողական. վասն չափոյ հոմերական տաոիցն. վասն որ քերթողական արհեստքն չափաբերականք են և չափով վարին. և են որ գեղչուկք են որով ճարտասանքն վարին զի յաճախապէս փոխարերին. սակս զարդու ճարտասանիցն. և հարկ է հոգնահամար եղանիլ. իսկ թէ զյունաց բառն խնդրես որ սկիզբն էր եղեալ այն ևս խառնեալ է յայս նաև զբառ աստուածաշնչին որ յետոյ հաւաքեցաւ»[81]: Այս նույն խորագիրն ունի բառարանը նաև №№ 8606 (1678 թ.), 5126 (ԺԷ դար), 8494 (ԺԷ դար), իսկ «որ սկիզբն էր եղեալ» արտահայտության բացթողումով՝ № 545 (1698 թ.) և այլ ձեռագրերում: Առաջին խմբագրության երեք գրչագրերն էլ անխորագիր են: Այդպես են նաև երկրորդ խմբագրության №№ 450, 528, 535, 2294, 3287 և 6568 գրչագրերը:

Ամենահին (№ 3430) թվակիր ձեռագրում բառարանը պակասավոր է. բացակայում են սկզբի թերթերը, որոնց վրա գրված պիտի լիներ բառարանի վերնագիրը և Ա-ի բառացանկի մի մասը, սկզբից մինչև Արէլ գլխաբառը, ընդամենը 22 բառահոդվածով: Հետևաբար № 533 ժողովածուն բառարանի վերոհիշյալ վերնագիրը վկայող հնագույն թվակիր ձեռագիրն է:

Կան ձեռագրեր էլ, որոնք այդ խորագիրն ունեն նրա

80 Ձեռագրերի մեծ մասում՝ բառ:

81 Մատենադարան, ձեռ. № 533, էջ 17բ:

վերջին հատվածի («Իսկ թէ զյունաց...» բառերից մինչև վերջ) այլ ձևակերպումով: Օրինակ՝ № 3468 (1665 թ.) ձեռագրում այսպես է՝ «Այս բառք են քերթողական... Իսկ զյունաց փոքր բառն (իմա՛ բառարանը՝ «Բառք յունարէն»— Հ. Ա.) նաև զբառս աստուածաշնչին, որ յետո հաւաքեցաւ խառնեցաք ի մի ըստ իւրաքանչիւր տեղոջ»[82]: Այս վերջին խորագիրն ավելի հին է թվում և հավանաբար գալիս է բառարանի նախագաղափար օրինակից: Մոտավորապես այդպիսին է բառարանի № 540 գրչագրի խորագիրը, որի վերջին հատվածն ընդարձակված է և «Այս բառք քերթողականք... հոգնահամար եղանիլ» հին խորագրից հետո շարունակվում է այսպես՝ «Արդ՝ յուշ լիցի եղբարց իմոց և հարցդ. որք հանդիպիք սմա. զի բազմամեղ նահապետս որ զայս ծրեցի զյունաց բառն որ ի բուն օրինակն սկիզբն գրած է զայն ևս խառնեցի ի մին. և գրեցի յիւրաքանչիւր տեղոջն: Այլև զաստուածաշնչին բառն ևս խառնեցի ի ներս»[83]: Ինչպես տեսնում ենք, գրիչ Նահապետն իր անունը ուղղակի տեղադրում է վաղուց արդեն հայտնի վերնագրի մեջ, ստեղծելով այն տպավորությունը, թե ինքն է հոմնարեն և Աստվածաշնչի բառերը «Բառք քերթողականք» բառարանին ավելացնողն ու բառացանկը մշակողը: Ապա հիշյալ խորագրից հետո ու բառարանից անմիջապես առաջ կա մի նոր վերնագիր՝ «Գիրքս կոչի բառ»:

Բոլորովին նոր մի համառոտ խորագիր ունի բառարանի երկրորդ խմբագրության հնագույն գրչագրերից մեկը՝ Մատենադարանի № 1495 (1684 թ.) ձեռագրում: Այստեղ վերևում հիշատակված ծավալուն խորագրի փոխարեն կա միայն՝ «Բառգիրք յաղագս Հին և Նոր կտակարանաց»: Վերջապես, բառարանի երկրորդ խմբագրության ընդարձակ և լավ մշակված տարբերակը, որ կազմել է № 451 ձեռագրի գրիչ Ադաբիան 1698 թ., վերականգնում է բառարանի հին, նախնական խորագիրը նույնությամբ, առանց ավելացումների, որոնք, ինչպես տեսանք, կատարվել են XVII դարի հեղինակների կողմից:

82 Մատենադարան, ձեռ. № 3468, էջ 283բ:

83 Մատենադարան, ձեռ. № 540, էջ 4բ:

Խոսելով բառարանի վերնագրերի մասին, տեսանք, որ մինչև 1684 թ. ոչ մի ձեռագրում չի հանդիպում «Բառգիրք Հայոց» խորագիրը, որ ծագում է երկրորդ խմբագրության № 1495 ցրչագրից, որը եթե տպագիր «Բառգիրք Հայոց»-ի բնագիրը չէ, ապա ընդօրինակված է այդ անհայտ բնագրից կամ նրա հետ միասին՝ մի ավելի հին բնագրից։ Ուրեմն դարերի ընթացքում «Բառք քերթողականք» կոչված բառարանը, հետագա ընդարձակումից ու բառաբանագրական մշակումից հետո, առաջին անգամ «Բառգիրք» անվանվեց XVII դարի երկրորդ կեսում, իսկ «Բառգիրք Հայոց»՝ միայն 1698 թ. տպագրությամբ։ Ապա տպագրությունից հետո էլ հանդես են գալիս «Բառգիրք»-ի ձեռագիր ընդօրինակություններ, շարունակվում է բառացանկի ընդլայնումը՝ հասնելով մինչև 11500 բառի (Մատենադարանի № 3274 ձեռագրում)։ Սակայն տպագրությամբ սահմանափակվում ու ամրագրվում է բառարանի ձեռագիր ընդօրինակման գործը, գոյություն ունեցող ցրչագրերի նկատմամբ ուշադրություն չի դարձվում, վերջապես, մոռացվում է խմբագրությունների գոյությունը, և բոլոր հին գրչագրերը պարզապես դիտվում են որպես տպագիր բառարանի ձեռագիր օրինակներ առհասարակ։ Մինչդեռ բազմաթիվ օրինակներով տարածված տպագիր բառարանը, որ վերարտադրությունն էր «Բառգիրք»-ի երկրորդ խմբագրության, 8650 բառ պարունակող մի գրչագրի, ընդհանուր ճանաչում գտնելով, համարվեց մեր ուշ միջնադարյան բառարանագրության գրեթե միակ ու լավագույն հուշարձանը։

«Բառգիրք Հայոց»-ի տպագրությունը չափազանց կարևոր իրադարձություն էր հայ մշակույթի և մասնավորապես հայ բառարանագրության դարավոր պատմության մեջ։ Բառարանը լույս տեսավ 1698 թ. հոկտեմբերին, Ամստերդամից Իտալիայի Ալիկոռնա (Լիվորնո) քաղաքը տեղափոխված «Ս. էջմիածնի և ս. Սարգիս զորավարի» անունը կրող հայկական տպարանում[84]։ Այդ հրատարակությունը ընդամենը 344

[84] Տպարանի մասին տե՛ս Ա. Առաքելյան, Նշվ. աշխ., էջ 298—299, 303—305։

էջից բաղկացած, ոչ մեծ չափերի (15,3×10) մի գիրք է, որի վերջում, բառարանից հետո, դետեղված է քաղաքների անուններ բացատրող մի բառացանկ «Աշխարհացոյց» խորագրով[85]։ Բառարանի տիտղոսաթերթին ազդարարում է.

«Բառգիրք Հայոց. Արարեալ ի Սուրբ էջմիածին Երեմիայ Վարդապետէ։ Եւ ես Սարգիս Եպիսկոպոսս աշխատասիրեալ. և զբառս Աստուածաշունչ գրոցն ընդ սմա միաւորեալ. Որ և ընթերցօղացն Աստուածաշունչ գրոց բաւական է լիով. տպագրեցաւ։ Ի Հայրապետութեանն Տեառն Նահապետի Կաթուղիկոսի ամենից Հայոց։ Ի Յալիկօռնայ քաղաքի. և թվականութեանս Հայոց ՌՃԽէ. յունիս Ժ և ի Թվին փրկչին. 1698 յունիսի Ժ»։

Վերջին (344) էջի վրա կա այսպիսի մի հիշատակարան.

«Շնորհիւն և ողորմութեամբն աստուծոյ. Աւարտեցաւ Բառգիրքս. Թվին Հայոց ՌՃԽէ. և Հոկտեմբերի ամսոյ Ի։ Ի լաւ և ընտիր օրինակէ. որ և յոյժ օգտակար է ընթերցօղացն զաստուածաշունչ և զայլ գրեանս. Աշխատասիրութեամբ. Սարգսի Բանասիրի Եւդոկիացւոյ. որ և սահէթճի վերա ձայնեալ. և որդեակն իմ Սիմոնն. որ յոյժ աշխատեցաւ ընդ յիս. ի թափել զգլխագիրսն. և ի սրբագրելն. զի ի տպարանին ոչ գոյր բազում գլխագիր. վասն այն առաջին տետրն ի վերայ այբից խազ եդաք զի ի տեղի գլխագրի լիցի. և զայն խազով այբերն գլխագիր իմասջիք. և զվերոյ գրեալ Սարգիս Եպիսկոպոսս և զորդեակն իմ զՍիմոնն յիշեսջիք ի մաքրափայլ ազօթս ձեր զմեզ. և զծնօղքն մեր. և դուք յիշեալ լիցիք ի Քրիստոսէ աստուծոյ մերմէ. Ամէն»։

Բառարանի տպագրությանը վերաբերող այս պարզ ու բովանդակալից հիշատակարանը առանձին մեկնության կարիք չունի։ Նկատենք միայն, որ տիտղոսաթերթում և հիշատակարանում նույն տարեթվի կողքին նշվում են տարբեր ամիսներ՝ հունիս և հոկտեմբեր։ Դրանք տպագրման ժամա-

[85] Այս հրատարակության լրիվ մատենագիտությունը տե՛ս «Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակ (1512—1800)», Երևան, 1963, էջ 49։

նակի երկու ծայրակետերն են. տպագրությունն սկսվել է 1698 թ. հունիսի 10-ին և ավարտվել է նույն թվականի հոկտեմբերի 20-ին:

Բառարանի այս առաջին հրատարակությունը, որի տպաքանակն անհայտ է, իսկույն տարածվել, մեծ պահանջարկ է առաջացրել և արդեն XVII դարի առաջին քառորդում «ոչ գտանիւր գիրքս այս յոմանս, այլ էր սպառեալ», ինչպես նըշվում է երկրորդ տպագրության հիշատակարանում: Ուստի, բառարանի հարաճուն պահանջարկը բավարարելու համար միրացու Մուրադն իր միջոցներով վերահրատարակում է «Բառգիրք»-ը 1728 թվականին[86]: Տիտղոսաթերթի վրա արդեն չկա Սարգիս Լեիսկոպոսի անունը և չի նշվում տպագրության վայրը, որ է Կ. Պոլիսը: Ահա և այս տպագրության տիտղոսաթերթը.

«Բառգիրք հայոց. Աբարեալ ի Սուրբ Էջմիածին Երեմիա Վարդապետէ:

Եւ բառք Աստուածաշունչ գրոց ընդ սմա միաւորեալ: Որ և ընթերցողաց զԱստուածաշունչ գիրս բաւական է լիով: Տպեցաւ ի Հայրապետութեան տեառն Կարապետի սրբազան Կաթուղիկոսի: (ՌՃՀԷ)»:

Տպագրությունն ավարտվել է 1729 թ. հունվարի 24-ին՝

«Ի թըւականութեանս արամեան ՌՃՀԸ. ի յունվարի ԻԴ եղև աւարտ և եղը տպեցման հարստագոյն բառարանիս հայոց» (էջ 575—576):

Այս տպագրությունը առաջինի անփոփոխ վերարտադրությունն է: Իսկ «Աշխարհացոյց»-ից բացի բառարանին կցված են նաև հետևյալ նյութերը՝ «Աբարեալ է աշխարհացոյց նորոգ թարգմանչին և երկրորդ լուսաւորչին Վարդանայ Վարդապետին պարզ և համառօտ տեսութեամբ» (էջ 497—535), «Բաց ի վերոյ գրեցելոց Բառք ոմանք հաւաքեցեալք ի գրոց ըստ այբուբենից» (էջ 536—564), «Բառք խոտոց, ծաղկանց և բուսոց

86 Այս հրատարակության մատենագիտությունը տե՛ս «Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակ (1512—1800)», Երևան, 1963, էջ 93:

ոմանց» (էջ 565—572) և «Բառք Գազիանոսի բժշկապետին» (էջ 573—575): Այս նյութերը տպագրիչ միրացու Մուրադին տվել են Հակոբ վարդապետը և միրացու Գեորգը: Տպագրման աշխատանքները կատարել են Տեվլեթ, Խաչեր, Ստեփաննոս, Անտոն աշխատակիցները, Մուրադի հանգուցյալ հայրը՝ Սարգիսը և որդին՝ Սրապիոնը:

Բառարանի երկրորդ տպագրությունը, ինչպես ճիշտ նկատել է Ա. Ղազիկյանը, իր որակով զիջում է առաջինին[87], որի աղավաղումների ու տպագրական վրիպումների վրա ավելացել են նոր թերություններ:

Այսպիսով «Բառգիրք Հայոց»-ը (երկրորդ խմբագրությունը) երկու անգամ տպագրվելով, բացառապես ոչ մի փոփոխություն չկրեց թե՛ կառուցվածքի և թե՛ բովանդակության տեսակետից, դույզն չափով անգամ չմշակվեց, այլ, ընդհակառակն, ձեռագրային թերություններին ավելացան տպագրական վրիպակներ, դրանով իսկ տպագիր բնագիրն իր որակով ցած իջավ ձեռագրերի մակարդակից:

Բայց ո՞րն է «Բառգիրք»-ի այն ձեռագիր՝ «լաւ և ընտիր» օրինակը, որ անփոփոխ տպագրվեց, պահպանվե՞լ է արդյոք այդ ձեռագիրը: Ոչ, ցավոք, այդ ձեռագիրը մեզ հայտնի չէ: Մատենադարանի № № 6568, 1495 և 3199 ձեռագրերը բառերի քանակով, դասավորությամբ, բառահոդվածների ձևակերպումներով ու շարադրանքով, ընդհանրապես ձևի ու բովանդակության բոլոր կողմերով գրեթե նույնն են բառարանի տպագիր օրինակի հետ: Առաջին հայացքից կարող է թվալ, թե հիշյալ ձեռագրերից ամեն մեկը կարելի է տպագրության հիմք համարել: Սակայն բնագրերի ուշադիր, բառ առ բառ համեմատությունը երևան է հանում այնպիսի տարբերություններ, որոնք մեծ մասամբ, թեև էական նշանակություն չունեն և գուցե արդյունք են հրատարակողների կողմից կատարված մասնակի նորոգումների կամ վրիպումների, այնուամենայնիվ, թույլ չեն տալիս տպագրության հիմք համարել վերոնըշյալ ձեռագրերից և ոչ մեկը: Այդ երեք ձեռագրերից միայն

87 Տե՛ս Ա. Ղազիկյան, նշվ. աշխ., սյուն 592:

№ 6568-ն ունի բառարանի առաջին տպագրությանն առընթեր «Աշխարհացոյց»-ը, այն էլ առանց խորագրի ու թերի՝ Տ-ին հաջորդող մյուս բոլոր տառերով սկսվող քաղաքների անունները չկան։ Ձեռագիր բնագրերում բացակայում են տպագիր օրինակում առկա ոչ միայն առանձին բառեր, այլև մի քանի գլխաբառերից կազմված ամբողջական հատվածներ, օրինակ՝ Թ-ի և Փ-ի բառացանկերում։ Երեք ձեռագրերից տպագրությանն առավել հարազատ է № 1495-ը, որի հիմնական տարբերությունը տպագիր բառարանից հանգում է առանձին բառերի բացակայության։

Վերոհիշյալ երեք գրչագրերը, որ մեկը մյուսից արտագրված չեն, տպագրության համար հիմք ընդունված անհայտ գրչագրի հետ միասին հավանաբար ծագում են մի ընդհանուր մայրօրինակից։ Անհրաժեշտության դեպքում, օրինակ, № 1495 գրչագիրը կարող է ընդունվել որպես տպագիր բառարանի հիմնօրինակ, որովհետև նրա և տպագիր բնագրի տարբերությունները շատ չեն և գրեթե բոլորն էլ կարելի է բացատրել հրատարակչական հանգամանքներով։

Մեր քննության հիմնական խնդիրներից մեկն էլ «Բառգիրք Հայոց»-ի հեղինակի հարցն է։ Վերևում տեսանք, որ ձեռագրերը առայժմ փաստեր չեն տալիս պարզելու համար, թե ով է բառարանի հեղինակը։ Տպագրությունից հետո բառարանը հայտնի դարձավ Երեմիա Մեղրեցու անունով։ Այս հանգամանքն առաջին անգամ արժանացավ Ն. Ակինյանի ուշադրությանը։ Նա (1930 թ.) մի առիթով այն միտքն է հայտնել, թե «Բառգիրք»-ի հեղինակը Երեմիա վարդապետ Մեղրեցին չէ, և բառարանը թյուրիմացաբար է վերագրվում նրան։ Հայագետները, որ ընդհանուր առմամբ ծանոթ էին ձեռագիր բառարաններին և «Բառգիրք»-ն էլ ճանաչում էին գլխավորապես նրա՝ Երեմիա վարդապետի անունով տպագրված օրինակով, դեռևս չէին առաջադրել և Ակինյանի այդ առեղծվածային թվացող կարծիքից հետո էլ առաջ չքաշեցին բառարանի հեղինակի հարցը, որովհետև հին բառարանների և մասնավորապես «Բառգիրք»-ի ուսումնասիրությանը դեռ ոչ ոք չէր

ձեռնարկել։ Նման ուսումնասիրություն չէր կատարում նաև Ն. Ակինյանը, որը դիպվածաբար արտահայտված իր իրավացի կարծիքով փաստորեն առաջադրեց բառարանի հեղինակի հարցը՝ լուծումը թողնելով հայ բանասիրությանը։

Արդ մենք ստորև կփորձենք պարզել, թե ո՞վ է «Բառգիրք Հայոց»-ի հեղինակը։ Վկայակոչելով բառարանի առաջին հրատարակության տիտղոսաթերթը (իսկ հետո էլ նաև հիշատակարանը), Ն. Ակինյանը գրում է. «Հրատարակիչն է Սարգիս եպ. Եւդոկիացի, Սահէթճի կոչուած։ Թէ ի՞նչպէս հեղինակը երեմիա վարդապետ կը ներկայացուի, ինձ անմեկնելի է»[88]։ Այս տողերից քիչ ներքև, նույն պարբերության մեջ, մի քանի հին բառարաններից հետո երեմիա Մեղրեցու «Լուծումն բառից յԱստուածաշունչ գրոց» բառարանը հիշատակելով, հեղինակը շարունակում է. «Վերջինս (երեմիա Մեղրեցու բառարանը— Հ. Ա.) համառօտ բացատրութիւն մըն է այն ամէն դժուարիմաց բառերու, դասաւորուած Աստուածաշունչի մատեաններու կարգով, առանց այբուբենական յաջորդութեան։ Եւ որովհետև յաճախ այս Հաւաքումը զետեղուած կը տեսնուի Հին Բառագրքին («Բառգիրք Հայոց»— Հ. Ա.) սկիզբը, համոզուած է, թէ նաև յաջորդող բառերու հեղինակը Երեմիա վ. Մեղրեցին է»[89]։

Մինչև XVII դարի վերջը, ապա «Բառգիրք»-ի երկրորդ տպագրությունից հետո մինչև 1740 թ. մեզ հայտնի բառարանագրական ձեռագրերում չկա մի փաստ, որն ուղղակի կամ անուղղակի ցույց տա, թե բառարանի հեղինակը երեմիա վարդապետ Մեղրեցին է։ Մինչդեռ Աստուածաշնչի բառարանը, որն իրոք երեմիա Մեղրեցին է կազմել, գրեթե բոլոր ձեռագրերում, որտեղ որ այն կա, կրում է իր հեղինակի տիտղոսն ու անունը հայտնող խորագիր՝ «Համառօտ գումարումն և լուծումն բառից յումեմնէ երեմիայէ վարդապետէ (կամ՝ բանա-

88 Ն. Ակինեան, Հ. Աճառեան. Հայերէն արմատական բառարան, «Հանդէս ամսօրեայ», 1930, սյուն 491։

89 Նույն տեղում։

սիրէ—Հ. Ա.) Մեղրեցւոյ»: Իհարկե չի կարելի պահանջել, որ միջնադարից մեզ հասած ամեն մի գրավոր հուշարձանի վրա լինի նրա հեղինակի անունը, և Աստվածաշնչի բառարանի խոթագիրն էլ չենք վկայակոչում որպես Երեմիա Մեղրեցու՝ «Բառգիրք Հայոց»-ի հեղինակ չլինելը հաստատող գործոն կրնվան, չնայած բուն էության փաստը շատ կարևոր է ճշմարտությունը բացահայտելու տեսակետից:

Աստվածաշնչի բառարանի քննության ժամանակ արդեն ցույց ենք տվել, որ Երեմիա վարդապետ Մեղրեցին, որը 1698 թ. հրատարակել է «Աղուեսագիրք»-ը և ամենայն հավանականությամբ կենդանի է եղել մինչև XVIII դարի սկիզբը, իր մշակութային գործունեությունը պիտի որ սկսած լինի մոտավորապես XVII դարի 60-ական թվականներից, այսինքն «Բառգիրք»-ի հնագույն թվակիր գրչագրի (№ 3430) գրությունից շուրջ տասը տարի հետո:

Արդ դիմենք բնագրերին, ցույց տալու համար, որ միևնույն բառերի մեկնությունները Երեմիայի բառարանում և «Բառգիրք»-ի սկզբնօրինակում ակնհայտորեն տարբերվում են ծավալով, ճշտությամբ, ձևակերպումներով և ոճական կողմերով: Սակայն մինչ համեմատությունները հիշենք, որ այստեղ, բառարանագրության ասպարեզում, բնագրային համեմատությունները նույնպես կարևորություն ունեն, սակայն դրանք, այնուամենայնիվ, չունեն այն ճշտությունն ու զորությունը, ինչ մյուս բնագրերի դեպքում: Մենք պիտի համեմատենք բառահոդվածներ, որոնք, գլխավորապես գլխաբառի համարժեքային մեկնություններ լինելով, իրարից պիտի տարբերվեն մեկնվող բառի հոմանիշների քանակով և քիչ դեպքերում միայն՝ բառերի բացատրության այլ եղանակներով ու ձևակերպումներով, ինչպես նաև շարադրանքով, որ կարող է լեզվա-ոճական յուրահատկություններ ի հայտ բերել: Ապա, եթե նկատի ունենանք, որ համեմատում ենք բառահոդվածներ, որոնք նախագաղափար բնագրերից չեն գալիս, այլ մեծ մասամբ մի բառարանից անցել են մյուսին (հաճախ հայտնի չէ, թե բառարաններից որն է բառեր տվողը և որն ընդունողը), ենթարկվելով զանազան խմբագրումների ու գրչագրական վրիպումների, ապա համեմատությունների իրական արդյունքներն ավելի համեստ կլինեն, ուստի և պետք է դիտվեն ոչ թե որպես անառարկելի իրողություններ, այլ որպես մոտավոր ու կողմնորոշող փաստեր:

Այնուամենայնիվ այդպիսի փաստերն էլ կարևոր են մեր խնդրո համար, ուստի անցնենք բառահոդվածների համեմատություններին:

Վերցնենք Երեմիա Մեղրեցու «Լուծումն բառից յԱստուածաշունչ գրոց» բառարանի լավագույն՝ № 3468 գրչագրի և «Բառգիրք»-ի սկզբնօրինակի երկու հնագույն թվակիր ձեռագրերի համապատասխան բառահոդվածները: Ուրեմն համեմատում ենք ընդամենը երկու բնագիր՝ երեք աղբյուրների օգնությամբ: Համեմատվող ձեռագրերը պայմանականորեն նշում ենք լատիներեն փոքրատառերով՝ a=ձեռ. № 3430, b=ձեռ. № 533, c=ձեռ. № 3468: Երեմիա Մեղրեցու բառարանից (նաև մյուսներից) վերցնում ենք միևնույն գլխաբառի այն բոլոր մեկնությունները, որոնք, տարբեր բառացանկերում կրկնվելով, ինչ-որ ձևով տարբերվում են իրարից:

a Բառաբ. լուալիք սպիտակ է իբրև զկիր:
b Բառաբ. լուալիք է սպիտակ որպէս կիր:
c Բառակ. բորակ, որ է լուալիք սպիտակ, իբրև զկիր:
a Բարախել. բախբախել:
b Բարախել. բախբախել. կամ ծեծել:
c Բարախել. բախբախել կամ զարկել:
a Ջմրուխտ. երկնագոյն կապուտակ:
b Ջմրուխտ. ակն. երկնագոյն է. կապուտ:
c Ջմրուխտ. կանաչ է և դեղնագոյն և գտանի ի Փիսոն գետ:
a Խորշ. անկիւն. կամ մանր մանր կացուցանել:
(Խորշ. զաւակ. կամ խնծոր)[90]:

---

90 Եթե գլխաբառը կամ մեկնությունը սխալ չէ, ապա խմբատներով բոլորովին հետու խորշ գլխաբառերն համանուններ են:

b Խորշ. պուճախ. կամ մանր մանր կացուցանել։
c Խորշ. անգիւն է։
Խորշս. մանր մանր կացոցի։
Խորշ. անկիւն. կամ բոյն. կամ քունջ. կամ պուճախ։
Խորշ. անկիւն. կամ քունջ։
Խորշ. անկիւնք. կամ մանր մանր կացոցն է։
a Խորշիլ. խուսել. կամ որոշիլ. կամ հեռանալ. կամ չետ կալ. կամ ի բաց լինիլ։
b Խորշիլ. որոշիլ. կամ հեռանալ։
c Խորշել. մերժել. կամ խոտորել. կամ խուսել։
Խորշել. ետ կենալ. կամ ի բաց լինել։
Խորշել. պատկառել. կամ խուսել։
Խորշել. պատկառել. կամ ամաչել։
Խորշել. խուսել. կամ խոտորել. կամ մերժել. կամ հեռանալ. կամ որոշել։
a Ծառայ. անթլփատ։
b Ծառա. սպասաւոր. կամ պաշ[ա]ունեայ, կամ անթլփատ։
c Ծառա. պաշտօնեայ. կամ սպասաւոր։
a Կոփել. կոփել։
b Կոփել. կոփել. կամ ծեծել։
Կոփել. դնել. կամ հաստատել[91]։
c Կոփել. կոփել. կամ տփել։
Կոփել. կոփել. կամ տփել. կամ կռփահարել։
Կոփել. կոփել. կամ տոփել. կամ փետել. կամ տանջել։
Կոփել. կոփել. կամ փետել. կամ տանջել. կամ թշնամանել։
a Ճաշակ. համատես թէ ուտելեաց. և թէ ըմպելեաց։
b Ջուն։
c Ճաշակ. ըմպելի. կամ թաս։
Ճաշակ. ըմպելի. կամ թաս։
Ճաշակ. թաս. կամ չափ որով նուիրէին պ[ը]նծայսն ի սեղանն. կամ ի բուրվառն։
Ճաշակսն. որ է չափ արկանելւոյ։

91 Համմ. ձեռ. № 533, «Կոել. դնել և հաստատել»։

a Մաճառակ. բլիթ պանիր։
b Մաճառակ. բլիթ պանիր։
c Մաճառակ. կաթին բլիթ պանիր։
a Ջուն։
b Վճատել. յուսահատել. կամ լքանիլ։
Վճատել. լքել կամ յուսահատել։
c Վճատել. յուսահատել. կամ երկնչել։
Վճատել. երկնչել. կամ լուծանել. կամ յուսահատել։
a Տի. հասակ։
b Տի. հասակ։
c Տի. տղայ. կամ տհաս. կամ անհաս։
a Տխեղծ. տղայ. կամ տհաս. կամ անխիղճ. կամ անարատ. կամ անապական. կամ անմեղ. անխառն։
b Տխեղծ. տհաս. տղայ. անհաս. անխիղճ. անարատ. անմեղ և անխառն։
c Տխեղծ. անխիղճ. կամ անարատ. կամ անապական. կամ անմեղ. կամ անխառն. կամ անաղա[ր]տ։
a Քանդակել. դրուագրել. կամ քանդաքար։
b Ջուն։
c Քանդակել. դրուագրել. կամ դեղով նաղշել։
Քանդակել. դրուագրել. կամ նաղշել։
Քանդակել. դրուագրել. կամ նկարել. կամ կերպագործել. կամ նաղշել։
Քանդակել. դրուագրելն է, որ է քանդաքարն։
Քանդակել. կերպագործել։
Քանդակել. դրուագրել. կամ նկարել. կամ նաղշել։

Համեմատությունը ցույց է տալիս, որ հիշյալ բառարանների մեջ կան և՛ նմանություններ, և՛ որոշակի տարբերություններ։ Ինչո՞ւ, օրինակ, խորշ բառի մեկնության մեջ չեն նշվում նաև «քունջ» և «բոյն», կոփել-ի մեկնության մեջ՝ «կռփահարել», «փետել», «թշնամանել», քանդակել-ի մեկնության մեջ՝ «նկարել», «կերպագործել» իմաստները, որոնք երեմիա Մեղբեցին տալիս է իր «Լուծումն բառից յԱստուածաշունչ գրոց»

բառարանի համապատասխան մեկնություններում: Եթե Երեմիան լիներ «Բառգիրք»-ի հեղինակը, արդյո՞ք բանասարկու, տի և այլ բառերը չէր մեկնի այնպես, ինչպես որ դրանք մեկնված են նրա բառարանում: Ուրեմն, ամենայն հավանականությամբ, Երեմիա վարդապետ Մեղրեցին չէր կարող լինել «Բառգիրք Հայոց» բառարանի սկզբնօրինակի հեղինակը: Բայց գուցե նա խմբագրե՞լ է այդ բառարանը և հեղինակն է խմբագրությունների, ավելի շուտ երկրորդ խմբագրության, որը և լույս է տեսել իր անունով: Այս հարցին դժվար է սպառիչ պատասխան տալ: Մինչև 1698 թվականը փաստեր չունենք այն մասին, որ Երեմիան իր վարդապետական գործունեությամբ որևէ առնչություն ունեցել է բառարանի խմբագրությունների հետ: Այլապես հեղինակի հարցն առհասարակ չէր դրվի և անտարակուսելի կլիներ տպագիր «Բառգիրք»-ի տիտղոսաթերթի ազդը՝ «Արարեալ ի Սուրբ Էջմիածին Երեմիայ Վարդապետէ»:

Հարցի լուծման նպատակով դարձյալ դիմենք բնագրերի համեմատությանը՝ այս անգամ արդեն միակ ու վերջին միջոցին, որը, ցավոք, քիչ բան կարող է տալ: Խնդրի բարդությունը զուգադիպում է հետազոտական հնարավորությունների սահմանափակությանը, որովհետև չենք կարող համեմատել առհասարակ այն բոլոր միևնույն բառահոդվածները, որոնք առկա են «Բառգիրք»-ում և Երեմիայի բառարանում: Մեր տրամադրության տակ մնում են այն սակավաթիվ բառահոդվածները, որոնք կան միայն «Բառգիրք»-ի երկրորդ (տպագրված) խմբագրությունում և Երեմիայի բառարանում: Այս բնագրերը նշանակում ենք լատինական փոքրատառերով՝ a = ձեռ. № 3468[92], b = տպագիր «Բառգիրք Հայոց»:

a Ամբոխ. անհուն ժողովուրդ (Թիւք):
Ամբոխ. ժողովուրդ. խռովեալ. կամ շփոթեալ (Բ Թագ.):

92 Երեմիա Մեղրեցու բառարանի բառահոդվածների դիմաց նշում ենք, թե տվյալ բառահոդվածն Աստվածաշնչի որ գլխին վերաբերող բառացանկից է վերցված: Ինչպես նախորդ օրինակներում, այս դեպքում էլ բերում ենք իրարից որոշակիորեն տարբերվող միևնույն բառի՝ տարբեր բառացանկերում առկա բոլոր մեկնությունները:

Ամբոխ. ժողով (Բ Թագ., Գ Թագ., Մարկոսի, Յոհաննու):
Ամբոխ. ժողով. կամ ժողովուրդ շփոթեալ (Բ Մակաբ.):
Ամբոխ. ժողով. կամ գումար. կամ կոյտ (Դանիէլի):
Ամբոխ. բազմաժողով. ժողովուրդ (Յեսու):
b Ամբոխ. ժողով:
a Անասուն. անխօսուն. կամ անսնունդ. կամ անընտել (Ննդ.):
b Անասուն. անխօսուն. կամ անսնունդ. կամ անընտել:
a Բերդ. բարձր. կամ շէն (Եզրի Ա):
b Բերդ. բարձ. կամ շէն:
a Բռտանալ. կոշտանալ. կամ կարծրանալ (Ողբ Երեմ.):
b Բռտանալ. կոշտանալ. կամ կարծրանալ:
(Բռտացան. կարծրացան. կամ սոպռացան):
a Դեղ. սէս. գալար. թագայ (Թիւք):
Դեղ. սէզ (Երկ. օրին., Եսայեայ):
Դեղ. սպեղանի (Երեմիայ):
b Դեղ. բժշկականութիւն. կամ թոյն. կամ մակարդ:
a Ելմոնի. բան աստուծոյ. կամ հաւատարմութիւն (Ա Թագ.):
Ելմոնի. այս նիշ. այս անուն (Ա Թագ.):
b Ելմոնի. բան. կամ հաւատարմութիւն:
Եղիմոնի. աստուծոյ բան. կամ հաւատարմութիւն:
Եղմոնի. աստուծոյ բաժին. կամ հաւատ. կամ այս նիշ:
Եղմոնի. Փելմոնի. այս նիշ. և այն նիշ:
a Թուղտ. քարտէզ. կամ տամ[93] (Կորնթ. Ա):
b Թուխտ. քարտէս:
a Լսել. հնազանդել (Եզրի Ա):
b Լսել. թողնուլ:
a Ծծել. դիել. կամ ջամբել. կամ քարշել (Յոբ.):
b Ծծել. դիել. կամ ջամբել:
a Կարդալ. կոչել. կամ կանչել (Ննդ., Մնաց. Ա, Առակ, Եսայեայ):

93 Պիտի լինի՝ Տոմս:

Կարդալ. կոչել (Ելք)։
Կարդալ. կոչել. կամ կանչել. կամ աղաղակել (Բ Մակաբ.)։
b **Կարդալ**. կոչել. կամ կանչել։
a **Հաշտ**. միաբան. կամ ընդել (Ա Մակաբ.)։
Հաշտ. համբոյր. կամ ընդել (Մատթէոսի)։
b **Հաշտ**. համբոյր։
a **Հաշուել**. համարել. կամ թուել (Ղևտացւոց)։
b **Հաշուել**. համարել. կամ թուել։
a **Ճանաչել**. ծանօթանալ. կամ գիտենալ (Եսայեայ)։
b **Ճանաչել**. ծանօթանալ. կամ գիտել։
a **Ճիչ**. ձայն սաստիկ (Ա Մակաբ.)։
Ճիչ. ձայն սաստիկ. կամ աղաղակ (Գ Մակաբ., Երեմիայ)։
Ճիչ. աղաղակ. կամ ճռացումն (Դանիելի)։
Ճիչ. աղաղակ (Եզեկիելի)։
b **Ճիչ**. ձայն սաստիկ։
a **Մոշ**. միրիկ. կամ մորենի (Երեմիայ)[94]։
b **Մոշ**. միրգ սեաւ. և ծծուկ ըստ թթոյ։ Որոյ տունկն ըստ որթոյ ունի արձակէ. բայց է կարի փշուտ, ըստ վարդենոյ. որ մոշի ասի։
a **Յորդորել**. առուգել (Գ Թագ.)։
b **Յորդորել**. քաջալերել. կամ յօժանդակել։
a **Նշանակ**. նշան (Ծննդ., Ելք, Երեմիայ, Եզեկիելի)։
Նշանակ. բացայայտութիւն. կամ նշան (Իմաստ. Սող.)։
Նշանակ. օրինակ. կամ բացայայտութիւն (Եզեկիելի)։
b **Նշանակ**. բացայայտութիւն։
a **Շունչ**. հոգի. կամ անձն (Ծննդ., Ելիուայ)։
b **Շունչ**. ոգի. կամ անձն։
a **Ոխակալ**. քինախնդիր (Առակ. Բ)։
Ոխակալ. քինախնդիր. կամ վրէժ խնդրող (Եսայեայ)։
Ոխակալ. քէն ունող (Եզեկիելի)։

94 Իմա՝ Միրգ։

b **Ոխակալ**. Բարդեալ յոխէ. և ի կալմանէ։
a **Ջուս**. գնացս (Ելք, Եսու., Ա. Մակաբ.)։
b **Ջու**. քօշ։
a **Պատանեակ**. մանուկ (Ա Թագ.)։
Պատանեակ. ի ամեան որ, զծ պատեաց (Գ Թագ., Ա. Մակաբ.)
b **Պատանեակ**. պատանի. կամ տղայ։
a **Փառք**. շքեղութիւն (Թուոց)։
b **Փառք**. շքեղութիւն։
a **Փակել**. արգելել. կամ կապել (Ա Թագ.)։
b **Փակել**. կապել. կամ խնուլ։
a **Քամել**. մզել (Ղևտ., Երեմիայ)։
Քամել. մզել. կամ սեղմել (Առակաց Բ)։
b **Քամել**. մզել. կամ սեղմել։
a **Աւրհնութիւն**. յայտնութիւն. կամ գոհութիւն. կամ բարեբանութիւն. կամ միաւորութիւն (Երկր. օրինաց)։
Աւրհնութիւն. արձակումն (Երկր. օրինաց)։
Օրհնութիւն. գոհութիւն է առեալ պարգևացն (Եզեկիելի)։
Աւրհնութիւն. յայտնութիւն. կամ գոհութիւն. կամ բարեբանութիւն (Եզեկիելի)։
b **Օրհնութիւն**. գոհութիւն է առաւել պարգևացն։

Ամփոփենք այս համեմատությունների արդյունքները։ Քսանհինգ օրինակից 12-ի մեջ (անասուն, բերձ, բրտանալ, եղմնի, կարդալ, հաշուել, ճանաչել, ճիչ, շունչ, փառք, քամել, օրհնութիւն) առկա են միևնույն բառահոդվածները։ Դրանք a բառարանից նույնությամբ անցել են b-ին։ Ութ օրինակներում (ամբոխ, թախտ, ծծել, հաշտ, մոշ, նշանակ, պատանեակ, փակել) բառահոդվածները տարբերվում են ծավալով, ընդ որում հինգ օրինակում a-ի բառահոդվածները b-ում համառոտված են առավելագույն չափով, երկուսում (մոշ, պատանեակ) ընդհակառակն՝ ընդարձակված ու ճշտված են և մեկ օրինակում **արգելել** բառը փոխարինված է **խնուլ**-ով։ Նման խմբագրումներ կարող է կատարած լինել ինքը a-ի հեղինակը՝ b-ն գրելու ժամանակ։ Նկատենք միայն՝ եթե Երեմիան է

b-ի կազմողը, ապա սպասելի էր, որ նա ոչ թե պիտի համառոտեր a-ի բառահոդվածները, այլ, ընդհակառակն, պիտի ընդարձակեր։ Ինչևէ, 20 օրինակների բառահոդվածները կարող են մի հեղինակի կողմից կազմված լինել։ Մնացած 5 օրինակներում (դեղ, լսել, յորդորել, ոխակալ, չու) ունենք տարբեր բառահոդվածներ, ընդ որում 2 տեղ (յորդորել, չու) դարձյալ խմբագրված, մի օրինակում (ոխակալ) b-ն բառիմաստի մեկնություն չունի (գուցե բաց է թողնված պատահարար), սակայն կա գլխաբառի բառակազմական բացատրություն։ Այս երեք օրինակների բառահոդվածներն էլ կարելի է միացնել նախորդ 20-ին՝ վերագրելով նույն հեղինակին։ Եվ, վերջապես, 2 օրինակում (դեղ և լսել) բառահոդվածները տարբեր են և ոչ մի կերպ չեն կարող միևնույն հեղինակին վերագրվել։

Բերված օրինակները, որոնցում բառահոդվածների նույնություններն ու համապատասխանությունները 92 տոկոս են կազմում, իրավունք են տալիս ասելու, որ երկու բառարանի հեղինակն էլ միևնույն մարդն է, որը a-ից բառահոդվածները նույնությամբ կամ խմբագրումներով տեղափոխել է b-ի մեջ։ Բայց այդ կարող էր անել նաև մեկ ուրիշ անձնավորություն և ոչ թե միայն a-ի հեղինակը՝ Երեմիա Մեղրեցին։ Հենց բանն էլ այն է, որ այստեղ չենք կարող վերջնական խոսք ասել, որովհետև բառահոդվածների համեմատությունը որպես միջոց արդեն անզոր է իսկությունը բացահայտելու. վերջին հաշվով բառը որոշակի բովանդակություն ունի և նրա՝ տարբեր մարդկանց մեկնությունները, եթե սխալ չեն, նման պիտի լինեն և շատ հաճախ՝ նույնական, երբ դրանք մեկնված են հին բառարաններին հատուկ եղանակով՝ համառոտ, մեծ մասամբ հոմանիշների միջոցով։ Այսինքն՝ դժվարությունն այն է, որ համեմատությունները լեզվա-ոճական առանձնահատկություններ այնքան քիչ են ի հայտ բերում, որ հնարավոր չի լինում ճիշտ եզրակացություններ անել բնագրերի հեղինակային պատկանելության վերաբերյալ։ Տվյալ դեպքում, վերևում բերված օրինակները, եթե չեն ժխտում, ապա որոշակիորեն

չեն էլ հաստատում, թե առաջված բառահոդվածները կազմված են մի հեղինակի կողմից։

Հեղինակ չհամարելով Երեմիա Մեղրեցուն, այնուամենայնիվ, մենք գտնում ենք, որ նա է «Բառգիրք»-ը խմբագրողն ու երկրորդ խմբագրությունը կազմողը։ Ընդամին նկատի ունենք. ա) Երեմիայի բառարանի ու տպագիր «Բառգիրք»-ի բնագրային սերտ աղերսները, բ) այն, որ բառարանի (տպագիր) տիտղոսաթերթի վրա հիշատակվում է Երեմիայի անունը՝ «Արարեալ ի Սուրբ Էջմիածին Երեմիայ Վարդապետէ», գ) նաև այն, որ վերոհիշյալ երկու բառարանն էլ գրվել են XVII դարի 60—80-ական թվականներին և այդ շրջանում մեզ հայտնի բառարանագիրը Երեմիա Մեղրեցին է, որը լավ ծանոթ է եղել մեր հին բառարաններին, կազմել է բառարաններ, խմբագրել ու հրատարակել է բնագրեր։

Եվ, այսպես, «Բառգիրք»-ի երկրորդ խմբագրության համար շատ հավանական հեղինակ Երեմիա վարդապետ Մեղրեցուն համարելուց հետո դառնանք նորից Ն. Ակինյանի կարծիքին։

Ն. Ակինյանը իրավացի է այնքանով, որքանով որ ճիշտ չի համարում Երեմիա վարդապետին առհասարակ «Բառգիրք»-ի հեղինակ ճանաչելը։ Մենք համաձայն ենք դրան և վերևում էլ ցույց տվեցինք, որ, իրոք, Երեմիան չի կազմել բառարանի սկզբնօրինակը, բայց աշխատեցինք ցույց տալ նաև, որ նա է ամենահավանական հեղինակը բառարանի այն խմբագրության, որը տպագրվել է նրա անունով։ Բանն այն է, որ Ն. Ակինյանը, նպատակ չունենալով հատուկ քննության ենթարկել բառարանի հարցերը, հավանաբար ծանոթ չի եղել նրա խմբագրություններին ու տարբերակներին։ Դրա համար էլ Երեմիային հեղինակ համարելը «անմեկնելի է» նրան։ Նշենք, որ հայ բանասիրության մեջ արձանագրված է Երեմիայի անվան հետ կապված նման մի այլ թյուրիմացություն ևս։ Ականավոր հայագետ Հ. Տաշյանը գրում է. «Անծանօթ առակագիրս «Երեմիա Վարդապետ» ի հարկէ պարզ «Թիւրիմացութեան մ՚արդիւնք» է, ըստ երևութին Աղուեսագրոց

«կեղծ-էջմիածնեան» 1698-ի տպագրութեան հրատարակիչն փոխուած եղած է հեղինակ ևն»[95]։

Այսպես, երկու հայտնի հայագետներ նշում են «Թյուրիմացություններ», որոնք վերաբերում են 1698 թ. Երեմիա վարդապետի անունով լույս ընծայված երկու տարբեր բնագրերի։ Ընդ որում Ն. Ակինյանը ժխտելով Երեմիայի՝ «Բառգիրք»-ին հեղինակ լինելը (նկատի ունենալով ձեռագրերը), միաժամանակ հաստատում է, որ բառարանի միակ հրատարակիչը Սարգիս եպիսկոպոսն է (հիմնվելով բառարանի առաջին տպագրության վրա)։ Ստացվում է, ըստ Ն. Ակինյանի, որ Երեմիա Մեղրեցին առհասարակ ոչ մի առնչություն չունի «Բառգիրք»-ի հետ, թեկուզ տպագրության առթիվ։ Մինչդեռ Հ. Տաշյանը, որ դարձյալ հեղինակ չի համարում Երեմիային, միանգամայն իրավացի կերպով նրան հրատարակիչ է ճանաչում։ Մեզ թվում է, որ Ն. Ակինյանը միակողմանի է մոտենում հարցին և, ինչպես արդեն նշվել է, նա նպատակ էլ չի ունեցել արծարծելու բառարանի հեղինակի հարցը, պարզելու հիշյալ «թյուրիմացության» բուն պատճառն ու հանգամանքները։ «Թյուրիմացության» Ն. Ակինյանի նշած պատճառն, իհարկե, կարևորություն ունի. իրոք միաժամանակ և՛ «Բառգիրք»-ը, և՛ «Լուծումն բառից յԱստուածաշունչ գրոց» բառարանը բովանդակող ժողովածուներում մեծ մասամբ երկրորդ բառարանն է նախորդում առաջինին (այդպես է, օրինակ, Մատենադարանի №№ 451, 268, 3286, 3171, 4294, 3468, 3169, 8614 ձեռագրերում)։ Բայց արդյոք նման մի ժողովածու է եղել հրատարակիչների տրամադրության տակ, թե ընդհակառակն՝ այնպիսին, որի մեջ «Բառգիրք Հայոց»-ը զետեղված է Երեմիայի բառարանից առաջ (ինչպես Մատենադարանի №№ 528, 5184 և 6097 ձեռագրերում)։ Սակայն հիմք ունենք ասելու, որ հիշյալ ժողովածուներից ոչ մեկն էլ չի օգտագործվել տպագրու-

95 Տ. Տաշեան, Ժողովածոյք առակաց Վարդանայ, Վիեննա, 1906, էջ 8—9։

թյան ժամանակ. «Բառգիրք»-ի երկրորդ խմբագրության 8650 բառ պարունակող տարբերակի բնագրերը (որ տպագիր բառարանի ձեռագիր օրինակի հետ ծագում են մի հիմքից և մենք ընդունում ենք, որպես տպագրության նախագաղափար ձեռագրեր) զետեղված են այնպիսի ժողովածուներում, որոնք ընդհանրապես «Լուծումն բառից յԱստուածաշունչ գրոց» բառարանը չեն բովանդակում։ Մատենադարանում երեք այդպիսի ձեռագիր կա. առաջինը՝ № 1495-ը, բազմազան նյութերի մեծածավալ ժողովածու է, որ ունի նաև «Բառգիրք»-ի հիշյալ (հետագայում տպված) ընդօրինակությունը (էջ 23ա—72ա) և «Բառք քերականին» բառարանը, ուրիշ բառարաններ չի բովանդակում։ Երկրորդ ժողովածուն՝ № 3199-ը, դարձյալ այդ նույն բառարաններն ունի, իսկ երրորդը՝ № 6568-ը, բովանդակում է միայն մի բառարան՝ «Բառգիրք»-ը, որ տեղավորված է մնացած բոլոր նյութերից առաջ, հենց ձեռագրի սկզբում (էջ 1ա—99ա)։ Այս կարևոր հանգամանքն արդեն խոսում է հօգուտ այն բանի, որ «Բառգիրք Հայոց»-ը Երեմիա վարդապետինը չլինելու Ն. Ակինյանի նշած փաստարկը թերևս անհիմն չլինելով, այնուամենայնիվ, ծանրակշիռ կռվան չէ։

Մի՞թե հայ հրատարակիչներն ու տպագրիչները այնքան անտեղյակ էին մեր մատենագրությանը, որ տպագիր գրքի չափազանց սուր կարիքի ու տպագրման նյութական-տեխնիկական այնքան սուղ պայմաններում չիմանային նույնիսկ իրենց տպագրած գրքի հեղինակի անունը։ Մի՞թե Լիվոռնոյի տպարանը, որ կրում էր Ս. Էջմիածնի անունը և սպասարկվում էր նրա միաբանների կողմից, ամբողջ 1698 թ. ընթացքում իր լույս ընծայած երկու գիրքն էլ թյուրիմացաբար է վերագրում Երեմիա վարդապետին, որն այդ ժամանակ, հավանաբար, կենդանի է եղել և աշխատակցել է տպարանին։ Վերջապես, մի՞թե Էջմիածնի միաբանությունն անտեղյակ էր իր տպարանում հրատարակվող գրքերին։ Այդպես չէ, իհարկե։ Երեմիա Մեղրեցու անունը երբեք չէր դրոշմվի «Աղուեսագիրք»-ի ու «Բառգիրք»-ի տիտղոսաթերթերի վրա, եթե նա կապ չունենար այդ բնագրերի և նրանց հրատարակությունների հետ։ Բերենք,

ահա, Երեմիա Մեղրեցու հրատարակած այդ գրքերի տիտղոսաթերթերը.

«Գիրք աշխարհաց և Առասպելաբանութեանց: Որ է Աղուէսագիրք: Ի Սուրբ էջմիածին Երեմիայ Վարդապետէ: Ի Հայրապետութեանն...»

եվ՝

«Բառգիրք Հայոց. Աւարեալ ի Սուրբ էջմիածին Երեմիայ Վարդապետէ: Եւ ես Սարգիս Եպիսկոպոսս աշխատասիրեալ. և զբառս Աստուածաշունչ գրոցն ընդ սմա միաւորեալ. Որ և ընթերցօղացն Աստուածաշունչ գրոց բաւականէ լիով. տպագրեցաւ: Ի Հայրապետութեանն...»:

Երկու տիտղոսաթերթերի վրա էլ, գրքի անունից հետո առկա է միևնույն արտահայտությունը (ընդգծված է), միայն այն տարբերությամբ, որ երկրորդն սկզբից ունի նաև աւարեալ բառը: Առաջին տիտղոսաթերթն անկասկած հիշատակում է հրատարակչին: Այդպիսին կլիներ նաև երկրորդ տիտղոսաթերթը, եթե չունենար միայն աւարեալ բառը: «Աղուեսագիրք»-ի տիտղոսաթերթի վրա չկա աւարեալ բառը, որովհետև այդ գիրքը, իրոք, աւարեալ չէ Երեմիայի կողմից: Հետևությունն այն է, որ առաջին գրքի համար Երեմիան միայն հրատարակիչ է, իսկ երկրորդի համար՝ և՛ հրատարակիչ է, և՛ խմբագրության հեղինակ: Ընդգծված արտահայտությունը չկա «Աղուեսագիրք»-ի առաջին տպագրության (1668 թ.) տիտղոսաթերթին: Երկրորդ հրատարակությունը զգալիորեն տարբերվում է առաջինից, այսինքն՝ «Այս տպագրութիւնը աւելի մեծագիր է քան առաջինը, միջակագիր, անհարթ տպագրութիւն: Շարագրութեան ինչ ինչ տարբերութիւններ և փոփոխութիւններ ալ կան այս տպագրութեան մէջ»[96]: Այդ տարբերություններն ու փոփոխությունները արդյունք են խմբագրական աշխատանքի, որ կատարել է Երեմիա Մեղրեցին «Աղուեսագիրք»-ի նոր բնագիրը կազմելիս:

Այնուհետև նշենք, որ «Բառգիրք»-ի տիտղոսաթերթի

96 Ա. Պազիկյան, նշվ. աշխ., սյուն 590:

աշխատասիրեալ բառից հետո ոչ թե միջակետ, այլ վերջակետ պիտի լինի՝ այդ բառը հաջորդ՝ «Եւ զբառս Աստուածաշունչ գրոցն ընդ սմա միաւորեալ» արտահայտությունից լրիվ բաժանելու համար: Ինչպես վերևում տեսանք, բառարանի խորագրի մասին խոսելիս, Աստվածաշնչի բառերը բառարանի մեջ առնելը նշված է վաղուց, դեռևս «Բառգիրք»-ի սկզբնօրինակի խորագրում, հետևաբար Սարգիս եպիսկոպոսը չէ բառացանկը Աստվածաշնչի բառերով համալրողն ու բառարանի խմբագրողը, ինչպես կարելի է ընկալել տպագիր բառարանի տիտղոսաթերթից:

Հրատարակիչ Երեմիա վարդապետը հատկապես «Բառգիրք»-ի բնագրի հրատարակության ուղղությամբ մեծ աշխատանք է կատարել: Եվ ո՞վ կարող էր հոգ տանել բառարան տպագրելու համար, եթե ոչ առաջին հերթին բառարանագիրը:

Այնուհետև «Բառգիրք»-ի (առաջին և երկրորդ), ինչպես նաև «Աղուեսագիրք»-ի տպագրությունները հիշատակում են Երեմիա Վարդապետ, բայց ոչ Երեմիա Մեղրեցի անունը: Սակայն կասկած չի կարող լինել, որ այդ անձը հենց XVII դարի հայ բառարանագիր ու հրատարակիչ Երեմիա Մեղրեցին է:

Վերջապես համառոտակի ամփոփենք այն ամենը, ինչ ասվեց «Բառգիրք»-ի ու նրա խմբագրությունների վերաբերյալ:

1. Հայերեն ընդարձակ «Բառգիրք Հայոց» կոչվող բացատրական բառարանն արդյունք է հնագույն «Բառք քերթողականաց» բառարանի հետագա ընդլայնման, որի աշխատանքներն սկսվում են մոտավորապես XVI դարի վերջերից և ավարտվում XVII դարի կեսերին:

2. Հիշյալ ժամանակաշրջանում հանդես են գալիս մեկը մյուսի հետ կապված՝ 4000—6500 բառ պարունակող զանազան քերթողական բառարաններ, որոնք կազմված են անհայտ հեղինակների կողմից:

3. Բառացանկի հետագա ընդարձակումով, ապա նաև բառարանագրական մշակումով XVII դարի կեսերին ստեղծվում է 7500 բառ ընդգրկող մի բառարան, որի հեղինակը

նույնպես հայտնի չէ։ Հենց դա էլ սկզբնօրինակ բառարանն է, որ «Բառգիրք Հայոց» դեռևս չի կոչվում։

4. Այնուհետև, այդ բառարանի վրա նոր բառերի հավելումով առաջանում են նրա խմբագրություններն ու տարբերակները, որոնք սկզբնօրինակից տարբերվում են գլխավորապես բառերի քանակով։ Մեզ հասել են բառարանի երկու խմբագրություններ, որոնցից լայն տարածում է ունեցել երկրորդ խմբագրությունն իր բազմաթիվ տարբերակներով։

5. Բառարանի հեղինակը Երեմիա վարդապետ Մեղրեցին չէ։ Սակայն շատ հավանական է, որ նա է կազմել երկրորդ խմբագրությունը և հրատարակել այն իր անունով։

6. «Բառգիրք Հայոց»-ը համահավաքումն է հայերեն միջնադարյան բացատրական և մասամբ այլ բնույթի բառարանների՝ ենթարկված բառարանագրական մշակման։ Այսինքն՝ այն ամփոփումն է ոչ միայն մի շարք հին բառարանների բառամթերքի, այլև առհասարակ այն ամենի, ինչ արդեն նվաճել էր բառարանագրությունը՝ բացատրական բառարանների բնագավառում։

7. Հայ միջնադարյան բառարանագրությունն ավարտվում է «Բառգիրք»-ի խմբագրություններով, XVII դարի վերջերին։

* * *

Այժմ անցնենք բառարանի քննությանը։

Իր կառուցվածքով «Բառգիրք Հայոց»-ը հիմնականում նման է միջնադարյան մյուս բառարաններին, որոնք արդեն ծանոթ են մեզ։ Հետևաբար այս բառարանի կառուցվածքին ու արտաքին այլ հանգամանքներին մենք կանդրադառնանք այն չափով, որչափով որ այն նոր գծեր է երևան հանում բառարանագրության տեխնիկայի զարգացման մեջ։

Ամենից առաջ նշելի է բառարանի գլխաբառերի դասավորության առավել կանոնավոր այբբենական կարգը։ Ճիշտ է իսկական, լիարժեք այբբենականությամբ բառաշարքը կառուցելու սկզբունքը դեռևս կիրառում չունի, բայց գլխաբառերը շարված են իրենց սկզբի 2—3 տառերի հաշվառումով։ Սա

ակնհայտ առաջընթաց է բառարանագրական տեխնիկայի ուղղությամբ և ընդհուպ մոտեցումն է բառերի դասավորման լիակատար այբբենականությանը։ Դրանով իսկ, վերջապես, XVII դարի կեսերին ստեղծվեց այնպիսի բառարան, որի կանոնավոր բառաշարքը հնարավորություն է տալիս որոնելի բառը հեշտությամբ գտնելու, առանց ամբողջ բառացանկը բնկրզից մինչև վերջ նայելու։

Մի հատվածի միջոցով ծանոթանանք նաև «Բառգիրք»-ի բառաշարքին.

ճ Կճեայ. մարմարոնեայ. կամ կարաս։
Կճղակ. պճեղ։

մ Կմբաձ. գիրք. կամ մախել. կամ կարթահարել. կամ ջլատել։
Կմախ. պատարագ. կամ ընծայ։
Կմակաց. խորանաց։
Կմախ. ոսկերք. կամ կոտորած։
Կմախել. կարթահարել. կամ ջլատել։
Կմայականօք. գործիականօք. կամ խտրանօք։
Կմբայ. վահան։

ն Կնդուկ. լիբանանոս. կամ ասրլպանգ. կամ պրխուր։
Կնատ. տկար. կամ անյոյժ. կամ երկչոտ։
Կնիմ. կղեմն. կամ ճիլ։
Կնել. կրկնել։
Կնիճ. տիպ. կամ պատկեր։
Կննաճալ. խոզանալ։
Կննիւ. հանգոյց. կամ կանաչիմն. կամ կապ. կամ հաղթս. կամ կցումն մեղաց։
Կնճել. հաստատել. կամ փակել. կամ ծրարել։
Կշան. խոյր։
Կշեռ. նիդ։
Կշիւ. հաւասարաչափ. կամ զուգահաւասար։
Կշտամբել. յանդիմանել. կամ դատել[97]։

97 Երեմիա վարդապետ, *Բառգիրք Հայոց*, Ա տպ., էջ 164—165։

Նորութիւններ նկատվում են նաև բառահոդվածների մեջ։ Շատ դեպքերում գլխաբառը մեկնվում է ավելի հանգամանորեն, բերվում են նրա մի քանի հոմանիշները, տրվում են զանազան տեղեկութիւններ։ Համեմատենք, օրինակ, հին «Բառք քերթողականք»-ի և «Բառգիրք»-ի բառահոդվածները[98]։

Բառգիրք Հայոց	Բառք քերթողականաց
Աբեր. զօդիայ. կամ ծայրիւ։	Աբեր. զաւդիւ։
Աղուճ. ազետից և թշուառութեան առնէ. չարիք և վարանք (№ 3468 և այլ ձեռագրերում՝ Աղունք. շիւար և վարանումն)։	Աղուճ. չարիք։
Ափսէ. փարչ. կամ թափսի. և այլ ինչ ոմանք (№ 528 և այլ ձեռագրերում՝ Ափսէ. փարչ կամ հաւանկ)։	Ափսէ. փարչ։
Բացասութիւն. ապուսութիւն. կամ ի բացառութիւն. ասմամբ. կամ ի բաց բարձումն (№ 451 ձեռագրում՝ Բացասութիւն. ի բաց բարձումն. կամ սորութիւն)։	Բացասութիւն. ի բաց բարձումն։
Գոեհ. ճանապարհ. կամ փողոց. կամ շուկայ. կամ հրապարակ. կամ չարսու։	Գոեհ. ճանապարհ. կամ փողոց. կամ շուկա։

98 «Բառք քերթողականք»-ի բառահոդվածները վերցված են № 4149 (1304 թ.) և այլ ձեռագրերից, իսկ «Բառգիրք»-ի բառահոդվածները՝ Ա տպագրությունից։ Առանձին դեպքերում զուգահեռաբար բերում ենք «Բառգիրք»-ի տարբեր ձեռագրերի բառահոդվածները։

Ել գոլ. որոյ հոլովք են ելոյ. կամ ելոյր. ելումն. ելով։	Ել. գոլ։
Ձոյգ. հաւասար. կամ նման. կցեալ (№ 3468-ում՝ Ձոյգ. կցեալ որպէս արու և էգ. կամ նման. հաւասար)։	Ձոյգ. նման։
Թարմատար. անպիտան. կամ հրեշտակ. կամ ծառայ (№ 535 և № 3286 ձեռագրերում՝ Թարմատար. անպիտան. կամ անարգ. կամ ոչ լիշելի. կամ ոչինչ. կամ հրեշտակ. կամ ծառայ)։	Թարմատար. անպիտան. կամ հրեշտակ։
Լպիրշ. լկտի. կամ յանդուգն. կամ պակշոտ. կամ յարակ. կամ անամօթ։	Լպիրշ. յայրատ. կամ անամօթ։
Խուճապել. հոգալ. կամ վախենալ. կամ կծկտել (№ 451 և այլ ձեռագրերում՝ Խուճապել. հոգալ կամ շտապել։ Ձեռ. № 3468-ում՝ Խուճապել. հոգ տանել. կամ ըշտապել)։	Խուճապել. հոգալ։
Միածան. ծիրանէգոյն. զոր աղեղն կոչեմք. որ ձգի յամպս յաւուրս անձրևաց (№ 8606-ում՝ Միածան. բազմագոյն կամ ծիրանագոյն. զոր աղեղն կոչեմք աւուր անձրեւու. կամ բակ արեգականն. կամ ամպն որ լուսնովն պատի, № 451-ում՝ Միածան. ծիրանագոյն. որ	Միածան. ծիրանէգոյն։

աղեղն կոչեմք. որ կարմիր կանաչ ասեն)։	
Կամակոր. *կամաւ մեղանչող. կամ նենգաւոր (№ 3468 և այլ ձեռագրերում՝ Կամակոր. կամաւ կորացեալ ի մեղս)։*	Կամակոր. *թիւր։*
Համշիրակ. *կաթնակից. կամ ուսումնակից. կամ ամանակական (№ 533 և № 8606 ձեռագրերում՝ Համշիրակ. կաթնակից կամ սննդակից)։*	Համշիրակ. *կաթնակից։*
Զիաստած. *ի ձիական մարմնոյ արարած որպէս զմեղու ասեն յարջառոյ նեխելոց ծնեալ և եղեալ. կամ պիծակ. կամ մեղու. կամ կրէտ. կամ զամբուր։*	Զիաստաց. *մեղու. կամ պիծակ։*
Ղեկ. *թև նաւի. կամ ուղղիչ. կամ դուման։*	Ղեկ. *թեք նաւի· կամ ուղղիչ։*
Ճախրել. *շրջապատել. կամ թևապարիլ. կամ թռչիլ։*	Ճախրել. *շրջապատել*[99]*։*
Մշտիկ. *ցանիչ. կամ սպունկ. կամ զոպայ. կամ ծոթբրին. կամ կորթին. կամ բոյս գալարոյ. կամ փունջ։*	Մշտիկ. *ցանիչ. կամ սպունգ։*
Յաւէժ. *անբաւ. կամ յաւիտենական կամ միշտ. կամ հաստատ։*	Յաւէժ. *անբաւ. կամ յաւիտեան։*

[99] *Ենթադրում ենք, թե շրջապատել պետք է լինի շրջապարել (շուրջապարել, շուրջպարել), սակայն ձեռագրերը ունեն միայն շրջապատել։*

Նահապետ. *ազգապետ. կամ վերակացու. կամ սկիզբն ազգի։*	Նահապետ. *ազգապետ. կամ վերակացու։*
Շուայտել. *շատ ուտել. կամ վատաշոտ. կամ տրփալ անյագ ի կանայս (№ 3468 և այլ ձեռագրերում՝ Շուայտել. թէ ուտել. թէ ըմպել. և թէ ցանկութիւն կանանց, որ քան զչափն առատել է. այն է՝ № 450-ում՝ Շուայտել. շատ ուտել. կամ վատաշոտել կամ ցոփանալ անյագ ի կանայս)։*	Շուայտել. *տոփել անյագ ի կանայս։*
Որջ. *բոյնք. կամ դադարք. կամ տեղիք։*	Որջ. *բոյն։*
Զարակնել. *նախանձիլ. կամ տանջել. կամ հարկանիլ (№ 3468-ում՝ Զարակնել. նախանձել կամ նեղել)։*	Զարակնել. *նախանձել։*
Պարուտակ. *նօսր մէզն, որ ի վերայ գլխոյ ըղղին կայ. այսպէս և ի վերայ ջլացն։*	Պարուտակ. *միզն. կամ անփութել։*
Ջինջ. *փայլուն. կամ տաբագիր. կամ մաքուր. կամ յստակ. կամ սուրբ։*	Ջինջ. *փայլուն. կամ տաբագիր։*
Սակի. *կից. կամ կցորդ. կամ համարիր. կամ հաշուի։*	Սակի. *կից. կամ կցորդ։*
Վարապաճակ. *լանջանոց. կամ վարշամակ. կամ*	Վարապաճակ. *լանջանոց։*

վելմակ. կամ հանդերձ. կամ պախուրց. կամ լկամ (№ 545 և այլ ձեռագրերում՝ վարապանակ. վարշամակ. կամ լանջանոց. կամ հանդերձ. որ ի ներքև զինուցն զգենուն. պահպանակ զգեստացն)։

Տրամախոհ. ճշմարտախոհ. կամ մտախոհ. կամ մտածաբար. կամ մտածօրէն։

Տրամախոհ. ճշմարտախոհ։

Ցանգ. յար. կամ միշտ. կամ յաւէտ. կամ հանապազ. կամ մօտ. կամ ճախրօղ. կամ մշտագնացօղ։

Ցանգ. յաւէտ. կամ միշտ. կամ հանապազ։

Փաղաքշել. փարիլ. կամ շոզոքորթել. կամ լկտել. կամ սուտակասպասել։

Փաղաքշել. լկտել։

Քանակ. երկուս տարորոշի. ի տարորոշն. և ի շարունակն. ի տարորոշն. որզան. բան և թիւ իսկ շարունակն. հիկէն. կէտ. պիծ. մակերեւոյթ. կամ թիւ. կամ չափ։

Քանակ. չափ. կամ թիւ։

Նման բառահոդվածներ շատ կան «Բառգիրք»-ում, դրանք նույնիսկ շատ են, քան համառոտ բառամեկնությունները, սակայն, այդուհանդերձ այս բառարանն էլ իր բառահոդվածի կառուցվածքով ու մեկնությունների եղանակով դեռևս նոր բառարան չէ՝ կազմված ժամանակակից կամ թեկուզ նոր բառարանագրության վաղ շրջանի, ասենք XVIII դարի բացատրական բառարանների սկզբունքներով։ Կարևորն այն է, որ «Բառգիրք»-ում համարձակ փորձեր են կատարված գլխաբառը նկարագրական կամ այլ եղանակով մեկնելու, ինչ հազվագյուտ է մյուս միջնադարյան բացատրական բառարաններում։

Այնուհետև ուշադրության արժանի է ևս մի երևույթ. բառարանում տրվում են քերականական բնույթի տեղեկություններ, երբեմն նշվում է գլխաբառի խոսքի մասային պատկանելությունը, քերականական կարգը և այլն։ Օրինակ, կան այսպիսի մեկնություններ.

Այբ. տառ ձայնաւոր և երկամանակ. սկիզբն գրոց։

Առանց. նախդիր որ զսեռական պահանջէ. թարց։

Աւտուստ. արտաքուստ։ Մակբայ տեղական։

Բեկբեկել. կոճռպել. կամ յապաւել։ Յաճախական բայ։

Եթէ. շաղկապ տարակուսական։

Եո. երեք։ Դերանուն քանակական։

Երբ. Առբայ ժամանակական. յորժամ։

Երրորդ. Դերանուն դասական։

Էակաց. Յոգնական սեռական հոլով. կամ ինքնակաց։

Ըզնի. Սորա ուղղական է. իղձ. որ է ներինումն։

Ըճդէ՞ր. Մակբայ հարցանելոյ. հի՞մ, դի՞, է՞ր։

Իմաստակ. Փաղաքշական. փոքր իմաստուն. կամ ձևով իմաստուն կերպարանեալ։

Իրացել. Անեղեւոյթ ապառնի. իրագործել. կամ գործոցել։

Հանդերձ. զգեստ. յորժամ ի տեղւոջ անուան առնանի։ Բայց յորժամ ի տեղւոջ նախդրի առնանի. ընդ. և զգործիական հոլով պահանջէ։

Հացալից. Բարդ անուն է և ի բայէ. հացիւ լցեալ։

Ձիճգ. Դերանուն թուական։

Համարիւն. վերացեալ անուն. տեղեկութիւն. կամ կրթութիւն։

Ճիրան. ըղունգ կամ մագիլ։ Յոգնական. ճիրանուք[108]։

Մանաւանդ. ևս առաւել։ Շաղկապ բաղդատելոյ։

---

108 № 528 և այլ ձեռագրերում՝ ճիրանունք։

Մեր. Ածական դերանուն. սեռական է գոյականին. և ուղղական ածականին:

Մի. Դերանուն թուական. բացասական նշան. երբ ի տեղուջ դնի դերանուան. մէկ կամ մին. բայց յորժամ ի տեղուջ նշանակի. բացասական դնի ոչ կան. նա և առբայ արգելլոյ. և միջարկութիւն:

Յատկեղ. Գերագրական:

Յարել. Ներգործական:

Յետոյ. յապայ: Առբայ կարգի:

Նախկին. Անուն ածական. առաջին. կամ վաղնջուց:

Ոչ. Առբայ բացասական:

Ով. Միջարկութիւն կոչելոյ. ո՛ կամ ծո՛:

Սա. Դերանուն ցուցական և գոյական. այս:

Վառեւագեաճ. Յարաբարդ անուն. երեքլուսեան:

Քառուղ. Դերանուն կարգի. չորրորդ:

Քաւ. Առբայ արգելլոյ. մի՛:

Նման ձևերով են բնութագրվում նաև ապաքէն, բնաբար, դա, ցկնի, էանալ, թարց, լռելեան, խաշինք, ծանունք, կարի, կից, ձորակ, չև ևս, պիտակաբար, օն և օն և այլ, ավելի քան 200 գլխաբառեր: Այսպիսի մեկնություններում, սակայն, երբեմն մոռացվում է բառիմաստը՝ չի բացատրվում, օրինակ՝ «Երկակ. փաղաքշական», «Խաշինք[f]. յոգնական», «Ժառանգեցուցանել. ածանցական», «Վիժեալ. ընդունելութիւն», «Նեսաբեաւ. հոլով գործիական» և այլն:

Գլխաբառի քերականական բնութագիրը շատ կարևոր մի տարր է, որը բառահոդվածի կառուցվածքի մեջ է մտնում «Բառգիրք»-ով: Դա բառաշարքի, այբբենականության բարելավելուց հետո երկրորդ կարևոր քայլն է, որ կատարում է հայ բառարանագրական տեխնիկան: Բայց հղումների ուղղությամբ դեռևս շոշափելի առաջընթաց չկա. ամբողջ բառարանում հանդիպում են պատահական բնույթի մի քանի հղումներ, որոնք վերաբերում են ոչ թե առանձին բառերի, այլ բառացանկերի, ինչպես՝ «Իղձ. ցանկութիւն: Զոր հոլովական ա-

ծանցականս գտանես ներքեւում»[101], «Ըղձի. սորա ուղղական է՝ իղձ. որ է ներինումն», կամ, Ը-ի բառացանկի վերջում. «Այս երեսս. մանաւանդ թէ ամէն եթս ընդ վայրք են. սորա զատյերն ի սէն գիտ. քանզի սոքայ և անդ կան գրեալ»: Յ-ի բառացանկում ևս կա նման մի հղում, որ բերվեց վերևում՝ ձեռագրերի նկարագրության ժամանակ:

Բառարանագրության մեջ որպես նորույթներ դրսևորվող արտաքին, կառուցվածքային գծերից բացի, նշելի է նաև «Բառգիրք»-ի լեզվի մաքրությունը: Գլխաբառերը մեկնվում են հայերեն համանիշ բառերի օգնությամբ և միայն հազվադյուտ դեպքերում են բառահոդվածներում օտար բառեր գործածվում: Կան նաև առանձին բարբառային բառեր: Ընդ որում այդ օտար և բարբառային բառերը, որոնց թիվն ամբողջ բառարանում մոտ 200 է, մեծ մասամբ մեզ արդեն ծանոթ բառեր են, որոնք «Բառգիրք»-ի մեջ են մտել նրա աղբյուրներից:

Համառոտակի ամփոփելով կարող ենք ասել, որ «Բառգիրք Հայոց»-ը մի բառարան է, որը միջնադարյան մյուս բացատրական բառարաններին գերազանցում է ոչ միայն բառացանկի հարստությամբ, այլև իր կառուցվածքի մի շարք կողմերով, որոնցից կարևոր են.

1. Բառերի առավել կանոնավոր այբբենական կարգը.

2. Գլխաբառն ավելի շատ համարժեքներով մեկնելը.

3. Բառերին հաճախ քերականական բնութագիր տալը.

4. Նկարագրական եղանակով բառամեկնություններ կատարելու ձգտումը.

5. Հայերեն այբուբենի տառերին հնչյունաբանական բացատրություններ տալը.

6. Բառահոդվածներում օտար և բարբառային բառերի հազվադեպ գործածությունը:

Բառամթերքի կողմից «Բառգիրք»-ը կարիք չունի այնպիսի քննության, որպիսին կատարվել է մյուս բառարանների նկատմամբ: Եվ դա այն պարզ պատճառով, որ «Բառգիրք»-ի

101 Իմա՛ ներքում՝ ԸԹ-ի (Ը-ի) մեջ, Ը-ի բառացանկում:

բոլոր աղբյուրները՝ հին բառարանները, արդեն ըստ ամենայնի քննված են սույն ուսումնասիրության համապատասխան բաժիններում։ Մնում են ոչ մեծ խումբ կազմող այն բառերը, որոնց կոնկրետ աղբյուրները որոշված չեն և ենթադրվում է, թե դրանք հիմնականում ծագում են անհայտ բնագրերից, մասամբ էլ խոսակցական լեզվից։ Այդ բառերը հայերեն, ինչպես նաև օտար արմատներից կազմված պարզ ու բաղադրյալ բառեր են և կարող են հետաքրքրություն ներկայացնել բառակազմության և ոճաբանության, իսկ առանձին դեպքերում նաև բարբառագիտության համար։ Այդ անվավեր բառերից շատերը որպես նոր (բայց շատ դեպքերում դեռևս կասկածելի) արմատներ, ավելի ճիշտ՝ նոր արմատներից կազմված բառեր, արդեն տեղ են դրավել Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանում»։ Նշանակում է «Բառգիրք»-ում նոր, դեռևս ուշադրության չարժանացած արմատներ չկան, այլ կան հայերեն, մասամբ էլ օտար արմատներից կազմված բառաձևեր, որոնք ծանոթ չեն մեր մյուս տպագիր բառարաններին։

Նշելի է, որ տարբեր ժամանակներում նոր բառերով հարստացվելով, «Բառգիրք»-ն աստիճանաբար, որոշ չափով, փոխում է իր բնույթը. քերթողական կոչվող բառերից բացի XVII դարում «Բառք եբրայեցւոց» և «Մեկնութիւն անունաց եբրայեցւոց» բառարաններից «Բառգիրք»-ի մեջ են մտնում Աստվածաշնչի բազմաթիվ հատուկ անուններ, որոնք գրեթե չեն հանդիպում հնագույն «Բառք քերթողականք» բառարանում։ Վերջիններս բառերը մեծ մասամբ կան, իհարկե, ինչպես Աստվածաշնչում, այնպես էլ այլ կրոնական երկերում։ Սակայն դրանք բերթողական են կոչվել նրա համար, որ վերցված են քերթողական բնույթի բնագրերից և բացատրված են հենց այդ բնագրերում ունեցած իրենց իմաստների տեսակետից։ Բառարանի հետագա ընդլայնումը այլ նպատակ ուներ՝ ստեղծել մի այնպիսի բառարան, որը ծառայեր արդեն Աստվածաշնչի բնագրի ընթերցմանը։ Այդպիսի բառարան էլ դարձավ «Բառգիրք»-ը XVII դարում՝ ուղղակի ճանաչվելով Ս. գրոց բառա-

բան, իր հին, ավանդական «Այս բառք քերթողական...» խորագիրը պահպանելով։

Սակայն «Բառգիրքը» Աստվածաշնչի բառարան համարելը եթե սխալ էլ չէ, ապա առնվազն միակողմանի է և չի արտահայտում նրա էությունն ու նշանակությունը, որովհետև բառարանում կան բազմաթիվ բառեր, որոնք գործածված չեն Աստվածաշնչում։ Հետևաբար «Բառգիրք Հայոց»-ն ընդհանրապես հայերեն բացատրական բառարան է, որի մեջ մեկնվում են ոչ միայն Աստվածաշնչի, այլև տարբեր գրական երկերի ու խոսակցական լեզվի հնացած՝ դժվարիմաց ու անհասկանալի դարձած բառերը։

* * *

Ի՞նչ վիճակում է մեզ հասել «Բառգիրք»-ի բնագիրը, որ այսօր հայագետին հայտնի է գլխավորապես Երեմիա Մեղրեցու հրատարակած օրինակով։ Այս հարցը կարևոր է ոչ միայն աղբյուրագիտության, այլև հայերենի բառային կազմի պատմական ուսումնասիրության ու բառարանագրության պատմության տեսակետից։

Բառարանի բնագիրը անաղարտ չի պահպանվել և մեզ է հասել գրչագրական ու տպագրական բազմաթիվ աղճատումներով, աղավաղումներով ու վրիպակներով։ Այդ թերությունների մասին մենք արդեն առիթ ունեցել ենք խոսելու սույն աշխատության առաջին մասում[102] և ծրագրել ենք դրանք մանրամասն քննել բառարանի վերականգնված բնագրի առաջաբանում։ Ուստի այստեղ կբավարարվենք բնագրին վերաբերող ընդհանուր դիտողություններ անելով։

«Բառգիրք»-ի բնագրային թերություններն արդյունք են ոչ միայն սովորական վրիպումների ու թյուրընթերցումների, որոնք հնարավոր են նաև ուրիշ բնագրերում, այլև բխում են հենց բնագրի բնույթից։ Եթե ոչ բառարանագրական մյուս բնագրերը տրամաբանորեն իրար հետ շաղկապված ու լեզվա-

102 Տե՛ս Հ. Ամալյան, նշվ. աշխ., էջ 217—232։

կան որոշակի կառուցվածքով մտքերի շարադրանք են նախադասության մեջ ամփոփված, ապա այդպես չեն հին բառարանները, որոնց բառահոդվածները գերազանցապես շարահյուսորեն իրար հետ չկապվող՝ նույնանիշ կամ հոմանիշ բառերի խմբեր են։ Մենք գործ ունենք, փաստորեն, չկապակցված բառերի ու բառաձևերի հետ, որոնք սխալ գրված ու աղավաղված լինելու դեպքում, մեծ մասամբ նույն ձևով մի ձեռագրից մյուսին են անցել հիմնականում այն պատճառով, որ գրիչներն ի վիճակի չեն եղել ուղղելու դրանց սխալները։ Իսկ բառարանները ընդօրինակողները, որ մեծ մասամբ ձեռագրեր արտագրող գրիչներ էին, ոչ միայն չէին կարող ուղղել այդ վրիպակներն ու սխալները, այլև հաճախ իրենց հերթին վրիպումներ թույլ տալով կամ յուրովի ընկալելով սխալագիր, անհասկանալի բառերը՝ ներկայացնում էին մեկ այլ աղավաղված ձևով կամ իմաստով։ Աղավաղումներ ու սխալներ առաջանում էին նաև այն դեպքում, երբ ձեռագիրն ընդօրինակվում էր դեղաթափ ու անընթեռնելի տեղեր ունեցող նախօրինակներից։ Հետազոտությունները ցույց են տալիս, որ մեր հին բառարաններն ընդօրինակողները պարզապես արտագրություն են կատարել, ըստ երևույթին «սուրբ հարանց» գրվածքները ճշտությամբ գաղափարելու ավանդական սովորությանն հավատարիմ մնալով։ Այդ է գլխավոր պատճառը, որ, օրինակ, «Բառք քերթողականք» բառարանի XIII—XIV դարերի (հավանաբար և ավելի վաղ ժամանակների) գրչագրերից շատ գլխաբառեր (երբեմն էլ գլխաբառն իր մեկնությամբ) աղավաղված ձևով, ձեռագրից ձեռագիր անցնելով, հասել են «Բառգիրք»-ին։ Ահա, բազմաթիվ օրինակներից վերցնենք մեկը։ Տպագիր «Բառգիրք»-ի «Կարակար եղիան. ինչք. կամ կորահաղիր եկան»[103] բառահոդվածը կա՝ «Կարակաղ. երևանիչ կամ կարահազրազիր եկան» (ձեռ. № 4149 և այլ), «Կարկաղերինայ. ինչք կամ կորահազիր եկան» (ձեռ. № 5925), «Կարկաղերիան. ինչք կարահազիր եկան» (ձեռ. № 5919 և այլ), «Կարկարել ելիան. ինչք կամ կորահազիր եկան» (ձեռ. № 3261), «Կարկազերանիան. ինչք կամ կարահազիր եկան» (ձեռ. № 2331), «Կարկաղ. երինայ. ինչք կամ կորազ» (ձեռ. № 267 և այլ), «Կարկաղ. երևանինչք կամ կարահզաւր եկան» (ձեռ. № 1654 և այլ), «Կարակե լիան. կարահազիրեան կամ ինչ» (ձեռ. № 3468), «Կարակարեղիան. ինչք կամ կարահաշիրան» (ձեռ. № 450), «Կարկարեղիան. ինչք կամ կարահամազիր երան» (ձեռ. № 528), «Կարակաղ. երևանինչ կամ կարահազրազիր է ական» (ձեռ. № 8106), «Կարկաներիան. ինչ կամ կարահարազիր եկան» (ձեռ. № 8198), «Կարկաղ էր իեան. ինչ կամ հարազիր եկան» (ձեռ. № 530), «Կարակաղ. երիան ինչք կամ կարահազիր եկան» (ձեռ. № 7117) և այլ ձևերով։ Ի դեպ, բառահոդվածները մենք բերեցինք Մատենադարանի լավագույն ձեռագրերից, որոնցից է № 7117-ը, որի գրչագրման պատրաստողն ու խմբագրողն է Թովմա Մեծոփեցին։

Հետևաբար «Բառգիրք»-ի բնագրի թերությունները արդյունք են նրա կազմության ու ընդօրինակումների պատմական երկարատև գործընթացի և կապված են բազմաթիվ բառարանագիրների ու գրիչների աշխատանքի հետ։ «Բառգիրք»-ի մեծ մասամբ ժառանգական արատներ հանդիսացող բնագրային թերությունների համար մեղավոր չէ միայն մի հեղինակ, որը երբևէ խմբագրել կամ ընդօրինակել է բառարանը, մեղավոր չէ միայն Երեմիա Մեղրեցին, որը հավանաբար խմբագրել և հրատարակել է այն։ Մինչդեռ մեծ հայագետ Հ. Աճառյանը մեղադրում է միայն Երեմիա վարդապետին, որպես հեղինակի մի բառարանի, որը «վրիպակների մի հաւաքածոյ է»[104]։ Հ. Աճառյանի քննադատությունը, որ միանգամայն տեղին ու իրավացի է բառարանի թերությունների վերաբերյալ, այնուամենայնիվ, մեր կարծիքով խիստ է Երեմիա վարդապետի հանդեպ, որը եթե հեղինակ ու խմբագիր էլ չի եղել, ապա որպես միայն հրատա-

103 Տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հտ. Ի, Երևան, 1930, էջ 1051։

104 Տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հտ. Ի, Երևան, 1935, էջ 11—12։

րակիչ՝ բառարանը տպագրելով իր մեծ երախտիքն է բերել հայ մշակույթին։ Երեմիա Մեղրեցին չի ուղղել և չէր էլ կարող ուղղել ու ճշգրտել այն աղավաղումներն ու սխալները, որոնք «Բառգիրք»-ին էին անցել տարբեր գրիչների կողմից գրված հին ձեռագրերից։ Այսօր էլ, երբ ձեռքի տակ են «Բառգիրք»-ի ու նրա հետ կապված զանազան բառարանների տասնյակ գրչագրեր, դեռևս դժվար է լրիվ վերականգնել այդ բառարանը, դեռևս անստույգ ու անվավեր են մնում շատ բառեր։ Նույնիսկ Արմատական բառարանում «Բառգիրք»-ի շատ բառերը ձևի կամ իմաստի կողմից դեռևս վավերական չեն և մնում են որպես կասկածելի և անստույգ։

Վերջապես, այն բանից հետո, երբ արդեն վերլուծված են «Բառգիրք»-ի պատմության, ձեռագրերի, բովանդակության, բնագրի և այլ հիմնական հարցերը, տեսնենք, թե ինչ արժեք ունի մեր միջնադարյան բառարանագրության այդ աչքի ընկնող հուշարձանը արդի հայագիտության համար։ Չկրկնելով մեր ասածները հայագիտության մեջ «Բառգիրք»-ի մասին եղած կարծիքների ու գնահատումների վերաբերյալ[105], ասենք, որ այդ բառարանն իր թերություններով հանդերձ անհրաժեշտ ու օգտակար է եղել ոչ միայն սովորական հայ մտավորականի, այլև գիտնականի ու բանասերի համար։ Սկսած Մխիթար Աբբայից մինչև մեր օրերը հայագետները «Բառգիրք»-ը օգտագործել են հին բնագրերում հանդիպող հազվագյուտ բառերը բացատրելու, իրենց բառարանները նոր բառերով համալրելու և այլ նպատակներով։

«Բառգիրք»-ը, որ հայագետներին հայտնի է եղել գլխավորապես իր անհաջող, սխալներով հարուստ տպագրությամբ, ընկրկումների ու կասկածների տեղիք է տվել և ըստ արժանվույն չի գնահատվել։ Ուստի նրա շատ բառեր ու մեկնություններ դուրս են մնացել նոր բառարաններից, ինչպես նաև բառաքննական, ստուգաբանական ու բանասիրական աշխատանքի սահմաններից, որպես կեղծ ու շինծու ավանդումներ։

105 Տե՛ս Հ. Ամալյան, նշվ. աշխ., էջ 218—222։

Որպես ուշ միջնադարի լեզվաբանական աշխատություն, որպես մի հին բնագիր՝ «Բառգիրք»-ը այսօր որոշակի կարևորություն ունի ոչ միայն մեր բառարանագրության պատմության, այլև հայերենի բառային կազմի ուսումնասիրության համար։

Հայերեն հին բնագրերում, հատկապես առանձին բանաստեղծական քերթվածքներում գործածված են բազմաթիվ հազվագյուտ, խրթին բառեր, որպես՝ անկղիտանալ, բարշոկ, գորգասոին, դոմոս, զրաճակ, բեռփիզէ, իրբինոս, խարբալել, ծարամ, կաքուր, մրգուզ, ճեսար, ուրգացող, չարաճղակ, ռաճակ, փարողանալ, ֆռալ և այլն, որոնց մեկնելն անմատչելի է եղել նույնիսկ հայ բառարանագրության գլուխգործոցների՝ Մխիթար Աբբայի, Նոր հայկազյան, Առձեռն և այլ բառարանների։ Սակայն այդպիսի բառերի մեկնելու գործում հայ բանասերն անօգնական չի եղել և դիմելով մեր հին քերթողական բառարաններին, լուծել է ոչ միայն առանձին խրթին բառերի առեղծվածը, այլև ամբողջական բնագրեր։ Գրիգոր Մագիստրոսի խրթնալեզու «Գամագտական»-ի մի մասը (6 տուն) Ն. Բյուզանդացին լուծեց հենց իրեն՝ Մագիստրոսի «Յաղթող» թղթի օգնությամբ՝ «դոյզն ինչ օժանդակեալ ի Քերթողական բառից Արիստակէս գրչի»[106]։ Սակայն ինչո՞ւ է «դոյզն» և ոչ թե մեծ քերթողական բառարանի օգնությունը, երբ Նորայրն իր վերծանած բնագրի 77 խրթին բառից 21-ի՝ գեմա, բառխող, բերեֆ, կոպանիմ, սքառումն, տարբեղուն, փաղփական և մյուս բառերի քննության մեջ վկայակոչում է այդ հին բառարանի մեկնությունները։ Ապա «Գամագտական»-ի մյուս մասի (Գ. Մենևիշյան), «Մրգուզ փանաքի» ոտանավորի[107] (Հ. Աճառյան), Գրիգոր Շղթայակիրի «Տաղունի տաղի-

106 Ն. Բիւզանդացի, Գր. Մագիստրոսի «Գամագտական» թղթին մեկնութիւն ի նմին իսկ ի Մագիստրոսէ։ «Բանասէր», հտ. 2, Փարիզ, 1900, էջ 124։

107 Հ. Աճառյան, Գրիգոր Մագիստրոսի Մրգուզ փանաքի լուծումը։ «Հանդէս Ամսօրեայ», 1923, սյուն 241—256։

բոնդ»[108], այլև տակավին անտիպ «Իրբինոս» ու «Գորգ գորգաստին» տաղերի (Հ. Անասյան), Մարտիրոս Ղրիմեցու «Ղրմցի թաթար Մարտիրոս վարդապետին շինած ոտանաւորն է» և «Արբանեակ չարին» ոտանավորների[109] (Ա. Մարտիրոսյան) լուծումները հնարավոր դարձան գլխավորապես «Բառգիրք Հայոց»-ի օգնությամբ։ Այսպես, Գ. Մենեվիշյանն ընդգծում է, որ «Գամագտական»-ի լուծման համար քերթողական բառարանները շատ մեծ կարևորություն ունեցան[110]։ Այնուհետև գրում է նա՝ «Պիտի ըսէինք նոյնիսկ աւելին. եթէ պակսէին այս բառագիրքերն, ստուգիւ անմեկնելի պիտի մնային «Գամագտական»-ին շատ մը բառերը»[111]։

«Բառգիրք»-ում կան Կանոնագրքի, Ճաշոցի, Կնիք հավատոյի, Անկանոն գրոց, Եղիշեի, Անանիա Շիրակացու, Ոսկեբերանի, Եփրեմի, Բարսեղի, Աբրահամ Կրետացու, Կյուրեղ Ալեքսանդրացու, Կյուրեղ Երուսաղեմացու, Թովմա Արծրունու, Գր. Նարեկացու, Ն. Շնորհալու, Մատթեոս Ուռհայեցու և այլ հեղինակների երկերում գործածված այնպիսի հազվագյուտ բառեր, ինչպես՝ ափիւսովք, բարշոկ, գեղագան, դաստակ, երախան, զօշոտ, թեպուր, խարբալիլ, ճամանձն, ղեւրաղոն, յարազել, նիտան, ովփազ, սարսռել, փարան, օղերձեալ և այլն։

Եվ ոչ միայն հին բնագրեր ընթերցելու համար, այլև հայ միջնադարյան մշակույթին վերաբերող գիտական, բանասիրական ու բառաքննական աշխատություններում եղած բառամեկնությունների ճշտությունը ստուգելու և ուղղումներ կատարելու գործում դարձյալ մեծ է «Բառգիրք»-ի կարևորու-

108 Հ. Անասյան, Գրական նմուշներ Գրիգոր Շղթայակրից, «Էջմիածին», 1950, մարտ-ապրիլ, էջ 39—46։

109 Ա. Մարտիրոսյան, Մարտիրոս Ղրիմեցի, ուսումնասիրություն և բնագրեր, Երևան, 1958, էջ 116—127։

110 Տե՛ս Գ. Մէնէվիշեան, Գրիգորի Մագիստրոսի «Գամագտականին» ամբողջական լուծումը, Վիեննա, 1912, էջ 18։ Խոսքը «Բառք քերթողականք» և «Բառգիրք Հայոց» բառարանների մասին է։

111 Գ. Մենեվիշյան, նշվ. աշխ., էջ 18։

թյունը։ Այսպես՝ Գ. Նահապետյանը Բարսեղի «Վեցօրեայ»-ի մեջ գործածվող ոփոց բառաձևը, որ նույն «փոս» իմաստով կա նաև «Վարք Աբերկիոսի» մեջ, մեկնում է որպես «ղորաց»[112]։ Ա. Վարդանյանը մերժում է այդ սխալ մեկնությունը և ցույց է տալիս, որ ոփ կամ հոգն. ոփք նշանակում է «խոռոչ, փոս»[113]։ Բայց այդ բառը վաղուց արդեն ճիշտ մեկնված էր «Բառգիրք»-ի մեջ՝ «Ոփ. գուբ կամ վիհ»։ Վարդանյանը դարձյալ իրավացի կերպով մերժում է սխալաձև առշոգի բառի՝ ՆՀ բառարանի և Գ. Նահապետյանի իրարից տարբերվող ու սխալ մեկնությունները։ Նա որոշում է այդ բառի ճիշտ ձևը, որ է Ուշոգի, ապա ճիշտ մեկնում, բերելով բառի մատենագրական վկայությունները, նաև հիշատակելով մի ձեռագիր, որի մեջ մեկնված է այդ բառը՝ «Ուշոգի. ուրիշ հոգի կամ զատ կամ առանձինն»[114]։ Այդ ձեռագիրը «Բառգիրք»-ի գրչագրերից մեկն է, տպագիր օրինակում կա՝ «Ուշոգի. ուշգի. կամ առանձին. կամ ուրիշ. կամ զատ»։ Նորագյուտ Մնացորդաց Բ գրքի մեջ (Գլ. Թ. 18) կա անոտնեայ բառը, որը չի հանդիպում Աստվածաշնչի մյուս հայերեն թարգմանություններում։ Հ. Աճառյանը Մնացորդաց գրքի այդ բառը պարունակող հատվածը համեմատում է եբրայական բնագրի համապատասխան հատվածի հետ և տեսնում է, որ վերջինիս մեջ այդ բառին համապատասխան կա պատվանդան[115]։ Ուրեմն անոտնեայ բառի իմաստը պարզվեց եբրայական բնագրի օգնությամբ։ Մինչդեռ այդ բառն էլ «պատուանդան» նշանակությամբ առկա է հայերեն «Եւթներորդ գլուխ» կոչվող բառարանում[116], որից անցել է «Բառք քերթողականք»-ին, ապա սրանից էլ «Բառ-

112 Տե՛ս Գ. Նահապետեան, Ուղղագրութիւնք ազգային մատենագրաց, Վենետիկ, 1907, էջ 202։

113 Տե՛ս Ա. Վարդանեան, Բառաքննական դիտողութիւններ, Ա, Վիեննա, 1913, էջ 86—87։

114 Նույն տեղում, էջ 23—24։

115 Տե՛ս Հ. Աճառեան, Հայերէն նոր բառեր Նորագիւտ Մնացորդաց գրոց մէջ, Վիեննա, 1908, էջ 10—11։

116 Տե՛ս Մատենադարան, ձեռ. №№ 530 (էջ 71ա—77բ), 3207, 5919 և այլն։

գիրք»-ին, որ ունի «Անոտնէ. պատուանդան» (Ա. տպ., էջ 23)։ Նույն գրքի Գլ. Թ. 25 հատվածում կա, կոյտ բառն իր սեռականի՝ կուտի հոլովաձևով։ «Եւ էին Սողոմովնի քառասուն հազար մատակ ձի կուտի եւ երիւարք կառաց երկոտասան հազար»։ Հ. Աճառյանն ասում է, թե այդ բառի նշանակությունը ստուգելը դժվար է՝ «Ըստ իս,— գրում է նա,— ասիկա կոյտ բառին սեռականն է և կը նշանակէ «ձիերու ջոկ կամ երամակ»[117], վկայակոչելով Նոր հայկազյան բառարանը։ Որ, իրոք, կուտի ձևը կոյտ բառի սեռականն է՝ հաստատում է դարձյալ «Եւթներորդ գլուխ» բառարանը, որ ունի՝ «Կոյտս. մատակաց, ձիոց», նաև «Կուտպան. կուտից պահապան երամակաց»։ Երկու բառերի վրիպակներով, «Բառգիրք»-ում կա «Կուտպան. կուտից պահապան և երկամակոց» (էջ 168)։

Նման բազմաթիվ օրինակներ կարելի է բերել նաև Ն. Բյուզանդացու, Ն. Ակինյանի և այլոց աշխատություններից, դարձյալ ցույց տալու համար, որ բառաքննության ասպարեզում էլ իր կարևոր և երբեմն էլ անփոխարինելի դերն ունի «Բառգիրք»-ը։ Շատ դեպքերում նրա մեկնությունները վճռական նշանակություն են ունեցել այս կամ այն վիճելի բառի վերաբերյալ եղած տարակարծությունները փարատելու և իրողությունը բացահայտելու համար։

Հայ մատենագրության, իսկ հետագայում նաև արդեն գոյություն ունեցող ստվարածավալ բառարանների վրա հենվող նոր բառարանագրությունը անհրաժեշտ ուշադրություն չնվիրեց հին բառարաններին, որոնք նրա համար միայն հազվագյուտ բառերի աղբյուրներ էին կամ, սակավ դեպքերում, օժանդակ միջոց՝ առանձին բառերի խնդրականությունը լուծելու համար։ Հայ բառարանագիրները, որոնք ձեռքի տակ հին բառարանների շատ գրչագրեր չունեին, բառարանների բնագրերի համեմատություն չէին կատարում, այլ օգտվում էին միայն մեկ՝ իրենց կողմից լավագույն համարված ձեռագրից։

117 Տե՛ս Հ. Աճառյան, նույն տեղում, էջ 20։

Մատենագրական վկայությունների բացակայությունը, համառոտ, շատ հաճախ միաբառ մեկնությունները, աղճատումներն ու վրիպակները հայագետների մոտ կասկածներ էին առաջացնում առհասարակ հին բառարաններում բերվող ձևերի վավերականության ու բառամեկնությունների ճշտության վերաբերյալ։ Այդ պատճառով հին բառարանների և մասնավորապես «Բառգիրք»-ի բազմաթիվ բառեր դուրս մնացին ստվարածավալ տպագիր բացատրական բառարաններից։ Դրա համար «Բառգիրք»-ը, նոր բառարանների առկայության դեպքում էլ, դեռևս օգտագործվում է բանասերների կողմից և հատկապես նորահայտ բնագրերի ուղղությամբ կատարվող աշխատանքում երբեմն շատ կարևոր է։ Եվ պատահական չէ, որ հին բառարանները Մենեվիշյանը գանձարան էր համարում «ընդհանրապէս զՄագիստրոս հասկնալու համար»[118]։ Հ. Աճառյանը նշում էր, որ Մագիստրոսի բազմաթիվ խրթին բառեր կարող են մեկնվել միայն հին քերթողական բառարանների օգնությամբ՝ «Ասոնցմէ դուրս մեզի համար առ այժմ ուրիշ միջոց չկայ»[119]։

Մենք փորձեցինք ցույց տալ «Բառգիրք Հայոց» բառարանի նշանակությունը հայ բանասիրության մեջ (գլխավորապես բնագրագիտության ու բառաքննության բնագավառներում), որտեղ բառարանը օգտագործվում էր որպես խրթին բառեր մեկնելու կարևոր միջոց։ Բայց անհրաժեշտ է «Բառգիրք»-ը ուսումնասիրել մեկ ուրիշ հիմնական մոտեցումով՝ լեզվաբանորեն։ Այդ դեպքում այն, որպես բառարանագրական հին բնագիր, ոչ թե միջոց, այլ ուղղակի առարկա է, աղբյուր, հայերենի բառային կազմի տարամանակյա (պատմական) ուսումնասիրության համար։ Այդպիսի ուսումնասիրություն կատարելը, սակայն, մեր նպատակը չէ։ Կնշենք միայն, որ այդ բառարանում դեռևս կան բազմաթիվ նոր բառեր, որոնք

118 Գ. Մենեվիշյան, նշվ. աշխ., էջ 17։

119 Հ. Աճառեան, Հայերէն նոր բառեր հին մատենագրութեան մէջ, Բ, Վենետիկ, 1922, էջ 172։

ծանոթ չեն մյուս բոլոր հայերեն տպագիր բառարաններին։ Այդ բառերից են, օրինակ՝ արտաֆատւրիւն (եղք), գոյապատիւ (էապատիւ), էապատիւ (առաջնորդ կամ գոյապատիւ), ժողովատեսուչ (պարագիտող), ծառուխի (չարուհի, չար կին), հաւմաշէն (միաշէն), ձերբառատ (առատաձեռն), մակագիտող (վերագիտող կամ երկնագիտող), մատնափայտ (ճաղ), միաշէն (համաշէն), յոռոտաբան (պաճուճաբան), նաճառն (բոլոր), ներգրութիւն (տարագրութիւն), շարեցցուկ (հաստատութիւն), ոգելական (բարբառական), չարաղատիչ (տրանջող կամ մեղադրող), ջոկափառեալ (դասաւորեալ), վերադարձակի (ընդդիմաբանութիւն) և այլն։ Կան բառեր էլ, որոնք նոր չեն, սակայն նոր իմաստ են արտահայտում, ասենք՝ յարակայ նշանակում է նաև «վերադիր», բառակ «տետրակ», նիհար «կարօտ», խորամիտ «ննջգաւոր» և այլն։ Շատ նոր բառեր կան նաև «Բառգիրք»-ի տարբեր գրչագրերում։

Անհրաժեշտ է մատնանշել «Բառգիրք»-ի՝ հայ մշակույթի համար ունեցած ևս մի կարևորություն, այն, որ բառարանը հնարավորություններ է ընձեռում լրացումներ, ճշգրտումներ ու սրբագրություններ կատարելու մեր տպագիր բառարաններում, առաջին հերթին հենց Արմատական բառարանի այն բառահոդվածներում, որոնք վերցված են տպագիր «Բառգիրք»-ից։ Նախնական ստուգումների համաձայն Արմատական բառարանի միայն «Բառգիրք»-ով վկայվող 1158 բառից ավելի քան 200-ը ուղղումների կամ առնվազն բառաձևերի և իմաստի ճշգրտմանը նպաստող սրբագրումների կարիք ունի։

Նշելի է նաև, որ «Բառգիրք»-ի գրչագրերի նոր բառերը գալիս են համալրելու մեր լեզվի բառային կազմը և պետք է գրանցվեն հայերենի ապագա ընդարձակ բացատրական բառարաններում։

ՀՈՎՍԵՓ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԲԱՌԱՐԱՆԸ

Միջնադարյան հայ բառարանագրության վերջին շրջանի հետաքրքրական նմուշներից է Հովսեփ վարդապետի անունով հայտնի բառարանը։ Բառամթերքի հարստությամբ այդ բա-

ռարանը, որ ավելի քան 10300 բառ է պարունակում, գերազանցում է ցարդ մեզ հայտնի բոլոր հին բառարաններին, որոնցից և ոչ մեկին էլ նման չէ իր կազմության յուրահատուկ բնույթով։ Բառարանի 1698 թ. գրված միակ գրչագիրը (որը հավանաբար նախագաղափար օրինակ է) պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում 3913 թվահամարի տակ[120]։

Ձեռագրում բառարանից բացի ուրիշ նյութեր չկան։ Գույնով ու որակով մյուս թերթերից տարբերվող առաջին թերթի վրա (էջ 1ա) խոշոր ու անհամաչափ տառերով գրված է. «Բառարան զանազան գրոց, գրեալ ի թվին ՌՃԽէ, յԱստապատ գիւղաքաղաքի ի Յովսէփ վարդապետէ»։ Գրաձևով ամբողջ բնագրին անհարազատ այս վերնագիրը (ինչպես երևում է նաև բուիե բառի թվին ձևից) գրված է հետագայում, բուն ձեռագրի վերջում (էջ 247ա) զետեղված միակ հիշատակարանի, որի կարևոր մասը հետևյալն է.

«Արդ գրեցաւ բառ գիրքս ի Թուականութեան հայոց ՌՃԽէ, ի գիւղաքաղաքս Աստապատ, ընդ հովանեաւ սրբոյն Ստեփաննոսի և սրբոց հրեշտակապետացն Միքայէլի և Գաբրիէլի։ Յիշատակ ինձ յոդնամեղ անուամբ և եթ Յովսէփ վարդապետիս և ծնողաց իմոց...»։

Այս հիշատակարանը որոշակի տեղեկություն չի տալիս բառարանի հեղինակի մասին, հիմք չկա հաստատելու ձեռագրի գրիչ Հովսեփ վարդապետի միաժամանակ հեղինակ լինելը կամ չլինելը (Մատենադարանի ձեռագրացուցակը իրավացի կերպով հարցականի տակ է դնում հեղինակ բառը)։ Բնագրի պրպտումներն էլ զորեղ փաստեր չեն ընձեռում հարցի լուծման համար։ Կարող ենք ենթադրել, որ եթե Հովսեփ վարդապետը չի կազմել ամբողջ բառարանը, ապա նա գրել է բառարանի մի մասը միայն, միաժամանակ խմբագրելով ու ամբողջական տեսք տալով բառարանին։ Այսպիսի ենթադրություն մենք անում ենք հենվելով բառարանի արտաքին կողմի,

120 Նկարագրությունը տե՛ս Մատենադարանի ձեռագրացուցակ, հտ. Ա, սյուն 1109։

գրչագրական վիճակի ու կառուցվածքի հետ կապված հանգամանքների վրա։

Ամբողջ բնագիրը գրված է նոտրգրով։ Սակայն առանց դժվարության կարելի է տեսնել երկու տեսակի տառաձևեր։ Նախ, բառացանկերի սկզբում, ուղղահայաց դիրքի տառաձևեր, ապա, դրանցից հետո, մինչև բառացանկերի վերջը, թեքություն ունեցող, համաչափ և ավելի վայելուչ գրություն։ Ընդ որում բնագրի տառաձևերով տարբերվող այս երկու մասերը զանազանվում են նաև թանաքի գույնով։ Եթե տարբեր ձևի նոտրգրերը պատկանում են միևնույն գրչին (իսկ դա չի բացառվում), ապա պետք է ենթադրել, թե դրանք գրված պիտի լինեն տարբեր ժամանակներում։ Եվ, իրոք, այդ գրաձևերը ոչ թե խառնվում են, այլ կանոնավոր հաջորդում են իրար։ Բայց կարևորն այն է, որ գրաձևերը կապված են նաև բառարանի բովանդակության, կամ ավելի ճիշտ՝ բառամթերքի տարբեր շերտերի հետ՝ ըստ բառերի աղբյուրների։ Բառացանկերի սկզբի մասերը (որ գրված են միասյուն, ուղղահայաց տառերով ու թունդ սևագեղով) բնույթով ու բառամեկնությունների եղանակով խիստ տարբերվում են բառացանկերի հաջորդ մասերից։ Ամբողջ բնագիրը իրենից ներկայացնում է երկու տարբեր բառարանների մի մեխանիկական գումար, որտեղ մի բառարանի բառացանկերին վերջից կցված են մյուս բառարանի համապատասխան բառացանկերը։

Ինչ բառարաններ են դրանք՝ Հովսեփ վարդապետի բառարանի այդ երկու բաղկացուցիչ մասերը։ Առաջինը ավելի քան 6200 գլխաբառ ունեցող մի բոլորովին նոր բառարան է, իսկ երկրորդը մեզ վաղուց արդեն հայտնի «Բառք քերթողականք» բառարանն է, որը մոտավորապես նման է իր №№ 266, 7117 և 2450 ձեռագրերում առկա ընդօրինակություններին և պարունակում է շուրջ 4100 գլխաբառ։

Խառը բառարանի հեղինակը բառաշարքը կազմելուց առաջ մատյանի էջերի վերևում, լուսանցքներում, նշել է երկու տառերից կազմված բոլոր հնարավոր տառակապակցությունները, ինչպես, ասենք, Բ-ի բառացանկի համար՝ բա, բգ, բդ, բե և այլն, դրանց տակ գրելով համապատասխան գլխաբառերը։ Բազմաթիվ ընդարձակ բացատները, այլև ամբողջովին չգրված էջերն ու թերթերը հեղինակի կողմից նախատեսված են եղել հետագայում բառարանը նոր բառերով լրացնելու, ընդարձակելու համար։ Եվ, խառը բառարանը երբ արդեն գրված ու պատրաստ է եղել, մատյանի թերթերի վրա ազատ մնացած այդ տեղերում, ըստ տառակապակցությունների, գրվել են «Բառք քերթողականք»-ի համապատասխան բառերը։ Իսկ այդ, անկասկած, կատարել է Հովսեփ վարդապետը, որովհետև խառը բառարանի բառացանկերից հետո գրված «Բառք քերթողականք»-ի բոլոր բառերը, ձեռագրի հիշատակարանի հետ միասին, գրված են նույն տառաձևերով, միևնույն մարդու ձեռքով։ Այդ նույն գրերով որոշ ուղղումներ են կատարված խառը բառարանում։ Այսինքն՝ Հովսեփ վարդապետը, խառը բառարանին «Բառք քերթողականք»-ի բառերը միացնելուց առաջ, ստուգել, խմբագրումներ է կատարել առաջինում և բառահոդվածների կրկնություն թույլ չտալու նպատակով՝ համեմատել է երկու բառարանների բնագրերը և ամբողջական տեսք է տվել իր բառարանին։

Շատ հավանական է, որ խառը բառարանը կազմած լինի ինքը Հովսեփ վարդապետը, որը բառարանագրությամբ է զբաղվել և ունեցել է բավականին երկարատև վարդապետական գործունեություն։ Նա արդեն վարդապետ է եղել քննվող բառարանի գրչագրումն ավարտելուց 24 տարի առաջ՝ 1674 թ., ինչ պարզ երևում է ձեռագրի 11բ և 247ա էջերի վրա նրա անձնական կնիքի դրոշմներից։ Խառը բառարանը նա թերևս կազմել է տարիների ընթացքում՝ զանազան գրքերից բառերի ասպիճանաբար հավաքումով։ Հաղիվ թե հնարավոր է մեկ տարում նման մի բառարան կազմել և գրչագրել։ Հենց երկու տեսակի նոտրգրերի առկայությունը ցույց է տալիս, որ հեղինակը երկար ժամանակ է աշխատել բառարանի վրա, որ խառը բառարանի ավարտումից որոշ ժամանակ հետո՝ ուրիշ թանաքով ու ավելի վայելուչ տառաձևերով է շարունակել գրել։ Նա,

ըստ երևույթին, համուտ գրիչ է եղել, տիրապետել է տարբեր գրաձևերով շարադրանքը գաղափարելու արվեստին. խառը բառարանի մեջ նա արդեն փորձեր է կատարել այլ տառաձևերով գրել, օրինակ. 210բ էջում նոտրգրի մեջ կան բոլորգրով գրված տողեր: Չենք խոսում այլևս այն մասին, որ խառը բառարանի նման մի գործ ստեղծելու համար անհրաժեշտ էին բազմակողմանի գիտելիքներ, օտար լեզուների իմացություն, ինչ առաջին հերթին հատուկ էր վարդապետին, քան թե սովորական մատենագրականին ու ձեռագրեր արտագրող գրչին:

Եթե, ընդհակառակը, ենթադրենք, թե Հովսեփ վարդապետը չի կազմել խառը բառարանը, այլ ընդօրինակել է այն մի ինչ-որ աղբյուրից, ապա այդպիսի բառարան ընդօրինակելու, նրա բառացանկը ընդարձակելու, այլև ամբողջ բառարանը խմբագրելու ու մի նոր բառարան ստեղծելու համար էլ նա իրավամբ կարող է հեղինակ համարվել:

Անցնելով բառարանի մասնագիտական քննությանը, ասենք, որ մեր քննության առարկան կլինի միայն խառը բառարանը, որովհետև «Բառք քերթողականք»-ն արդեն ուսումնասիրված է:

Այս «Խառը բառարան» անվանումը եթե ոչ գիտական, լեզվաբանական տեսակետից, ապա ընդհանուր առումով պատշաճում է քննվող բառարանին, որն ամբողջությամբ ո՛չ բացատրական է, ո՛չ թարգմանական, ո՛չ մասնագիտական և ո՛չ էլ մի որոշակի այլ բնույթի: Այն հավաքումն է մի կողմից հայերեն ու զգալի չափով օտար բառերի, մյուս կողմից՝ գիտության ամենատարբեր բնագավառների մասնագիտական բառերի ու տերմինների: Բառարանի մեջ անկանոն, առանց որևէ սկզբունքի, գոյակցում են տարբեր բնույթի, այլև միալեզվյան ու բազմալեզվյան բառարանների տարրերը: Այդ տեսակետից քննվող բառարանը մի յուրատեսակ, բացառիկ երևույթ է հայ հին բառարանագրության հուշարձանների մեջ: Ահա մի ընդարձակ քաղվածք խառը բառարանից.

Այրի. կիզի: Այգաստղ. առաւտեան աստղ: Այգաստղ. լուսաբեր: Այտում. ուռէցք: Այսահար. դիւահար: Այսակիր. դի-

ւակիր: Այուպէլի. առջու մէջք: Այգի. ի նա գինի կամ արեղի կամ այգ առաւօտ, որ է ուրախութիւն և գեղեցկութիւն: Այրան. այիրան, որ է բաժանող: Այէր. աւդ: Այուդէմ. այլ: Այուդումնուս. աշուն: Այուկուսդուս. աւգոստոս. Յաւգոստոս կայսերէ: Այսադրալիս. հարաւ: Այուրէուս. ոսկի: Այուրէուս նումէրուս. ոսկի թիւ, որ է ինն և տասն երեակ ի շրջանն: Այուրէս. ականջ: Այուրիկա. կառաւար: Այուպ. յոր: Այրն մանեա. վասն մանեա կուսին որ է ի լեառն Սեպուհ: Այդրիադա. սուրբ երրորդութիւն: Այլ աստորակայք. պատահում: Այլայլակ. պատահում: Այլգոյացութիւն: Այրասէր. յո.: Այլասեռ. որ այլ և այլ սեռի տեսակ են: Այծեաց կայճ. զուխ: Այգեգործ. որ այգի գործէ, յո: Այգեպան. յո: Այսխատաշ. ռանակից: Այսմաւուրք. վասն ձայնին որ սկիզ[բ]ն ճառիցն ասէ այսմ աւուր վկայաբանութիւն: Այ պաշի. ամսագլուխ: Այլաշարժ. յայլմէ շարժեալ: Այիան բնէվմա. սուրբ հոգի: Այայտին. լուսնի լոյս: Այրիվան. ի գաւառն Կոտեաց: Այգեպան. այգւոյ վերակացու: Այգէգործ. որ զայգին գործէ: Այծամարդ. ոտքն այծու. և այլ հասակն մարդու: Այր. պատկեր: Այախ թր., ոտք հյ., փայ պր., ըորճլու ար.: Այգեգործ յո.: Այծենակայճ. զուխ: Այիաւս. սուրբ: Այլաբեր. գեաւղ ի գաւառն Կոտայից: Այլայլութիւն. ար. խտիղալա: Այսինքն հյ., աւպայ պր.: Այն ար., կօզ թր., այք հյ., չէշմ պր.: Այալաթ ար., վիլայաթ թր., երկիր կամ գաւառ հյ.[121]:

Բառացանկերի առանձին հատվածներում գրեթե բոլոր գլխաբառերը օտար բառեր են, օրինակ.

Իմպէր. տարափ: Իյնիս. հուր: Ինանիմադուս. անշունչ: Ինանիմալիս. անկենդան: Ինբրինջիբիօ. ի սկզբանէ: Ինգարնաձիօնիս. մարմնանալու: Ինգօրբօրէա. անմարմին: Ինդէնէպրի. ի խաւարի: Ինդէր. ի մէջ: Ինդէրլունիում. ծնունդ լուսնի: Ինգերվալլում. միջոց: Ինդէրվալլում հէպտօմատիս. միջոց շաբաթք: Ինդրաւիդու սալիս. մտանել արեգական...[122]

Իէքտաս. միատակ կամ մի աղի քնար: Իէք շամպա. միաշաբաթ: Իէնկի շար. նոր քաղաք: Իէնկի քաւյ. նոր գեղ: Իէնկի

121 Մատենադարան, ձեռ. № 3913, էջ 17ա—17բ:

122 Նույն տեղում, էջ 97բ:

հէսար. նոր բերդ։ Իչնկի զափի. նոր դուռ։ Իչնկի պակ. նոր պարոն։ Իչնկի սարայ. նոր պաղատ[123]...

Կամ՝

Մաթահ ար. երբ։ Մագղուլաթ աշարա. ժ ստորոգութիւն Արիստոտելի]։ Մարմին ար. ճիսմ։ Մավճուտ. ար. էութիւն։ Մատում. ար. ոչ գո։ Մատտա. ար. հիւէ։ Մա. ար. ջուր։ Մալզում ար. պատճառ։ Մաքննիս. վանք յերկիրն Գեղամա։ Մալամա. յն. ոսկի։ Մավզայ. ար. ենթակայ։ Մահմուլ. ար. ստորոգեալ ի վերայ ենթակայի[124]...

Այս քաղվածքները բավական են բառարանի ձևը կամ կառուցվածքը ընդհանուր առմամբ պատկերացնելու համար։ Ինչպես տեսնում ենք, այս բառարանի կառուցվածքի մեջ էլ նորություն չկա։ Սակայն նշելի է, որ բառարանի հեղինակը (չնայած ոչ բոլոր դեպքերում) Ամիրդովլաթի նման իրար առադրվող տարբեր լեզուների բառերի ծագումը ցույց տալու համար բավականին հետևողականորեն կիրառում է համառոտագրություններ՝ Հյ-հայերեն, ար-արաբերեն, պր-պարսկերեն, թր, թրք-թուրքերեն, յն-յունարեն, եբ-եբրայերեն, ֆռ, ֆռն-ֆռանկերեն, վր-վրացերեն, բդ-քրդերեն։ Բազմաթիվ հայերեն բառերի դիմաց մեկնության փոխարեն դրված է յտ համառոտումը, որ է յայտնի (յայտնի է)։ Բառահոդվածների բազմազանությունը (բովանդակությամբ, ծավալով և մասամբ մեկնությունների եղանակով) պայմանավորված է բառարանի խառը բնույթով։ Բառահոդվածները բովանդակում են.

ա) Համառոտ, մեծ մասամբ միաբառ համարժեքային մեկնություններ.

բ) Ընդարձակ նկարագրական մեկնություններ.

գ) Թարգմանություններ.

դ) Ստուգաբանություններ.

ե) Սահմանումներ.

զ) Չմեկնվող գլխաբառեր յտ նշումով։

123 *Նույն տեղում, էջ 95բ։*

124 *Նույն տեղում, էջ 154ա։*

Ընդարձակ մեկնությունները մեծ մասամբ վերաբերում են աստղաբաշխական-տոմարական, ինչպես նաև չափ ու կշիռ նշանակող գլխաբառերին։ Կան, օրինակ, այսպիսի բառահոդվածներ. «Մնաս. ըստ եբրայեցւոց արծաթ թարգմանի, ըստ թեբայեցւոց Լ ունկոյ կշռորդ է, և ըստ այլոց ՝Ռ ունկի։ Բայց բազումք զմնասն և զտաղանդն և զանքարն մի և նոյն է ասեն»[125]*։ Կամ՝ «Աւետեաց բլուր. աւետիք եաուն Անտոնի և Կրաւնիդէսի թէ սուրբն Գրիգոր և թագաւորն Տրդատ եկեալ է ի բնակութիւնս ձեր որ է մերձ վանսն Իննակնեան»*[126]*։*

Հետաքրքրական է աշխարհագրական անունների մեկնությունը. գլխաբառից հետո հաճախ տրվում է նրա ստուգաբանությունը (եթե տվյալ անունը թուրքերեն կամ այլ լեզվից է ծագում), ապա ինչ է անվանում բառը՝ երկիր, գավառ, գյուղ, քաղաք, լեռ և այլն, այնուհետև ցույց է տրվում, թե որտեղ է գտնվում այն, ուրիշ ինչպիսի անուններ ունի և այլն։ Օրինակ.

Սարչա. ճնճղուկ. անուամբ թռչնոյ։ Գեօղ է մերձ ի Սեբաստիա։

Կուլիճա. վարդուա։ Գեօղ է ի գաւառն Տոմարծո։

Աշոտ կլա. յԱշոտ թագաւորէ շինեալ բերդ է ի սահմանս Կի(ւ)լիկիո։

Աւագ վանք. վասն առաջին հիմնարկութեան, որ ի Թէոսի առաքելոյն։ է ի գաւառն Դարանաղեաց։

Բերդակ. վասն բերդի, որ ի նմա։ Գետաքաղաք ի մերձի ղեաբերերդ լեզերս Եփրատա։

Աշխարհագրական անունների այդպիսի համառոտ, բայց բովանդակալից մեկնություններով քննվող բառարանը նման չէ մյուս հին բառարաններին, որոնց մեջ երբեմն նման անուններ են մեկնվում։

Չմեկնված գլխաբառերը շատ գործածական պարզ և բազադրյալ հայերեն բառեր են, կազմված հատկապես առ, պես,

125 *Ձեռ. № 3913, էջ 160ա։*

126 *Նույն տեղում, էջ 32բ։*

կից և այլ ձևույթներով։ Բառարանի հեղինակը այդ բառերը չի մեկնել, մտածելով, թե դրանք ամենուրեք հասկանալի բառեր են և բավարարվել է աղբատասէր, այգեպան, աշնանամուտ, բաղմամեղ, գետնափոր, դատաւոր, երկնաւոր, լերդացաւ, խաչերկաթ, ծամակալ, կաթնապուր, հազարապետ, շուրջառ, ողնաշար, սահմանակից, փառասէր, քաղաքակից և այլ բառերի դիմաց «յայտնի» բառի յղ համառոտումը դնելով։

Թարգմանությունները կատարված են հետևյալ ձևերով.

ա) Օտար բառերը թարգմանվում են հայերեն համարժեքներով, ինչպես՝ Ապ. ջուր, Ալմա թր., խնծոր հյ., Գէորգիոս. հողագործ, Անուս. տարի, Վիճս. գինի, Մաղէր. փո. մայր, Ընդշ. քրդ. սեաւ և այլն։

բ) Օտար բառերը թարգմանված են միաժամանակ հայերեն և օտար համարժեքներով՝ Այախ. թր., ոաք հյ., փայ պր., բոբճլու ար., Լեւոն յն., լէաւ ֆռ., զեւոնդ հյ., լևոնդ վր., լաւանդ թր., առիւծ հյ., ասլան թր., Խանա պր., պէյթ ար., ավ թր., տուն հյ. և այլն։

գ) Հայերեն բառերը թարգմանված են օտար բառերով՝ Կատու. յն. կատա, Անանջ հյ., կօշ պր., տան ար., կուլախ թր., Աղ հյ., մէլ ար., տուղ թր., Թանաք հյ., մելան յն. և այլն։

Հայերեն բառերը թարգմանելիս (գլխավորապես երբ հայերեն բառին մի օտար համանիշ է առաջրված) բառարանի հեղինակը նախապատվություն է տալիս արաբերենին։ Օրինակ՝ Անուն. ար. իսմ, Առիճ. ար. իղաֆաթ, Բացատրիւն. ար. ինթի զանաֆի, գոյացուրիւն. ար. ճավհար, ենթագրուրիւն ար. թարիֆ բասիմ, Երաժշտական. ար. մուսիղի, Երկրաչափական ար. հէնտասա, Իմաստասիրուրիւն. ար. հէքմաթ, Լինելուրիւն. ար. քավն, Հակակա. ար. թախապուլ, Ճարտասանուրիւն. ար. խիթապաթ և այլն։

Նկատելի է, որ նման թարգմանություն ունեցող հայերեն գլխաբառերը մեծ մասամբ իմաստասիրական տերմիններ ու մասնագիտական բառեր են։

Սահմանումներ այս բառարանում քիչ կան, եղածներն էլ այնպիսի սահմանումներ են, որոնք հանդիպում են մեր միջ-

նադարյան իմաստասիրական և նույնիսկ այլ բնույթի բառարաններում։

Ստուգաբանությունները արդի ըմբռնումով, իհարկե, զուրկ են գիտական հիմքից։ Դրանք բնաձայնության, ձևական ու գործառական նմանությունների վրա հիմնված՝ մոտավոր ու կամայական ժողովրդական բացատրություններ ու իմաստավորումներ են, որոնք հիմնականում ոչ թե բառարանագրի մտքի արգասիք են, այլ նույնությամբ քաղված են հայ հին մատենագրությունից՝ Դավիթ քերականի, Ստ. Սյունեցու, Հասմամ Արևելցու, Գր. Մագիստրոսի, Խորենացու, Շիրակացու, Տաթևացու և այլ հեղինակների երկերից։ Ուստի ավելորդ է ծավալվել այդ ստուգաբանությունների շուրջը, մանավանդ որ դա նախ հեռու է մեր նպատակից, ապա՝ ձեռքի տակ եղած փաստերը հիմք չեն հանդիսանում նոր բան ավելացնելու այն ամենին, ինչ արդեն միջնադարյան ստուգաբանության մասին ասված է հայ լեզվաբանական աշխատություններում[127]։

Ինչ մնում է ստուգաբանությունների ձևերին, ապա դրանք բազմազան են, նրանցից 3-ը, որ ընդգրկում են բառարանում եղած ստուգաբանությունների հիմնական մասը, արդեն սահմանված են Դավիթ քերականի կողմից՝ «Ստուգաբանութեան ձեւք են երեք, յիրէն, յարուեստէն, ի ձայնէն»։ Նշենք ստուգաբանությունների հիմնական ձևերը.

1. Ստուգաբանություն բառի բաղադրիչների միջոցով՝ Գետնաուիծ. գետնի առիծ, փոքր կենդանի է, Եռանկիւնի. երեք անկիւնի, Լուսաբեր. լուսո բերող, Բոդեղէն. ի բրդէ եղեալ, Ջրաղաց. որ ջրով աղա և այլն։

2. Բառի գործառական հարաբերությունների վրա հիմնված ստուգաբանություններ՝ Բանալի. վասն բանալոյն դիտակեալն, Սլամ. վասն սլանալոյն, Բոյս. վասն բուսանելոյն,

127 Հին ստուգաբանությունների մասին տե՛ս Էդ. Աղայան, Հայ լեզվաբանության պատմություն, Երևան, 1958, էջ 86—93։ Գ. Ջահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1954, էջ 133—135, 201, 213—214։ Նաև՝ Գ. Ջահուկյան, Լեզվաբանության պատմություն, հտ. 1, Երևան, 1960, էջ 52—57։

Կրոց. որ զկիթն լնուն, Միոռն. մեռուցիչ բոլոր ախտից և այլն։

3. Առարկայի (երևույթի) որևէ հիմնական հատկանիշի վրա հիմնվող ստուգաբանություն՝ Եղջիւրու. վասն եղջիւրացն, Խստոր. որ խիստ է կծուութեամբ, Հրաչեա. վասն գեղեցկութեան երեսաց և այլն։

4. Փոխակերպական ստուգաբանություն, երբ բառն ըստ արմատների կամ կամայականորեն մասնատվում է և նրա մասերի մեջ կատարվում են զանազան հնչյունական փոփոխություններ, հնչյունների ավելացումներ ու բացթողումներ՝ ամբողջ բառը կամ նրա առանձին մասերը ուրիշ բառերի հանգեցնելու նպատակով։ Օրինակ՝ Մով. ծաւ. այսէ ծաւալ, վասն ծաւալեալ ծփման ալեացն, Վարդան. վարդ է այն, Դազան. վասն գազելոյն պատառամամբ զկենդանիս, նաև՝ Գազան. գղան, Գառուն. գայ արուն, Աշուն. անշունչ, Կատու. կա ի տունն, Ագաղաղ. այգ աղաղակ, Կենդանի. կեանք տանի, Մահիճ. ի մահ իջանել, Միտ. մուտք, նաև՝ Միտ զի ամենայն ինչ ի նա մտանէ և ժողովի, որ է յիշողութիւն, Մատաղ. մատո՛ աղ, Նախանձ. նախ չանձն իւր կրէ ցաւ կամ նա խանձ և այրեցումն է հոգւոյ, Գինի. գնի կամ գին ունի, նաև՝ Գինի. գնելի է մեզ, Գիշեր. գէշիր, նաև՝ Գիշեր. զի գարշանա երկիր և ամպն, Բուրուառ. բուրումն առ, Ճննդուկ. ճչողուկ, Աղբատ. աղքն հատեալ, նաև՝ Աղբատ. յաղեաց և ի գիւո հատեալք, Լրտես. լուր և տես, Կարաս. կա ասա և այլն։

5. Բնաձայնային ստուգաբանություններ՝ Կաքաւ. ի ձայնէն, Կչեղակ. վասն կչկչալոյն, Կռունկ. վասն կռկռալոյն, Միծեռ. ի ձայնէն, Ճննդուկ. ի ճրւճրւալոյն։

Բառարանում քերականական բնորոշումներ չկան և միայն հազվագյուտ դեպքերում բառի եղակի ձևի հետ բերվում է նաև հոգնակին, ցույց է տրվում քերականական սեռը և այլն։ Օրինակ՝ Անկուշտ. մատ, Անկուշտաճ. մատունք, Մելխի. թագաւոր, Մելխա. թագուհի, Սինհսդէր. ձախ. արական, Սինհսդրա. ձախ. իգական, Սինհսդրում. ձախ. չէզոքական, էխս. ի, որ է նախդիր։

Շատ բառահոդվածներ կրկնվում են նույնությամբ կամ

որոշ փոփոխություններով։ Այդ կրկնությունների հիմնական պատճառն այն է, որ բառարանի հեղինակը բառացանկերը կազմել է ոչ թե հաջորդաբար՝ մեկն ավարտելուց հետո մյուսին անցնելով, այլ զուգահեռաբար՝ բնագրերից քաղված բառերը միաժամանակ, ըստ սկզբնատառերի, տարբեր բառացանկերում գրանցելով։ Եւ ամեն անգամ մի բառացանկից մյուսին անցնելիս հեղինակը նորից չի ընթերցել այն, ինչ արդեն գրված է ավյալ բառացանկում։ Ուստի հաճախ արդեն բառացանկում գրված բառը նորից է գրվել ու մեկնվել՝ նույն բնագրի տարբեր տեղերում կամ տարբեր բնագրերում գործածված լինելու շնորհիվ։

Բառահոդվածները կրկնվում են երբեմն նույնությամբ, երբեմն էլ զգալի փոփոխություններով, ինչպես Ատուրեան. կրակարանն որ պաշտէին, Ատուրեան. կրակատուն, Թիմարխանա. հիւանդանոց, Թիմարխանա. դեղոց տուն կամ հիւանդանոց և այլն։ Նշելի է, որ մի շարք բնակավայրեր իրենց տարբեր անվանումներով՝ Եդեսիա և Ուռհա, Էջմիածին և Վաղարշապատ և այլն, ինչպես նաև նույն անվան տարբեր արտասանություններով, որպես՝ Հռոմկլա և Ուռումղալա, հիշատակվում են տարբեր բառացանկերում։

Բառամթերքի մասին որոշ պատկերացում արդեն տվել են վերևում բերված քաղվածքներն ու օրինակները։ Իր ամբողջ բազմազանությամբ այդ բառամթերքը կարելի է ներկայացնել ըստ իմաստների առանձնացված բառերի հետևյալ հիմնական խմբերով.

ա) Առօրյա կյանքի ու կենցաղի կարևոր իրեր, երևույթներ, գործողություններ ու հարաբերություններ.

բ) Բնության առարկաներ և երևույթներ.

գ) Բույսեր, բուժիչ նյութեր, թանկագին քարեր և այլն.

դ) Կենդանիներ (ընտանի և վայրենի), թռչուններ, սողուններ և այլն.

ե) Մարմնի մասեր և հիվանդություններ.

զ) Սննդամթերքներ և ըմպելիքներ.

է) Ընտանիք, արյունակցություն, հարազատություն և այլն.

ը) Աստվածաշնչի և այլ գրքերի անուններ.

բ) Թվական անուններ.

ժ) Չափեր, կշիռներ, դրամներ և այլն.

ժա) Տերմիններ և մասնագիտական բառեր (փիլիսոփայական, աստվածաբանական, աստղաբաշխական, տոմարական և այլն).

ժբ) Անձնանուններ.

ժգ) Պաշտոններ, աստիճաններ և այլն.

ժդ) Աշխարհագրական անուններ:

Գիտության լեզվին վերաբերող օտար բառերը գլխավորապես լատիներեն, արաբերեն և մասամբ հունարեն են, իսկ աստիճաններ, պաշտոններ նշանակող բառերն ու աշխարհագրական անունները հիմնականում թուրքերեն են:

Աշխարհագրական անունները (երկրների, գավառների, գյուղերի, քաղաքների, լեռների և այլ անունները) զգալի տեղ են գրավում բառարանում, նրանց թիվն անցնում է 650-ից: Մինչև XVIII դարը մեր մատենագրության մեջ հայտնի են տեղանունների (գլխավորապես քաղաքների ու գյուղերի անունների) մի շարք համառոտ ցանկեր, որոնցից ամենաընդարձակը Գր. Կեսարացու «Անուանք քաղաքաց»-ն է: Այս ցանկը գրեթե ամենուրեք հայտնի է եղել Հայաստանում, բազմաթիվ անգամ ընդօրինակվել, ապա «Աշխարհացոյց» խորագրի տակ տպագրվել է «Բառգիրք հայոց» բառարանին կից՝ որպես հավելված: Եվ այդքան լայն տարածում ու ճանաչում գտած այդ ցանկն ընդամենը 200 տեղանուն է պարունակում, իսկ ավելի աշխարհագրական անուններ մեկնող բառարաններ, մինչև Հովսեփ վարդապետի բառարանը, հայտնի չեն առայժմ:

Աշխարհագրական անունների հիմնական մասը վերաբերում է Հայաստանին, Կիլիկիային և նրանց սահմանակից հայաբնակ վայրերին, իսկ մնացած մասը՝ Պարսկաստանին, Միջերկրական ծովի արևելյան ու հարավային ափերին, որոշ չափով էլ Եվրոպային ու այլ վայրերի:

Հովսեփ վարդապետի բառարանի աշխարհագրական

անունները անշուշտ հետաքրքիր են Հայաստանի պատմական աշխարհագրության, այլև քաղաքների ու արհեստների, գյուղական համայնքների ու հողային հարաբերությունների և այլ հարցերի ուսումնասիրության տեսակետից: Մանավանդ որ այդ անունները միայն պարզագույն մեկնությամբ չեն ներկայացված, ինչպես «Անուանք քաղաքաց» ցանկում է, այլ նրանց մասին շատ կարևոր տեղեկություններ են տրված:

Քննված բառարանը իր բառացանկի հարստությամբ ու մեկնություններում տրվող տեղեկությունների բազմազանությամբ կարող է մեր միջնադարյան լավագույն բառարանների շարքը դասվել: Այն նպատակ է ունեցել հայ մտավորականներին, առաջին հերթին դպրոցների բարձր դասընթացներում սովորողներին, ոչ միայն հայերեն և օտար բառեր բացատրել, այլև նրանց խոսքի մեջ մայրենի լեզվի շատ գործածական բառերը (որոնք մեկնված չեն և ունեն յուր նշումը) արմատավորել: Բառարանի հեղինակ Հովսեփ վարդապետը լավ ծանոթ է եղել հայ մատենագրությանը, հարուստ ու բազմակողմանի գիտելիքներ է ունեցել, տիրապետել է մի քանի օտար լեզուների: Սակայն նրա կազմած բառարանը, այնուամենայնիվ, հայ մշակույթի զարգացման գործում «Բառգիրք հայոց» և այլ բառարանների նման մեծ դեր չի խաղացել, ինչ ակնհայտ է նրա միակ գրչագրով պահպանված լինելու փաստից: Դա, իհարկե, պատահական չէ, որովհետև XVII դարի վերջում դեռևս մշակութային շրջանառության մեջ չմտած այդ բառարանի տարածումը կանխվում է XVIII դարի սկզբում արդեն հրապարակի վրա գտնվող ավելի հարուստ ձեռագիր ու տպագիր զանազան բառարաններով:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ Ա

ԲԱՌԱՐԱՆ

Ստորև բերվող բառարանը կազմված է V—XVII դարերի տարբեր բառարանների գրչագրերում առկա այն բառերից, որոնք չկան հայերեն տպագիր բառարաններում։ Զեռագրերից վերցված են հայերեն, այլև օտար ծագում ունեցող նոր, ցարդ անծանոթ բառեր, ինչպես նաև արդեն հայտնի հայերեն բառերի նոր իմաստներ ու առումներ, համանուններ, նոր բառաբարդումներ ու բառածանցումներ, պարզ և բաղադրյալ բժշկական տերմիններ և այլ բառեր, որոնք գործածական են եղել գրականության մեջ և մասամբ խոսակցական լեզվում ու բարբառներում։

Մեր կազմած բառարանը լրիվ ամփոփումը չէ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող ձեռագիր բառարաններում առկա բոլոր նոր բառերի։ Ընտրված են միայն այն բառերը, որոնք, գրչագիր ու տպագիր բառարանների համեմատումներից ու ստուգումներից հետո, մեծ մասամբ ճիշտ ու վավերական են համարված։ Կան, ուրեմն, բառեր էլ (որ երբեմն բերվում են մեկ կամ ավելի ձեռագրերի տարընթերցվածներով), որոնք ձևի կամ իմաստի տեսակետից, այնուամենայնիվ, կասկածելի են։ Այդպիսի բառերը բառարանի մեջ են առնված ի ցույց և խորհուրդ բանասերների՝ դրանց իսկությունը հետագայում պարզելու նպատակով։

Բառերը բերված են ձեռագրերում ունեցած իրենց մեկնություններով՝ մասնակի ուղղումներով ու ճշգրտումներով։

Ձեռագիր բառարանների մեկնություններից քաղված բառերի դիմաց (փակագծերի մեջ) ամբողջությամբ դնում ենք այն բառահոդվածը կամ դարձվածը, որի մեջ գործածված է տվյալ բառը։ Մեկնություններից հետո հին բառարանների անունների հապավումներով (ցանկը տե՛ս բառարանի վերջում) նշում ենք գլխաբառի աղբյուրը, իսկ «Բառգիրք Հայոց» (առանձին դեպքերում նաև այլ) բառարանից առնված բառերի մեկնություններից հետո (փակագծերի մեջ)՝ նաև գրչագրերից մեկի կամ երկուսի թվահամարները, որովհետև հիշյալ բառարանը ունի նաև խմբագրություններ իրենց տարբերակներով։ Եթե բառահոդվածից հետո նշված է միայն աղբյուրը (առանց որևէ ձեռագրի համարի, ինչպես՝ «Անիմակ. անընկեր։ ԲՎ»), ապա նման բառահոդվածները գլխավորապես վերցված են. ԱԱԲ՝ № 2370, ԱԲ, ԲՎ, Գաղ., ԳԲ, ՀԲ՝ № 7117, ԲԱԳ՝ № 2291, ԲԲ՝ № 3937, ԲԲՎ՝ № 6275, ԲԳ, ԲՔ՝ № 4149, ԲՋ՝ № 3201, ԲԽ, ԲՑ՝ № 5919, ԲՄՄ՝ № 1528, ԲՆ՝ № 3286, ԲՊԳ՝ № 7035, ԲՊՑ՝ № 413, ԲՓ՝ № 5919, ԷԳ՝ № 530, ԹԳ՝ № 534, ԼԲԱ՝ № 3468, ՄԱԾ՝ № 9449 և ՍԻ՝ № 6897 ձեռագրերից։ Միևնույն ձեռագրից ծագող և մեր բառարանում իրար հաջորդող բառահոդվածներից միայն առաջինի դիմաց ենք նշում աղբյուրը և ձեռագրի թվահամարը, իսկ հաջորդ բառահոդվածները բերում ենք առանց որևէ նշումի։

Մենք նպատակ չենք ունեցել ստուգաբանություններ և առհասարակ ընդարձակ բառաքննական աշխատանք կատարելու, սակայն անհրաժեշտ դեպքերում համառոտ ծանոթություններ ենք տալիս, համեմատություններ կատարում՝ հղելով տպագիր բառարաններին, նշում ենք (երբեմն ենթադրաբար) առանձին բառերի ծագումը։

Աբառգաղիկէ. *խաշն։ ԲՔ, ԲԳՀ (451)*

Աբերդ. *միաւորելով։ ԲԳՀ (540)*

Ագան. *նեղութիւն։ ՄԱԾ, ԲՔ № 3171՝ ագան։*

Ագարան. *դարան։ ԲԳՀ (3274)*

Ագրիստափիս *(Ասփակիս. ագրիստափիս)։ Գաղ., ձեռ. № № 7250, 266 և այլ՝ ասփանիս։ —Հն. ἄγρωστις բառից։*

Ադաղամ. *կոյս կամ օրիորդ։ ԲԳՀ (540, 5126)*

Ազբամբ. *մամուլքն է կամ մանկանայ։ ԲՔ, ԲԳՀ (451)*

Ազեկայ. *արեգակն։*

Ազդիրճ. *փփրիչ։ ԲԳՀ (451)*

Ազոտել. *ուերել կամ որոնել կամ քննել կամ կողոպտել։ —Եբր. ազովտոս («Կողոպտումն կամ հուր սիրեցելոյ կամ հուր հօրեղբօր»։ Տ. ԲՀԼ) բառից։*

Աթենացի. *զեղուն կամ հարուստ։*

Աժումն. *աշտարակ կամ առորական։*

Ակամ. *ծածկել։ ԲԳՀ (2369)*

Ակնամատոյց. *աշտանակ։ ԲԳՀ (451)*

Ակցութիւն. *մակացութիւն։ ԲԳՀ (3274)*

Աճոզ. *գովութիւն։ ԲԳՀ (451)*

Աղախին. *պահուածու։ ԲԳՀ (3274)*

Աղածրի. *սանդիայ։ ԲԳՀ (451)։ —Համա. ՀԲԲ՝ «Անյայտ նշանակութեամբ բառ», սակայն ճիշտ է «Գույն մատաղահաս, մատղաշ» ենթադրությունը ըստ «սատընդիայ» մեկնության։ Տ. նաև ՆՀԲ։*

Աղաւաղել. *բարձրացնել։ ԲՀ*

Աղեղնաբարձ *(Կապարճակիր. աղեղնաբարձն է թագաւորաց)։ ԲԳՀ (3468)*

Աղէկուկ *(Զքնաղ. աղէկուկ)։ ԱԱԲ*

Աղէմդիբ *(Փորոտիք. աղէմդիք)։*

Աղի ծաղիկ. *որ է շորանն որ է շօրայ, և կամ այն է որ աղն ի վերայ իւր բուսնի, կամ աղն է։ ԲԲՎ։ Ձեռագրում տ. նաև Շօրայ։*

Աղունասէր *(աղունասէր այր)։ ԲԳ*

Աղփաղփուն. *իմաստագագ։ ԲԳՀ (3274)*

Աղփիս. *պիսակ։ ԲԳՀ (451)։ —Հն. ἀλφός, լտ.* alphus։

Աճան. *չօղան, որ է դրմզօթ։ ԲԳՀ (268)*

Աճիւղ. *թարախ կամ սրացեալ։ ԲԳՀ (3274)*

Ամբոստանալ. *խոստանալ։ ԲԳՀ (451)*

Ամեբութիւն. *փափկութիւն կամ ագաթանգեղոս։ ԲԳՀ (3274)։ —Համա. ՆՀԲ Ամեթագոյն, Ամեթանալ։*

Ամբօս. *փափուկ։ —Համմտ. ՆՀԲ Ամէթ։*

Ամեհամիտ. *ամենայն իրօք։* ԲՎ

Ամիհուն. *որ է նանխուա, որ է եննի։* Գաղ։ —Լտ. ammium, յն. ἄμμος։ *S. ՂԱՀ Հացդեղ (1660), ԱԱ Նանխուհ (2358)։*

Ամիճամուղ. *ձիաքուռակ։* ԲԳՀ *(3274)*

Ամպարճակել. *անհաւանիլ։*

Ամօթաւեղ *(երանք. ամօթաւեղ)։* ԲՀ

Այլեղմակ. *դև։* ԲՎ

Այսաբար *(այսաբար ոգեց)։* ԲԳ

Այսկեն *(այսկեն և մարմնով)։* ԲԳ

Այր. *պատկեր։* ԲՔ

Անալոց. *կենդանաբար։* ԲԳՀ *(540)*, *ձեռ. № 3274-ում՝* Անալոց. *վնասակար։ Նաև՝* Անալոցագոյն. *վնասակարագոյն։ —Համմտ. ՀԲԲ Անալոցագոյն։ S. նաև ՆՀԲ, Բառ.։*

Անակուփ *(Կմբիլ և անկուփ. տարշնորճ)։* Գաղ.

Անաճեղ. *անոգի։* ԲՎ։

Անանդակ. *արտաքոյ բնութեան օրէնք։* ԲԳՀ *(540)*

Անասանամահ. *անասնոց մահ։* ՀՎԲ

Անարգատիպ. *անձև։* ԲՅ։ —Բառ. և Արմ. ունեն Անարգատ. *դիպ կամ անձրև։*

Անբոյր *(Ասփաղկէ. անբոյթ)։* Գաղ., *ձեռ. № 5925 և № 4149 ամբոյթ, № 266 և № 7250 անպուճ։*

Անգոյաբար, տ. Անպարիծ։

Անգոր *(անգոր այլակեր)։* ԲԳ

Անդրաճալի. *լիարար կամ անդատելի։* ԲՊԳ

Անդրուխտ. *աննենգ։* ԲԳՀ *(540)։ —Գլխաբառը գուցէ վրիպակ է անդրուժ բառից։*

Անեղատունկ *(աննեղատունկ ողկոյզ,— արմատ)։* ԳԲ

Անզգամտութիւն *(Ճակաճանութիւն. անզգամտութիւն կամ վարանումն ի ցանկութեանց)։* ԲՊԳ

Անբնեռւտաբար. *անբաժանելապէս։* ԲԳՀ *(451)*

Անբակ. *կոնայատակ, խոխոր։* ԲԳՀ *(3274)։ —Անուր բառից։*

Անբառամաթոշն *(անթառամաթոշն մարմին)։* ԲԳ

Անբափ. *անհարմար կամ անյօրինուած։* ԲԳՀ *(3274)*

Անբիմոս. *առանց թէմի։* ԲԳՀ *(540)։ —Հն. ἀθέμιτος բառից։*

Անբուբացեալ. *թառամեալ։* ԲՂ

Անիմակ. *անբնկեր։* ԲՎ

Անծաւալ ծոց. *անարուեստ։* ԲԳՀ *(451)*

Անկարուրդ. *անկումն կամ սպառումն։* ԲԳՀ *(540)*

Անկարուճ. *քարած։*

Անհաստատաբան *(Յոպաբան. անհաստատաբան)։*

Անձնամեծ *(անձնամեծաց գոյք)։* ԲԳ

Անճական։ ԲԲ

Անմարտաստան. *ընդարիք։* ԲՔ, ԲԳՀ *(451)*

Անհիւթադրեալ *(աննիւթադրեալ խորան)։* ԲԳ, ԳԲ

Անշականջակալ։ ԲԲ

Անշառաւեղիկ *(անշառաւեղիկ կացելոց)։* ԱԲ

Անուճակ. *անպատճառ։* ԲԳՀ *(451)*

Անչերաճեետ. *անիմաստ։*

Անպակասիչ։ ԲԲ

Անպարիծ. *անգոյաբար։* ԲՎ

Անվաղնջաճութիւն։

Անվսեր. *անհասատատ կամ անպիտան կամ անպատշաճ։* ԲՎ

Անտար. *աբրայ կամ փորսանկ կշռոյ։* ԲԳՀ *(268)*

Անտարագ. *անպատճառ։* ԲԳՀ *(451)*

Անտի. *անխոնարհելի կամ անղիջանելի։* ԲԽ *(5925)։ —Համմտ. ՀԲԲ Անտի (1 նշանակութիւնը)։*

Անցականճ. *կարմունճ կամ գեչուտ։* ԲՀ

Աշճնոց *(խոհակեր. աշճնոց)։* ԱԱԲ։—Թրք. aşçi *(«խոհակեր») բառից։*

Աչաղել. *բարին չկամել։* ԲԳՀ *(540)*

Ապագուճ. *քամակ։* ԲԳՀ *(451)*, ԲԽ *(3937)։ —Մեկնութիւնը թերևս սխալ է և պետք է լինի «քանակ»։ Այդ դեպքում գլխաբառը կարող է ծագած լինել հն. πόσον *(«քանակ») բառից։*

Ապողան. վիհ կամ քուէ կամ խորափիտ կամ բոյն: ԲԳՀ (3274): Նաև՝ Այրք. ապողանք:

Ապօպայ. ի բաց: ԲԳՀ (540): —Հն. ἀποβάλλω («ի բաց առնեմ») բառից:

Աչոտող. ոստ կամ շառաւեղ: ԲԳՀ (451), ԲՔ ձեռ. №№ 530, 5919, 5925 և այլ՝ աչատող:

Առաքինաւորութիւն (Կրօնաւորութիւն. աստուածապաշտութիւն կամ առաքինաւորութիւն): ԼԲԱ

Առգիտելի, տ. Առմակացելի:

Առերջանիկ (առերջանիկ լաւն): ԲԳ

Առհոլսել. առողանել: ԲԳՀ (451):—Հմմտ. Բառ. Հոլոսել. ողողանել:

Առճրի. անվարձ:

Առմակբերել. վերայ բերել:

Առմակացելի. առգիտելի:

Առորական, տ. Ածումն:

Առվաստան, տ. Խշորել:

Առօր. մինչև երեկոյ: ԲԳՀ (450)

Ասղեր. թեի ներքեն է: ԲԳՀ (268):—Հմմտ. Բառ. Ազդիր. թեզանի:

Ասլանցան (Տայլաստ. որ է ասլանցան, որ է գողութիւն): ԲՊՑ:

Ասխայ, տ. Շիմաստ:

Ասպարապետեալ (ասպարապետեալ դատր): ԳԲ

Աստանութիւն. խաւարային: ԲՎ

Աստարետոյք. ճողք և փարթամ: —Հմմտ. ՀԲԲ Աստրատիփայ, ՆՀԲ Աստարիտայք:

Աստերդ. առյերդ: ԲԳՀ (451)

Ասորոզէ. գիշերավար: —Հմմտ. ՆՀԲ Գիշերավար:

Ասփագիս, տ. Ագրիստափիս:

Ասփաղկէ, տ. Անրոյթ:

Ասքորմ. քէրքէշ: ԲԳՀ (451): —Լտ. acorus (acorus calamus) բառից: Տ. ՂԱՀ Բաշխ, Բաշխտակ, Բաղշտակ, ԱԱ Ակիր:

Ատարա. պսակ: ԲԳՀ (533, 3468), ձեռ. № 451 ատթարա:

Ատենադատ. ատենափայլ: ԲԳՀ (451)

Ատենափայլ, տ. Ատենադատ:

Արադան. դեղնութիւն: ԲԳՀ (451)

Արաստու. հզօր: ԲԳՀ (540): —Հմմտ. ՆՀԲ և ՀԲԲ Արաստոյ:

Արգադա. օձ: ԲԳՀ (451)

Արգեղագոյն (արգեղագոյն վարք): ԲԳ

Արդան. էջ: ԲՔ

Արմակեդոն. կարեալ: ԲԳՀ (540): —Հմմտ. Բառ. Արմաքեդոն:

Արմնջան. ապարանջան: ԲԳՀ (540, 533)

Արշիտիական. առաջի սպասաւոր: ԲԳՀ (451): —Հն. ἀρχίδιον («աննշան պաշտոն, փոքր պաշտոնյա», տ. ДРС) բառից:

Արուարձայնիք. խորանարնակք: ԲԳՀ (540): —Հմմտ. ՆՀԲ Արուարձային:

Արտազեղցեալ. արտմեալ: ԲՎ:

Արտայուզեալ. բացայուզեալ: ԲԳՀ (451), ձեռ. № 540-ում՝ Արտայուզել. արտաքս քննել:

Արքողատ. գծուծ կամ անանկ: ԲՎ:

Արքուն քար. սատէն. ինքն աերև է, ի հնդկաց գայ, նման է կաւլայի: ԲԳՀ (451)

Արօտ. հրապարակ: ԲՀ: —Հմմտ. Արէօն. տապանակ:

Աւանդակ (Աւանդակաց. վարդապետաց): ԲՆ

Աւարատեսուչ. աղանդաւոր եպիսկոպոս: ԲԳՀ (451)

Աւետաշահ (չքնաղագեղ աւետաշահ բոլորիցն նման): ԱԲ

Ափափրէ. զրերանդ: Գաղ.

Աքայիայ. ցաւ կամ տրտմութիւն: ԲԳՀ (451), ձեռ. № 540-ում՝ աքիա:

Աքարար (Փսէանորէ. աքարար): Գաղ.

Աքիլայ. որ է կերացան, որ խոցն կերվի: ԲԳՀ (451): —Սա հաւանաբար նույն է Աքայիայ-ի հետ:

Աքսա. պճնեցեալ: ԲԳՀ (1495): —Գուցե լտ. exorno («պճնեմ») բառից:

Օֆի. *որ է քարբ օձն:* ԲԳՀ (451): —Հն. ὄφις, ὀφίδιον («օձ») բառերից:

Բաբիչ (*Թովիչ. ջատու կամ կախարդ կամ ափսունչի կամ բարիչ կամ գովիճ*): ԲԱԳ, ԲԳՀ (540)-ում՝ Բաբիչ. *թովիչ կամ ափսոնչի:*
Բագաւորդ. *երընջանուկի տակ:* ԲԳՀ (451)
Բադոչ. *դախձն կամ անանուխ:*
Բազական. *խմոր կամ սաղպաթ:* ԲՀ
Բաղդ. *դառն նուշ:* ԲԳՀ (451): —Հմմտ. ՀԼՀԲ Բաղդի:
Բազմանովանաւոր: ՀԲ: —Բերվում է Անտառախիտ բառի հոմանիշային խմբում:
Բազմաճերա. *եղընձին հունդն:* ԲԳՀ (451)
Բազմաչոկ (*բազմաչոկ հատից*): ԲԳ, ԳԲ
Բաժակար. *բաժանէ:* ՀՎԲ
Բախտ. *այր կնոջ:* ԲԳՀ (3274): նաև՝ Բախտ. *դիպուած:*
Բակեղբ. *բազկի տակն է, որ բուսածք բռնեն:* ԲԳՀ (451)
Բաղաբ. *կաթն:*
Բաղանայն. *միազգ:*
Բաղդատ: ՀԲ: —Բերվում է արդակ բառի հոմանիշային խմբում:
Բաղմուղբ. *աղջամուղջ:* ԲՔ: —Հմմտ. Բառ. Բաղուխթ:
Բան իրարող (=*բանսատեղծ*): ԲԱԳ
Բանասեր (*ի բանասեր հրաշիցն*): ԱԲ
Բանդար, տ. Կարկեդոն:
Բանջար. *երաժշտական գործի է:* ԲՀ, ԲԳՀ (540): Բանջար. *գործիք երգոց:*
Բանտար (*Հրեշտակ. սպասաւոր կամ պաշտամեայ կամ պատգամաբեր կամ դեսպան կամ բանտար*): ԼԲԱ
Բաշարաբ[1]. *աւետիս:* ԲԳՀ (451): —Պրսկ. بشارن
Բաջառել. *առասպելել:* ԱԱԲ: —Գուցե բաջաղե՞լ:
Բառաք. *բորակ:* ԲԳՀ (540)

[1] Ձեռագրում՝ Հաշարաթ, Հ-ի բառացանկում:

Բարէզեղ: ԲԲ
Բարհանրաշ (*բարհահրաշ լոյս*): ԳԲ
Բարիովնա. *որդի աղաւնւոյ:* ՄԱԵ:— Եբր. բերիոնա («*մատաղ աղաւնի*», „Junge Taube", տ. HW):
Բացայուզեալ, տ. Արտայուզեալ:
Բացաւատոծել. *զատել:* ԲԳՀ (450), ԲՔ
Բացիրել: ՀԲ: —Բերվում է ասել բառի հոմանիշային խմբում:
Բելզեճոն (*Ոմբաքար. նժակաքար կամ բելզեհոն կամ մնջնաքար*): ԼԲԱ
Բեղնաւետող: ԲԲ
Բեոսբար (*Շողոս. բեոսթարի կասդիւրոն*): ԲԳ
Բերձ. *չէն:* ԲԳՀ (268)
Բեւրաղետ (*արկած բեւրաղետ*): ԲԳ
Բիրանալի. *բոլոր:* ԲԳՀ (534)
Բլեբիան, տ. Մեղխ:
Բոզաւագ, տ. Փիբի:
Բորբք. *տխուրք:* ԲՔ (3171): —Հմմտ. Բառ. Բորգ:
Բռնաշէն. *շինութիւն բռնութեամբ:* ՀՎԲ
Բոռուածք, տ. Բակեղբ: —Հմմտ. ՀԲԲ Բռնուածք:
Բրտա[կ]ենոյ. *զմռնախունկ:* ԲԳՀ (451)
Բրօբիւն. *դիու պտուղ:*

Գաղատէ. *սոնդիացնող:* ԲԳՀ (451): —Հն. γάλα («*կաթ*») բառից:
Գաղափիւրա (*գղափուրա*). *փայլող:*
Գաղձ. *որպէս գխոնչող է, ոչ ոսկր և ոչ միս:* ԲԳՀ (540), № 5126-ում՝ նաև գեղցրն:
Գամբ. *տափակառան:* ԲԳՀ (540)
Գայլախազն. *որ է առաջի ակռան դայլուն:* ԲԲՎ: —Հմմտ. ՆՀԲ Գայլախազ:
Գաւ. *գզուր կամ դաստայ:* ԲԳՀ (3172)
Գելան. *անտեսութիւն:* ԲԳՀ (451)
Գեղապանծական (*շնորհ գեղապանծական*): ԲԳ

Գեղապարտ (գեղապարտ պերճիցն)։
Գեղաւէտ (գեղաւէտ բուսոյք)։
Գետնի խէժ։ որ է կրաու ձուին։ ԲԲվ
Գետնի ֆօֆն։ որ է տալխան։
Գերաճումն (գերանումն երգոց)։ ԱԲ
Գերաստակ. օրիորդ։ ԲԳՀ (540)
Գերծեալ. փրկեալ։ ԲԳՀ (451)
Գերոյ. իմաստուն։ ԲԳՀ (540)
Գերսահման։ ԲԲ
Գէգ. նենգ կամ դադ կամ անարդ կամ դէդ։ ԲԳՀ (3172)
Գէտս. վիրայս կամ ասխածեծս կամ նկարու[ն]։ ԲԳՀ (451)
Գիրդիի. ծայրք։
Գլխոյ. փրփուր։
Գծանձև (գծաձև ճաճանչ)։ ԲԳ
Գեղաբող (Դասալիք. գնդաբող)։ ԲՊԳ
Գոգ. համբաւ։ ԲԳՀ (3274)
Գողեռնական. ըմբշամարտ։ ԲՔ
Գոլար լոյս. լադիներէն և յունարէն պսըր և հայերէն մնջանի տակ ասէ։ ԲԲվ
Գոլեակ։ ԲԲ
Գո[ճ]աւորութիւն։ ԲԲ
Գոյազարդեալ (գոյազարդեալ ձև)։ ԱԲ
Գոռակ. վանն մեծաձայն գոռալոյն։ ՀՎԲ
Գոսել. սքողել կամ հակառակել։ ԲԳՀ (268)
Գոսոտել. կոճոպել։ ԲՔ
Գործակաբ (գործակաթ նիւթից)։ ԲԳ
Գործաւգործ։ ՀԲ։ —Բերվում է վաղվաղակի բառի հոմանիշային խմբում։
Գունակազարդ (գունակազարդ ծաղիկ)։ ԳԲ, ԲԳ
Գունակներ (Կոկոն. գունակներ)։ ԱԱԲ
Գրաւազր. հանգիստ ճառից։ ԲՓ
Գրաւակ (գրաւակ չափաւոր)։ ԲԳ

Դրէնի. պատրօղք։ ԲԳՀ (451)
Դրբած. բեղթ կամ կռուած կամ ոգորած։ ԲԳՀ (451), ձեռ. № 540 Դրբած. թեղթ, № 3274 Դրբաց. բեթ, ԲՔ (4249, 5925, 3937 և այլ)՝ Դրծարդ. բեղթ։
Դրմխտալ (Մղմղալ. գրմխտալ)։ ԱԱԲ
Դօղայով մարդ (Հսկայ. գաւդայով մարդ)։ ԲՀ

Դամաճել. ցրուել։ ԲԳՀ (268, 540)
Դաճոճ. զօրութիւն։ —Հն. δύναμις («զորութիւն») բառից։
Դասական. ժողովական։ ԲԳՀ (540)
Դարաւ. կակեաց։ ԲԳՀ (3274)։ —Բառերի նշանակութիւնն անհայտ է։
Դարգուն. ինքնագոյ։ ԲՔ
Դաւաղէպ։ ՀԲ։ —Բերվում է զանխուլ բառի հոմանիշային խմբում։
Դափոխ. մահիճ։ ԲԳՀ (540)։ —Համմտ. Բառ. Դնոր։
Դաբրէ. հարկանէ։ ԲԳՀ (533), ձեռ. № 268-ում՝ Դափրիչ. հարկանել։ —Վերջին ձեռագրում գլխաբառը պետք է դափրիլ լինի։ Համմտ. ՆՀԲ Դափիւն, Դափումն։
Դեղկեր. որ դեղ ուտէ։
Դեղնապղինձ, տ. Լեկատոնն։
Դեղպան. որ դեղ վաճառէ կամ ուտէ։ ՀՎԲ
Դեն. կալուած։ ԲԳՀ (540)
Դէպ և վրէպ. նման և աննման։ ԲԳՀ (268, 451)
Դժոխագուռն (դժոխագուռն տղմին)։ ԲԳ
Դիաբոլոս (դիապօլուս). ծորեալ։ ՄԱե։ —Հն. διάβολος։ —Համմտ. Բառ. Դիաբօլուս։
Դիանոց. մեռելոց տեղ։ ԲԳՀ (540)
Դիդիմոս. հոտ։ ՄԱե
Դիբալասում. երկու ծովք։ ՄԱե, ԲԳՀ (451)։ —Հն. διθάλασσος բառից։
Դիմահրաշ։ ԲԲ
Դմնի. աղուէս։ ԲՀ, ԲԳՀ (534)

Դուաճեական. *շրջական։ ԲԳՀ (268, 540)*
Դուլէս. *պատուական ակն կամ քար։ ԲԳՀ (451)*
Դուկսն. *սատրն է կամ կարդացող։*
Դումեմիլ, *տ. ճապալհանգ։*
Դուրի բար. *որ է շատնաճն, որ է դիւրի քար։ ԲԲՎ*
Դոռնեալ *(դռոհեալ դղրդմամբ)։ ԳԲ։ —Համմտ. ՆՀԲ Դռոհ տալ։*
Դրամդրամուկ *(Ջանջիր. դրամդրամուկ)։ ԲԲՎ։ —Համմտ. ՕԲԲ Դրամդամ։*
Դօրեկ. *վարանօղ կամ վաստակաւոր։ ԲԳՀ (451)*

Եբիր. *յաղթել։ ԲԳՀ (451)*
Եգիաճ. *մրուր միզոյ։*
Եզրապահակ, *տ. Համակալակողմ։*
Եիղուա. *քարաժեռ կամ ապառաժոտ։ ԲՊԳ*
Ելաստղ. *ելանէ յառաջ քան զարեգակն և երևի մեզ։ ՀՎՔ*
Ելկնատակ. *ելանմշ կամ քոսա։ ԲԱԳ, ԲՔ (534)։*
Ելփիմայ *հևքն է, որ է տխնէֆէան։ ԲՊՅ*
Եկատողոգոնես. *երակափող։ Գաղ.*
Եղգոն խոտն *(Յեսմիկ. որ է եղգոն խոտն)։ ԲԲՎ։ —Հավանաբար իտ. gelsomino *(«հասմիկ») բառից է ծագում։*
Եղնձիւղ. *ձիթենի։ ԲՆ*
Եմեսի. *համ։ ԲՔ (2019)։ —Հավանաբար հն. ὅμοιος *(«համ») բառից է ծագում։*
Ենթագոյանայ. *ըստ ինքեան գոյանայ։ ԲԳՀ (451)*
Ենկենիա. *նաւակատիք։ ՄԱե։ —Հն. ἐγκαίνια։*
Ենկիտէն. *ծնաւ։ ԲԳՀ (3274)*
Ննի, *տ. Ամիհունգ։*
Եոանդն. *անցեալ օրն, Թուրքերէն օպիրիսկիւն։ ԲԳՀ (3274)։*
Եսեն. *դարան։ ԲԳՀ (540)։ —Սա հավանաբար աղճատումն է հն. ἔνεδρον *(«դարան») բառի։ Համմտ. Բառ. Եսենս։*
Եսենեալ. *ծածկեալ։ ԲԳՀ (3274)։ —Գուցե գետնեա՞լ։*

Երազազոյգ *(Երակազոյգ շաղ, երակազոյգ ծաւալ)։ ԲԳ*
Երակափող, *տ. Եկատողոգոնէս։*
Երգաբեր *(երգաբեր աշխարհիկ)։ ԲԳ*
Երկբոռն. *եղբայր Թոռն։ ՀՎՔ*
Երկնատարփելի *(երկնատարփելի առն)։ ԲԳ*
Երկնափափագ *(երկնափափագ տենչալի)։ ԲԳ*
Երկրորդ բոռն. *Թոռին Թոռինն Թոռն։ ՀՎՔ*
Երկրորդ հաճանայք. *դռնապանքն են։ ԲԳՀ (540), ձեռ. № 3468-ում՝ դռնապանքն են տաճարին։*
Երչուցեալ. *մրսեալ։ ԲԳՀ (268)*
Երփփախօս. *լուսաւորաբան։ ԲԳՀ (268), ձեռ. № 3468-ում՝ երփփայխօս։*
Եփիայ. *խօսք։ ԲԳՀ (540)։ —Սա հավանաբար աղճատումն է նախորդ երփփախօս բառի։ Ձեռ. № 3468-ն ունի երփերփայ. խօսք։*

Զազաւ. *զաղիր կամ մախիզ։ ԲԳՀ (3274)*
Զալէ. *խորշէ կամ հեռացիր։ ԲԳՀ (451)։ —Թրք.* zahla *բառից։*
Զաճոմութիւն. *անյայտութիւն։ ԲԳՀ (540)*
Զանդարտ. *զօշոտութիւն, սուտ հագնուող։ ԲՀ*
Զանդրուխ, *տ. Անդրուխտ։*
Զանտառն. *շուրջանակի բագինք են։ ԲԳՀ (537, 3468)։ —Հաւանաբար պէխաբառը զալտար պիտի լինի և ծագում է լտ.* altar *(«բագին») բառից։*
Զաստաւօտն. *մեհեանս դից։ ԲԳՀ (451)*
Զատակ. *փոքր կամ ծածուկ։ ԲԳՀ (3468, 8606)։ —Համմտ. Բառ. Զակատ. գփոքր.*
Զարթել. *ժողովել։ ԲԳՀ (451)*
Զաւտելութիւն. *զմոյնի տմունութիւն փոխեն զփափկութի[ն]ան, յոչ փափկութիւն փոխեն։ ԲՊԳ*
Զաւա, *գեախք։ ԲՔ (2019), ձեռ. № 4149 Զաւա. գրէախք։ —Բառերի իմաստներն անհայտ են։*
Զբեռանդ. *զբերանագ, տ. Ափափքէ։*

Զգածել. յիմարել: ԲԳՀ (540)
Զգաստագովակ (զգաստագովակ մտերմեալ): ԲԳ
Զգեստաժողով (Լուսաթոյր. զգեստաժողով): ԲՊԳ
Զգուշապահ. օրինապահ: ԲԳՀ (268)
Զեախք. գրէախք, տ. Զաւառ:
Զեղկ. գիրարել: ԲՔ (2019)
Զեղուսցեն. ընծեսցեն: ԲՊԳ
Զենմունք (զենմունք բանաւոր): ԲԳ
Զերունակն. զառաւելն: ԲԳՀ (268, 540)
Զեւօս կամ զեւս. բարեխառն: ԲԳՀ (3274): —Հն. εὖγε («բարի») կամ εὔκρατος («բարեխառն») բառից:
Զիկն. ծնօտ: ԲԳՀ (268, 540)
Զինէհար. ամանաթ կամ ապաստան:
Զկենաց յողդողումն. պարսաւ է: ԲԳՀ (3468)
Զնաւ. զբօլոր: ԲՔ (8198)
Զնկունովել. զրկել կամ մերժել: ԲՔ (8198): —Համտ. Բառ. Զնկենուլ:
Զուարճախիտ (զուարճախիտ ոստովք): ԲԳ
Զուշ. պատկառ: ԲՀ
Զուփ, տ. Կաճեայ:

Էրողոս. հանճարեղ: ԲԳՀ (451): —Գուցե հն. εὐφυής («ընդունակ, օժտված») բառից է ծագում:
Էջ (Արդան. էջ): ԲՔ

Ըմբռշխնել. մասնաւորել: ԱԱԲ
Ընդալ. ընդանալ կամ դժուարիլ: ԲՆ: —Համտ. ՆՀԲ Զնդամ:
Ընդարիկ, տ. Անմարդաստան:
Ընդկողունիլ. դատապարտել: ԲԳՀ (3274)
Ընդմեր. մօտիկ: ԲՀ
Ընդվայրածարանութիւնք: ՀԲ: —Բերվում է լեզուազարութիւնք բառի հոմանիշային խմբում: Զեռ. № 537-ում՝ ընդվայրաբանութիւնք:

Ըստանցնիւր. իւրաքանչիւր: ԲՊԳ
Ըստի. զէր:
Ըստուգնացութիւն. ուղետրութիւն: ԲԳՀ (451)
Ըստուածին, տ. Ստորածին:

Թարրա. կորդին: ԲԳՀ (451)
Թագաղրապետ (թագադրապետ թագից): ԳԲ
Թամներուն. տարշկոկ: ԹԴ
Թամնաս, տ. Թամնասքար:
Թամնասքար. թամնաս: ԲԳՀ (3274)
Թայրարոտք. չողոքորթք: ԲԳՀ (540), ձեռ. № 2335-ում՝ Թայրարոտք. աղքատք և ստարք կամ կէս եղբարք: —Համտ. ՀԲԲ Թայրատոտք:
Թաշափ. տալ: ԲՔ (8198)
Թատել. բշտապել: ԲԳՀ (450)
Թաւայր. մայրի կամ մացառ կամ անտառախիտ: ԲԳՀ (3274)
Թելատ. թլվատ կամ թոթով, թուրքերէն փէլթէք:
Թեմիայ. զօպենարի: Գաղ, ձեռ. № 7117 թեւմիայ:
Թերաբարք (խեռաբարոյ. խառնակող, թերաբարք): ԱԱԲ
Թերաղարձ (Անկռեն. թերադարձ): ԲՔ, ձեռ. № 8198 աղղէն:
Թերանեակ. հոգևոր: ԲԳՀ (2369): —Համտ. Բառ. Թերունակ:
Թերատախօս (Թոթովախօս. թերատախօս): ԲԱԳ: —Համտ. Թելատ:
Թերաքամեալ. գիւրաշարժ: ԲԳՀ (451): —Համտ. ՆՀԲ Թերաքամեալ:
Թիբրամայ (Թիթղունս. թիթրամայս): ԲԳՀ (451), ձեռ. № 450 Թիթարմայ:
Թիպոռն. գիրք կամ վերնագիր գրոց: ԲԳՀ (2019)
Թիխայ, տ. Շիմաստ:
Թլիքն. կտաւէ տօպրակ: ԲԳՀ (268, 540)
Թող. թթուն: ԲԳՀ (451)
Թոյղակ. անարգ կամ անպէտ: ԲԳՀ (268, 540)

196—18

Թուվան խոցատ. *որ է Թոնրի հին խեցի կտոր։ ԲԲվ*
Թուփ. *որթոր կամ արևելք պայծառ։ ԲԳՀ (451)*
Թուլկուրան, *տ. Օսիդ։*
Թուրսայ *(Ղուպայ և Թուրսայ և շիրինայ, որ շարայ ասեն)։ ԲՊՅ*
Թրուան. *երկաթ։ ԲԳՀ (540), ձեռ. № 3468 Թրուկան։*

Ժախել *(ժղխել, ժաշխել). տրորել։ ԲԳՀ (540)։ —Հմմտ. Բառ. Ժաշխեալ։*
Ժամադասեալ *(ժամադասեալք ի մարտս)։ ԲԳ*
Ժանդաժողով *(ժանդաժողովն չարեաց)։*
Ժիրակաբոյս *(ժիրակաբոյս ծաղիկ)։*
Ժողովօրէն։ *ՀԲ։ —Բերվում է դաս բառի հոմանիշային խմբում։*

Ի դեռանդաղի. *աններևելի կամ առագաստեալ։ ԲԳՀ (450)*
Իզաւակցէ. *յաղգակցէ։ ԲԳՀ (268)*
Իկրեայ. *ի ձիրնթացս։ ԲԳՀ (268), ձեռ. № 451-ում՝ ի կրեայ. ի ձիթննեացս։*
Ինդու. *սրսիկ։ Գաղ.*
Ինճնապատեղ։ *ԲԲ։ —Հմմտ. Բառ. Պարիղ։*
Իշշիւն. *խառնաղանջ, խառն ի խուռն կամ կորուստ և ի ջնջումն։ ԲՊԳ*
Իշրուճճն *(Դմակ դեղի. որ է իշրունքն)։ ԲԲվ*
Իպիսկոս. *որ է տուղտ։ ԲԲվ*
Իրախատ. *անբռնելի ինչ գործ։ ԲԳՀ (3274)*
Իւրիդէոս. *փող կամ զուռնայ։ ԲԳՀ (451)։ —ՀՆ. ὑβόλος («փող») բառից։*

Լակոճիայ. *չարսաւ։ ԲԳՀ (3274)*
Լացմունճ *(Լալօնք. լացք կամ լացմունք)։ ԼԲԱ, ԲԳՀ՝ Լալանօճ. լացմունք։*
Լացուր. *հոծ կամ կռէզ կամ կոօճ։ ԲԳՀ (3274)*
Լեկառոնճ. *դեղնապղինձ։ ԲՊԳ։ —Երևի ՀՆ. λεκάνιον («թաս, պնակ», տ. ДРС) բառից։*

Լերդողիլ *(Զայրանալ. լերդողիլ)։ ԱԱԲ*
Լեփքան. *մեղս կուտեալ ի վերայ մեղաց։ ԲԳՀ (451)*
Լէճի. *օրէնն։ ԲԳՀ (451)։ —Լտ. lex («օրէնք») բառից։*
Լիզատոն. *լուանալեաց տեղ։ ԲԳՀ (451)։ —ՀՆ. λουτρόν («բաղնիք») բառից։*
Լիմ. *Թաղիք կամ կապայի միջոյ ելեալ հին բամբակն։ ԲԳՀ (3274)*
Լիտոստրատոս. *քարիւ տարածեալ։ ՄԱե, ԲԳՀ (451) լիթօստրօտօս։ —ՀՆ. λιθόστρωτος («քար») և τάττω, տտ. τάττω («շարեմ») բառերից։*
Լորչան *(Գելարան և գելոց. լորչան)։ ԲԳՀ (533, 537)*
Լուջ. *կանանչ։ ԲՀ*
Լուսաուրիւն *(լուսաորութեամբ ոսկեճաճանչ)։ ԲԳ*
Լուսաւորաբան, *տ. Երփփախօս։*
Լուսրնկալ *(Բիբ. լուսընկալն է)։ ԱԱԲ։ —Հմմտ. ՆՀԲ Լուսընկալ։*

Խազինադար *(Շահասր. խազինադար)։ ԲԳՀ (451)։ —Պրսկ. خزینه دار*
Խալիմ. *ունայն։ ԲԳՀ (451)։ —Թրք. hâli («դատարկ, ունայն, թափուր») բառից։*
Խաղարկու *(Պզր ըլ դասա, որ է խխարին հունդն և այս խխարիս դեղին խխար կու ասեն և այնոր համար որ դհունդն ի դեղնէն կու առնեն և հայերէն ասոր խաղարկու ասէ)։ ԲԲվ։ —Սա Խաղուարտն է, որ հիշատակված է ԱԱ-ում (1157, 1159, 2788)։*
Խաղցոյց, *տ. Որթար։*
